# Հայաստանի Հանրապետության համագործակցությունը ՄԱԿ Համընդհանուր պարբերական դիտարկման գործընթացի շրջանակում և պայմանագրային մարմինների հետ

## Ամփոփ տեղեկատվություն

# Հայաստանի Հանրապետության համագործակցությունը ՄԱԿ Համընդհանուր պարբերական դիտարկման գործընթացի շրջանակում և պայմանագրային մարմինների հետ

## Ամփոփ տեղեկատվություն

Այս հաշվետվությունը պատրաստվել է ՀՀ Արտաքին գործերի նախարարության, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակի և ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի Հայաստանի գրասենյակի աջակցությամբ՝ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի Տարածաշրջանային գրասենյակի «Մարդու իրավունքների և արդարադատության հասանելիության խթանում» ծրագրի շրջանակներում:

# Բովանդակություն

Ներածություն . . . . . 4

1. «Միավորված ազգերի կազմակերպության թիվ 5/1 բանաձև
Մարդու իրավունքների խորհրդի գործունեության կազմակերպումը» . . . . . 6

2. Մարդու իրավունքների խորհրդի թիվ 6/102 որոշում.
Մարդու իրավունքների խորհրդի թիվ 5/1 բանաձևի ընդունումից
հետո իրականացվող քայլերը . . . . . 14

3. Հայաստանի Հանրապետության ազգային զեկույց
Մարդու իրավունքների խորհրդի 5/1 բանաձեվի 15 (ա) կետի համաձայն . . . . . 16

4. Ամփոփիչ զեկույց՝ պատրաստված Մարդու իրավունքների
գերագույն հանձնակատարի գրասենյակի կողմից՝
Մարդու իրավունքների խորհրդի 5/1 բանաձևի 15 (գ) կետի համաձայն . . . . . 43

5. ՄԱԿ-ի համընդհանուր պարբերական դիտարկման
աշխատանքային խմբի հաշվետվություն, 6 Հուլիսի, 2010թ. . . . . 64

6. ՄԱԿ-ի «Համընդհանուր պարբերական դիտարկում»
ընթացակարգի համաձայն նախապատրաստած
Հայաստանի Հանրապետության միջանկյալ զեկույց . . . . . 96

Հավելված 1. Երեխայի իրավունքների կոմիտե
63-րդ նստաշրջան, 27 մայիսի – 14 հունիսի, 2013թ . . . . . .147

Հավելված 2. Մարդու իրավունքների կոմիտե
105-րդ նստաշրջան, 9 հուլիսի - 27 հուլիսի, 2012թ. . . . . 168

Հավելված 3. Խոշտանգումների դեմ կոմիտե
48-րդ նստաշրջան, մայիսի 7 - հունիսի 1, 2012թ. . . . . 176

Հավելված 4. Ռասայական խտրականության վերացման կոմիտե
70-րդ նստաշրջան, 14 փետրվար – 11 Մարտ 2011թ. . . . . 190

## Ներածություն

Սույն հավաքածուն ներկայացնում է ամփոփ տեղեկատվություն Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների խորհրդի 2006 թ. մարտի 15-ին 60/251 բանաձևով հաստատված Համընդհանուր պարբերական դիտարկման գործընթացում Հայաստանի Հանրապետության մասնակցության, ինչպես նաև Մարդու իրավունքների պայմանագրային մարմինների եզրափակիչ դիտարկումների/հանձնարարականների վերաբերյալ: Հայաստանի Հանրապետությունը Համընդհանուր պարբերական դիտարկման առաջին փուլում (2008-2011թթ.) մասնակցել է գործընթացին 2010 թ. մայիսի 6-ին: Մարդու իրավունքների Խորհրդի կողմից դիտարկման շրջանակներում հաշվի են առնվել պետության կողմից ներկայացված ազգային զեկույցը, շահագրգիռ կողմերի զեկույցները և Հայաստանի Հանրապետությունում մարդու իրավունքների վերաբերյալ հասանելի այլ տեղեկատվություն:

Քննարկման արդյունքում 2010թ. մայիսին, Համընդհանուր պարբերական դիտարկման աշխատանքային խմբի կողմից տրվել են Հանձնարականներ Հայաստանի Հանրապետությունում մարդու իրավունքների վիճակի բարելավման վերաբերյալ: 2012 թվականին Հայաստանի Հանրապետությունը կամավոր ներկայացրել է Միջանկյալ զեկույց Հանձնարարականների կատարման ընթացքի վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետությունն ընթացակարգը կացնի է երկրորդ անգամ Մարդու իրավունքների խորհրդի 21-րդ նստաշրջանի Համընդհանուր Պարբերական դիտարկման (երկրորդ փուլ) շրջանակներում, որը կկայանա 2015թ. հունվար-փետրվար ամիսների ընթացքում: Այս նպատակով Հայաստանը մինչև 2014թ. հոկտեմբերի 27-ը պետք է ներկայացնի հերթական ազգային զեկույցը Հայաստանի Հանրապետությունում մարդու իրավունքների վիճակի վերաբերյալ:

Սույն ժողովածուն նպատակ ունի ՄԱԿ-ի Համընդհանուր պարբերական դիտարկման առաջին փուլի շրջանակներում ՀՀ-ի կողմից ներկայացված մարդու իրավունքների իրավիճակի վերաբերյալ ազգային զեկույցը, շահագրգիռ կողմերի զեկույցները, ինչպես նաև հանձնարարականներն ու միջանկյալ զեկույցը ամփոփել մեկ փաստաթղթում, ինչը հնարավորություն կտա թե պետական մարմիններին, թե այլ շահագրգիռ կողմերին առավել արդյունավետ նախապատրաստվել Համընդհանուր պարբերական դիտարկման երկրորդ փուլին:

Ժողովածուն ամփոփում է Հայաստանի Հանրապետության կողմից մարդու իրավունքների վերաբերյալ ներկայացված հետևյալ զեկույցները և դրանց առնչվող պաշտոնական փաստաթղթերը.

1. Հատված՝ 2007 թ. «Մարդու իրավունքների խորհրդի 5/1 բանաձևից,
2. Հատված՝ 2007 թ. «Մարդու իրավունքների խորհրդի 6/102 որոշումից,
3. Հայաստանի Հանրապետության Ազգային զեկույցը «Մարդու իրավունքների խորհրդի 2007 թ. 5/1 բանաձևի 15 (ա) կետի համաձայն,
4. Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակի կողմից ամփոփված շահառուների զեկույցները՝ Մարդու իրավունքների խորհրդի 2007 թ. 5/1 բանաձևի 15 (գ) կետի համաձայն,

5. 2010 թ. մայիսին Համընդհանուր պարբերական դիտարկման աշխատանքային խմբի կողմից տրված Հանձնարարականները,
6. 2012 թ. ներկայացված Միջանկյալ ազգային զեկույցը՝ 2010 թ. մայիսին Համընդհանուր պարբերական դիտարկման աշխատանքային խմբի կողմից տրված հանձնարարականների կատարման ընթացքի վերաբերյալ,
7. ՄԱԿ-ի պայմանագրային մարմինների կողմից տրված հանձնարարականները՝ հիմնված ՀՀ-ի կողմից ներկայացված վերջին պարբերական զեկույցների վրա:

# 1. «Միավորված ազգերի կազմակերպության թիվ 5/1 բանաձև Մարդու իրավունքների խորհրդի գործունեության կազմակերպումը»

*Մարդու իրավունքների խորհուրդը,*

*գործելով* Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի 2006 թվականի մարտի 15-ի թիվ 60/251 բանաձևով իրեն վերապահված մանդատին համապատասխան,

*հաշվի առնելով* Խորհրդի նախագահի կողմից ներկայացված՝ գործունեության կազմակերպման վերաբերյալ փաստաթղթի նախագիծը,

1. *ընդունում է* «Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների խորհրդի գործունեության կազմակերպումը» վերնագրով փաստաթղթի նախագիծը, որը համապատասխան հավելվածով (հավելվածներով) ներկայացված է սույն բանաձևի հավելվածում,
2. *որոշում է* բանաձևի հետևյալ նախագիծը ներկայացնել Գլխավոր ասամբլեային վերջինիս կողմից առաջնահերթության կարգով ընդունման համար, որպեսզի ապահովվի ստորև շարադրված փաստաթղթի ժամանակին իրականացումը,

«*Գլխավոր ասամբլեան,*

«*հաշվի առնելով* Մարդու իրավունքների խորհրդի 2007 թվականի հունիսի 18-ին ընդունված թիվ 5/1 բանաձևը,

«1. *հավանության է արժանացնում* «Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների խորհուրդ. գործունեության կազմակերպումը» վերնագրով փաստաթղթի նախագիծը, որը համապատասխան հավելվածով (հավելվածներով) ներկայացված է սույն բանաձևի հավելվածում»:

*9-րդ հանդիպում*

*2007 թվականի հունիսի 18*

[Բանաձևն ընդունվել է առանց քվեարկության][1]

Հավելված

Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների խորհուրդ. գործունեության կազմակերպումը

# Ի. ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԸ

## Ա. Դիտարկման հիմքերը

1. ***Դիտարկման հիմքում ընկած են հետևյալ փաստաթղթերը՝***
   - *ա*) Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությունը.
   - *բ*) Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը.
   - *գ*) Մարդու իրավունքների վերաբերյալ այն փաստաթղթերը, որոնց միացել է տվյալ պետությունը.
   - *դ*) կամավորության սկզբունքով պետությունների ստանձնած պարտավորություններն ու հանձնառությունները, այդ թվում՝ այն պարտավորություններն ու հանձնառությունները, որոնք պետություններն ստանձնել են Մարդու իրավունքների խորհրդում (այսուհետ՝ «Խորհուրդ») ընտրվելու համար իրենց թեկնածությունն առաջադրելիս:
2. ***Ի լրումն վերոնշյալի և հաշվի առնելով մարդու իրավունքների բնագավառում միջազգային իրավունքի ու միջազգային մարդասիրական իրավունքի՝ միմյանց լրացնող և փոխկապակցված բնույթը՝ դիտարկման ժամանակ հաշվի է առնվում կիրառելի միջազգային մարդասիրական իրավունքը:***

## Բ. Սկզբունքները և նպատակները

### 1. Սկզբունքները

3. Համընդհանուր պարբերական դիտարկումը՝
   - *ա*) պետք է նպաստի մարդու բոլոր իրավունքների՝ համընդհանուր, միմյանցից կախված, անբաժանելի և փոխկապակցված լինելուն.
   - *բ*) պետք է լինի օբյեկտիվ ու հուսալի տեղեկատվության և ինտերակտիվ երկխոսության վրա հիմնված համագործակցային մեխանիզմ.
   - *գ*) պետք է ապահովի բոլոր պետությունների համընդհանուր ընդգրկումը և դրանց նկատմամբ հավասար վերաբերմունքը.
   - *դ*) պետք է լինի միջկառավարական գործընթաց, որը կկազմակերպվի Միավորված ազգերի կազմակերպության անդամ պետությունների կողմից և նպատակաուղղված կլինի գործողությունների իրականացման.
   - *ե*) պետք է ենթադրի դիտարկվող պետության լիարժեք ներգրավվածությունը.
   - *զ*) պետք է լրացնի մարդու իրավունքների պաշտպանության մյուս մեխանիզմները, այլ ոչ թե կրկնօրինակի դրանք՝ այդպիսով իրենից ներկայացնելով լրացուցիչ արժեք.
   - *է*) պետք է իրականացվի օբյեկտիվ, թափանցիկ, ոչ ընտրողական, կառուցողական, խաղաղ և ապաքաղաքականացված կերպով.
   - *ը*) չպետք է չափից ավելի ծանր լինի համապատասխան պետության համար կամ Խորհրդի օրակարգի տեսանկյունից.
   - *թ*) չպետք է չափից ավելի երկար լինի. այն պետք է իրատեսական լինի և չպահանջի չափից ավելի շատ ժամանակ, մարդկային և ֆինանսական ռեսուրսներ.

ժ) չպետք է նվազեցնի մարդու իրավունքներին առնչվող հրատապ իրավիճակներին արձագանքելու Խորհրդի կարողությունը.

ա) պետք է ամբողջությամբ ներառի գենդերային ազդեցության գնահատում.

բ) պետք է, առանց դիտարկման հիմքում ընկած տարրերով նախատեսվող պարտավորությունների սահմանափակման, ենթադրի պետությունների զարգացման մակարդակը և առանձնահատկությունները հաշվի առնելու անհրաժեշտություն.

գ) պետք է ենթադրի բոլոր համապատասխան շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ հասարակական կազմակերպությունների և մարդու իրավունքների պաշտպանության ազգային կառույցների մասնակցության ապահովում՝ Գլխավոր ասամբլեայի 2006 թվականի մարտի 15-ի թիվ 60/251 բանաձևի, Տնտեսական և սոցիալական խորհրդի 1996 թվականի հուլիսի 25-ի թիվ 1996/31 բանաձևի, ինչպես նաև այս ոլորտում Խորհրդի կողմից կայացվելիք ցանկացած որոշման համաձայն:

## 2. Նպատակները

4. Դիտարկման նպատակներն են՝

*ա*) տվյալ երկրում մարդու իրավունքների ոլորտում տիրող իրավիճակի բարելավումը.

*բ*) պետության կողմից մարդու իրավունքների ոլորտում ստանձնած պարտավորությունների ու հանձնառությունների կատարումը և դրական զարգացումների ու պետության առջև ծառացած դժվարությունների գնահատումը.

*գ)* պետության կարողությունների և տեխնիկական աջակցության ընդլայնումը՝ համապատասխան պետության հետ խորհրդակցելուց հետո և դրա համաձայնությամբ.

*դ)* պետությունների և շահագրգիռ այլ կողմերի միջև լավագույն փորձի փոխանակումը.

*ե)* մարդու իրավունքների խթանման և պաշտպանության ոլորտում համագործակցելու հարցում աջակցությունը.

*զ)* Խորհրդի, մարդու իրավունքների հարցերով զբաղվող այլ մարմինների և Մարդու իրավունքների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի հետ լիակատար համագործակցության և դրանց աշխատանքներին մասնակցության խրախուսումը:

## Գ. Դիտարկման պարբերականությունը և կարգը

5. Դիտարկումը մեկնարկում է Խորհրդի կողմից համընդհանուր պարբերական դիտարկման մեխանիզմի ընդունումից հետո:

6. Դիտարկման կարգը պետք է արտացոլի համընդհանրության և հավասար վերաբերմունքի սկզբունքները:

7. Դիտարկման կարգը պետք է սահմանվի որքան հնարավոր է շուտ, որպեսզի պետությունները կարողանան պատշաճ կերպով նախապատրաստվել:

8. Խորհրդի բոլոր անդամ պետությունները պետք է դիտարկվեն իրենց անդամակցության ժամկետի ընթացքում:

9. Խորհրդի առաջին անդամները և, հատկապես, այն անդամները, որոնք ընտրվել են մեկ կամ երկու տարի

ժամկետով, պետք է դիտարկվեն ամենասկզբում:

10. Պետք է դիտարկվեն ինչպես Խորհրդի անդամ, այնպես էլ դիտորդի կարգավիճակ ունեցող պետությունները:

11. Դիտարկման համար պետություններ ընտրելիս պետք է հաշվի առնել ըստ աշխարհագրական տարածքի՝ արդարացի բաշխման սկզբունքը:

12. Դիտարկման ենթակա Խորհրդի անդամ և դիտորդի կարգավիճակ ունեցող առաջին պետությունները տարածաշրջանային յուրաքանչյուր խմբից ընտրվում են վիճակահանությամբ այնպես, որ ամբողջությամբ պահպանվի ըստ աշխարհագրական տարածքի՝ արդարացի բաշխման սկզբունքը: Այնուհետև, ընտրությունը կատարվում է՝ ըստ այբբենական կարգի՝ սկսած այն պետություններից, որոնք ընտրվել են վերոնշյալ եղանակով, եթե չկան պետություններ, որոնք կամավորության սկզբունքով ցանկանում են դիտարկվել:

13. Դիտարկման փուլերի միջև ընկած ժամանակահատվածը պետք է լինի ողջամիտ՝ հաշվի առնելու համար դիտարկման ընթացքում առաջացած հարցերին նախապատրաստվելու պետության կարողությունը և դրանց արձագանքելու՝ շահագրգիռ այլ կողմերի կարողությունը:

14. Առաջին փուլի պարագայում դիտարկման պարբերականությունը սահմանվում է չորս տարի: Դա նշանակում է, որ յուրաքանչյուր տարի աշխատանքային խմբի երեք նստաշրջանների ընթացքում, որոնցից յուրաքանչյուրը տևում է երկու շաբաթ, դիտարկվելու է 48 պետություն:[2]

## *Դ. Դիտարկման գործընթացը և դրա իրականացման ձևը*

### *3. Փաստաթղթերը*

15. Դիտարկումն իրականացվում է հետևյալ փաստաթղթերի հիման վրա՝

*ա)* տվյալ պետության կողմից պատրաստված տեղեկատվությունը, որը կարող է ներկայացվել ազգային զեկույցի միջոցով՝ հիմնված վեցերորդ նստաշրջանի (երկրորդ փուլի առաջին նստաշրջան) ժամանակ Խորհրդի կողմից ընդունման ենթակա ընդհանուր ուղեցույցների վրա, ինչպես նաև տվյալ պետության կողմից կարևոր համարվող ցանկացած այլ տեղեկատվություն, որը կարող է ներկայացվել թե՛ բանավոր, թե՛ գրավոր՝ պայմանով, որ տեղեկատվությունն ամփոփող գրավոր փաստաթուղթը չպետք է գերազանցի 20 էջը՝ բոլոր պետությունների համար հավասար վերաբերմունք ապահովելու և մեխանիզմը չծանրաբեռնելու համար: Խրախուսվում է, որ պետությունները տեղեկատվությունը պատրաստեն բոլոր համապատասխան շահագրգիռ կողմերի հետ ազգային մակարդակով իրականացվող լայնածավալ խորհրդակցությունների միջոցով.

*բ)* բացի դրանից, պայմանագրային մարմինների կողմից մշակված զեկույցներում և հատուկ ընթացակարգերի արդյունքում մշակված զեկույցներում ներառված տեղեկությունների ամբողջությունը, որը պատրաստվում է Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի

կողմից և ներառում է տվյալ պետության կողմից ներկայացված դիտարկումներն ու դիտողությունները, ինչպես նաև Միավորված ազգերի կազմակերպության՝ այլ համապատասխան պաշտոնական փաստաթղթեր, որոնք չպետք է գերազանցեն 10 էջը.

*գ)* համընդհանուր պարբերական դիտարկման նպատակով այլ համապատասխան շահագրգիռ կողմերի ներկայացրած լրացուցիչ, վստահելի և արժանահավատ տեղեկությունները, որոնք ևս պետք է դիտարկման ժամանակ հաշվի առնվեն Խորհրդի կողմից: Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակը պատրաստում է այդ տեղեկատվությունն ամփոփող փաստաթուղթ, որը չպետք է գերազանցի 10 էջը:

16. Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի կողմից պատրաստվող փաստաթղթերը պետք է մշակվեն Խորհրդի կողմից ընդունված՝ տվյալ պետության պատրաստած տեղեկատվությանը վերաբերող ընդհանուր ուղեցույցներով նախատեսվող կառուցվածքին համապատասխան:

17. Ինչպես պետությունների կողմից մշակված գրավոր տեղեկատվությունը, այնպես էլ Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի կողմից պատրաստված ամփոփագրերը պետք է պատրաստ լինեն աշխատանքային խմբի կողմից դիտարկվելուց վեց շաբաթ առաջ՝ ապահովելու համար, որ փաստաթղթերը միաժամանակ բաժանվեն Միավորված ազգերի կազմակերպության վեց պաշտոնական լեզուներով՝ Գլխավոր ասամբլեայի 1999 թվականի հունվարի 14-ի թիվ 53/208 բանաձևին համապատասխան:

### *4. Դիտարկման իրականացման ձևը*

18. Դիտարկումն իրականացվում է հետևյալ ձևով՝

*ա)* Դիտարկումն իրականացվելու է Խորհրդի 47 անդամ պետություններից բաղկացած մեկ աշխատանքային խմբի կողմից, որի նախագահը լինելու է Խորհրդի նախագահը: Յուրաքանչյուր անդամ պետություն որոշելու է իր պատվիրակության կազմը:[3]

*բ)* դիտորդի կարգավիճակ ունեցող պետությունները կարող են մասնակցել դիտարկմանը, այդ թվում՝ ինտերակտիվ երկխոսությանը.

*գ)* այլ համապատասխան շահագրգիռ կողմեր կարող են մասնակցել աշխատանքային խմբի կողմից իրականացվող դիտարկմանը.

*դ)* ստեղծվելու է Խորհրդի անդամներից և տարածաշրջանային տարբեր խմբերից վիճակահանությամբ ընտրված երեք զեկուցողներից բաղկացած մի խումբ (*տրոյկա*) յուրաքանչյուր դիտարկման գործընթացը դյուրացնելու նպատակով՝ ներառյալ աշխատանքային խմբի զեկույցի պատրաստման գործընթացը: Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակը զեկուցողներին կտրամադրի

անհրաժեշտ աջակցություն և մասնագիտական խորհրդատվություն:

19. Տվյալ երկիրը կարող է խնդրել, որպեսզի զեկուցողներից մեկը լինի իր տարածաշրջանային խմբից և կարող է նաև միայն մեկ անգամ խնդրել, որ զեկուցողին փոխարինեն:

20. Զեկուցողը կարող է խնդրել, որպեսզի իրեն ազատեն կոնկրետ դիտարկման գործընթացին մասնակցելուց:

21. Դիտարկվող պետության և Խորհրդի միջև ինտերակտիվ երկխոսությունը տեղի կունենա աշխատանքային խմբում: Զեկուցողները կարող են առանձնացնել այն խնդիրները կամ հարցերը, որոնք տրամադրվելու են դիտարկվող պետությանը՝ նախապատրաստման գործընթացը դյուրացնելու և ինտերակտիվ երկխոսությունը որոշակի հարցերի վրա կենտրոնացնելու համար՝ միևնույն ժամանակ երաշխավորելով արդարությունն ու թափանցիկությունը:

22. Աշխատանքային խմբում յուրաքանչյուր երկիրը դիտարկելու համար հատկացվելու է երեք ժամ: Խորհրդի լիագումար նիստում արդյունքները քննարկելու նպատակով կհատկացվի լրացուցիչ ժամանակ՝ մինչև մեկ ժամ:

23. Կես ժամ կհատկացվի աշխատանքային խմբում դիտարկվող յուրաքանչյուր երկրի վերաբերյալ զեկույց հաստատելու համար:

24. Աշխատանքային խմբում յուրաքանչյուր երկիրը դիտարկելու և դրա վերաբերյալ զեկույց հաստատելու միջև ընկած ժամանակահատվածը պետք է լինի ողջամիտ:

25. Վերջնական արդյունքը կընդունվի Խորհրդի լիագումար նիստի ժամանակ:

## Ե. Դիտարկման արդյունքը

### *5. Արդյունքները ներկայացնելու ձևաչափը*

26. Դիտարկման արդյունքները ներկայացվելու են զեկույցի տեսքով, որը բաղկացած է լինելու դիտարկման գործընթացում իրականացված գործողությունների ամփոփ նկարագրից, ինչպես նաև եզրակացություններից և (կամ) առաջարկություններից և կամավորության սկզբունքով տվյալ պետության ստանձնած հանձնառություններից:

### *6. Արդյունքների բովանդակությունը*

27. Համընդհանուր պարբերական դիտարկումը համագործակցային մեխանիզմ է: Դրա արդյունքները, մասնավորապես, կարող են լինել՝

*ա)* դիտարկվող պետությունում մարդու իրավունքների ոլորտում տիրող իրավիճակի, այդ թվում՝ երկրի դրական զարգացումների և երկրի առջև ծառացած դժվարությունների օբյեկտիվ և թափանցիկ կերպով գնահատումը.

*բ)* լավագույն փորձի փոխանակումը.

*գ)* մարդու իրավունքների խթանման և պաշտպանության հարցում համագործակցության ընդլայնման կարևորումը.[4]

*դ)* տեխնիկական աջակցության տրամադրումը և կարողությունների ստեղծումը՝ համապատասխան պետության հետ խորհրդակցելուց հետո և դրա համաձայնությամբ.

*ե)* կամավորության սկզբունքով դիտարկվող պետության կողմից ստանձնած հանձնառություններն ու պարտավորությունները:

### *7. Արդյունքների հաստատումը*

28. Դիտարկվող երկիրը պետք է ամբողջությամբ ներգրավված լինի արդյունքների հաստատման գործընթացում:

29. Նախքան Խորհրդի լիագումար նիստում արդյունքների հաստատումը՝ տվյալ պետությունը պետք է հնարավորություն ունենա պատասխանելու այն հարցերին կամ խնդիրներին, որոնց բավարար կերպով անդրադարձ չի կատարվել ինտերակտիվ երկխոսության ընթացքում:

30. Տվյալ պետությանը և Խորհրդի անդամ պետություններին, ինչպես նաև դիտորդի կարգավիճակ ունեցող պետություններին ընձեռվելու է դիտարկման արդյունքների վերաբերյալ իրենց տեսակետները ներկայացնելու հնարավորություն՝ նախքան լիագումար նիստում համապատասխան գործողություններ ձեռնարկելը:

31. Բոլոր այլ համապատասխան շահագրգիռ կողմերին, նախքան լիագումար նիստում դիտարկման արդյունքների հաստատումը, ընդհանուր դիտողություններ կատարելու հնարավորություն է ընձեռվելու:

32. Այն առաջարկությունները, որոնք արժանացել են տվյալ պետության հավանությանը, համապատասխանաբար նշվելու են: Մյուս առաջարկությունները, դրանց վերաբերյալ տվյալ պետության դիտողությունների հետ, նույնպես նշվելու են: Երկու տեսակի առաջարկություններն էլ ներառվելու են արդյունքների վերաբերյալ Խորհրդի կողմից ընդունման ենթակա զեկույցում:

## Զ. Դիտարկումից հետո ձեռնարկվող քայլերը

33. Որպես համագործակցային մեխանիզմի՝ համընդհանուր պարբերական դիտարկման արդյունքները պետք է առաջին հերթին իրականացնի տվյալ պետությունը և, ըստ անհրաժեշտության, այլ համապատասխան շահագրգիռ կողմեր:

34. Հաջորդ դիտարկման ընթացքում շեշտը պետք է դրվի, մասնավորապես, նախորդ դիտարկման արդյունքների իրականացման վրա:

35. Խորհուրդն իր օրակարգում պետք է մշտապես ունենա համընդհանուր պարբերական դիտարկմանը վերաբերող կետ:

36. Միջազգային հանրությունը կօժանդակի կարողությունների ստեղծմանը և տեխնիկական աջակցությանը վերաբերող առաջարկությունների և եզրակացությունների իրականացման հարցում՝ տվյալ պետության հետ խորհրդակցելուց հետո և դրա համաձայնությամբ:

37. Համընդհանուր պարբերական դիտարկման արդյունքները քննարկելիս Խորհուրդը կորոշի, թե անհրաժեշտ է արդյոք իրականացնել հետագա քայլեր, և թե երբ է անհրաժեշտ դրանք իրականացնել:

38. Համընդհանուր պարբերական դիտարկման մեխանիզմի շրջանակներում պետության համագործակցությունը խթանելուն նպատակաուղղված բոլոր հնարավոր քայլերը ձեռնարկելուց հետո Խորհուրդը համապատասխանաբար կանդրադառնա մեխանիզմի շրջանակներում մշտապես չհամագործակցելու դեպքերին:

# Ամփոփություն

1 Տես A/HRC/5/21, գլուխ III, 60-62-րդ պարբերություններ

2 Համընդհանուր պարբերական դիտարկումը զարգացող գործընթաց է. Խորհուրդը դիտարկման առաջին փուլի ավարտից հետո, կարող է վերանայել դիտարկման իրականացման ձևը և պարբերականությունը՝ հիմնվելով լավագույն փորձի և քաղաքական դասերի վրա:

3 Անհրաժեշտ է ստեղծել Համընդհանուր պարբերական դիտարկման կամավոր հավատարմագրային հիմնադրամ՝ զարգացող երկրների, հատկապես քիչ զարգացած երկրների մասնակցությունը համընդհանուր պարբերական դիտարկման գործընթացին խթանելու համար:

4 Խորհուրդը պետք է որոշում ընդունի, թե արդյոք նպատակահարմար է օգտագործել գործող ֆինանսական մեխանիզմները, թե ստեղծել նոր մեխանիզմ:

## 2. Մարդու իրավունքների խորհրդի թիվ 6/102 որոշում. Մարդու իրավունքների խորհրդի թիվ 5/1 բանաձևի ընդունումից հետո իրականացվող քայլերը

Մարդու իրավունքների խորհուրդը 2007 թվականի սեպտեմբերի 27-ի իր 20-րդ հանդիպման ժամանակ որոշեց առանց քվեարկության ընդունել՝

### *«I. ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐԸ»*

«Վերահաստատելով համընդհանուր պարբերական դիտարկմանը վերաբերող Գլխավոր ասամբլեայի 2006 թվականի մարտի 15-ի թիվ 60/251 բանաձևի և Խորհրդի գործունեության կազմակերպմանը վերաբերող Մարդու իրավունքների խորհրդի 2007 թվականի հունիսի 18-ի թիվ 5/1 բանաձևի համապատասխան դրույթները՝ Խորհուրդն ընդունում է հետևյալ ընդհանուր ուղեցույցները՝

Ա. համընդհանուր պարբերական դիտարկման շրջանակներում տրամադրվող տեղեկատվության պատրաստման համար կիրառված մեթոդաբանության և խորհրդակցությունների լայնածավալ գործընթացի նկարագրությունը.

Բ. դիտարկվող պետության վերաբերյալ տեղեկությունները և մարդու իրավունքները խթանելու և պաշտպանելու համար նախատեսված համակարգը, մասնավորապես, իրավական և ինստիտուցիոնալ համակարգը. սահմանադրությունը, օրենսդրությունը, քաղաքականության միջոցները, դատական պրակտիկան, մարդու իրավունքների ոլորտի ենթակառուցվածքները, այդ թվում՝ մարդու իրավունքների պաշտպանության ազգային կառույցները, և 5/1 բանաձևի 1-ին հավելվածի Ա բաժնում ներկայացված «դիտարկման հիմքերով» սահմանված միջազգային պարտավորությունների շրջանակը.

Գ. տվյալ երկրում մարդու իրավունքների խթանումը և պաշտպանությունը. մարդու իրավունքների ոլորտում 5/1 բանաձևի 1–ին հավելվածի Ա բաժնում ներկայացված «դիտարկման հիմքերով» սահմանված միջազգային պարտավորությունների, ազգային օրենսդրության և կամավոր հանձնառությունների կատարումը, մարդու իրավունքների ազգային կառույցների գործունեությունը, մարդու իրավունքների վերաբերյալ հանրության իրազեկվածությունը, մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների հետ համագործակցությունը...

Դ. ձեռքբերումների, լավագույն փորձի, դժվարությունների և սահմանափակումների նշումը.

Ե. ազգային մակարդակում կարևոր առաջնահերթությունները, նախաձեռնությունները և այն հանձնառությունները, որոնք ստանձնելու մտադրություն ունի տվյալ պետությունը նշված դժվարություններն ու սահմանափակումները հաղթահարելու և տվյալ երկրում մարդու իրավունքների ոլորտում տիրող իրավիճակը բարելավելու նպատակով.

Զ. կարողությունների ստեղծման, ինչպես նաև տեխնիկական աջակցություն ստանալու համար ներկայացված դիմումների (եթե այդպիսիք ներկայացվել են) առնչությամբ տվյալ երկրի ակնկալիքները.

Է. տվյալ պետության կողմից նախորդ դիտարկումից հետո իրականացված քայլերը ներկայացնելը:

# 3. Հայաստանի Հանրապետության ազգային զեկույց Մարդու իրավունքների խորհրդի 5/1 բանաձեվի 15 (ա) կետի համաձայն

## I. ՄԵԹՈԴՈԼՈԳԻԱ

1. ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի (ՄԻԽ) 5/1 բանաձևի 15 (ա) կետի համաձայն ներկայացվող Հայաստանի Հանրապետության ազգային զեկույցը պատրաստվել է ՀՀ կառավարության 2007թ. նոյեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններին համապատասխան Հայաստանի Հանրապետության ազգային զեկույցների պատրաստման և հաստատման կարգը սահմանելու մասին» N1483-Ն որոշման համաձայն և հաստատվել է ՀՀ կառավարության կողմից 2010 թվականի փետրվարի 4 –ին:
2. Զեկույցի համար պահանջվող տեղեկատվության ապահովման նպատակով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009թ. ապրիլի 21-ի թիվ 320-Ա որոշմամբ ստեղծվել են միջգերատեսչական աշխատանքային խմբեր ՄԱԿ-ի «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի, «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրի, «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի, «Խոշտանգումների և այլ դաժան« անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» կոնվենցիայի, «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» միջազգային կոնվենցիայի և Եվրոպայի խորհրդի «Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին» շրջանակային կոնվենցիայի կատարման վերաբերյալ ազգային զեկույցները մշակելու նպատակով: Նշված զեկույցները, նախքան ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացվելը, քննարկվել են հասարակական ու միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ և վերջնականացվել են նրանց կարծիքները հաշվի առնելով:
3. Սույն զեկույցը մշակվել է ՀՀ արտաքին գործերի նախարարության կողմից ՀՀ նախագահի աշխատակազմի, Ազգային ժողովի, արդարադատության, աշխատանքի և սոցիալական հարցերի, առողջապահության, կրթության և գիտության, մշակույթի, տարածքային կառավարման, ֆինանսների նախարարությունների, ոստիկանության և գլխավոր դատախազության հետ համագործակցությամբ: Այն ևս ներկայացվել է հասարակական կազմակերպություններին՝ կարծիքի:

## II. ԵՐԿՐԻ ՄԱՍԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4. Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (այսուհետ[1] Սահմանադրություն)[2] Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է:
5. Ըստ Սահմանադրության հոդված 2-ի[3] իշխանությունը պատկանում է ժողովրդին, որն այն իրականացնում է ազատ

ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով:

6. Պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան[7] օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիման վրա /հոդվ. 5/:
7. ՀՀ Նախագահը պետության գլուխն է, հետևում է Սահմանադրության պահպանմանը, ապահովում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեությունը: Նախագահն ընտրվում է ՀՀ քաղաքացիների կողմից4 5 տարի ժամկետով և չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել այդ պաշտոնում:
8. Հայաստանում օրենսդիր իշխանությունն իրականացնում է Ազգային ժողովը, որը կազմված է 131 պատգամավորից, ովքեր ընտրվում են 5 տարի ժամկետով: Ազգային ժողովում օրենսդրական նախաձեռնության իրավունքը պատկանում է պատգամավորներին և կառավարությանը:
9. Ներքին քաղաքականությունը մշակում և իրականացնում է Կառավարությունը, իսկ արտաքին քաղաքականությունը[5] ՀՀ Նախագահի հետ համատեղ: Կառավարությունը կազմված է վարչապետից և նախարարներից: Վերջիններց մեկը վարչապետի առաջարկությամբ կարող է ՀՀ Նախագահի կողմից նշանակվել փոխվարչապետ:

## III. ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

10. 1992թ.-ից դառնալով ՄԱԿ-ի անդամ և ընդունելով համամարդկային արժեքների, մարդու իրավունքների պաշտպանության և ժողովրդավարության հաստատման սկզբունքները որպես պետական գաղափարախոսության անբաժանելի մաս, Հայաստանն ակտիվորեն աշխատանք է ծավալում և համագործակցում ՄԱԿ-ի բազմաթիվ կառույցների և ստորաբաժանումների հետ մարդու իրավունքների պաշտպանության ու առաջմղման նպատակով: 2006թ.-ի ապրիլին Հայաստանը բաց հրավեր է հղել ՄԻԽ բոլոր հատուկ ընթացակարգերին:

    Հայաստանը միացել է մարդու իրավունքների ոլորտի ավելի քան 50, այդ թվում՝ բոլոր հիմնարար միջազգային պայմանագրերին: Հայաստանը ստորագրել է Հաշմանդամների իրավունքների մասին միջազգային կոնվենցիան և դրա կամընտիր արձանագրությունը, Բոնի անհետացումից բոլոր անձանց պաշտպանության մասին միջազգային կոնվենցիան, ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի կամընտիր արձանագրությունը, որոնք ներկայումս գտնվում են վավերացման գործընթացում:
11. Հայաստանի ներկայացուցիչը նշանակվել է ՄԱԿ-ի հատուկ զեկուցող՝ ստրկության ժամանակակից ձևերի, դրանց պատճառների և հետևանքների վերացման հարցերով:
12. Սահմանադրության հոդված 14-ն ամրագրում է, որ մարդու

արժանապատվությունը[8] որպես նրա իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմք, հարգվում և պաշտպանվում է պետության կողմից:

13. Սահմանադրությամբ սահմանավում է, որ միջազգային պայմանագրերն ուժի մեջ են մտնում միայն վավերացվելուց կամ հաստատվելուց հետո, իրավական համակարգի բաղկացուցիչ մաս են կազմում և, եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը: Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերը չեն կարող վավերացվել /հոդված 6/:

14. 2003թ. հոկտեմբերի 21-ին ընդունվել է «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքը, որով մանրամասն կարգավորվում են մարդու իրավունքների ինստիտուտի կազմակերպման և գործունեության կարգը: Օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ մարդու իրավունքների պաշտպանն (այսուհետ՝ Պաշտպան) անկախ և անփոխարինելի անձ է, որն իրականացնում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից մարդու խախտված իրավունքների և ազատությունների պաշտպանությունը: Պաշտպանն ընտրվում է Ազգային ժողովի կողմից, վեց տարի ժամանակով[6] հավաքելով պատգամավորների ընդհանուր թվի ձայների առվազն 3/5-ը: ՀՀ Նախագահի 18.07.2007թ. թիվ ՆՀ-174-Ն հրամանագրի 42-րդ կետի համաձայն, մարդու իրավունքներին և ազատություններին վերաբերող օրենքների նախագծերը, նախքան կառավարություն ներկայացնելն, ուղարկվում են Պաշտպանին՝ կարծիքի: Պաշտպանը հանդիսանում է «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիայի» կամընտիր արձանագրությամբ սահմանված կանխարգելման ազգային մեխանիզմ:

## Ա. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

15. Հայաստանը շարունակում է բարեփոխումներ իրականացնել երկրի ներսում նպատակ ունենալով լիարժեքորեն ապահովել մարդու իրավունքների պաշտպանությունն ու օրենքի գերակայությունը:

- 1998թ.-ին ուժի մեջ է մտել ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը: Այն պարբերաբար ենթարկվում է փոփոխությունների՝ առավել համահունչ դառնալով ՀՀ միջազգային հանձնառություններին:
- 1999թ.-ին ընդունվել է ՀՀ ընտրական օրենսգիրքը, որը 2008թ.-ին ենթարկվել է փոփոխությունների:
- 2002թ.-ին ընդունվել է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը, որով սահմանվում են տեղական ինքնակառավարման սկզբունքները, մարմինները, լիազորությունները, դրանց իրավական, տնտեսական, ֆինանսական հիմքերն ու երաշխիքները, ինչպես նաև կարգավորվում են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունները:
- Ուժի մեջ են մտել նաև նոր ՀՀ քրեական օրենսգիրքը (2003թ.), նոր ՀՀ աշխատանքային օրենսգիրքը (2005թ.), ՀՀ ընտանեկան օրենսգիրքը (2005թ.) և ՀՀ դատական օրենսգիրքը (2007թ.):

16. 2005 թվականի նոյեմբերի 27-ին հանրաքվեի միջոցով փոփոխություններ և լրացումներ են կատարվել Սահմանադրության մեջ, որում էական բարեփոխումների են ենթարկվել նաև մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներին ու ազատություններին վերաբերող դրույթները[7] դրանք առավել համահունչ դարձնելով Մարդու իրավունքների միջազգային դաշնագրերի պահանջներին:
17. Ներկայումս մշակման փուլում է գտնվում Մարդու իրավունքների պաշտպանության համապարփակ ազգային ծրագիրը, որը նախատեսվում է հաստատել 2011թ.-ին:

## IV. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋՄՂՈՒՄ

### *Ա. Ցեղասպանություն*

18. Հայաստանը շարունակում է հետամուտ լինել միջազգային հանրության կողմից Հայոց ցեղասպանության ճանաչմանը՝ նպատակ ունենալով ոչ միայն հաստատել միջազգային իրավունքի գերակայությունն ու արդարությունը, այլև, անպատժելիությունը բացառելով, կանխել ապագայում նման հանցագործությունների կրկնությունը:
19. ՀՀ նախաձեռնությամբ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի կողմից 1998թ.-ին ընդունվել են «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և պատժման մասին կոնվենցիայի 50-ամյակին նվիրված», իսկ 1999 և 2001թթ. «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և պատժման մասին» բանաձևերը: 2008թ.-ի մարտին ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհուրդը կոնսենսուսով ընդունել է Հայաստանի ներկայացրած «Ցեղասպանության կանխարգելում» բանաձևը, որը համահեղինակել են 62 երկիր: Բանաձևի ընդունմամբ ցեղասպանության ճանաչման և կանխարգելման խնդիրները բարձրացվեցին նոր մակարդակի վրա՝ սահմանելով պետության անմիջական պատասխանատվությունն իր երկրի ժողովրդի առջև: Նշված բանաձևերի շնորհիվ ներկայումս միջազգային հանրության ուշադրության կենտրոնում է ցեղասպանության իրավիճակի վաղ ազդարարման խնդիրը, ինչը կարևոր է ցեղասպանությունների կանխարգելման գործում:

### *Բ. Ինքնորոշման իրավունք*

20. Հայաստանը, հավատարիմ ՄԱԿ-ի կանոնադրության դրույթներին, ինչպես նաև հիմնվելով Հելսինկիի եզրափակիչ փաստաթղթում ամրագրված սկզբունքների վրա, ազգերի ինքնորոշման իրավունքը դիտարկում է որպես մարդու հիմնարար ու անքակտելի իրավունք և հետևողականորեն հանդես է գալիս նրա իրականացման օգտին: Հայաստանը ղեկավարվում է այն փաստով, որ այսօր ժողովուրդների ինքնորոշման իրավունքի սկզբունքը անխտիր բոլոր պետությունների համար պարտադիր միջազգային և պետական իրավունքի հիմնարար հանրաճանաչ նորմ է, և դրա իրականացումը բխում է պետությունների միջազգային պարտավորություններից:
21. Պետության տարածքային ամբողջականության և ժողովուրդների

ինքնորոշման իրավունքների միջև որևէ ստորակարգում չկա միջազգային իրավունքում և ինքնորոշման բուն իրավունքը ոչ մի կերպ չի կարող սահմանափակվել, կանգ առնել, կամ վերածվել պետության տարածքային ամբողջության կամ գոյություն ունեցող պետական սահմանների պահպանման խնդրի: Հայաստանը մշտապես հանդես է եկել նման ստորակարգման անթույլատրելիության դիրքերից, և դիտարկում է այդպիսի փորձերը որպես ժողովրդի ազատ կամարտահայտման սահմանափակմանը, խոչընդոտմանը կամ ճնշմանն ուղղված քայլեր: Ժողովուրդների ինքնորոշման իրավունքը, որպես միջազգային իրավունքի հրամայական նորմ, պետք է ճանաչվի միշտ և բոլոր դեպքերում, անկախ այն բանից, թե երբ, ինչ հանգամանքներում և ինչի հիման վրա է ունեցել այն տարածքի միավորումը, հանձնումը կամ օտարումը, որի ժողովուրդը դնում է ինքնորոշման հարցը:

22. Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը, լիովին համահունչ գործող ԽՍՀՄ օրենքների դրույթներին ու միջազգային իրավունքի սկզբունքներին, 1991թ.-ի դեկտեմբերի 10-ի հանրաքվեի միջոցով ձեռք բերեց անկախություն Ադրբեջանական ԽՍՀ-ից և կազմավորեց առանձին պետական միավոր՝ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն» (ԼՂՀ) անվամբ: Անկախ պետականության հաստատման օրվանից ի վեր, Լեռնային Ղարաբաղի ժողովուրդն իրականացնում է իր ինքնորոշման իրավունքը պետական կառավարման մարմիններ կազմավորելու, ընտրություններ անցկացնելու, օրենսդիր մարմնի կողմից օրենքների ընդունման և պետության կառավարման այլ անհրաժեշտ գործառույթներ իրականացնելու միջոցով: ԼՂՀ ժողովրդի քաղաքական և քաղաքացիական, տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքների համար պատասխանատվություն է կրում ԼՂՀ կառավարությունը՝ իր ընդունած որոշումների ու իրականացվող քաղաքականության միջոցով: Որպես ընդհանուր սկզբունք և հավատարիմ լինելով ժողովրդավարական ու իրավունքի գերակայության վրա հիմնված հասարակության կառուցման նպատակին, ԼՂՀ իշխանությունները միակողմանիորեն միացել են միջազգային իրավունքի հիմնարար փաստաթղթերին և դրանք ներմուծում են սեփական օրենսդրության մեջ:

23. Հայաստանի Հանրապետությունը հաստատակամորեն հետամուտ է Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրականացմանը և ամեն կերպ օժանդակում է նրա ժողովրդի բոլոր հիմնարար իրավունքների առաջմղմանը:

24. Ադրբեջանը, ելնելով ԼՂ ժողովրդի ինքնորոշման իրավունքի կիրառման և այդ իրավունքի բռնի սահմանափակման իր քաղաքականությունից, և որպես այդ քաղաքականության արդյունք՝ սանձազերծած պատերազմի հետևանքով, որը բազմաթիվ մարդկային ու նյութական կորուստների պատճառ դարձավ, Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի հանդեպ տնտեսական շրջափակման քաղաքականություն է իրականացնում, ինչը լուրջ խոչընդոտ է զարգացման ու մի շարք այլ, առաջին հերթին՝ քաղաքական ու քաղաքացիական իրավունքների լիարժեք իրականացումն ապահովելու համար:

## Գ. Արդարադատություն

25. Համաձայն Սահմանադրության 6-րդ գլխի[8] Հայաստանում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները[9] Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան: Սահմանադրական արդարադատությունն իրականացնում է Սահմանադրական դատարանը: ՀՀ-ում գործում են ընդհանուր իրավասության առաջին ատյանի, վերաքննիչ դատարանները և վճռաբեկ դատարանը, որն ունի երկու[10] քրեական պալատ և քաղաքացիական ու վարչական պալատ, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև մասնագիտացված դատարաններ /հոդված 91-92/: Ներկայումս որպես մասնագիտացված գործում է վարչական դատարանը:
26. 2007թ.-ից ուժի մեջ է մտել ՀՀ դատական օրենսգիրքը, որով, ի լրումն Սահմանադրության 96-98 հոդվածների, կարգավորվում են դատական իշխանության կազմակերպման և գործունեության հարաբերությունները (բացառությամբ ՀՀ սահմանադրական դատարանի): Այն որդեգրել է ժողովրդավարական երկրներին բնորոշ և միջազգային իրավունքում հայտնի մի շարք սկզբունքներ, որոնք կոչված են ապահովելու արդարադատության իրականացումը միայն օրենքին համապատասխան և տալու դատավորների ու դատարանների ինքնավարության, անկախության և ինքնուրույնության իրական երաշխիքներ:
27. Դատավորների անկախության հարցում կարևորագույն դեր ունի Արդարադատության խորհուրդը, որպես անկախ մարմին, այդ թվում և գործադիրից, որին էլ վերապահված է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու իրավունքը:
28. 2005թ.-ի սահմանադրական փոփոխությունների արդյունքում 2006թ. հուլիսի 1-ից սահմանադրական դատարան դիմելու իրավունք ստացան նաև ֆիզիկական և իրավաբանական անձինք, ովքեր կարող են սահմանադրական դատարանում վիճարկել իրենց նկատմամբ դատական վերջնական ակտով կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը /հոդված 101/: Ըստ այդմ[9] Սահմանադրական դատարանը 2006թ. հուլիսից մինչև 2009թ. հոտեմբեր ընկած ժամանակահատվածում քննության է առել տասնյակ քաղաքացիների կողմից ներկայացված անհատական դիմումների հիման վրա հարուցված 46 գործ, որից 20-ի դեպքում վիճարկած օրենսդրական դրույթները ճանաչել է Սահմանադրությանը հակասող և անվավեր:
29. 2002թ.-ին դառնալով Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի անդամ[11] Հայաստանը ճանաչեց Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավասությունները: 2009թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ Եվրոպական դատարանի կողմից կայացվել է թվով 20 վճիռ:
30. 2004թ. ընդունված «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով սահմանվում է հանրային պաշտպանության ինստիտուտը և նշվում, որ պետությունը երաշխավորում է անվճար իրավաբանական օգնություն քրեական գործերով՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և

նախատեսված դեպքերում, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

## Դ. Ազգային փոքրամասնություններ, ռասայական խտրականություն

31. Հայաստանում ստեղծված է համապատասխան օրենսդրական դաշտ ՀՀ տարածքում բնակվող փոքրամասնությունների ներկայացուցիչների իրավունքներն ու ազատություններն ապահովելու համար:
32. Հայաստանը վավերացրել է ՄԱԿ-ի «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիան, Եվրոպայի խորհրդի «Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին» շրջանակային կոնվենցիան և «Տարածաշրջանային և փոքրամասնությունների լեզուների մասին» եվրոպական խարտիան, որոնց կատարման վերաբերյալ սահմանված կարգով ներկայացնում է ազգային զեկույցներ: 2009թ. ներկայացվել են Եվրոպայի խորհրդի «Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին» շրջանակային կոնվենցիայի կատարման վերաբերյալ երրորդ զեկույցը, և ՄԱԿ-ի Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի կատարման վերաբերյալ 5-րդ և 6-րդ պարբերական զեկույցը:
18. Հայաստանը 1993թ.-ին վավերացրել է «Աշխատանքի և զբաղմունքների բնագավառում խտրականության մասին» ԱՄԿ 111 կոնվենցիան, որի դրույթները իրենց արտացոլումն են գտել ՀՀ համապատասխան ներպետական իրավական ակտերում:
33. ՀՀ սահմանադրական բարեփոխումների ժամանակ Սահմանադրությունը լրացվել է նոր՝ 14.1 հոդվածով, որում, մասնավորապես, ասվում է. «Բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև: Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է»:
34. Սահմանադրության 41-րդ հոդվածը հռչակում է յուրաքանչյուրի[10] իր ազգային և էթնիկական ինքնությունը պահպանելու իրավունքը: Ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք ունեն իրենց ավանդույթների «կրոնի» լեզվի և մշակույթի պահպանման ու զարգացման իրավունքը:
35. «ՀՀ քաղաքացիության մասին» օրենքի 3-րդ հոդվածով սահմանվում է, որ ՀՀ քաղաքացիները հավասար են օրենքի առաջ՝ անկախ ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու հիմքերից, ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, ունեն Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված բոլոր իրավունքները, ազատություններն ու պարտականությունները:
36. ՀՀ քրեական օրենսգիրքը սահմանում է, որ մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատություններն ուղղակի կամ անուղղակի խախտելը՝ կախված անձի ազգությունից, ռասայից, սեռից,

լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, որը վնաս է պատճառել անձի օրինական շահերին, պատժվում է տուգանքով կամ ազատազրկմամբ:

37. Հայաստանը ակտիվորեն համագործակցում է Եվրոպայի խորհրդի ազգային փոքրամասնությունների հարցերով զբաղվող և մոնիտորինգ իրականացնող մարմինների հետ՝ Ազգային փոքրամասնությունների հարցերով փորձագետների կոմիտե (DH-MIN), «Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին» շրջանակային կոնվենցիայի խորհրդատվական կոմիտե, Ռասիզմի և անհանդուրժողական դեմ եվրոպական կոմիտե (ECRI), «Տարածաշրջանային և փոքրամասնությունների լեզուների մասին» եվրոպական խարտիայի փորձագետների կոմիտե:

38. Հայաստանի Հանրապետությունում բնակվում են 11 ազգային փոքրամասնություններ՝ ռուսներ, ասորիներ, եզդիներ, քրդեր, հույներ, ուկրաինացիներ, բելոռուսներ, գերմանացիներ, լեհեր, հրեաներ և վրացիներ, որոնք համաձայն 2001թ. մարդահամարի կազմում են Հայաստանի բնակչության 2.2%-ը:

39. Ազգային փոքրամասնությունների մշակութային ժառանգության, մշակույթի պահպանմանը, տարածմանը և զարգացմանը մշտապես նպաստելը հանդիսանում է ՀՀ մշակութային քաղաքականության գերակա ուղղություններից մեկը: Այն իր արտացոլումն է ստացել Հայաստանի Հանրապետության կառավարության 2008-2012թթ. գործունեության միջոցառումների ծրագրի մեջ: Նախատեսված համապատասխան միջոցառումների նպատակն է պահպանել ազգային փոքրամասնությունների մշակութային ինքնությունը և ներգրավվել Հայաստանի մշակութային դաշտին՝ ազգային փոքրամասնությունների լեզուներով ոչ պետական մամուլի և գրականության տպագրման, փառատոների կազմակերպման, կրոնական և էթնիկ համայնքների հուշարձանների վերականգման և ժամանակակից արվեստի զարգացմանն աջակցության միջոցով:

40. Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարական դրույթներով նախատեսված մշակույթի ոլորտի միջոցառումների ծրագրի 6-րդ կետը վերաբերում է Հայաստանի տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների պատմական, հոգևոր, մշակութային արժեքների և էթնիկական ինքնության պաշտպանությանը և նախատեսում է, որ Հայաստանի Հանրապետության քաղաքականությունը ազգային փոքրամասնությունների ոլորտում խարսխվում է երեք հիմնարար սկզբունքների վրա.

ա) նպաստել էթնիկ ինքնության պահպանմանը և էթնիկ մշակույթի զարգացմանը,

բ) կանխարգելել էթնիկ որևէ խտրականություն,

գ) նպաստել Հայաստանի հասարակության մեջ ոչ հայազգի բնակչության լիարժեք ինտեգրմանը:

41. Հայաստանում ազգային փոքրամասնությունների մշակութային կյանքը կազմակերպելու, առկա խնդիրները կարգավորելու գործում մեծ նշանակություն է ունեցել 2002թ. ընդունված «Մշակութային օրենսդրության

հիմունքների մասին» ՀՀ օրենքը, որն սահմանել է ազգային փոքրամասնությունների մշակույթի զարգացմանը նպաստող պե-տության քաղաքականության ուղղությունները:

42. Ազգային փոքրամասնությունների պաշտպանության գործում կարևոր քայլ էր Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների համակարգող խորհրդի (այսուհետ[12] Խորհուրդ) ստեղծումը 2000թ.-ին[13] ՀՀ Նախագահի կարգադրությամբ[14] հանրապետությունում ազգային փոքրամասնությունների պաշտպանվածությունն ապահովելու, նրանց միջհամայնքային հարաբերություններն ակտիվացնելու, ինչպես նաև հատուկ կրթամշակութային, իրավական և այլ խնդիրների նկատմամբ պետական հոգածությունն առավել արդյունավետ դարձնելու անհրաժեշտությունից ելնելով: Խորհրդի անդամներն են ՀՀ-ում առկա 11 ազգային փոքամասնություններից առաջադրված երկուական ներկայացուցիչ:

43. 2004թ.-ին ձևավորվել է ՀՀ կառավարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչությունը: Այն մասնակցում է ՀՀ կառավարության գործունեության ծրագրի կազմմանը, իրականացնում է «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված պետության և կրոնական կազմակերպությունների միջև հարաբերությունների կարգավորումն իրականացնող և «Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց ավանդույթների պահպանումը, լեզվի և մշակույթի զարգացման իրավունքի պաշտպանությունը ապահովող» ՀՀ կառավարության կողմից լիազորված մարմնի գործառույթները:

44. 2000թ. սկսած ազգային փոքրամասնություններին պետական բյուջեից, Խորհրդի անդամ հանդիսացող 11 համայնքները ներկայացնող կազմակերպությունների միջոցով, հատկացվում է 10մլն դրամ ֆինանսական աջակցություն՝ նրանց կրթական-մշակութային գործունեությանը նպաստելու նպատակով:

45. Անցկացվող միջոցառումներին մասնակցում են Խորհրդում ներկայացված առկա 11 ազգությունների ներկայացուցիչներ: Բացի այդ յուրաքանչյուր համայնք իր ազգային տոներին հրավիրում է մնացած բոլոր էթնիկ համայնքների ներկայացուցիչներին: Այս ամենը թույլ է տալիս ՀՀ տարածքում բնակվող ազգային փոքրամասնություններին ծանոթանալ միմյանց լեզվին, ավանդույթներին, սովորույթներին, ծիսակատարություններին, ինչն իր հերթին փոխընբռման, հանդուրժողականության մթնոլորտ է ձևավորում և նպաստում մշակույթների փոխթափանցմանն ու հարստացմանը:

46. Խորհրդի գործունեության վերջին տարիների ամենահիշարժան նախաձեռնություններն էին եզդիերեն և ասորերեն լեզվով տարրական դասարանների դասագրքերի տպագրությունը, Ազգությունների մշակութային կենտրոնի ստեղծումը 2006թ.-ին[15] իշխանությունների օժանդակությամբ, նոր քրդական «Զագրոս» պարբերականի լույս ընծայումը (2007թ.):

47. Միաժամանակ, ազգային փոքրամասնությունների առանձին կրթական, մշակութային և սոցիալական ծրագրեր

ևս ֆինանսավորվում են պետական մարմինների կողմից: Հարկ է նշել, որ չնայած տնտեսական ճգնաժամին, ազգային փոքրամասնությունների կրթամշակութային ծրագրերը շարունակում են անխափան իրականացվել:

48. Հայաստանում ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության ոլորտում բավականին ակտիվ դեր է կատարում նաև «Հայաստանի Հանրապետության ազգությունների միություն» հասարակական կազմակերպությունը, որն համակարգում է Հայաստանում ապրող ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպությունների գործունեությունը՝ իրենց համաձայնությամբ, հանուն բոլոր ազգությունների միջև համագործակցության և փոխըմբռնման ամրապնդման: Կազմակերպության բարձրագույն մարմինը ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների ընդհանուր ժողովն է: Այս պահին ազգությունների խորհրդին անդամակցում են ազգային փոքրամասնությունների 14 հասարակական կազմակերպություն:

49. Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության տարեկան և միջնաժամկետ ծախսային ծրագրերում ամեն տարի նախատեսվում են բյուջետային հատկացումներ ազգային փոքրամասնությունների մշակութային միջոցառումներին աջակ-ցելու նպատակով: Մասնավորապես[16] 2007թ. նախատեսվել էր 700000 դրամ, 2008թ.՝ 1800000 դրամ, իսկ 2009թ. բյուջեում՝ 2300000 դրամ:

50. Նկատի ունենալով, որ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները մեծ մասամբ բնակվում են ՀՀ մարզերում՝ մարզային մշակութային զարգացման ծրագրերում հաշվի է առնվում նաև այդ հանգամանքը: Ամեն մարզի նկատմամբ ցուցաբերվում է առանձնակի մոտեցում՝ կախված տվյալ մարզում բնակվող ազգային փոքրամասնության առանձնահատկություններից և հիմնախնդիրներից: Վերոհիշյալ ծրագրերի կազմման աշխատանքներին ներգրավվում են ազգային փոքրամասնությունների միությունների ներկայացուցիչները:

51. Հայաստանում ազգային փոքրամասնությունների լեզուներով 2008-2009թթ. հրատարակվում է 11 թերթ և 4 ամսագիր (որից 9-ը և 3-ը համապատասխանաբար[17] պետական աջակցությամբ): Ազգային փոքրամասնությունների լեզուներով լույս տեսնող մամուլին 2008թ. տրամադրվել է 9627100 դրամ, իսկ 2009թ.[18] 12168000 դրամ պետական աջակցություն:

52. Հայաստանը մեծ կարևորություն է տալիս ազգային փոքրամասնությունների երեխաների կրթական իրավունքի իրացմանը և մայրենի լեզվով դասավանդման կազմակերպմանը: 2007թ.-ից նախադպրոցական հաստատություններում ազգային փոքրամասնություններով երեխաների խմբերի գործարկումը թույլատրվում է 8-10 երեխաների առկայության դեպքում, մինչդեռ երեխաների համակազմի ընդհանուր ցուցանիշը սահմանված է 25-30:

53. 2007-2009թթ.-ի ընթացքում ազգային փոքրմասնությունների կրթության ոլորտի ձեռքբերումներից, ի թիվս բազմաթիվ քայլերի, կարելի է առանձնացնել «Ազգային փոքրամասնությունների հանրակրթական դպրոցի (դասարանի) օրինակելի ուսումնական պլանի»

կազմումը և ներդրումը (2009թ.), եզդիերեն լեզվի և գրականության 4-5 –րդ դասարանների դասագրքեր ստեղծումը (2008), 6-րդ, 7-րդ դասարանների դասագրքերի հրատարակումը (2009թ.), ասորերենի այբբենարանի մշակումը և հրատարակումը (2007թ.) առաջին դասարանի համար «Խոսիր ասորերեն» դասագրքի հրատարակումը (2009թ.) հանրակրթական դպրոցի «Հասարակագիտություն» առարկայի չափորոշիչում և ծրագրում «Ազգային փոքրամասնությունների իրավունքները» և «Հանդուրժողականություն» թեմատիկ միավորների ընդգրկումը և ազգային փոքրամասնություններին պատկանող ուսուցիչների պարբերական վերապատրաստումները:

54. Ազգային փոքրամասնություններին պատկանող դիմորդներն բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվում են ինչպես ընդհանուր հիմունքներով, այնպես էլ ազգային փոքրամանությունների ղեկավարների կողմից ներկայացված հայտերի հիման վրա: 2004-2009թթ. բուհական ուսուցման մեջ ներառված ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց թիվը 74 է:

55. Չնայած պետության կողմից ձեռնարկվող քայլերին, որոնք ուղղված են Հայաստանի ազգային փոքրամասնություններին սեփական մանկավարժներով ապահովելուն, ռուսական՝ մոլոկանական, եզդիական և քրդական համայքներում այս խնդիրը լիովին լուծել դեռ չի հաջողվել:

56. Այս ժողովուրդների մշակութային ավանդապահությունը նպաստում է երեխաների թերի կրթությանը: Ռուսական՝ մոլոկանական, եզդիական և քրդական համայնքներում աշխատանքը գերադասվում է կրթությանը: Ուսման հանդեպ այսպիսի մոտեցման հաղթահարման խնդիրը գտնվում է Հայաստանի համապատասխան պետական մարմինների մշտական ուշադրության կենտրոնում, որոնք պարբերաբար հանդիպումներ են ունենում համայքների ներկայացուցիչների հետ՝ խնդրի քննարկման և լուծումներ գտնելու նպատակով:

57. Հայաստանի իշխանությունները կարևորում են նաև ռասայական խտրականության ցանկացած դրսևորման դեմ պայքարը թե՛ ազգային, թե՛ միջազգային մակարդակով: Դեռևս 2001թ. Դուրբանում կայացած Ռասիզմի դեմ համաշխարհային համաժողովի ընթացքում Հայաստանն ընտրվել էր համաժողովի փոխնախագահ՝ ակտիվորեն մասնակցելով դրա աշխատանքներին: 2009թ. կայացած Դուրբանի վերանայման համաժողովի կազմակերպչական աշխատանքների հենց սկզբից՝ 2007թ.ից, Հայաստանն ակտիվ մասնակցություն է ցուցաբերել այդ գործընթացին՝ ընտրվելով Նախապատրաստական կոմիտեի փոխնախագահ: Դուրբանի հռչակագրի ու գործողությունների ծրագրի սկզբունքներն ընկած են ռասայական խտրականության դեմ պայքարին առնչվող Հայաստանի պետական մարմինների գործունեության հիմքում: Ազգային մակարդակով դրանք հաշվի են առնվում թե՛ իրավական բարեփոխումների, թե՛ գործնական միջոցառումների իրականացման ընթացքում:

58. Ազգային ատելության քարոզչության տեսակետից վերջին տարիներին խիստ մտահոգության առիթ է դարձել

Ադրբեջանի կողմից հայերի և Հայաստանի հանդեպ ատելության հրահրումը և պատերազմական գործողություններ սկսելու ակնհայտ քարոզչությունը: Նման գործողությունները նշված երկրի կողմից միջազգային պարտավորությունների ոտնահարում են: Հայերի հանեպ անհանդուրժողականության դրսևորումները և այլատյացության սերմանումը ոչ միայն մարդու իրավունքների կոպիտ խախտում են, այլև մտահոգիչ են տարածաշրջանային խաղաղության ու կայունության տեսանկյունից, ինչը պոտենցիալ վտանգ է ներկայացնում Հայաստանի անվտանգության համար: Ադրբեջանի նման վարքագծի[19] հայկական ծագում ունեցող անձնաց հանդեպ ատելության ու թշնամանքի սերմանման ու խտրականության դրսևորումների վերաբերյալ իրենց խորը անհանգստությունն են արտահայտել մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հեղինակավոր, անկախ մոնիտորինգային մարմինները[20] Եվրոպայի խորհրդի Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիայի Խորհրդատվական կոմիտեն , Ռասայական խտրականության դեմ Եվրոպական հանձնաժողովը , ԵՄ Մարդու իրավունքների հանձնակատարը: Հայաստանը բազմիցս բարձրաձայնել է իր մտահոգություններն այս առումով[11] կոչ անելով միջազգային հանրությանը, մասնավորապես Մարդու իրավունքների խորհրդին[21] քայլեր ձեռնարկել նման դրսևորումները կանխելու և կանխարգելելու ուղղությամբ:

## Ե. Կյանքի իրավունք

59. Կյանքի իրավունքը և մահապատժի չդատապարտվելու կամ չենթարկվելու իրավունքն ամրագրված է Սահմանադրության հոդված 15-ում: Հայաստանը 2003թ.-ին վավերացրել է Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի մահապատժի վերացման վերաբերյալ թիվ 6 արձանագրությունը: 2003թ.-ից ուժի մեջ մտած նոր Քրեական օրենսգրքի ընդհանուր մասից հանվել է մահապատիժը՝ որպես բացառիկ պատժատեսակ:

60. Մինչև 2003թ. մահապատժի դատապարտված անձանց նկատմամբ նշանակված պատիժը փոխարինվել է ցմահ ազատազրկմամբ: Հայաստանում ցմահ ազատազրկման չեն կարող դատապարտվել 18 տարին չլրացած անձինք, ինչպես նաև հանցանք կատարելու կամ դատավճիռ կայացնելու պահին հղի վիճակում գտնվող կանայք:

## Զ. Խոշտանգումներից և այլ դաժան կամ նվաստացնող վերաբերմունքից պաշտպանություն

61. Վերջին տարիներին Հայաստանում ծավալուն օրենսդրական և ինստիտուցիոնալ աշխատանքներ են տարվել խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային վերաբերմունքը և պատիժը վերացնելու ուղղությամբ:

62. Սահմանադրության 17-րդ հոդվածը սահմանում է, որ «ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, ինչպես նաև անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Ձերբակալված, կալանավորված և

ազատազրկված անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի և արժանապատվության հարգման իրավունք»: Հայաստանը վավերացրել է ոլորտի բոլոր հիմանարար միջազգային պայմանագրերը, ինչպիսիք են ՄԱԿ-ի «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» կոնվենցիան և դրա կամընտիր արձանագրությունը, Եվրոպայի խորհրդի 1987թ. «Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը կանխարգելելու մասին» եվրոպական կոնվենցիան և դրա երկու արձանագրությունները: ՄԱԿ-ի «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» կոնվենցիայի կատարման վերաբերյալ Հայաստանի 3-րդ և 4-րդ համատեղ պարբերական զեկույցը ներկայացվել է 2009թ.-ին:

63. 2001թ.-ից քրեակատարողական վարչությունը և դրան ենթակա հիմնարկները Ներքին գործերի նախարարությունից հանձնվել են Արդարադատության նախարարության ենթակայությանը[22] նպատակ ունենալով բարելավել քրեակատարողական ծառայության ողջ համակարգը, ինչպես նաև նպաստել կալանավորների պայմանների բարելավմանը, ապահովել նրանց իրավունքների առավելագույն պաշտպանությունը:

64. Նույն նպատակն է հետապնդում նաև 2002թ. մարտի 7-ից գործողության մեջ դրված «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքը, որը սահմանում է ձերբակալված անձանց արգելանքի և կալանավորված անձանց կալանքի տակ պահելու ընդհանուր սկզբունքները, պայմանները և կարգը, ձերբակալված և կալանավորված անձանց իրավունքները, դրանց ապահովման երաշխիքները, նրանց պարտականությունները, ինչպես նաև արգելանքից և կալանքից ազատելու կարգը: Ըստ հիշյալ օրենքի[23] ձերբակալված կամ կալանավորված անձանց նկատմամբ արգելվում է ֆիզիկական բռնություն գործադրելը, ինչպես նաև անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող գործողություններ կատարելը (2-րդ հոդված):

65. 2004թ. ընդունվել է ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը, որի 6-րդ հոդվածի համաձայն[24] պատժի կատարումը, ինչպես նաև պատժի կատարման հետ միացված բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառումը չպետք է զուգակցվեն անձի նկատմամբ ֆիզիկական բռնությամբ, ինչպես նաև այնպիսի գործողություններով, որոնք կարող են հանգեցնել անձի սոցիալ-հոգեբանական զարգացման հետընթացի: Դատավճռի հիման վրա ազատությունից զրկված ոչ մի անձ չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Ոչ մի հանգամանք չի կարող հիմք ծառայել խոշտանգումները կամ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժն արդարացնելու համար:

66. Արգելվում է ձերբակալված կամ կալանավորված անձին ենթարկել որևէ բժշկական կամ գիտական փորձի[25] անկախ վերջինիս համաձայնության:

67. Ուղղիչ հիմնարկում կանայք պահվում են տղամարդկանցից անջատ: Ձերբակալված կամ կալանավորված կանանց և անչափահասների համար ձերբակալված անձանց պահելու վայրերում (ՁՊՎ) և կալանավորվածներին պահելու վայրերում ստեղծվում են բարելավված նյութակենցաղային պայմաններ Հղի կամ իրենց մոտ երեխա ունեցող կանանց, որպես տույժի միջոց, պատժախուց տեղափոխելն արգելվում է:

68. Սահմանադրությունը (103 հոդված) բացառիկ լիազորություններ է վերապահել դատախազության մարմիններին հսկողություն իրականացնելու հետաքննության և նախաքննության օրինականության և պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ: 2007թ.-ից ուժի մեջ է մտել «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը:

69. Իրականացված օրենսդրական բարեփոխումները լուրջ նախադրյալներ են ստեղծել ազատազրկման վայրերի նկատմամբ վերահսկողության անկախ համակարգ ստեղծելու ուղղությամբ: 2005 թվականից սկսած գործում են ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողությունն իրականացնող հասարակական դիտորդների խումբը, ինչպես նաև ՀՀ ոստիկանության համակարգի ՁՊՎ-ներում հասարակական դիտորդների խումբը: Խմբերը կազմված են ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից, որոնք իրավասու են անարգել այցելել ՁՊՎ-ներ և քրեակատարողական հիմնարկներ և մարմիններ, ծանոթանալ իրավիճակին, ինչպես նաև հանդիպել ազատազրկվածներին և քրեակատարողական մարմինների հսկողության տակ գտնվող անձանց և ըստ այդմ ներկայացնել հաշվետվություններ:

70. Խմբերի գործունեության նպատակներն են՝ ձերբակալված անձանց պահելու վայրերում և քրեակատարողական մարմինների հսկողության տակ գտնվող անձանց իրավունքների պաշտպանության հասարակական վերահսկումը, ազատազրկվածների աշխատանքային ու կենցաղային պայմանների բարելավումը, մարդու իրավունքների խախտումների բացահայտմանն ու կանխարգելմանն ուղղված գործունեություն ծավալելը, հասարակությանը քրեակատարողական ծառայության հիմնախնդիրները ներկայացնելը և բազմաթիվ այլ հարցեր:

71. 2000-2009թթ. ընթացքում քրեակատարողական հիմնարկներում խոշտանգումների և այլ դաժան անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքների դեպքեր չեն արձանագրվել, բացառությամբ 1 դեպքի, որի առնչությամբ քրեական գործ է հարուցվել և մեղավորները դատապարտվել են 2 տարի ազատազրկման:

72. Կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի վարչակազմն պարտավոր է ընդունել կալանավորված անձանց կամ դատապարտյալների կողմից ներկայացվող առաջարկությունները, դիմումներն ու բողոքները: 2006թ.-ից 2009թ. հունիսն ընկած ժամանակահատվածում ստացվել են կալանավորվածների և դատապարտյալների 43844 դիմում, 40 բողոք և 4 առաջարկություն:

73. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում կատարվել են փոփոխություններ նպատակ ունենալով առավել վերահսկելի դարձնել հարցաքննության գործընթացը և նվազագույնի հասցնել կասկածյալների կամ մեղադրյալների նկատմամբ անմարդկային կամ այլ նվաստացնող վերաբերմունքը: Ըստ այդմ, քրեական գործով վարույթում մեղադրանքի հիմքում չեն կարող դրվել և որպես ապացույց օգտագործվել այն նյութերը, որոնք ձեռք են բերվել բռնությամբ, սպառնալիքով, խաբեությամբ, անձին ծաղրի ենթարկելով, ինչպես նաև այլ անօրինական գործողություններով, վկայի իրավունքների խախտմամբ, քննչական կամ այլ դատավարական գործողության կատարման կարգի էական խախտմամբ (հոդված 105): Չնայած օրենսդրական բարեփոխումներով ամրագրված դրույթներին, կիրարկման դաշտում դեռևս խնդիրներ կան, որոնք մշտական ուշադրության ու աշխատանքների լրացուցիչ բարելավման կարիք ունեն:

74. Կալանավորված անձանց և դատապարտյալների կրթությունը և մասնագիտական ուսուցումը կազմակերպումը դեռևս լուծման կարիք ունի: Արդեն կարգավորվել է անչափահաս դատապարտյալների հանրակրթական ուսուցման կազմակերպման հարցը:

75. Դեռևս խնդիրներ կան ՁՊՎ-ներում և քրեակատարողական հիմնարկներում պահման պայմանների առումով, ինչի ուղղությամբ հետևողական աշխատանքներ են տարվում հանրապետությունում:

76. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը մինչև օրս Հայաստանի դեմ կայացրել է երեք վճիռ, որով ճանաչվել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում:

77. Համաձայն Քրեական օրենսգրքի 16-րդ հոդվածի, անձինք օտարերկրյա պետությանը չեն հանձնվում, եթե հիմնավոր պատճառներ կան ենթադրելու, որ հանձնումը պահանջվել է նրանց ռասայական, կրոնական, ազգային, որոշակի սոցիալական խմբի պատկանելության կամ քաղաքական կարծիքի պատճառով հետաքննության կամ պատժի կիրառման համար: Ոչ ոք չպետք է հանձնվի օտարերկրյա այն պետությանը, որտեղ լուրջ վտանգ կա, որ նրան կարող են սպառնալ խոշտանգումներ կամ անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունք կամ պատիժ: Եթե հանցանք կատարած անձանց հանձնելը պահանջող երկրի օրենքներով տվյալ հանցագործության համար մահապատիժ է նախատեսված, ապա հանցանք կատարած անձանց հանձնումը կարող է մերժվել, եթե պահանջող կողմը պահանջ ստացող կողմին բավարարող երաշխիքներ չներկայացնի, որ մահվան դատավճիռ ի կատար չի ածվի:

### *Է. Մտքի, խղճի և հավատքի ազատություն*

78. Սահմանադրության 26-րդ հոդվածը սահմանում է մտքի, խղճի և հավատքի ազատության, իսկ 8-րդ հոդվածը՝ կրոնական իրավունքները: ՀՀ հիմնական օրենքը, որով կարգավորվում է կրոնական կազմակերպությունների գործունեությունը, «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքն է:

79. Սահմանադրությունը հստակ սահմանում է իշխանությունների և կրոնական կազմակերպությունների միմյանց գործերին չմիջամտելու սկզբունքը: Այն նաև նախատեսում է պետության և կրոնական տարբեր կազմակերպությունների փոխշահավետ համագործակցություն և գործունեության ազատությունը՝ նշելով. «Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է օրենքով սահմանված կարգով գործող բոլոր կրոնական կազմակերպությունների գործունեության ազատությունը»:

80. Անկախությունից հետո անցած տարիներին Հայաստանը լուրջ քայլեր է ձեռնարկել երկրում կրոնական բազմազանությունն ապահովելու ուղղությամբ: Եթե 1997թ.-ին գրանցված էին 14 կրոնական կազմակերպություններ, ապա 2009թ. դրությամբ դրանց թիվը հասել է 66-ի:

81. 2003թ. դեկտեմբերին ընդունվել է «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքը, որը կարգավորում է ՀՀ քաղաքացու կողմից պարտադիր զինվորական ծառայությունն այլընտրանքային ծառայությամբ փոխարինելու հետ կապված հարաբերությունները: Օրենքը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով, այն երկու անգամ փոփոխվել է՝ 2004 և 2006 թվականներին:

## *Ը. Կարծիքի և արտահայտվելու ազատություն*

82. Սահմանադրության հոդված 27-ով ամրագրվում են յուրաքանչյուրի կարծիքն ազատ արտահայտելու, խոսքի ազատության իրավունքները, ներառյալ[26] տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով[27] անկախ պետական սահմաններից: Երաշխավորվում է լրատվամիջոցների և տեղեկատվության այլ միջոցների ազատությունը:

83. Ոլորտը կարգավորվում է մի շարք օրենքներով, այդ թվում[28] «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» (2000թ.), «Տեղեկատվության ազատության մասին» (2003թ.), «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» (2005թ.), «Ձանգվածային լրատվության մասին» (2003թ.) ՀՀ օրենքներով: Վերջինիս 4-րդ հոդվածը երաշխիքների համակարգ է նախատեսում լրատվության ոլորտում խոսքի ազատության իրավունքի ապահովման համար, մասնավորապես[29] ա) լրատվական գործունեություն իրականացնողները և լրագրողները գործում են ազատորեն՝ իրավահավասարության, օրինականության, խոսքի (արտահայտվելու) ազատության և բազմակարծության սկզբունքների հիման վրա, լրագրողն իր մասնագիտական օրինական գործունեության ընթացքում, որպես հասարակական պարտք կատարող անձ, պաշտպանվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, բ) լրատվության միջոցները թողարկվում և տարածվում են առանց նախնական կամ ընթացիկ պետական գրանցման, լիցենզավորման, պետական կամ որևէ այլ մարմնում հայտարարագրման կամ որևէ մարմնի ծանուցման:

84. Պետությունն անհրաժեշտ պայմաններ է ստեղծում և միջոցներ է ձեռնարկում ՀՀ ամբողջ տարածքում Հանրային հեռուստառադիոընկերության (առնվազն 1 հեռուստաալիքի և 1 ռադիոալիքի)

ծրագրերի ընդունման համար:

85. 2001թ.-ին ընդունվել է «Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքը, որով սահմանվում է, որ Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը կարգավորող անկախ մարմին է, որի նպատակն է ապահովել հեռարձակվող լրատվության միջոցների ազատությունը, անկախությունը և բազմազանությունը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով լիցենզավորել և վերահսկել հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների գործունեությունը:

86. 2008թ. դեկտեմբերին «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխություններով Հանրային հեռուստատեսությունը պետք է եթերային ժամանակ տրամադրի Հայաստանի ազգային փոքրամասնությունների լեզուներով հատուկ ծրագրերի և հաղորդումների հեռարձակման համար[30] հեռուստատեսությամբ՝ շաբաթական մինչև 2 ժամ, իսկ ռադիոյով՝ օրական մինչև 1 ժամ տևողությամբ:

87. Հայաստանում ներկայումս հեռարձակվում են 83 հեռուստաալիք, որոնցից 48-ը մեկ մարզի տարածքում, և 20 ռադիոալիք, որոնցից 2-ը՝ մարզային:

## *Թ. Խաղաղ հավաքների և միավորումների ազատություն*

88. Միավորումներ կազմելու, կուսակցություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունքն ամրագրված է Սահմանադրության 28 հոդվածում: Հասարակական քաղաքական միավորումների ստեղծումը և դրանց գործունեության կարգը սահմանվում են «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» (1991թ), «Հասարակական կազմակերպությունների մասին» (2001թ.) և «Կուսակցությունների մասին» (2003թ.) ՀՀ օրենքներով: Միավորումների գրանցման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են նաև «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» (2001թ.) ՀՀ օրենքով:

89. 2004թ.-ին ընդունված Աշխատանքային օրենսգրքի 3-րդ հոդվածում, որպես աշխատանքային օրենսդրության սկզբունք, ամրագրվել է գործատուների և աշխատողների՝ աշխատանքային իրավունքների և շահերի պաշտպանության համար ազատորեն միավորվելու իրավունքը (ներառյալ՝ արհեստակցական և գործատուների միություններ ստեղծելու կամ դրանց անդամագրվելու իրավունքը):

90. Հայաստանում կա 3000-ից ավելի գրանցված հասարակական կազմակերպություն, որոնցից ոչ բոլորն են ակտիվորեն գործում:

91. Հայաստանում գրանցված է 74 քաղաքական կուսակցություն, որոնցից հինգը, 2007թ.-ին կայացած խորհրդարանական ընտրությունների արդյունքում, ներկայացված են Ազգային ժողովում:

92. Սահմանադրության հոդված 29-ով ամրագրվում է յուրաքանչյուրի խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունքը:

93. Խաղաղ հավաքների իրավունքի իրացման կոնկրետ կառուցակարգեր նախատեսված են «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» (2004թ.) ՀՀ օրենքով:

Այն մանրամասն կարգավորվում է հրապարակային միջոցառումներ անցկացնողների իրավունքներն ու պարտականությունները, լիազոր մարմինների և ոստիկանության լիազորությունները, հրապարակային միջոցառումների կազմակերպման և անցկացման սահմանափակումները, հրապարակային միջոցառումների մասին իրազեկման կարգը և այլն:

94. ՀՀ քրեական օրենսգրքի 163-րդ հոդվածով քրեական հանցագործություն է համարվում օրինական ժողովներ, հանրահավաքներ, երթեր կամ ցույցեր անցկացնելուն կամ դրանց մասնակցելուն խոչընդոտելը կամ դրանց, ինչպես նաև ժողովներին, հանրահավաքներին, երթերին կամ ցույցերին մասնակցելուն բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով հարկադրելը, իսկ 225.1 հոդվածով քրեականացված է օրենքով սահմանված կարգի խախտմամբ հրապարակային միջոցառում կազմակերպելը և անցկացնելը:

## *Ժ. Առողջապահություն*

95. Սահմանադրության 38-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի օրենքով սահմանված եղանակով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք: Յուրաքանչյուր ոք ունի անվճար հիմնական բժշկական ծառայություններ ստանալու իրավունք: Դրանց ցանկը և մատուցման կարգը սահմանվում են օրենքով»:

96. ՀՀ կառավարության 2008թ. հոկտեմբերի 30-ի N1207-Ն որոշմամբ ընդունած «Կայուն զարգացման ծրագրի» համաձայն պետական քաղաքականության գերակայություն են շարունակելու մնալ առողջապահական ծառայությունների հասանելիության և մատչելիության աստիճանի բարձրացումն ու որակի շարունակական բարելավումը՝ հատուկ շեշտադրելով տարածքային կտրվածքով առանցքային ծառայությունների հասանելիության աստիճանի բարձրացումն ու բնակչության՝ ըստ կենսամակարդակի տարբեր խմբերի կողմից առողջապահական ծառայությունների օգտագործման հաճախականությունների միջև առկա տարբերությունները:

97. Բոլորի համար բժշկական օգնություն և բժշկական խնամք ստանալու պայմանների ստեղծման ուղղությամբ ՀՀ առողջապահության համակարգում, սկսած 1999թ.-ից, իրականացվել են բարեփոխումներ, որոնք հիմնականում ուղղվել են առողջության առաջնային պահպանման ոլորտի զարգացմանը և ընտանեկան բժշկության ներդրման համար նպաստավոր պայմանների ստեղծմանը:

98. Ընդունվել է ՀՀ բնակչության առողջության առաջնային պահպանման 2008-2013թթ. ռազմավարությունը: Քանի որ հիմնական գերակայություն է շարունակում համարվել առողջության առաջնային պահպանումը, սկսած 2006թ.-ից այս ծրագրերում ընդգրկվել է ամբողջ ազգաբնակչությունը[31] անկախ տարիքից և սոցիալական կարգավիճակից, (բացառությամբ ստոմատոլոգիական բուժօգնությունից, որն անվճար է միայն բնակչության սոցիալապես անապահով խմբերում ընդգրկվածների և մինչև 8 տարեկան երեխաների համար), որի արդյունքում նկատելի աճել են ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատություններում

հաճախումների միջին տարեկան թիվը մեկ բնակչի հաշվով՝ 2006թ կազմելով 2.8 ՝ 2003թ. 2.0-ի համեմատ:

99. Առաջնային օղակի զարգացումը հնարավորություն է ընձեռել բարելավել և ապահովել բուժօգնության մատչելիությունը և դրանով պայմանավորված սոցիալական արդարության և հավասարության սկզբունքները: Առաջնային մակարդակը ներառում է Հայաստանում գործող 467 ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայություններ մատուցող բուժհաստատություն և 638 բուժամանկաբարձական կետ[32] գյուղական համայնքներում:

100. Ֆինանսական կառավարման բարեփոխումների շրջանակներում ձևավորված պետական պատվերի հիմնական ծառայությունների փաթեթում կարևորվել է երեխաների և կանանց բուժօգնության մատչելիության հիմնախնդիրը և հատուկ նշանակություն տրվել մոր ու մանկան առողջության պահպանման ամենամյա նպատակային ծրագրին, համաձայն որի մինչև 7 տարեկան երեխաների հիվանդանոցային և մինչև 18 տարեկանների առաջնային բուժօգնությունը և ծննդօգնության հետ կապված ծառայությունները ներառված են պետական պատվերի մեջ: Հայաստանի կանանց շուրջ 93%-ը նախածննդյան շրջանում ստանում է մասնագիտական օգնություն և խնամք: Այդ ծառայությունները քաղաքներում (96%) մի փոքր ավելի հասանելի են, քան գյուղերում (89%): Գրեթե բոլոր կանայք (97%) ծննդաբերում են բուժհաստատություններում: Կանանց միայն 2%-ն է ծննդաբերում տանը՝ համեմատած 2000թ. 9%-ի հետ: Հղիության ընթացքի և ծննդաբերության հետ կապված բժշկական օգնությունը և սպասարկումն իրականացվում են անվճար՝ պետության կողմից երաշխավորված առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում:

101. Պետական պատվերով կազմակերպվել է նաև շուրջ 1052, այդ թվում 697 տուբերկուլյոզով հիվանդ և կոնտակտավոր երեխաների առողջարանային բուժման գործընթացը, ապահովվել է շուրջ 830 000 երեխայի ամբուլատոր-պոլիկլինիկական բուժօգնությունը:

102. 2002 թվականից Հայաստանը հավաստագրվել է որպես «պոլիոմիելիտից ազատ» գոտի:

103. Հայաստանին հաջողվել է 1990-2005թթ. ընթացքում կրճատել մանկական մահացության (ՄՄ) ցուցանիշը 52%-ով: 2007թ. ընթացքում ՄՄ ցուցանիշը 2006թ. համեմատությամբ կրճատվել է շուրջ 20%-ով (եթե 1990-1995թթ. ՄՄ միջին ցուցանիշը կազմել է 41‰, ապա 2000-2005թթ.՝ 26‰, 2006թ. -13.9‰, 2007թ.-10.9 ‰):

104. Հանրապետությունում նպատակային տարիքային խմբերի պատվաստումներում ընդգրկվածությունը 90% տոկոսից բարձր է: Սակայն դեռևս ցածր է պատվաստումներում նպատակային խմբերի ժամանակին և ամբողջական ընդգրկվածության մակարդակները:

105. ՀՀ պետբյուջեից առողջապահության ոլորտի ֆինանսավորման աճը կրում է շարունակական բնույթ: ՀՀ կառավարությունը շեշտադրում է առողջապահության ֆինանսավորման բարելավումն ու դրա սոցիալական ուղղվածությունը:

2003թ.-ին առողջապահական փաստացի ծախսերը, որպես ՀՆԱ-ի տոկոս կազմել է 1.2, իսկ 2007թ.-ին՝ 1.54%: Համապատասխանաբար, աճում են նաև Առողջության առաջնային պահպանության (ԱԱՊ) հատկացումները. նույն ժամանակահատվածում դրանք աճել են 2,57 անգամ և արդեն իսկ գերազանցում են հիվանդանոցային օղակին հատկացվող պետական միջոցներին:

106. Հանրապետության համար դեռևս խնդիր է մնում առողջապահական ծառայությունների լիարժեք հասանելիության ապահովումը բոլոր մակարդակներում, հատկապես[33] սոցիալապես անապահով խմբերի և գյուղական ու հեռավոր վայրերում:

## Ի. Կրթության իրավունք

107. Սահմանադրության 39-րդ հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: Հայաստանի Հանրապետությունում հիմնական ընդհանուր կրթությունը պարտադիր է, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

108. Միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է: Անվճար կրթության հնարավորություն է տրվում նաև մրցութային կարգով նախնական մասնագիտական /արհեստագործական/ և միջին մասնագիտական, ինչպես նաև բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորելու համար:

109. 1999թ.-ին ընդունվել է «Կրթության մասին» ՀՀ օրենքը, համաձայն որի Հայաստանում բոլոր մարդկանց համար ապահովում է կրթության իրավունք՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ինչպես նաև կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը: Կրթության ոլորտը կարգավորվում է նաև «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» (2004թ.), «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» (2005թ.), «Նախադպրոցական կրթության մասին» (2005թ.) և «Հանրակրթության մասին» (2009թ.) ՀՀ օրենքներով:

110. Հայաստանում տարրական կրթության խնդիր չկա և ընդգրկվածությունը տարրական դպրոցում բավական բարձր է. գրագիտության մակարդակը 99.5% է:

111. Կրթության ոլորտում վերջին տասնամյակում ընթացող բարեփոխումների գերակա խնդիրն է կրթության որակի բարձրացումը, ապահովելով համակարգի արդյունավետ գործունեությունը և քաղաքացիների՝ իրենց ձգտումներին և ընդունակություններին համապատասխան կրթություն ստանալու հավասար հնարավորությունների ապահովումը:

112. Կրթության բնագավառում պետությունը երաշխավորում է, ի շարս այլոց, հետևյալ սկզբունքների ապահովումը[34] կրթության մարդասիրական բնույթը, ազգային և համամարդկային արժեքների, մարդու կյանքի ու առողջության, անհատի ազատ և համակողմանի զարգացման առաջնայնությունը, քաղաքացիական գիտակցության կարևորումը, անհատի և նրա իրավունքների ու ազատությունների նկատմամբ հարգանքը,

արժանապատվությունը, հայրենասիրությունը, աշխատասիրությունը, պատասխանատվությունը, հանդուրժողականությունը, բնապահպանական աշխարհայացքի ձևավորումը:

113. 2007 թվականի դրությամբ հանրապետությունում գործել է 1417 պետական միջնակարգ դպրոց, որից 9[35] տարրական, 154-ը[36] հիմնական /1-9-րդ դասարաններ/ և 1169-ը[37] միջնակարգ/1-12-րդ դասարաններ/:

114. Հանրակրթության ոլորտում կարևորվում է նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության բարելավումը, որը, ծնողների ընտրությամբ, կարող է իրականացվել ինչպես ընդհանուր հանրակրթական (շուրջ 32 դպրոց), այնպես էլ հատուկ հաստատություններում[38] հատուկ ծրագրերով:

115. ՀՀ կառավարությունը 2005թ.-ին հաստատել է ներառական կրթության հայեցակարգը, որի նպատակն է նախանշել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների՝ հանրակրթական դպրոցում կրթության կազմակերպման և հատուկ կրթության բարեփոխման հիմնադրույթները:

116. ՀՀ-ն մեծ ուշադրություն է դարձնում մարդու իրավունքների կրթությանը՝ դիտարկելով այն որպես ժողովրդավարության զարգացմանը նպաստող կարևորագույն գործոն: 2001թ.-ից Մարդու իրավունքները որպես առանձին կրթական առարկա ընդգրկվել է հանրակրթական դպրոցների ուսումնական ծրագրում (9-րդ դասարան): Աշակերտներն ուսումնասիրում են նաև «Քաղաքացիական կրթություն» և «Պետություն և իրավունք» առարկաները: Մարդու իրավունքների ուսուցման ուղղությամբ մեծ աշխատանք է տարվել ոչ միայն դասագրքերի մշակման, այլ նաև ուսուցիչների և դասախոսների վերապատրաստման նպատակով: Այս աշխատանքներում մեծ ներդրում են ունեցել նաև հասարակական կազմակերպությունները,

117. Ներկայումս Հայաստանում միջին մասնագիտական կրթական ծրագրեր է իրականացվում 84 պետական ուսումնական հաստատությունում, որոնցում սովորում է շուրջ 28000 ուսանող և դասավանդում՝ 4000 դասախոս: 2009թ. դրությամբ հանրապետությունում գործում է 30 արհեստագործական ուսումնարան, որում սովորում է շուրջ 7500 ուսանող:

118. 2003թ.-ին ՀՀ կառավարությունը հաստատել է «Բարձրագույն կրթության զարգացման ռազմավարությունը», որում իրենց արտացոլում են գտել ինչպես կառավարման նոր մեթոդների կիրարկումը և բարեփոխումը, պետական ֆինանսավորման նոր ձևերի արմատավորումը, աշխատաշուկայի հետ կապերի ընդլայնումը, այնպես էլ[39] բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բնագավառում ինտեգրումը Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին և ընդգրկումը Բոլոնիայի գործընթացում:

119. Բարձրագույն կրթության ոլորտում սոցիալական քաղաքականության շրջանակում ներկայումս պետության կողմից իրականացվող աջակցությունը այսօր սահմանափակվում է ըստ սոցիալական կարգավիճակի ուսանողների որոշ խմբերին (երկկողմանի ծնողազուրկ, 1-ին և 2-րդ կարգի

հաշմանդամ, զոհված կամ մահացած զինծառայողի երեխա, պարտադիր զինվորական ծառայության ընթացքում հաշմանդամություն ձեռքբերած, նպատակային ուսուցման գործուղված) հատկացվող պետական կրթաթոշակների ամբողջական փոխհատուցման միջոցով:

## L. Կանանց իրավունքներ

120. Հայաստանը վավերացրել է ՄԱԿ-ի «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիան (1993թ.):

121. Հայաստանում չեն գործում կանանց հանդեպ խտրականության դրույթներ պարունակող օրենքներ, իրավական ակտեր, որոշումներ կամ քաղաքականություն:

122. 2004թ. ՀՀ կառավարության կողմից ընդունվել է Հայաստանի Հանրապետությունում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010թթ. ազգային ծրագիրը, որն սահմանում է կանանց հիմնախնդիրների լուծման ուղղությամբ տարվող պետական քաղաքականության սկզբունքները, առաջնահերթությունները և հիմնական ուղղությունները և կոչված է նպաստելու կանանց ու տղամարդկանց հավասար իրավունքների ու հնարավորությունների լիարժեք ապահովմանը:

123. 2009թ. նոյեմբերին ՀՀ կառավարության հաստատմանն է ներկայացվել 2010-2014թթ. ՀՀ կառավարության գենդերային հավասարության հայեցակարգը, որը մշակվել է հասարակական կազմակերպությունների անմիջական մասնակցությամբ:

124. Մշակման փուլում է գտնվում նաև «Տղամարդկանց և կանանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների պետական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

125. ՀՀ վարչապետի 2009թ. մայիսի 26-ի որոշմամբ վերաձևավորվել է Կանանց հարցերով խորհուրդը, որի նախագահն է ՀՀ վարչապետը: Խորհուրդը կոչված է պաշտպանելու կանանց իրավունքները, հսկողության տակ վերցնելու կանանց վիճակի բարելավման ազգային ծրագրի միջոցառումները, գենդերային հարցերը:

126. Հայաստանի օրենսդրությունը կանանց համար նախատեսում է բոլոր հնարավորությունները տղամարդկանց հետ հավասարապես մասնակցելու երկրի քաղաքական ու հասարակական կյանքին: Սակայն, չնայած որոշակի առաջընթացին, կանայք ոչ բավարար են ներկայացված որոշում կայացնող օղակներում, որը շարունակում է հիմնական խնդիրը դիտվել կանանց հիմնահարցերում: Այդ վիճակը շտկելու նպատակով փոփոխություն է կատարվել ՀՀ ընտրական օրենսգրքում, որով սահմանվել է 15 տոկոսանոց քվոտա համամասնական ցուցակներում ընդգրկվելու համար՝ նախկին 5 տոկոսի փոխարեն: Կանայք առավելապես ներկայացված են կառավարության միջին օղակներում, ինչպես նաև հասարակական կազմակերպություններում:

127. Հայաստանի Հանրապետության կառավարության առաջնահերթություններից է ճանաչվել Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարը, որը համակարգում է Մարդկանց

շահագործման (թրաֆիքինգի) հարցերով խորհուրդը[40] ՀՀ փոխվարչապետի գլխավորությամբ:

128. Հայաստանը վավերացվել են ՄԱԿ-ի «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» կոնվենցիան և դրան կից 2 կամընտիր արձանագրությունները, ՄԱԿ-ի «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիային կից կամընտիր արձանագրու-թյունը և Եվրախորհրդի «Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի միջոցառումների մասին» կոնվենցիան: ՀՀ քրեական օրենսգրքում համապատասխան փոփոխություններ են կատարվել ներառելով բավականին խիստ պատժաչափեր այս հանցագործության համար:

129. Հանրապետությունում այս ուղղությամբ աշխատանքները տարվում են Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի 2007-2009թթ.-ի երկրորդ ազգային ծրագրի շրջանակներում: 2008թ.-ին ՀՀ կառավարության կողմից հաստատվել է «Մարդկանց շահագործման (թրաֆիկինգի) ենթարկված անձանց ազգային ուղղորդման կարգը»: Ներկայումս աշխատանքներ են տարվում 2010-2013թթ.ազգային ծրագրի մշակման ուղղությամբ:

130. Հայաստանում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարում իրենց անգնահատելի դերակատարումն ունեն հասարակական կազմակերպությունները, որոնք, ի թիվս այլ խնդիրների, նաև օժանդակում են զոհերին ապաստանի տրամադրման ու աջակցության ապահովման հարցերում:

131. Կանանց նկատմամբ բռնությունների դեմ պայքարի հիմնահարցը վերջին տարիներին է սկսել լայնորեն քննարկվել Հայաստանում: 2006թ. ՀՀ ոստիկանության պետի հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ՝ ոստիկանության պետի տեղակալի գլխավորությամբ, որի նպատակն է առավել արդյունավետորեն իրականացնել Հայաստանի Հանրապետությունում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010 թթ. ազգային ծրագրի դրույթները՝ կանանց հանդեպ բռնությունների դեմ ուղղված միջոցառոջմների մասով: Այդ նպատակով ՀՀ ոստիկանության տեղեկատվական կենտրոնում կատարվում է կանանց նկատմամբ հանցագործությունների հաշվառում:

132. Ներկայումս կանանց հանդեպ բռնությունների վերաբերյալ դրութներ են պարունակում ՀՀ քրեական, քաղաքացիական և ընտանեկան օրենսգրքերը:

133. Ընտանեկան բռնությունների դեմ առանձին օրենք մշակելու նպատակով 2007թ. ստեղծվել է միջգերատեսչական աշխատանքային խումբ: Օրենքի մշակումը իրականացվում է «Կանանց իրավունքների կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Ընտանեկան բռնության դեմ իրավական նախաձեռնություն» ծրագրի շրջանակներում: Օրենքի ընդունումը նախատեսված է նաև 2010-2014թթ. ՀՀ կառավարության գենդերային հավասարության հայեցակարգով:

## Խ. Երեխայի իրավունք

134. Ընթացիկ ժամանակահատվածում Հայաստանը վավերացրել է երեխայի իրավունքներին վերաբերող կարևորագույն միջազգային փաստաթղթերը:

135. ՀՀ քրեական օրենսգրքի 14-րդ գլխով կարգավորվում են անչափահասների քրեական պատասխանատվությունը և պատժի առանձնահատկությունները: ՀՀ աշխատանքային օրենսգրքի մի շարք հոդվածներ սահմանում են անչափահասների աշխատանքի ընդունելու կարգը և պայմանները: ՀՀ ընտանեկան օրենսգիրքը հստակ ամրագրում է, որ. «Պետությունը երաշխավորում է երեխաների իրավունքների առաջնային պաշտպանությունը»: Օրենսգրքի 4-6-րդ բաժինները կարգավորում են երեխաների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը:

136. Հայաստանում երեխաների պաշտպանության գլխավոր մարմինը Երեխաների պաշտպանության ազգային հանձնաժողովն է: Այն խորհրդակցական մարմին է, որի գործունեության նպատակն է երեխայի իրավունքների և շահերի պաշտպանության միասնական պետական քաղաքականության ապահովմանն աջակցելը, երեխայի պաշտպանության համակարգի զարգացումը:

137. 2006թ.-ին Հայաստանում ստեղծվել է երեխաների պաշտպանության նոր եռաստիճան համակարգ՝ ազգային, մարզային և համայնքային մակարդակներով, որի հիմնական նպատակն է՝ պետական կառավարման մակարդակում իրականացնել միասնական և համակարգված քաղաքականություն, ինչը կապահովի երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությանն ուղղված մեկ միասնական մոտեցում՝ երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովի, ՀՀ մարզպետարաններում և Երևանի քաղաքապետարանում՝ երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների և համայնքներում խնամակալության և հոգաբարձության մարմինների միջոցով:

138. Կառավարությունը 2003թ.-ին հաստատել է Երեխայի իրավունքների պաշտպանության 2004-2015թթ. ազգային ծրագիրը, որի շրջանակներում, ի թիվս այլոց, իրականացվել են Պետական աջակցություն ՀՀ մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին[41] 2004-2015թթ, Մանկական խնամակալական կազմակերպություններում երեխաների խնամքի կազմակերպում[42] 2004-2015թթ., Մանկական խնամակալական կազմակերպությունների բեռնաթափման 2004-2015թթ., Խնամատարական ինստիտուտի ներդրում, խնամատարական ընտանիքների թեկնածուների բանկի ստեղծում, Երեխաների համայնքային ցերեկային 25 կենտրոնների ստեղծում ծրագրերը:

139. 2001թ.-ից պետության և ոչ կառավարական կազմակերպությունների ջանքերով հիմնվել են համայնքային ծառայություն մատուցող երեխայի զարգացման և ցերեկային խնամքի կենտրոններ: Այսօր կենտրոնների մատուցած ծառայություններից օգտվում են հաշմանդամ կամ սոցիալ-հոգեբանական այլ խնդիրներ ունեցող

երեխաներ ու պատանիներ և աշխատանքը հիմնականում ուղղված է դժվարին իրավիճակում հայտնված այս երեխաների սոցիալական ինտեգրմանն օժանդակելուն:

140. Դրական տևաշարժ է արձանագրվել նաև փողոցի երեխաների ոլորտում: Համագործակցելով տարբեր միջազգային և տեղական հասարակական կազմակերպությունների հետ, այսօր Հայաստանում արձանագրվում է թափառաշրջիկությամբ զբաղվող անչափահասների թվաքանակի կտրուկ նվազում:

141. Հանրապետության հանրակրթական դպրոցներում ուսուցիչների և ոստիկանի անմիջական մասնակցությամբ, ինտերակտիվ ուսուցման միջոցով, անց են կացվում դասընթացներ իրավական տարբեր թեմաներով, այդ թվում նաև բռնության վերաբերյալ, որը անչափահասներին հնարավորություն է տալիս սովորել ու գիտենալ իրենց իրավունքներն ու պարտականությունները, իրազեկվելու ՀՀ-ում գործող օրենսդրական դաշտին:

## Ծ. Պատշաճ կենսամակարդակ, կենսաթոշակներ

142. Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացումը և բնակչության պատշաճ կենսամակարդակի ապահովումը ՀՀ կառավարության կարևորագույն խնդիրներից է: Այս նպատակով 2003թ.-ին հաստատվել էր 2003-2015թթ. Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը: 2008թ.-ին այն վերանայվեց, հաշվի առնելով հանրապետության տնտեսական արագ աճը և դրա ազդեցությունն ընդհանուր սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա (եթե 1999թ.-ին աղքատությունը կազմում էր 56.1%, իսկ ծայրահեղ աղքատությունը՝ 21%, ապա 2006թ.-ին դրանք կազմում էին համապատասխանաբար 26.5% և 4.1%): Կառավարության կողմից 2008թ.-ին ընդունվեց Կայուն զարգացման ծրագիրը՝ նոր նպատակային շեմերով:

143. 1997թ.-ից գործում է «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքը, որը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում պարտադիր սոցիալական ապահովության վճարների հասկացությունը, հավաքագրման իրավական, ֆինանսական և կազմակերպչական հիմունքները, դրույքաչափերն ու վճարման կարգը:

144. 2003թ.-ի «Պետական կենսաթոշակների մասին» օրենքով երաշխավորվում է ՀՀ քաղաքացիների կենսաթոշակային ապահովությունը, որը սահմանում է կենսաթոշակի հետևյալ տեսակները. ապահովագրական՝ տարիքային, արտոնյալ պայմաններով, երկարամյա ծառայության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում, մասնակի, և սոցիալական՝ ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում:

145. ՀՀ քաղաքացիների սոցիալական ապահովությունը երաշխավորում է նաև 1998թ. «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին», 2002 թ. «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին», 2005թ. «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքներով:

146. Չնայած համապատասխան իրավական դաշտի գոյությանը և Կառավարության կողմից ձեռնարկվող շարունակական քայլերին, վճարվող կենսաթոշակային, ընտանեկան նպաստների և սոցիալական ապահովության այլ վճարումները դեռևս չեն բավարարում շահառուներին պատշաճ կենսամակարդակ ապահովելու համար:

## *Կ. Փախստականներ, ապաստան հայցողներ*

147. Հայաստանը մշտապես ձեռնարկել է հնարավոր բոլոր միջոցները ՀՀ-ում ապաստան հայցողների և փախստական ճանաչված անձանց միջազգային նորմերով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված իրավունքների և ազատությունների լիարժեք և հավասար պաշտպանությունը երաշխավորելու համար: 2008թ.-ին ընդունվել «Փախստականների և ապաստանի մասին» նոր օրենքը, որն առավելագույնս է համապատասխանում 1951թ. Ժնևի կոնվենցիայի և Արձանագրության, միջազգային այլ փաստաթղթերի պահանջներին

148. Հայաստանի Հանրապետությունը շարունակաբար վարել է փախստականներին, այդ թվում նաև անչափահաս փախստականներին հասարակարգում լիարժեքորեն ինտեգրելու քաղաքականություն: 2008 թվականի տվյալներով ՀՀ քաղաքացիություն են ստացել 82.000 փախստական:

149. Անցած ժամանակահատվածում ապաստան են հայցել 1603 օտարերկրյա քաղաքացիներ, որոնցից 179-ը հայցել է փախստականի կարգավիճակ: Ժամանակավոր ապաստան է հայցել 1424 անձ, որոնցից 820-ին տրվել է այդ կարգավիճակը:

150. 2006թ.-ին ընդունված «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքով սահմանվել են օտարերկրացիների կացության կարգավիճակները, կացության կարգավիճակ տալու հիմքերը, ժամկետները, կացության կարգավիճակ տալը մերժելու հիմքերը, օտարերկրացու աշխատանքի թույլտվության տրամադրման և մերժման, ինչպես նաև ՀՀ տարածքից օտարերկրացու հեռանալու և արտաքսման կարգերը և այլ հարցեր:

151. ՀՀ-ում օտարերկրացիներն ունեն ՀՀ քաղաքացիներին հավասար իրավունքներ, ազատություններ և պարտականություններ, ՀՀ տարածքում կրում են ՀՀ քաղաքացիներին հավասար պատասխանատվություն:

152. ՀՀ տարածքում ապաստան ստացած փախստականներն իրավունք ունեն օգտվելու ՀՀ օրենսդրությամբ ՀՀ քաղաքացիների համար սահմանված սոցիալական ծառայություններից, ստանալու պետական նպաստներ և դրամական այլ օգնություն, պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում, ինչպես նաև ունեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կենսաթոշակային ապահովության, գործազրկության դեպքում՝ սոցիալական պաշտպանության իրավունք, եթե նրանք բավարարում են տվյալ ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները: ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» համաձայն՝ յուրաքանչյուր ոք կարող է իր խախտված իրավունքները պաշտպանելու համար դիմել դատական ատյաններ, ինչը տարածվում է նաև փախստականների և ապաստան

հայցողների վրա: «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքով երաշխավորվում է մերժում ստացած ապաստան հայցողների դատական պաշտպանության իրավունքը:

153. Չնայած տարիներ շարունակ գործադրվող հսկայական ջանքերին, որոնք ուղղված էին Ադրբեջանից բռնագաղթած ավելի քան 400 000 փասխտականների խնդիրների լուծմանը, Հայաստանը դեռևս լիովին չի լուծել փախստականների բանակարանային ապահովման հարցը: Շահառու փախստական ընտանիքների բնակարանային խնդիրը լուծելու համար նախնական հաշվարկներով կպահանջվի 15,0-16,0մլրդ դրամ: Սակայն յուրաքանչյուր տարի այս նպատակի համար ՀՀ պետական բյուջեով նախատեսվում է ընդամենը 815 մլն դրամ: Բացի այդ ևս շուրջ 3,5-4,0 հազ. փախստական ընտանիք նախնական գնահատականներով չունեն մշտական օթևան:

Ի հավելումն այս խնդրի, Կառավարությունը նաև առնչվում է պատերազմական գործողությունների արդյունքում ներքին տեղահանվածներին իրենց բնակության վայրեր վերադարձնելու հիմնախնդրի հետ: 2008թ.-ին ընդունվել է սահմանամերձ բնակավայրերից ներքին տեղահանված անձանց իրենց ծագման բնակավայրեր վերադարձի կազմակերպման ծրագիրը, որի իրագործման համար կպահանջվի մոտ 39մլրդ դրամ գումար:

154. Թե՛ փախստականների, թե՛ ներքին տեղահանվածների բնակարանային խնդիրների շուտափույթ լուծումն առանց միջազգային հանրության պատշաճ և շարունակական աջակցության գրեթե անհնարին է:

## V. ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐ

155. Հայաստանի Հանրապետությունը հետևողականորեն առաջ է տանում մարդու իրավունքների լիարժեք պաշտպանությանն ու առաջմղմանն ուղղված իր քաղաքականությունը[12] նպատակ ունենալով կառուցել համամարդկային արժեքների, իրավունքի գերակայության վրա հիմնված հասարակություն:

Այս նպատակներին հասնելու համար Հայաստանը կշարունակի համագործակցել բոլոր միջազգային կառույցների, հատուկ ընթացակարգերի հետ թե՛ տարածաշրջանային, և թե՛ միջազգային մակարդակներում, ընդլայնելով նաև իր համագործակցությունը ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի, Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի և Ցեղասպանության կանխարգելման հարցերով ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի հատուկ խորհրդականի հետ:

# 4. Ամփոփիչ զեկույց՝ պատրաստված Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակի կողմից՝ Մարդու իրավունքների խորհրդի 5/1 բանաձևի 15 (գ) կետի համաձայն

## Հայաստան

Սույն զեկույցը 13 շահառուների կողմից համընդհանուր պարբերական դիտարկմանը ներկայացված զեկույցների[1] ամփոփումն է: Այն կառուցվածքով համապատասխանում է Մարդու իրավունքների խորհրդի կողմից ընդունված ընդհանուր ուղեցույց կանոններին: Այն չի պարունակում կարծիքներ, տեսակետեր կամ առաջարկություններ Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակի կողմից (ՄԱԿ ՄԻԳՀԳ), ինչպես նաև որոշակի պնդումների հետ կապված դատողություններ կամ որոշումներ: Ներառված տեղեկատվությունն այսպիսով պարունակում է համակարգված հղումներ՝ ներկայացված փաստաթղթի վերջում, իսկ սկզբնաղբյուր տեքստերը թողնվել են հնարավորինս անփոփոխ: Որոշակի հարցերի վերաբերյալ տեղեկատվության պակասը կամ դրանք պատշաճ ուշադրության չարժանացնելը կարող է պայմանավորված լինել այն փաստով, որ շահառուները այս կամ այն կոնկրետ հարցի վերաբերյալ որևէ փաստաթուղթ կամ տեղեկություններ չեն տրամադրել: Բոլոր ստացված զեկույցների ամբողջական տեքստերը առկա են ՄԻԳՀԳ պաշտոնական կայքում: Զեկույցը պատրաստվել է՝ հաշվի առնելով դիտարկման առաջին փուլի քառամյա պարբերականությունը:

## I. Ընդհանուր իրավիճակը և սկզբունքների շրջանակը

### *Ա. Միջազգային պարտավորությունների շրջանակ*

1. Մահապատժի արգելքի միջազգային կոալիցիան նշել է, որ Հայաստանը չի վավերացրել Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի Երկրորդ կամընտրական արձանագրությունը, և կոչ է արել պետությանը վավերացնել այն[2]:
2. Համատեղ փաստաթուղթ 1-ը (ՀՓ1) կոչ է արել Հայաստանին առաջին իսկ հնարավորության դեպքում վավերացնել Հաշմանդամների իրավունքների մասին կոնվենցիան և դրա Կամընտրական արձանագրությունը[3]:

### *Բ. Սահմանադրական և օրենսդրական շրջանակ*

3. ՀՓ1-ը նաև նշել է, որ Հայաստանը վերջերս որոշ ողջունելի փոփոխություններ է կատարել «Մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման մասին» օրենքում: 2009 թվականի ապրիլին Կառավարությունը պաշտոնապես չեղյալ հայտարարեց այն օրենքները, որոնք մերժում էին մուտքի անցագիր տրամադրել երկրում երեք ամսից ավելի մնալ ցանկացող ՄԻԱՎ վարակակիր

օտարերկրացիներին և թույլ էին տալիս երկրից արտաքսել այն օտարերկրացուն, ում մոտ ՄԻԱՎ կհայտնաբերվեր: Օրենքի բարեփոխումները նաև զգալիորեն սահմանափակեցին ոչ կամավոր ՄԻԱՎ հետազոտության շրջանակները: Այնուամենայնիվ՝ ըստ ՀՓ1-ի՝ դեռևս կան մտահոգություն առաջացնող հարցեր: Օրինակ՝ «Օտարերկրացիների մասին» օրենքը դեռևս պարունակում է այնպիսի դրույթներ, որոնք արգելում են ՄԻԱՎ վարակակիր օտարերկրացիների մուտքը, ինչը հակասում է ՄԻԱՎ մասին օրենքի բարեփոխմանը[4]:

## Գ. Մարդու իրավունքների պաշտպանության ինստիտուցիոնալ ենթակառուցվածք

Համատեղ փաստաթուղթ 2-ը (ՀՓ2) հանձնարարել է հաստատել Մարդու իրավունքների պաշտպանի տեղակալի հաստիք, որի գործառույթը պետք է լինի կանանց համար հավասար հնարավորությունների և իրավունքների ապահովումը[5]: Եվրոպայի խորհրդի՝ Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիայի խորհրդատվական կոմիտեն (ԵԽ ՇԿԽԿ) նշել է, որ Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնի ստեղծումը կարևոր առաջընթաց քայլ էր: Նաև բացվել է Ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչություն՝ հօգուտ ազգային փոքրամասնությունների՝ քաղաքականության մշակման նպատակով[6]: Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հանձնակատարը (ԵԽ Հանձնակատար) հանձնարարել է Օմբուդսմենի գրասենյակին տրամադրել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ[7]:

## Դ. Քաղաքականության իրականացման միջոցներ

5. ԵԽ Հանձնակատարը հանձնարարել է մշակել և հաստատել մարդու իրավունքների վերաբերյալ գործողությունների համապարփակ ծրագիր՝ մարդու իրավունքների վերաբերյալ նախաձեռնությունների համակարգման և միավորման նպատակով[8]: ՀՓ2-ը հանձնարարել է Հայաստանին, Կառավարության՝ 2008-2012 թթ. Գործողությունների ծրագրով նախատեսված պարտավորություններին համաձայն, մշակել ռազմավարական առաջնահերթություններ և ապահովել միջոցներ հասարակական-քաղաքական կյանքի բոլոր ոլորտներում գենդերային հավասարակշռության պահպանման համար[9]:
6. Կոռուպցիայի դեմ պայքարի Եվրոպայի խորհրդի պետությունների խումբը (անգլ.՝ GRECO) եկել էր այն եզրակացության, որ լրացուցիչ ջանքեր էին պահանջվում պետական ծառայության անկողմնակալության և ազնվության բարձրացման համար, որոնք կենսական նշանակություն ունեն Կառավարության՝ կոռուպցիայի դեմ պայքարի մեջ ներդրած ջանքերի նկատմամբ հասարակական վստահության ձեռքբերման գործում[10]:

## II. Մարդու իրավունքների պաշտպանություն և խթանում

### *Ա. Համագործակցություն մարդու իրավունքների մեխանիզմների հետ*

#### *Համագործակցություն հատուկ ընթացակարգերի հետ*

**7. Հրատարակիչների միջազգային ասոցիացիայի համատեղ փաստաթուղթն (ՀՓ4) առաջարկեց հրավիրել կարծիքի և արտահայտման ազատության իրավունքի աջակցության և պաշտպանության, ինչպես նաև դատավորների և փաստաբանների անկախության վերաբերյալ Միավորված ազգերի կազմակերպության հատուկ զեկուցողների[11]:**

### *Բ. Մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պարտավորությունների կատարումը*

#### *1. Հավասարություն և ոչ խտրական վերաբերմունք*

8. ՀՓ2-ն առաջարկել է մշակել կանանց նկատմամբ խտրականության դրսևորումների վերացման ազգային մեխանիզմներ[12]: Բռնություններից տուժածների պաշտպանության կազմակերպությունը (ԲՏՊԿ) առաջարկել է խթանել կանանց իրավունքների պաշտպանությունն ու վերացնել կանանց նկատմամբ խտրականության դրսևորումները հանրային քարոզարշավների և կրթական հաստատություններում համապատասխան դասագրքերի տարածման միջոցով[13]:
9. ՀՓ1-ի համաձայն՝ Հայաստանում լայնորեն տարածված է և կիրառվում է սեռական կողմնորոշման կամ գենդերային պատկանելիության վրա հիմնված խտրականությունը: Առկա են դեպքեր առողջության, աշխատանքի և կրթության ոլորտում նման դրսևորումներ: Օրինակ՝ օրենքի համաձայն՝ համասեռամոլ տղամարդիկ ազատվում են զինվորական ծառայությունից “առողջական խնդիրներ ունենալու” հիմնավորմամբ: ՀՓ1 առաջարկել է հանել համասեռամոլության սահմանումը որպես հիվանդություն, օրենսդրությունից և պրակտիկայից[14]: Եվրոպայի Խորհրդի Հանձնակատարն առաջարկել է, որպեսզի պետությունը միջոցներ ձեռնարկի համասեռամոլների, միասեռականների նկատմամբ բռնությունները վերացնելու համար, մշակել և ընդունել սեռական կողմնորոշման և գենդերային պատկանելիության վրա հիմնված խտրականության դրսևորումները կանխարգելող օրենսդրություն, և երկխոսություն սկսել համասեռամոլների կազմակերպությունների հետ[15]:
10. ՀՓ1 առաջարկել է ճանաչել թմրամիջոցներից կախվածությունը և ՄԻԱՎ-ը ներառի հաշմանդամության վերաբերյալ ազգային օրենսդրության մեջ, և երաշխավորի, որ այս խմբին պատկանող մարդիկ առողջության հիմքով խտրականության չենթարկվեն[16]:

#### *2. Կյանքի, ազատության և անվտանգության իրավունք*

11. «Human Rights Watch»-ը (HRW) նշել է, որ 2008 թվականի փետրվարին տեղի ունեցած նախագահական ընտրությունների արդյունքում ընդդիմության աջակիցները, ովքեր վիճարկում էին ընտրության արդյունքները, շարունակական բողոք սկսեցին[17]: Չնայած նրան, որ

իշխանությունները նախապես հանդուժում էին ցուցարարներին, նշում է HRW-ն, մարտի 1-ին ոստիկանության հատուկ նշանակության զորքերը դուրս եկան նրանց դեմ: Ցուցարարների և ոստիկանության միջև տեղի ունեցած բախումների արդյունքում առնվազն 10 մարդ զոհվեց՝ ութ քաղաքացիներ և երկու ոստիկաններ, իսկ բազմաթիվ մարդիկ վիրավորվեցին: Այն նաև ավելացնում է, որ եթե որոշ դեպքերում ուժի կիրառումը գուցե օրինական է եղել, ապա բազմաթիվ այլ դեպքերում այն եղել է չհիրահրված և պետք եղածից ավելի: Դեռ ավելին՝ հայկական իշխանությունները դեռ պետք է ապահովեին մարտի 1-ին և 2-ին տեղի ունեցած բախումների ընթացքում անվտանգության ուժերի կողմից չափից շատ ուժի կիրառման դեպքերի հանգամանալից քննություն և պատասխանատվության ենթարկում[18]:

12. Համաձայն HRW-ի՝ բռնություններին 100-ից ավել ձերբակալություններ են հաջորդել: HRW-ն արձանագրել է ֆիզիկական բռնություն և վատ վերաբերմունք կալանքի ենթարկվածների նկատմամբ ձերբակալության ընթացքում, ինչպես նաև ոստիկանական բաժանմունք տեղափոխելու ճանապարհին: Որոշ դեպքերում ինչպես խոսքային, այնպես էլ ֆիզիկական բռնությունը շարունակվել է կալանքի ժամանակ: Արձանագրված կալանավորման 38 դեպքերից 27-ում կալանքի մեջ գտնվողները վատ վերաբերմունքի մասին մեղադրանք են առաջ քաշել: Համատեղ փաստաթուղթ 3-ում (ՀՓ3) նաև նշվել է, որ արտակարգ դրության հայտարարումից հետո ընդդիմության մի քանի տասնյակ ակնառու անդամներ են ձերբակալվել, այդ թվում՝ ընդդիմության թեկնածուի հետ կապված մի շարք բարձրաստիճան անձեր և ընդդիմադիր «Հանրապետություն» կուսակցության անդամներ: Համաձայն հաղորդումների՝ այդ կալանավորվածներից ոմանք կալանքի ժամանակ ենթարկվել են ծեծի կամ վատ վերաբերմունքի: Այդ կալանավորվածներից շատերը ամիսներ շարունակ պահվել են մինչդատական կալանքի մեջ անհայտ վայրերում՝ զրկված լինելով ընտանիքի անդամների կամ օրինական ներկայացուցիչների հետ կապի հնարավորությունից[19]:

13. Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովը (ԵԽԽՎ) ափսոսանք է հայտնել 2008 թվականի մարտի 1-ի և մարտի 2-ի դեպքերի հետ կապված փաստերի արձանագրման նպատակով հաստատված անկախ փորձագիտական խմբի աշխատանքների ձախողման առնչությամբ: Այն նաև նշել է, որ դեռևս դեպքերի և դրանց հետ կապված հանգամանքների անկախ, անաչառ և վստահելի քննության կարիքն առկա է, և վերահաստատել է այդպիսի հետաքննության անցկացման իր պահանջը[20]:

14. Խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեն (ԵԽ ԽԿԿ) նկատել էր, որ դեռ վճռական գործողությունների կարիք կա՝ պայքարելու ոստիկանության կողմից վատ վերաբերմունքի դեմ, որը համատարած բնույթ էր կրում և կապված էր քրեական արդարադատության գործընթացում խոստովանությունների ձեռքբերման կարևորության հետ[21]: ԵԽ ԽԿԿ-ն կոչ է արել հայկական

իշխանություններին ամենաբարձր քաղաքական մակարդակով խիստ ուղերձ հղել ոստիկանության աշխատակիցներին՝ հիշեցնելով, որ կալանքի մեջ գտնվող անձանց նկատմամբ վատ վերաբերմունքը անօրինական է և խստորեն պատժվելու է: ԵԽ մարդու իրավունքների հանձնակատարը հանձնարարել էպարբերաբար քննել ոստիկանության կողմից չարաշահումների դեպքերը՝ խուսափելու անպատժելիությունից և վերջ դնելու ոստիկանության կողմից համատարած վատ վերաբերմունքին[22]:

15. ՀՓ2-ը հանձնարարել է, ի թիվս այլ բաների, որ Հայաստանը համապատասխան օրենսդրության, այդ թվում՝ Քրեական օրենսգրքի մեջ ներառի խոշտանգման և վատ վերաբերմունքի սահմանումը՝ Խոշտանգումների և այլ դաժան վերաբերմունքի, անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիային համապատասխան, ինչպես նաև երաշխավորի ինստիտուցիոնալացված քաղաքացիական հասարակության մասնակցությունը, ոստիկանության մշտադիտարկման խմբի համար մուտք ապահովի դեպի ոստիկանության այն բոլոր տարածքները, որտեղ կարող են մարդիկ պահվել, երաշխավորի խոշտանգման դեպքերի առթիվ գործերի պատշաճ և համապարփակ քննությունը, պատասխանատվության ենթարկի օրինազանցներին և քննությունը թափանցիկ դարձնի հայաստանյան հանրության համար՝ առանց քննչական գործընթացը վտանգելու յուրաքանչյուր նման գործի արդյունքների մասին զեկուցելու միջոցով: Հայաստանը նաև պետք է ապահովի դատարանում խոշտանգումների մասին արված բոլոր մեղադրանքների համակողմանի քննությունը, իսկ դրանց հաստատման դեպքում՝ այդ կերպ ձեռքբերված ապացույցների անընդունելիությունը, այն պետք է ամրապնդի փակ և կիսափակ հաստատությունների կադրերի կարողությունները՝ ապահովելով համապատասխան քանակի աշխատողներ, վերջիններիս համար համապատասխան վարձատրություն և շարունակական վերապատրաստում մարդու իրավունքներին առնչվող խնդիրների և նման հաստատությունների համար չափորոշիչների թեմայով[23]:

16. Ինչ վերաբերում է բանտային պայմաններին, ԵԽ հանձնակատարը հանձնարարել էՀայաստանին բարելավել քրեակատարողական հաստատությունների հանրային մշտադիտարկումը՝ հատկապես կարևորելով այն, որ հանրային դիտորդների խմբում երաշխավորվի քաղաքացիական հասարակությունից ընտրված անկախ և անաչառ ներկայացուցիչների ներկայությունը: Նաև առաջարկվել է բանտարկյալների նկատմամբ բռնությունը կանխելու միջոցներ ձեռնարկել, կանոնավոր կերպով պատասխանատվության ենթարկել նման արարքների համար պատասխանատուներին, բարելավել բանտերի նյութական պայմանները, ապահովել ապահովել կալանավորներին անկողնային պարագաների կանոնավոր տրամադրումը, բարելավել Դատապարտյալների Կենտրոնական հիվանդանոցի կենցաղային պայմանները և տրամադրվող բժշկական օգնությունը, բարելավել արական սեռի բանտարկյալների՝ հասարակությանը վերաինտեգրման պայմանները[24]:

17. Համաձայն ՀՓ1-ի՝ ՄԻԱՎ-ի առկայությունը Հայաստանի բանտերում գնահատվում էր 2.4 տոկոս, որը 27 անգամ ավելի բարձր է, քան ողջ ազգաբնակչության շրջանում: Բացի այդ՝ հեպատիտ C-ի վիրուսի առկայությունը բանտերում 2005 թվականին 23.8 տոկոս էր, ինչը նույնպես անհամեմատ ավելի բարձր է, քան ողջ ազգաբնակչության շրջանում[25]: ՀՓ1-ում նշվել է, որ Հայաստանը բանտարկյալներին տրամադրել է վնասի նվազեցման ծառայություններ, այդ թվում՝ ասեղի փոխանակման ծրագրերը: Սակայն այն հաստատել է, որ թմրակախվածության բուժումը շարունակում է մնալ անբավարար՝ ավելացնելով, որ բանտերը նույնպես պետք է ընդգրկվեն ափիոնային փոխարինման թերապիան ներառող ծրագրերում[26]: Բացի այդ՝ ՀՓ1-ը նշել է, որ բանտերում տրամադրվող առողջապահական ծառայությունները ներկայումս գտնվում են Արդարադատության նախարարության պատասխանատվության տակ: Ելնելով բանտերից դուրս տրամադրվող առողջապահական ծառայություններին համարժեք և պատշաճ ծառայություններ ապահովելու նկատառումներից՝ բանտային համակարգում առողջապահական ծառայությունների տրամադրման պատասխա-նատվությունը պետք է փոխանցվի Առողջապահության նախարարությանը[27]:

18. ՀՓ1-ը նշել է, որ Հայաստանում համատարած ընտանեկան բռնության դեպքեր են արձանագրվել, և որ կառավարությունը անբավարար կերպով է արձագանքում այս տեսակ բռնությանը, այդ թվում՝ ոստիկանության և բուժօգնության ոլորտի աշխատակիցները[28]: Նշվել է, որ գոյություն չունի հատուկ օրենսդրություն կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ, և որ Քրեական օրենսգիրքն ընտանեկան բռնությունը չի սահմանում որպես առանձին հանցանք: ՀՓ1-ը հանձնարարել է, որ Հայաստանն անհապաղ իրականություն դարձնի հատուկ կանանց դեմ ուղղված բռնությանն առնչվող օրենսդրությունը, որով կանանց և աղջիկների նկատմամբ բռնությունը կհամարվի ինչպես քրեական հանցանք, այնպես էլ քաղաքացիական զանցանք: Օրինախախտները պետք է օրենքի առաջ պատասխանատվություն կրեն, և վերջիններիս նկատմամբ պետք է ընդունվեն այնպիսի դատավճիռներ, որոնք կարտացոլեն մարդու իրավունքների այս տեսակ խախտման ողջ լրջությունը: Բռնության զոհ դարձած կանանց և աղջիկներին պետք է անմիջապես տրամադրվեն փոխհատուցման և պաշտպանության միջոցներ, այդ թվում՝ բռնության զոհի նկատմամբ պետք է կիրառվի պաշտպանության միջոց, ինչպես նաև պետք է առկա լինեն բավարար քանակությամբ պատշաճ ապաստաններ, և այս ծառայությունները պետք է հաշվի առնեն գյուղաբնակ, հաշմանդամ, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչ և թմրադեղեր օգտագործող կանանց կարիքները[29]: ԵԽ Հանձնակատարը նաև հանձնարարել է պետությանը համապատասխան մոտեցում ցուցաբերել ընտանեկան բռնության խնդրին, այդ թվում՝ ընտանեկան օրենսդրությունը բարեփոխելու, խնդրի լուծման համար պետական դրամական հատկացումներ կատարելու, ընտանեկան բռնության զոհերի համար գործող ապաստանները պահպանելու և նորերի կառուցմանը ֆինանսապես

աջակցելու, ինչպես նաև ընտանեկան բռնության ուղղությամբ մասնագիտացած ոստիկանական բաժիններին համապատասխան միջոցներ և վերապատրաստումներ տրամադրելու միջոցով[30]: ՀՓ1-ը հավելել է, որ Հայաստանը պետք է կանանց նկատմամբ կիրառվող բռնության բոլոր տեսակների, մասնավորապես՝ ընտանեկան բռնության թեմայով վերապատրաստումներ անցկացնի դատական համակարգի և պետական ծառայություն իրականացնող պաշտոնատար անձանց, մասնավորապես՝ իրավապահ մարմինների աշխատակիցների և բուժօգնություն տրամադրողների համար, որի արդյունքում նշված աշխատակիցները կկարողանանան պատշաճ աջակցություն ցուցաբերել այսպիսի բռնությունից տուժածներին[31]:

19. Ինչ վերաբերում է մարդկանց թրաֆիքինգին, ԵԽ Հանձնակատարը հանձնարարել է Կառավարությանը բարձրացնել հասարակության իրազեկվածությունը և ավելացնել կանխարգելմանն ուղղված ջանքերը, բարելավել զոհերին տրամադրվող աջակցությունն ու պաշտպանությունը՝ վերջիններիս ցուցաբերելով օգնություն և ապահովելով վերականգնողական խորհրդատվությամբ ու ապաստանով, ինչպես նաև առաջընթաց քայլեր կատարել զոհերի ինքնության հաստատման ուղղությամբ[32]:

20. Համաձայն ՀՓ1-ի՝ մարմնավաճառությունը Հայաստանում կարող է հանգեցնել տուգանքի տեսքով վարչական պատասխանատվության: Այն հավելել է, որ մարմնավաճառների նկատմամբ հետապնդումները և քրեականացումը նպաստում են վերջիններիս էլ ավելի նշավակմանը և նվաստացմանը՝ մեծացնելով նրանց՝ մարդու իրավունքների ոտնահարման հավանականությունը և ՄԻԱՎ-ի նկատմամբ խոցելիությունը[33]:

21. Երեխաների նկատմամբ մարմնական պատժի բոլոր ձևերի վերացմանն ուղղված համաշխարհային նախաձեռնությունը (ԵՄՊԲՁՎՀՆ) նշել է, որ երեխայի նկատմամբ տանը կիրառվող մարմնական պատիժը օրինական է համարվել, և որ ստացվել են ընտանիքներում կիրառվող ֆիզիկական բռնության գերակշիռ տոկոսի մասին վկայող հաղորդումներ: Այն նաև նշել է, որ մարմնական պատիժը անօրինական է համարվել դպրոցներում և քրեակատարողական համակարգում: Այնուամենայնիվ՝ ոչ մի արգելք չի գործել այլընտրանքային խնամքի կենտրոններում[34]: ԵՄՊԲՁՎՀՆ-ը հանձնարարել է Կառավարությանն ընդունել և կիրառել մարմնական պատժի լիարժեք արգելքն ապահովող օրենսդրություն[35]:

### *3. Արդարադատության կառավարումը, այդ թվում՝ անպատժելիությունը, և օրենքի գերակայությունը*

22. Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների և իրավական հարցերի գլխավոր տնօրինությունը նշել է, որ իրավապահ մարմինները և դատական իշխանությունը շարունակում են բնակչության կողմից ընկալվել որպես կոռուպացված և ոչ միայն պետության, այլև տարբեր ուժային խմբերի ազդեցությանը ենթակա[36]: ԵԽ Հանձնակատարը հանձնարարել է ավարտին հասցնել արդարադատության համակարգի բարեփոխումները և ապահովել ներքին օրենսդրության համապատասխանությունը

վերանայված Սահմանադրությանը և դատական իշխանության մասին նոր օրենսդրությանը[37]: ՀՓ2-ը հանձնարարել է Հայաստանին օրենսդրական մակարդակում և գործնականում ապահովել դատավորների անկախության և դատական իշխանության վրա որևէ ճնշման կամ ազդեցության բացառման իրական երաշխիքներ: Դատավորների առաջարկված ցուցակը հաստատելիս Նախագահը չպետք է լիազորված լինի այդ ցուցակից ըստ հայեցողության ընտրություն կատարելու: Պետությունը պետք է օրենքի տեքստից հանի «դատավորի թեկնածության ընդունելի լինելը Նախագահի համար» ձևակերպումը[38]:

23. ՀՓ2-ը նաև հանձնարարել է պետությանը ապահովել դատավարության մրցակցային բնույթը և դատավարության կողմերի նկատմամբ հավասար անաչառության սկզբունքը, ինչպես նաև երաշխավորել անմեղության կանխավարկածի սկզբունքի և պաշտպանության իրավունքի նկատմամբ հարգանքը՝ առանց անօրինական միջոցներով, այդ թվում՝ փաստաբանների նկատմամբ անօրինական ճնշումների և ահաբեկման միջոցով, գործնականում խոչընդոտելու այս իրավունքի արդյունավետ իրականացմանը: Այն նաև հանձնարարել է Հայաստանին երաշխավորել արդար դատավարության ազգային և միջազգային չափորոշիչների լիարժեք կիրառումը, ինչպես նաև ընդունել մի առանձին օրենք իրավական օգնության վերաբերյալ՝ միջազգային չափորոշիչներին համապատասխան[39]:

24. Human Rights Watch-ն արձանագրել է արդար դատավարության իրավունքի լուրջ ոտնահարումներ, այդ թվում՝ 2008 թվականի փետրվարին տեղի ունեցած նախագահական ընտրությունների ժամանակ տեղի ունեցած բռնությունների հետ կապված՝ սեփական ցանկությամբ փաստաբան ընտրելու հնարավորությունից զրկումը և առանց հաղորդակցման հնարավորության կալանավորումը[40]:

25. ՀՓ2-ը նշել է, որ Հայաստանում պատշաճ մոտեցում չի ցուցաբերվում դեռահասների նկատմամբ արդարադատության հետ կապված խնդիրներին: Չնայած հայաստանյան օրենսդրությունը դեռահասների նկատմամբ արդարադատությանը վերաբերող մի քանի էական չափորոշիչներ է նախատեսում, սակայն կանխարգելման, այլընտրանքային պատժի և դեռահաս օրինախախտների վերականգնման խնդիրները շարունակում են մնալ չլուծված: Հաղորդումներ են ստացվել այն մասին, որ դեռահասները ենթարկվում են ֆիզիկական բռնության՝ մտնելով քրեակատարողական հիմնարկներ: Գոյություն չեն ունեցել ոչ կասկածյալ, մեղադրյալ, ականատես և տուժող դեռահասների հարցաքննության հատուկ չափորոշիչներ, ոչ դեռահասների համար նախատեսված հատուկ դատական ընթացակարգեր, ոչ էլ ազատազրկմանը փոխարինող հաստատված այլընտրանքներ[41]:

26. Human Rights Watch-ը նշել է, որ մարդու իրավունքների պաշտպանների նկատմամբ հարձակումները և պաշտոնական հետապնդումները Հայաստանում հաճախ մնում են անպատիժ[42]: Այն հանձնարարել է պետությանը մարդու իրավունքների պաշտպանների նկատմամբ հարձակումների և պաշտոնական

հետապնդումների մասին մեղադրանքների անհապաղ և ամբողջական քննություն վարել և օրինախախտներին ենթարկել պատասխանատվության[43]:

27. ՀՓ1-ը հանձնարարել է թմրադեղերի և հոգեմետ նյութերի մասին օրենքում այնպիսի բարեփոխումներ կատարել, որ թմրակախվածության բուժումը պարզորոշ կերպով սահմանվի որպես թմրանյութերի օգտագործման հետ կապված հանցագործությունների համար նախատեսվող ազատազրկման այլընտրանք, այլ ոչ թե ազատազրկման հավելում[44]:

28. Ըստ ՀՓ1-ի՝ սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հողի վրա կատարվող հանցագործությունների զոհերը օգնության դիմելու շատ փոքր հնարավորություններ ունեն, քանի որ այդ տեսակ հանցագործության մասին հաղորդում տալը կամ դատարան դիմելը ենթադրում է ինքնաբացահայտում, ինչն էլ կարող է բերել հետագա հետապնդումների և խտրականության[45]:

### *4. Գաղտնիության, ամուսնության և ընտանեկան կյանքի իրավունք*

29. ՀՓ1-ը նշել է, որ հայաստանյան օրենքով թմրադեղեր օգտագործող և/կամ թմրակախվածություն ունեցող անձինք հաշվառված են նարկոլոգիական ռեգիստրում՝ «զննման» (այսինքն՝ հսկողության) նպատակով: Ըստ ՀՓ1-ի՝ չնայած նարկոլոգիական հիվանդների հաշվառումը կարող է օրինական համարվել սահմանափակ թվով նպատակների համար, սակայն ցանկացած այսպիսի համակարգ արդարացնելի է միայն այն դեպքում, եթե այն խստորեն պահպանում է հաշվառվածների գաղտնիությունը և կանխում այս կարգի տեղեկատվության անտեղի տարածումը և օգտագործումը: Նմանատիպ խախտումների թիվը կրճատելու, ինչպես նաև թմրակախվածությունից բուժում ստանալ ցանկացող մարդկանց մտադրությունից հետ չպահելու համար Հայաստանը պետք է վերանայի ներկայիս մոտեցման արդյունավետությունը և ծախսատարությունը՝ կամ նման հաշվառումները վերացնելու, կամ գոնե հաշվառված հիվանդների մասին տեղեկատվության գաղտնիության ապահովումը զգալիորեն բարձրացնելու նպատակով: Դրա համար պետք է արգելվի բուժանձնակազմից բացի որևէ մեկին հիվանդի մասին տեղեկություններ տրամադրել[46]:

30. ՀՓ1-ը նշել է, որ «Թմրադեղերի և հոգեմետ նյութերի մասին» օրենքի դրույթները պարտադրում են մարդկանց թմրակախվածության թեստ անցնել՝ միայն թմրանյութեր օգտագործելու կասկածի հիման վրա: Թմրակախվածության այսպիսի ոչ կամավոր ստուգումները գրեթե բոլոր հանգամանքներում առանց հիմքի ոտնահարում են անձի գաղտնիությունը և անվտանգությունը[47]:

### *5. Ազատ տեղաշարժման իրավունք*

31. Խղճի և խաղաղության հարկ միջազգային կազմակերպությունը (ԽԽՀՄԿ) նշել է, որ բանտից դուրս գալուց հետո բարեխիղճ առարկողների քաղաքացիական իրավունքները սահմանափակվում են: Օրինակ՝ շատերին մերժել են հատկացնել անձը հաստատող փաստաթուղթ, քանի որ զինկոմիսարիատի կողմից նրանց չի տրվել գրանցման փաստաթուղթ, իսկ նրանց դեպքում,

ովքեր ունեցել են անձը հաստատող փաստաթուղթ, չեն գրանցել վերջիններիս քաղաքացիությունը, ինչը պարտադիր է Հայաստանում[48]: Կրոնի և հանրային քաղաքականության ինստիտուտը (ԿՀՔԻ) նաև հաստատել է, որ բարեխիղճ առարկողները լրացուցիչ իրավական խոչընդոտների են բախվել նույնիսկ այն դեպքում, երբ մասնակցել են Կառավարության սահմանած այլընտրանքային ծառայությանը, քանի որ նրանց չի տրվել զինվորական ծառայության վկայական: Առանց վկայականի նրանք ի վիճակի չեն եղել դիմել անձնագիր ստանալու համար, ինչը նրանց թույլ չի տվել հեռանալ երկրից, աշխատանքի ընդունվել, քվեարկել և ամուսնանալ[49]:

32. ԽԽՀՄԿ-ն նաև նշել է, որ այլընտրանքային ծառայության ընթացքում բարեխիղճ առարկողները զրկված են եղել տեղաշարժվելու ազատությունից: Նույնիսկ աշխատանքային ժամերից դուրս նրանք գտնվել են այն հաստատության տնօրենի ենթակայության տակ, որտեղ նշանակված են եղել ծառայության: Հաղորդումներ են ստացվել, որ սա օգտագործվել է որպես կամայական սահմանափակումներ պարտադրելու լրացուցիչ միջոց, մասնավորապես՝ հաղորդվել է, որ որոշ Եհովայի վկաների թույլ չի տրվել լքել հաստատությունը կրոնական պատարագի գնալու նպատակով, ինչը նրանց՝ դավանանքի ազատության ուղղակի խախտում է[50]:

### *6. Խղճի և դավանանքի, արտահայտման, հավաքների և խաղաղ հավաքների և ցույցերի ազատություն, հասարակական և քաղաքական կյանքի մասնակցության իրավունք*

33. ԿՀՔԻ-ն նշել է, որ չնայած Հայաստանի Սահմանադրությունը տարանջատում է եկեղեցին պետությունից, սակայն այն միևնույն ժամանակ սահմանում է Հայ առաքելական եկեղեցին որպես ազգային եկեղեցի հոգևոր կյանքում[51]: Այն ցույց է տվել, որ չնայած օրենքը չի պահանջում կրոնական համայնքների գրանցում, գրանցված համայնքները ունեն այնպիսի արտոնություններ, որոնցից զրկված են չգրանցված համայնքները[52]: ԿՀՔԻ-ն նաև նշել է, որ գրանցման պահանջները սահմանափակում են առավել փոքր, ինչպես նաև ոչ «պատմականորեն ճանաչված սուրբ գրվածքներ»[53] օգտագործող կրոնական համայնքների հնարավորությունները:

34. ԿՀՔԻ-ն նշել է, որ 2009 թվականի ամռանը խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին օրենքի նախագծի բարեփոխումները հաստատվեցին խորհրդարանի կողմից փաստաթղթի առաջին ընթերցումից հետո: Օրենքի բարեփոխումները ներառում են հավատքի փոխանակման արգելքը, այն պահանջը, որ կրոնական համայնքի գրանցման համար վերջինս պետք է ունենա 500 չափահաս քաղաքացի անդամներ, ինչպես նաև Երրորդությունը չընդունող քրիստոնեական համայնքների համար գրանցում ստանալու արգելքը: Առաջարկված բարեփոխումները արժանացել են քննադատության՝ միջազգային

իրավունքին չհամապատասխանելու համար[54]: *Եհովայի* քրիստոնյա *վկաների եվրոպական ասոցիացիա (ԵՎ)* նշել է, որ օրենքը պետք է երկրորդ ընթերցման համար վերանայվեր, բայց այն հակասում էր Հայաստանի Սահմանադրությամբ ամրագրված կրոնի ազատության դրույթներին[55]:

35. ԵՎ-ն նշել է, որ 2009 թվականի նոյեմբերի դրությամբ Հայաստանում եղել են մի շարք Եհովայի վկաներ՝ բանտարկված կրոնական հողի վրա զինվորական ծառայության դեմ բարեխիղճ առարկության համար[56]: Համաձայն ԿՀՔԻ-ին՝ Հայաստանի այլընտրանքային ծառայությունը շատ բարեխիղճ առարկողների կողմից համարվում է անընդունելի, քանի որ այն մնում է ռազմական հսկողության տակ: ԿՀՔԻ-ն նաև նշել է, որ «իսկապես քաղաքացիական» այլընտրանքային ծառայության բացակայությունը ստիպել է որոշ հայերի ենթարկվել դատական կարգով հետապնդման և բանտային կալանքի վտանգի՝ այլընտրանքային ծառայությունից հրաժարվելու համար[57]:

Խղճի և խաղաղության հարկ միջազգային կազմակերպությունը (ԽԽՀՄԿ) կրկնել է այն տեսակետը, որ բարեխիղճ առարկողների համար ըստ 2003 թվականին ընդունված այլընտրանքային ծառայության մասին օրենքի կատարված կարգավորումները ամբողջությամբ զինված ուժերի հսկողության տակ են եղել, և հասանելի դարձած այլընտրանքային ծառայությունն իր բնույթով իրականում քաղաքացիական չէր[58]: Այն նաև նշել է, որ այլընտրանքային ծառայության տևողությունն ավելի երկար է, քան զինվորական ծառայության տևողությունը, որին այլընտրանքային ծառայության բացակայության դեպքում պետք է ենթակա լիներ առարկողը: Այն հաստատել է, որ նման անհամապատասխանությունը անարդար էր և պատժիչ[59]: ԿՀՔԻ-ն հանձնարարել է, որ պետությունը դադարեցնի բարեխիղճ առարկողների նկատմամբ հետապնդումը և ազատ արձակի ներկայիս բոլոր խղճի բանտարկյալներին[60]:

36. Համաձայն ԿՀՔԻ-ին՝ չնայած Քրեական օրենսգիրքը պատիժ է նախատեսում «ազգային, ռասայական կամ կրոնական ատելության» հրահրմանն ուղղված գործողությունների համար, կրոնական փոքրամասնությունների նկատմամբ հասարակության կողմից բռնության բազմաթիվ դեպքեր են գրանցվել, երբ իշխանություններն ամբողջությամբ անտեսել են այս դրույթը[61]: ԵՎ-ն հանձնարարել է Հայաստանին վերջ դնել Եհովայի վկաների նկատմամբ կրոնական խտրականությանը: Այն վկայակոչել է նաև այն փաստը, որ ոստիկանությունը և դատախազները քրեական գործեր չեն հարուցել Եհովայի վկաների նկատմամբ ֆիզիկական բռնության դեպքերի առթիվ, ինչպես նաև կրոնական հավաքների վայրեր ստանալու դժվարությունը և իշխանությունների թերացումը Եհովայի վկաների դեմ ուղղված կատաղի զրպարտիչ քարոզարշավը դադարեցնելու գործում[62]: Այն հավելել է, որ Եհովայի վկաները շարունակում են բախվել անօրինական ավելացված արժեքի հարկի խնդրի հետ, որը դրվում է երկրպագության նպատակով օգտագործվող կրոնական հրատարակությունների վրա[63]:

37. Համաձայն ՀՓ4-ի՝ Հայաստանի Սահմանադրությունը և այլ օրենսդրական ակտեր պաշտպանում են արտահայտման ազատությունը, բայց գործնականում այս իրավունքը հաճախ գտնվում է սպառնալիքի տակ, հատկապես՝ ընտրությունների շրջանում: Հայաստանում չի եղել պաշտոնական գրաքննություն, սակայն հաճախ է նշվել, որ ինքնուրույն գրաքննությունը համատարած բնույթ է կրում: Լրագրողների նկատմամբ բռնության դեպքերը, հեռարձակման վրա դրվող իրավական սահմանափակումները և վատ տնտեսական դրությունը նպաստել են տեղեկատվության ազատ հոսքի սահմանափակմանը, մասնավորապես՝ հեռարձակող լրատվամիջոցների շրջանում, որոնք հայերի մեծամասնության համար լուրերի հիմնական աղբյուրն են: ՀՓ4-ը հավելել է, որ լրագրերի և գրքերի հրատարակումը շարունակում է մնալ բավականին ազատ, իսկ գրավոր տրամադրվող տեղեկատվությունը բազմակարծիք է, սակայն ընդհանուր առմամբ լրատվական միջավայրը շարունակում է մնալ խիստ քաղաքականացված, իսկ տպագիր մամուլը չափազանց փոքրածավալ է: Բացի այդ՝ հեռարձակող լրատվամիջոցների և թերթերի գերակշիռ մեծամասնությունը մասնավոր է, պատկանում է գլխավորապես քաղաքական գործիչների կամ գործարարների, որոնք սերտ կապեր ունեն կա՛մ կառավարության, կա՛մ ընդդիմության հետ: Համացանցը, որը հասանելի էր բնակչության 15 տոկոսին, շարունակում էր մնալ ազատ[64]:

38 ՀՓ2-ը նշել է, որ լրագրողների նկատմամբ բռնությունը շարունակում է մնալ նրանց մասնագիտական գործունեության գլխավոր խոչընդոտներից մեկը[65]: Բերելով լրագրողների նկատմամբ հարձակումների օրինակներ[66]՝ ՀՓ4-ը հանձնարարել էվերջ դնել հարձակում գործողների անպատժելիությանը, ինչպես նաև պարզել հարձակում գործողների և հարձակումները սատարողների ինքնությունը, ձերբակալել և դատարանի առջև կանգնեցնել նրանց: Այն նաև հանձնարարել էապահովել և հարգել դատական իշխանության անկախությունն ու անաչառությունը, որի նպատակն է երաշխավորել արդար դատաքննություն լրագրողների համար[67]: ՀՓ2-ը հավելել է, որ այս տեսակ բռնության դեպքերի մեծ մասը պատշաճ կերպով չի հետաքննվել, և մեղավորները չեն պատժվել: Իրավապահ մարմինները խոչնդոտել են լրագրողների մասնագիտական գործունեությանը և բռնություն են գործադրել նրաց նկատմամբ[68]: ՀՓ3-ը նույնպես հնչեցրել է նման մտահոգություններ[69]:

39. ՀՓ4-ը մատնանշել է անկախ և ընդդիմադիր լրատվամիջոցներում իրականացվող արտահերթ հարկային ստուգումների մասին, որը արտահայտման ազատության համար պայքարող տեղական խմբերը գնահատել են որպես արտահայտման ազատությունը ճնշելու փորձեր[70]: Այն հանձնարարել էվերջ դնել Հարկային ծառայության կողմից անկախ և ընդդիմադիր հեռուստաընկերություններում, թերթերում և հրատարակչություններում իրականացվող անտեղի/ոչ անհրաժեշտ հարկային ստուգումների պրակտիկային[71]:

40. Ըստ ՀՓ3-ի՝ փետրվարի 19-ին տեղի ունեցած վիճարկված նախագահական ընտրություններից հետո՝ 2008 թվականի մարտի 2-ին հայտարարված

արտակարգ դրությունը լուրջ և կտրուկ հետևանքներ ունեցավ Հայաստանում արտահայտման ազատության վրա: Մարտի 1 -ից 20-ը այն լրագրողները և լրատվամիջոցները, որոնք լուսաբանել են ընդդիմության գործունեությունը, իշխանությունների կողմից ենթարկվել են հետապնդումների: Մի շարք ընդդիմադիր լրատվամիջոցները հաղորդում են տվել այն մասին, որ իրենց վեբկայքերը փակվել կամ սահմանափակվել են, իսկ թերթերի համարների հրատարկման թույլտվությունը մերժվել է[72]:

41. Ըստ ՀՓ3-ի՝ 2008 թվականի մարտի 17-ին Ազգային ժողովը հաստատեց «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» օրենքի բարեփոխումները, որը լիազորում է տեղական իշխանություններին արգելել հասարակական հավաքները: Այս բարեփոխումները համատարած մտահոգության առիթ դարձան քաղաքացիական հասարակության կազմակերխությունների շրջանում, քանի որ դրանք ակնհայտ սպառնալիք են Հայաստանում հավաքների ազատության համար և կառավարությանը հանրության կոնկրետ բարձրաձայնող հատվածների նկատմամբ հսկողություն հաստատելու ևս մեկ միջոց են ընձեռում[73]: ՀՓ3-ը նաև նշել է, որ 2008 թվականի հունիսի 11-ին Ազգային ժողովը փոփոխություններ է մտցրել օրենքի մեջ, սակայն նոր դրույթների լեզուն նույնիսկ ավելի սահմանափակող է, քան 2008 թվականին նախորդող սկզբնական տեքստը[74]:

42. ՀՓ4-ն հանձնարարել է երաշխավորել հավաքների ազատությունը, մասնավորապես՝ հյուրանոցների ժողովների դահլիճների մուտքը հասանելի դարձնելու առումով, և ապահովել մարդու իրավունքների հարցերով հանդիպող քաղաքացիական հասարակության խմբերի արտահայտման ազատությունը: Այն կոչ է արել պաշտոնապես չեղյալ հայտարարել 2008 թվականի սեպտեմբերին ընդունված «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքի փոփոխությունը, որը երկամյա մորատորիում էր նախատեսում հեռուստահեռարձակման թույլտվությունների շնորհման համար մինչև 2010 թվականի հուլիսի 20-ը, ինչպես նաև կոչ է արել հեռարձակման սեկտորը կարգավորող նոր օրենք նախագծել՝ Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովն իսկապես անկախ մարմին դարձնելու նպատակով: ՀՓ4-ը նաև կոչ է արել պետությանը երաշխավորել հեռարձակման թույլտվությունների շնորհման գործընթացի արդարությունն ու թափանցիկությունը[75]:

43. ՀՓ2 առաջարկել է, որպեսզի Հայաստանի իշխանությունները խթանեն գործնական քաղաքական մրցակցությունը, մամուլի ազատությունը, հավաքների և արտահայտման ազատությունը, և ապահովեն բոլոր քաղաքական ուժերի հավասարությունը: Միաժամանակ, առաջարկվել է միջոցներ ձեռնարկել ընտրական խախտումները բացահայտելու և պատժելու համար, ներառյալ նախընտրական քարոզչության ֆինանսավորման և ադմինիստրատիվ ռեսուրսների օգտարգործման դեպքերը; բարելավել համապատասխան ընտրական օրենսդրությունը, մասնավորապես՝ նախընտրական քարոզչության, քաղաքական կուսակցությունների ֆինանսավորումը և

ընտրական հանձնաժողովների կազմը; և ուժեղացնել Հայաստանի միջազգային պարտավորությունների կատարման միջոցները, ինչպես նաև ժողովրդավարական ընտրություններին համապատասխանելու միջազգային պարտավորությունները[76]:

44. ԵԽԽՎ-ն նշել է, որ 2008 թվականի մարտի 1-ի իրադարձությունների առնչությամբ ձերբակալված մարդկանց շարունակական կալանքի մեջ պահվելը տարածայնության առիթ էր, որը կարող էր սրել հարաբերությունները իշխանության և ընդդիմության միջև և երկխոսության ու բարեփոխումների հնարավորությանը սպառնացող վտանգ էր պարունակում[77]:

45. ՀՓ2-ը հանձնարարել է օրենսդրությունը բարելավելու և դրա կիրառումն ապահովելու անհապաղ միջոցներ ձեռնարկել՝ հասարակության բավարար մասնակցությունը շրջակա միջավայրին վերաբերող որոշումների կայացմանը երաշխավորելու, ինչպես նաև հասարակության համար արդարադատության հասանելիությունը ապահովելու նպատակով՝ միջազգային պարտավորություններին համապատասխան[78]:

## *7. Աշխատանքի և արդար ու բարենպաստ պայմաններում աշխատելու իրավունք*

46. Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն (ԵԽ ՍԻԵԿ) նշել է, որ հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքային խտրականությունից պաշտպանելու արդյունավետ մեխանիզմներ չեն հաստատվել[79]:

47. ԵԽ ՍԻԵԿ-ը նաև նշել է, որ աշխատանքից ազատման մասին տեղեկացման ժամկետը, ինչպես նաև վերջնահաշվարկը չեն հաշվարկվում աշխատողի՝ աշխատած ժամանակահատվածի տևողության հիման վրա: Այն աշխատողները, ովքեր չեն կատարել կամ անբավարար կերպով են կատարել իրենց պարտավորությունները, այն աշխատողները, ում նկատմամբ գործատուն կորցրել է վստահությունը, կամ ովքեր զինվորական ծառայության մեջ են, կարող են աշխատանքից ազատվել առանց նախապես զգուշացվելու[80]:

## *8. Սոցիալական ապահովության և կյանքի պատշաճ պայմանների իրավունք*

48. *Վորլդ Վիժն Հայաստանը* (ՎՎՀ) նշել է, որ նախորդ հինգ տարիների ընթացքում Հայաստանի կառավարությունը սկիզբ էր դրել առողջապահական ոլորտի մեծամասշտաբ բարեփոխումների, որի նպատակն էր քաղաքացիների համար հասանելի դարձնել որակյալ բժշկական ծառայություններ: Հատկապես շեշտադրվել էր առաջնային բուժօգնության հասանելիությունը, զգալիորեն աճել էր առաջնային բուժօգնության ֆինանսավորումը, որը 2006 թվականին ողջ ազգաբնակչության համար հայտարարվեց անվճար: Մոր և մանկան առողջությունը եղել է քաղաքականության մի շարք փաստաթղթերի առաջնահերթությունը[81]: Սակայն, ըստ ՎՎՀ-ի, 2006 թվականին ՀՆԱ միայն 1.5 տոկոսն է ծախսվել առողջապահության վրա: ՎՎՀ-ն նաև նկատել է, որ Հայաստանում չկար առողջապահական համակարգերի մշտադիտարկման և գնահատման, հետևաբար, և քաղաքականության մշակման համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման

կենտրոնացված համակարգ[82]: Այն հանձնարարել է ֆինանսավորման համակարգը դարձնել հաշվետու և թափանցիկ տեղական հաստատությունների կառավարիչներին ֆինանսական միջոցների տնօրինման ավելի մեծ հնարավորություն և ճկունություն ընձեռելուն զուգահեռ[83]:

49. ՎՎՀ նաև տեղեկացրել է, որ Հայաստանն առողջապահության ոլորտում շատ մասնագետներ ունի, այնուամենայնիվ չեն իրականացվում արդյունավետ վերապատրաստումներ՝ մասնագիտական ռեսուրսներն երկրի կարիքներին համապատասխանեցնելու համար: Առկա է զգալի տարբերություն մարզային և մայրաքաղաքային բնակավայրերում համապատասխան որակավորում ունեցող մասնագետների առկայության միջև: ՎՎՀ ավելացրել է, որ գյուղական տարածքներում, հաճախ նաև մարզային բժշկական կենտրոնները չունեն մասնագետներ կամ անհրաժեշտ սարքավորումներ՝ նորածիններին և կանանց, և երեխաներին ընդհանուր առմամբ, որակյալ ծառայություն մատուցելու համար: Բժիշկ-մասնագետների վարձատրությունը ցածր է, ինչը խթան չի հանդիսանում ավելի լավ ծառայություն մատուցելու համար[84]: ՎՎՀ առաջարկել է համապատասխան մասնագետներով ապահովել գյուղական բնակավայրերը[85]:

50. ՀՓ1-ը նշել է ընդհանուր բուժօգնության ծառայությունների, այդ թվում՝ կանանց և հատկապես գյուղական ու հեռավոր շրջաններում ապրող կանանց համար վերարտադրողական բուժօգնության ծառայությունների հասանելիության անբավարարության մասին: Նաև նկատվել է երիտասարդների շրջանում ընտանիքի պլանավորման մասին գիտելիքների, սեռական դաստիարակության պակաս, ինչպես նաև դեռահասների հղիության և հղիության արհեստական ընդհատման բարձր մակարդակ[86]: «Վորլդ Վիժն Հայաստանը» նշել է, որ մոր և մանկան մահացության մակարդակը Հայաստանում շարունակում է մնալ բարձր՝ չնայած վերջին տասնամյակում ընդհանուր մահացության տոկոսի նվազմանը: Բացի այդ՝ հետծննդյան ժամանակահատվածում մայրական մահացության և նորածինների մահացության տոկոսները տատանվում են՝ ըստ քաղաք/գյուղ, եկամուտ և կրթություն փոփոխականների[87]: ՎՎՀ-ն մի շարք հանձնարարականներ է արել՝ կոչ անելով Հայաստանին բարձրացնել մոր և մանկան խնամքի մասին իրազեկությունը[88]:

51. ՀՓ1-ը նշել է, որ չնայած Հայաստանում ՄԻԱՎ-ի տարածվածության մակարդակը համեմատաբար ցածր էր (0.02 տոկոս), այն արագ տեմպերով աճում էր[89]: 2006-2008թթ. ժամանակահատվածում իրականացված գնահատման հիման վրա՝ հաշվարկվել էր, որ վերջին 12 ամիսների ընթացքում ՄԻԱՎ կանխարգելման ծրագրերը հասանելի են եղել թմրադեղեր ներարկողների միայն 54, մարմնավաճառների 41, և տղամարդկանց հետ սեռական հարաբերություն ունեցող տղամարդկանց 10 տոկոսի համար[90]:

52. ՀՓ1-ն առաջարկել է իրականացնել թմրամիջոց օգտագործողների վերաբերյալ ազգային ծրագրերի և ռազմավարությունների գնահատում՝ կառավարության նպատակների և թիրախների համատեքստում, և գնահատել այդ ծրագրերի ազդեցությունը հանրային

առողջության վրա, ներառյալ ՄԻԱՎ-ի կանխարգելումը, խնամքը և մարդու իրավունքները: Գնահատումը պետք էլինի թափանցիկ և իրականացվի քաղաքացիական հասարակության կազմակերպությունների մասնակցությամբ[91]:

53. ՀՓ1 տեղեկացնում է, որ Հայաստանում թմրանյութի օգտագործման վերաբերյալ օրենսդրությունն ավելի շատ ուղղված է պատժելուն, քան հիմնված է հանրային առողջության մոտեցման վրա՝ որպես հանրային առողջության ոլորտի խնդիր[92]: ՀՓ1 տեղեկատվության համաձայն՝ Հայաստանում առկա չէ թմրամիջոցներից կախվածության բուժման համալիր համակարգ, ներառյալ վերականգնողական բուժում: Առկա բուժումը սահմանափակվում է կարճաժամկետ "ախտահանմամբ", առանց վերականգնողական մասի կամ աջակցության[93]: Ավելին՝ ՀՓ1 տեղեկացրել է, որ թմրամիջոցից կախվածություն ունեցող անձինք կարող են ենթարկվել հարկադիր "բուժման", որը հիմնականում իրենից ներկայացնում է "ախտահանում", առանց որևէ դեղորայքային աջակցության: ՀՓ1 առաջարկել է, որ Հայաստանը վերանայի հարկադիր բուժման մոտեցումները, դրա կիրառումը սահմանափակելու առումով, Սիրակուսայի սկզբունքներին համապատասխանեցնելու համար: Այուհետև, ՀՓ1 առաջարկում է գնահատել ներկայումս օգտագործվող հարկադիր բուժման մեթոդները՝ ապահովելու համար հիմնավորվածությունը և համապատասխանելիությունը մարդու իրավունքների և ճանաչված մասնագիտական ստանդարտներին[94]

54 Եվրոպայի Խորհրդի Հանձնակատարն առաջարկել է, որպես առաջնահերթություն, լուծել դեռևս 1998թվականի երկրաշարժից հետո բնակարանային խնդիրը[95]:

### *9. Կրթության իրավունք*

55 ՀՓ2-ը հանձնարարել է Հայաստանին երեխաների՝ կրթություն ստանալու սահմանադրական իրավունքը երաշխավորող մեխանիզմներ և պայմաններ ապահովել, ինչպես նաև պատասխանատվության ենթարկել պաշտոնատար անձանց երեխաների՝ տարրական և միջնակարգ կրթություն ստանալու իրավունքն ապահովելու համար միջոցներ ձեռնակելու գործում թերանալու համար[96]:

### *10. Ազգային փոքրամասնություններ և բնիկ ժողովուրդներ*

56. Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարի եվրոպական հանձնաժողովը (ԵԽ ՌԱԵՀ) նշել է, որ եզդիները շարունակում են հողի, ջրի և արոտավայրերի հետ կապված խնդիրների բախվել, և որ այդ համայնքի որոշ անդամներ իրենց հողի նկատմամբ իրավունք ձեռք չեն բերել: Դեռ զգացվում էր մի այնպիսի համակարգի հաստատման անհրաժեշտություն, որն ազգային փոքրամասնություններին երկրի քաղաքացիական և քաղաքական կյանքին ավելի մեծ մասնակցություն ունենալու հնարավորություն կտար: Դեռևս ավելի շատ և լավ դասագրքերի կարիք էր զգացվում ազգային փոքրամասնությունների երեխաների համար: Սա հաշվի առնելով՝ ԵԽ ՌԱԵՀ-ն հանձնարարել է Հայաստանին ավելի շատ քայլեր ձեռնարկել եզդիների համայնքի խնդիրների լուծման ուղղությամբ, մասնավորապես՝

կարգուկանոնի պահպանման, հողի, ջրի ու արոտավայրերի հետ կապված տարածայնություններում, և շարունակել միջոցներ ձեռնարկել ազգային փոքրամասնություններին կրթական հավասար հնարավորություններ ընձեռելու ուղղությամբ՝ ի թիվս այլ բաների ապահովելով վերջիններիս՝ բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվելու հնարավորությունները մեծացնող միջոցներ[97]:

### *11. Ներգաղթյալներ, փախստականներ և ապաստան փնտրողներ*

57. ԵԽ ՌԵԱՀ-ը նշել է, որ Հայաստանը բարեփոխումներ է մտցրել «Փախստականների մասին» օրենքում՝ ժամանակավոր պաշտպանություն տրամադրելու առումով[98]: ԵԽ Հանձնակատարը հանձնարարել է այնպես անել, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտության արդյունքում իրենց տներից փախած բոլոր փախստականները և ներքին տեղահանության ենթարկվածները ապահովվեն պատշաճ կացարանով: Այն նաև հանձնարարել է մեծացնել փախստականների խոցելի խմբերին, հատկապես՝ տարեցներին տրամադրվող աջակցությունը և բարելավել ժամանակավոր կացարաններում տիրող պայմանները[99]:

58. ԵԽ Հանձնակատարը նշել է, որ չնայած ապաստանի տրամադրման հետ կապված ընդհանուր իրավիճակը Հայաստանում գնահատվում է բավարար, բայց կան բացթողումներ, որոնց Կառավարությունը պետք է ուշադրություն դարձնի, քանի որ վերջին շրջանի փախստականները հայտնել են, որ իրենց գնալով ավելի վտարված են զգում և սոցիալական ինտեգրման հետ կապված խնդիրների են բախվում[100]: ԵԽ ՌԱԵՀ-ն հանձնարարել է Հայաստանի իշխանություններին մի ծրագիր հաստատել, որով բոլոր սահմանապահները նախնական և ընթացիկ վերապատրաստումներ կանցնեն՝ Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականին ընդունված կոնվենցիայի, Փախստականների մասին օրենքի, ինչպես նաև ապաստան փնտրողներին և փախստականներին վերաբերող այլ միջազգային և ներքին իրավական նորմերի թեմայով[101]:

### *12. Ձեռքբերումներ, լավագույն փորձի օրինակներ, մարտահրավերներ և սահմանափակումներ*

Առկա չէ

### *13. Հիմնական ազգային առաջնահերթություններ, նախաձեռնություններ և պարտավորություններ*

Առկա չէ

### *14. Կարողությունների կառուցում և տեխնիկական աջակցություն*

Առկա չէ

# Ծանոթություն

1 Այս ամփոփագրի համար տեղեկություններ են տրամադրել ներքոնշյալ շահառուները. բոլոր սկզբնաղբյուր զեկույցների ամբողջական տեքստերը առկա են հետևյալ կայքում՝ www.ohchr.org (մեկ աստղանիշով նշված են Տնտեսական և սոցիալական խորհրդում խորհրդատվական կարգավիճակ ունեցող ոչ հասարակական կազմակերպությունները):

**Քաղաքացիական հասարակություն**

ԽԽՀՄԿ Խղճի և Խաղաղության Հարկ միջազգային կազմակերպություն, Լյովեն, Բելգիա;

ԵՄՊԲՁՎՀՆ Երեխաների նկատմամբ մարմնական պատժի բոլոր ձևերի վերացմանն ուղղված համաշխարհային նախաձեռնություն, Լոնդոն, ՄԹ

HRW «Human Rights Watch» կազմակերպություն*, Նյու Յորք, ԱՄՆ

ԿՀՔԻ Կրոնի և հանրային քաղաքականության ինստիտուտ, Վաշինգտոն, Կոլումբիայի շրջան, ԱՄՆ

ՀՓ1 Կանադայի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի իրավական ցանցի, Վնասի նվազեցման եվրասիական ցանցի և Թմրամիջոցների վերաբերյալ քաղաքականության միջազգային կոնսորցիումի համատեղ փաստաթուղթ;

ՀՓ2 «Թրանսփարենսի ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի, Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների գրասենյակի, Քաղաքացիական հասարակության ինստիտուտի, Հայաստանի հելսինկյան կոմիտեի, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի (Վանաձոր), Համագործակցություն հանուն ժողովրդավարության կենտրոնի, «Պետության կարիքների զոհերի», Համալսարանական կրթությամբ կանանց հայկական ասոցիացիայի, Երևանի մամուլի ակումբի և Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի (Հայաստան) համատեղ փաստաթուղթ

ՀՓ3 Մարդու իրավունքների քրդական ծրագրի (ՄԻՔԾ) /Լոնդոն, ՄԹ/ և «Ֆորում» իրավունքի կենտրոնի /Երևան, Հայաստան/ համատեղ փաստաթուղթ

ՀՓ4 Հրատարակիչների միջազգային ասոցիացիայի /Ժնև, Շվեյցարիա/, «Ինտերնեշնլ ՓԵՆ» գրողների միջազգային կազմակերպության* և «Գրաքննության ինդեքս» կազմակերպության համատեղ փաստաթուղթ

ԵՎ Եհովայի քրիստոնյա վկաների եվրոպական ասոցիացիա, Լոնդոն, ՄԹ

ԲՋՊԿ Բռնության զոհերի պաշտպանության կազմակերպություն*, Թեհրան, Իրանի Իսլամական Հանրապետություն;

ՄԱՀԿ Մահապատժի արգելքի համաշխարհային կոալիցիա, Շատիյոն, Ֆրանսիա

ՎՎՀ Վորլդ Վիժն Հայաստան, Հայաստան

**Տարածաշրջանային կազմակերպություններ**

ԵԽ Եվրոպայի խորհուրդ (Մարդու իրավունքների և իրավական հարցերի գլխավոր տնօրինություն, Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային համաձայնագրի խորհրդատվական կոմիտե

ԵԽ ՇՀԽԿ Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատար (ԵԽ հանձնակատար), Խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը

նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտե (ԵԽ ԽԿԿ), Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողով (ԵԽ ՌԱԵՀ), Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտե (ԵԽ ՍԻԵԿ), Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խումբ (GRECO) և Խորհրդարանական Ասամբլեա (ԵԽԽՎ))

2 ՄԱՀԿ, 3-4 կետեր

3 ՀՓ1, կետ 19

4 ՀՓ1, կետ 12

5 ՀՓ2, էջ 7

6 ԵԽ ՇԿԽԿ, 12 մայիսի 2006թ.-ի Երկրորդ կարծիքի ամփոփիչ զեկույց: Տես նաև ԵԽ ՌԱԵՀ, Հայաստանի վերաբերյալ երկրորդ զեկույցի ամփոփում, 30 հունիսի 2006:

7 ԵԽ Հանձնակատար, Մարդու իրավունքների հանձնակատարի զեկույցը Հայաստան կատարած իր այցի մասին, 7-11 հոկտեմբեր 2007, 30 ապրիլի 2008, էջ 31:

8 ԵԽ Հանձնակատար, Մարդու իրավունքների հանձնակատարի զեկույցը Հայաստան կատարած իր այցի մասին, 7-11 հոկտեմբեր 2007, 30 ապրիլի 2008, էջ 31:

9 ՀՓ2, էջ 7

10 Կոռուպցիայի դեմ պայքարի Եվրոպայի խորհրդի պետությունների խումբ, էջ 1

11 ՀՓ4, կետ 18

12 ՀՓ2, էջ 7

13 ԲՏՊԿ, էջ 4

14 ՀՓ1, կետ 18

15 Եվրոպայի Խորհրդի Հանձնակատար, Հայաստան այցելության վերաբերյալ զեկույց, 7-11 Հոկտեմբեր, 2007, 30 Ապրիլի, 2008, էջ 34

16 ՀՓ1, կետ 19

17 HRW, էջեր 1-2: Տե՛ս նաև ՀՓ2-ը:

18 HRW, էջ 2: Տե՛ս նաև ՀՓ3-ը, կետ 18-21:

19 ՇՋ, կետ 10

20 ԵՓԽՎ, կետ 7, «Ժողովրդավարական ինստիտուտների գործունեությունը Հայաստանում», 2009թ. հունիսի 22:

21 ԵԽ ԽԿԿ, Կետ. 15, Խոշտանգումների, դաժան, անմարդկային վերաբերմունքի Կանխարգելման Եվրոպական Կոմիտեի կողմից 2007թ դեկտեմբերի 13-ին ՀՀ-ին ներկայացրած զեկույց:

22 ԵԽ Հանձնակատար, Զեկույց Մարդու Իրավունքների Հանձնակատարի Հայաստան այցի վերաբերյալ, 2007թ. հոկտեմբերի 7-11, 2008թ. ապրիլի 30, էջ 32: Տե՛ս նաև HRW էջ 4:

23 ՀՓ2, էջ 4-5

24 ԵԽ Հանձնակատար, Զեկույց Մարդու Իրավունքների Հանձնակատարի Հայաստան այցի վերաբերյալ, 2007թ. հոկտեմբերի 7-11, 2008թ. ապրիլի 30, էջ 32: Տե՛ս նաև HRW էջ 4:

25 ՀՓ1, կետ 15

26 ՀՓ1, կետ 16

27 ՀՓ1, կետ 17

28 ՀՓ1, կետ 14

29 ՀՓ1, կետ 14

30 ԵԽ Հանձնակատար, Զեկույց Մարդու Իրավունքների Հանձնակատարի Հայաստան այցի վերաբերյալ, 2007թ. հոկտեմբերի 7-11, 2008թ. ապրիլի 30, էջ 33:

31 ՀՓ1, կետ 14

32 ԵԽ Հանձնակատար, Զեկույց Մարդու Իրավունքների Հանձնակատարի Հայաստան այցի վերաբերյալ, 2007թ. հոկտեմբերի 7-11, 2008թ. ապրիլի 30, էջ 33:

33 ՀՓ1, կետ 11

34 ԵԽ ՍԻԵԿ, Եվրոպական սոցիալական խարտիա (վերանայված), Սոցիալան իրավունքների եվրոպական կոմիտեի եզրակացություններ (Հայաստան) 2008, Վերանայված խարտիայի հոդվածներ 1, 15, 18, 20 և 24, նոյեմբեր 2008

35 ԵՄՊԲՋՎՀՆ, էջ 1

36 Եվրոպայի Խորհուրդ, Ընդհանուր տնօրինություն մարդու իրավունքների և իրավական հարցերի գծով, էջ 1:
37 ԵԽ Հանձնակատար, Զեկույց Մարդու Իրավունքների Հանձնակատարի Հայաստան այցի վերաբերյալ, 2007թ. հոկտեմբերի 7-11, 2008թ. ապրիլի 30, էջ 31
38 ՀՓ2, էջ 3
39 ՀՓ2, էջ 3
40 HRW, էջ 2
41 ՀՓ2, էջ 8
42 HRW, էջ 5
43 HRW, էջ 7
44 ՀՓ1, կետ 9
45 ՀՓ1, կետ 18
46 ՀՓ1, կետ 6
47 ՀՓ1, կետ 7
48 ԽԽՀՄԿ, կետ 26
49 ԿՀՔԻ, կետ 13, տե՛ս նաև ՀՓ էջ 6
50 ԽԽՀՄԿ, կետ 17, տե՛ս նաև ԵՎ էջ 3
51 ԿՀՔԻ, կետ 4
52 ԿՀՔԻ, կետ 1
53 ԿՀՔԻ, կետ 5
54 ԿՀՔԻ, կետ 6
55 ԵՎ, էջ 3
56 ԵՎ, էջ 2
57 ԿՀՔԻ, կետ 10-11
58 ԽԽՀՄԿ, կետ 3-4, 10, 16
59 ԽԽՀՄԿ, կետ 16
60 ԽԽՀՄԿ, կետ 17
61 ԿՀՔԻ, կետ 14
62 ԵՎ, կետ 4
63 ԵՎ, կետ 2
64 ՀՓ4, կետ 2, տե՛ս նաև ՀՓ3, կետ 4
65 ՀՓ2, կետ 9
66 ՀՓ4, կետ 12, տե՛ս նաև HRW էջ 1
67 ՀՓ4, կետ 18
68 ՀՓ2, կետ 9
69 ՀՓ3, կետ 5
70 ՀՓ4, կետ 11
71 ՀՓ4, կետ 18
72 ՀՓ3, կետ 9
73 ՀՓ3, կետ 10
74 ՀՓ3, կետ 12
75 ՀՓ 4, կետ 18, տե՛ս նաև ՀՓ2, էջ 5, 8
76 ՀՓ2, էջ 1
77 ԵԽԽՎ, «Հայաստանում ժողովրդավարական հաստատությունների գործունեության մասին զեկույցի» կետ 54, 22 հունիսի 2009: Տես նաև Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի հայաստանյան հատուկ առաքելության եզրակացությունների ամփոփումը, 29 սեպտեմբերի 2008, և Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի հայաստանյան հատուկ առաքելության վերաբերյալ զեկույցը, 20 մարտի 2008:
78 ՀՓ2, էջ 10
79 ԵԽ ՍԻԵԿ, Եվրոպական սոցիալական խարտիա (վերանայված), Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեի եզրակացություններ (Հայաստան) 2008, Վերանայված խարտիայի հոդվածներ 1, 15, 18, 20 և 24, նոյեմբեր 2008
80 ԵԽ ՍԻԵԿ, Եվրոպական սոցիալական խարտիա (վերանայված), Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեի եզրակացություններ (Հայաստան) 2008, Վերանայված խարտիայի հոդվածներ 1, 15, 18, 20 և 24, նոյեմբեր 2008
81 ՎՎՀ, էջ 1
82 ՎՎՀ, էջ 2
83 ՎՎՀ, էջ 3
84 ՎՎՀ, էջ 2-3
85 ՎՎՀ, էջ 3
86 ՀՓ1, կետ 13
87 ՎՎՀ, էջ 1
88 ՎՎՀ, էջ 4
89 ՀՓ1, կետ 2
90 ՀՓ1, կետ 3

91 ՀՓ1, կետ 10

92 ՀՓ1, կետ 4

93 ՀՓ1, կետ 5

94 ՀՓ1, կետ 8

95 ԵԽ Հանձնակատար, Զեկույց Մարդու Իրավունքների Հանձնակատարի Հայաստան այցի վերաբերյալ, 2007թ. հոկտեմբերի 7-11, 2008թ. ապրիլի 30, էջ 32

96 ՀՓ2, էջ 8

97 ԵԽ ՌԱԵՀ, գործադիր ամփոփում, 2006թ. հունիսի 30, Հայաստանի վերաբերյալ երկրորդ զեկույց: Տե՛ս նաև ԵԽ ԱՓՊՄՀԽԿ, գործադիր ամփոփում, 2006թ. մայիսի 12 Երկրորդ կարծիքի

98 ԵԽ ՌԱԵՀ, Գործադիր ամփոփում 2006թ. հունիսի 30-ի Հայաստանի վերաբերյալ երկրորդ զեկույցի

99 ԵԽ Հանձնակատար, Զեկույց Մարդու Իրավունքների Հանձնակատարի Հայաստան այցի վերաբերյալ, 2007թ. հոկտեմբերի 7-11, 2008թ. ապրիլի 30, էջ 32

100 ԵԽ Հանձնակատարի, կետ 87

101 ԵԽ ՌԱԵՀ, կետ 63

## 5. ՄԱԿ-ի համընդհանուր պարբերական դիտարկման աշխատանքային խմբի հաշվետվություն, 6 Հուլիսի, 2010թ.

### Ներածություն

1. Մարդու իրավունքների խորհրդի 5/1 բանաձևի համաձայն ստեղծված Համընդհանուր պարբերական վերանայման հարցերով աշխատանքային խումբը 2010թ. մայիսի 3-ից 14-ը անցկացրեց իր 8-րդ նստաշրջանը: Հայաստանի վերանայման գործընթացը կայացավ 2010թ. մայիսի 6-ին անցկացված 8-րդ նիստի ժամանակ: ՀՀ պատվիրակությունը ղեկավարում էր ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Արման Կիրակոսյանը: 2010թ. մայիսի 10-ին անցկացված 12-րդ նիստի ժամանակ աշխատանքային խումբն ընդունեց Հայաստանի վերաբերյալ զեկույցը:
2. 2009թ. սեպտեմբերի 7-ին Մարդու իրավունքների խորհուրդը Հայաստանի վերանայման գործընթացին օժանդակելու նպատակով ընտրեց զեկուցողների հետևյալ երկրներից /եռյակ/՝ Սլովակիա, Ֆրանսիա և Բահրեյն:
3. 5/1 բանաձևի հավելվածի 15-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի վերանայման նպատակով լույս են տեսել հետևյալ փաստաթղթերը.
   (a) Ներկայացված ազգային զեկույց/գրավոր ներկայացում՝ 15-րդ կետի (a) ենթակետին համապատասխան (A/HRC/WG.6/8/ARM/1),
   (b) ՄԱԿ-ի մարդու իրավունքների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի կողմից պատրաստված քաղը՝ 15-րդ կետի (b)

ենթակետին համապատասխան (A/HRC/WG.6/8/ARM/2),

(c) 15-րդ կետի (c) ենթակետին համապատասխան ՄԱԿ-ի մարդու իրավունքների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի պատրաստած ամփոփումը 15 (c) (A/HRC/WG. 6/8/ARM/3):

4. Արգենտինայի, Ադրբեջանի, Չեխիայի Հանրապետության, Դանիայի, Գերմանիայի, Իռլանդիայի, Նիդեռլանդների, Նորվեգիայի, Սլովենիայի, Շվեդիայի, Շվեյցարիայի և Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության կողմից նախապես պատրաստված հարցերի ցանկը եռյակի միջոցով փոխանցվեց Հայաստանին: Այս հարցերը և Հայաստանի կողմից տրված գրավոր պատասխանները կարելի է գտնել համընդհանուր պարբերական վերանայման արտացանց կայքէջում:

## I. Վերանայման գործընթացի ամփոփ նկարագիր

### *Ա. Վերանայումն անցնող պետության ներկայացում*

5. Պատվիրակության ղեկավարն իր ներածական ելույթում նշեց, որ ազգային զեկույցը քննարկվել է հասարակական կազմակերպությունների հետ կլոր սեղանի ժամանակ: Հայաստանը կատարել է զեկուցման գծով իր կողմից ստանձնած պարտականությունները ՄԱԿ-ի պայմանագրային մարմինների նկատմամբ՝ ներկայացնելով բոլոր ժամկետանց զեկույցները 2009թ.-ի տարեվերջին և 2010թ.-ի տարեսկզբին՝ համատեղ պարբերական զեկույցների տեսքով:

1992 թվականին Միավորված ազգերի կազմակերպության անդամակցելու պահից ի վեր Հայաստանն ակտիվորեն համագործակցել է ՄԱԿ-ի տարբեր մարմինների և գործակալությունների հետ մարդու իրավունքները պաշտպանելու և առաջ մղելու նպատակով: 2006թ.-ի ապրիլին Հայաստանը բաց հրավեր է հղել բոլոր հատուկ ընթացակարգերին:

6. Հայաստանը միացել է մարդու իրավունքների ոլորտի ավելի քան 50 միջազգային պայմանագրի և ստորագրել Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին միջազգային կոնվենցիան և դրա կամընտիր արձանագրությունը, Բռնի անհետացումից բոլոր անձանց պաշտպանության մասին միջազգային կոնվենցիան, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դանշագրի կամընտիր արձանագրությունը, որոնք ներկայումս գտնվում են վավերացման գործընթացի տարբեր փուլերում:

7. 2003 թվականին ընդունվեց «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» օրենքը: Մարդու իրավունքների պաշտպանը հանդիսանում է «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» կոնվենցիայի կամընտիր արձանագրությամբ սահմանված կանխարգելման ազ-գային մեխանիզմ: 2005 թվականի նոյեմբերի 27-ին փոփոխություններ են կատարվել Սահմանադրության մեջ, որով էական բարեփոխումների են ենթարկվել նաև մարդու և քաղաքացու հիմնական

իրավունքներին ու ազատություններին վերաբերող դրույթները[1] դրանք առավել համահունչ դարձնելով մարդու իրավունքների միջազգային դաշնագրերի պահանջներին:

8. Հայաստանը շարունակում է հետամուտ լինել միջազգային հանրության կողմից Հայոց ցեղասպանության ճանաչմանը՝ նպատակ ունենալով ոչ միայն հաստատել միջազգային իրավունքի գերակայությունն ու արդարությունը, այլև, անպատժելիությունը բացառելով, կանխել ապագայում նման հանցագործությունների կրկնությունը: Այս առումով Հայաստանն ակտիվ քայլեր է ձեռնարկել Միավորված ազգերի կազմակերպությունում՝ նախաձեռնելով ցեղասպանության ոճրագործության կանխարգելման ուղղված բանաձևերի ընդունումը: Վերջերս՝ 2008թ. մարտ ամսին, Մարդու իրավունքների խորհուրդը միաձայն ընդունեց «Ցեղասպանության կանխարգելում, խորագիրը կրող բանաձևը, որը ներկայացվել էր Հայաստանի կողմից և որի համահեղինակ էր դարձել 62 այլ պետություն:

9. Հայաստանը դիտարկում է ժողովուրդների ինքնորոշման իրավունքը որպես հիմնարար ու անքակտելի մարդու իրավունք և հետևողական քայլեր է ձեռնարկում դրա իրականացման ուղղությամբ: Հայաստանը ղեկավարվում է այն փաստով, որ այսօր ժողովուրդների ինքնորոշման իրավունքի սկզբունքն անխտիր բոլոր պետությունների համար պարտադիր միջազգային և պետական իրավունքի հիմնարար հանրաճանաչ նորմ է: Հայաստանը հաստատակամորեն հետամուտ է Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրականացմանը և ամեն կերպ օժանդակում է նրա ժողովրդի բոլոր հիմնարար իրավունքների առաջմղմանը՝ ելնելով նաև իր միջազգային հանձնառություններից: Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի հանդեպ իրականացվող տնտեսական շրջափակման քաղաքականությունը լուրջ խոչընդոտ է զարգացման ու մի շարք այլ, առաջին հերթին՝ քաղաքական, քաղաքացիական, սոցիալական և տնտեսական իրավունքների լիարժեք իրականացումն ապահովելու համար:

10. Կյանքի իրավունքը և մահապատժի չդատապարտվելու կամ չենթարկվելու իրավունքն ամրագրված է Սահմանադրությունում: Հայաստանը 2003թ.-ին վավերացրել է Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի մահապատժի վերացման վերաբերյալ թիվ 6 արձանագրությունը և ստորագրել է թիվ 13 արձանագրությունը: Նոր Քրեական օրենսգրքից մահապատիժը հանվել է: Անկախության հռչակումից ի վեր Հայաստանում մահապատիժ չի իրականացվել:

11. Ծավալուն օրենսդրական և կառուցակարգային աշխատանքներ են տարվել խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային վերաբերմունքը և պատիժը վերացնելու ուղղությամբ: Հայաստանը վավերացրել է այս խնդրին առնչվող ՄԱԿ-ի և Եվրոպայի խորհրդի բոլոր պայմանագրերը: Իրականացված օրենսդրական բարեփոխումները լուրջ նախադրյալներ են ստեղծել ազատազրկման վայրերի նկատմամբ վերահսկողության անկախ համակարգ ստեղծելու ուղղությամբ: Չնայած

օրենսդրական բարեփոխումներով ամրագրված դրույթներին, կիրարկման դաշտում դեռևս խնդիրներ կան, որոնք մշտական ուշադրության ու աշխատանքների լրացուցիչ բարելավման կարիք ունեն:

12. Մտքի, խղճի և հավատքի ազատությունն ամրագրված է Սահմանադրությոան մեջ: Հիմնական օրենքը, որով կարգավորվում է կրոնական կազմակերպությունների գործունեությունը, «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքն է: 2003 թվականին ընդունվել է «Այլընտրանքային ծառայության մասին» օրենքը: Անկախությունից հետո անցած տարիներին Հայաստանը լուրջ քայլեր է ձեռնարկել երկրում կրոնական բազմազանությունն ապահովելու ուղղությամբ, իսկ 2009թ. դրությամբ կրոնական կազմակերպությունների թիվը հասել է 66-ի:
13. Սահմանադրությունը երաշխավորում է յուրաքանչյուրի ազատ արտահայտվելու իրավունքը: Երաշխավորվում է նաև լրատվամիջոցների և տեղեկատվության այլ միջոցների ազատությունը: Սահմանադրությունն ամրագրում է յուրաքանչյուրի խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունքը: Խաղաղ հավաքների իրավունքի իրացման կոնկրետ կառուցակարգեր նախատեսված են «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» (2004թ.) օրենքով:
14. Պետական քաղաքականության գերակայություն են շարունակելու մնալ առողջապահական ծառայությունների հասանելիության և մատչելիության աստիճանի բարձրացումն ու որակի շարունակական բարելավումը: Հայաստանում բոլոր մարդկանց համար երաշխավորվում է կրթության իրավունք՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից: Հիմնական ընդհանուր կրթությունը պարտադիր է, իսկ միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է: Անվճար կրթության հնարավորություն է տրվում արհեստագործական և միջին մասնագիտական, ինչպես նաև բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորելու համար:
15. 2010-2011թթ. Հայաստանը նախագահելու է Միավորված ազգերի կազմակերպության Կանանց կարգավիճակի հարցերով հանձնաժողովում: 2010թ. փետրվարին ՀՀ կառավարությունը հաստատել է ՀՀ գենդերային հավասարության հայեցակարգը, որը մշակվել է հասարակական կազմակերպությունների անմիջական մասնակցությամբ: Մշակման փուլում է գտնվում նաև «Տղամարդկանց և կանանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների պետական երաշխիքների մասին» օրենքի նախագիծը:
16. Հայաստանի Հանրապետության կառավարության առաջնահերթություններից է ճանաչվել Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարը: 2008թ. ընդունվել է «Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց ազգային ուղղորդման կարգը»: Ներկայումս աշխատանքներ են տարվում 2010-2012թթ. մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքար երրորդ ազգային ծրագրի մշակման ուղղությամբ: Հայաստանում մարդկանց շահագործման

(թրաֆիքինգի) դեմ պայքարում իրենց անգնահատելի դերակատարումն ունեն հասարակական կազմակերպությունները, որոնք, ի թիվս այլ խնդիրների, նաև աջակցություն են տրամադրում թրաֆիքինգի զոհերին:

17. Կանանց հանդեպ բռնությունները դատապարտող դրույթներ են ներառված ՀՀ քրեական և ընտանեկան օրենսգրքերում: Արդեն մշակվել է ընտանեկան բռնության վերաբերյալ օրենքի նախագիծը, որը ներկայումս ավարտուն տեսքի է բերվում՝ Ազգային ժողով ներկայացվելու նպատակով: 2010թ. մարտին ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծվեց Գենդերային բռնության դեմ պայքարի միջգերատեսչական հանձնաժողովը:

18. Հայաստանը վավերացրել է երեխայի իրավունքներին վերաբերող կարևորագույն միջազգային փաստաթղթերը: Հայաստանում գոյություն ունի երեխաների իրավունքների ապահովման և պաշտպանության ծավալուն օրենսդրական դաշտ: 2003թ.-ին ընդունվեց Երեխայի իրավունքների պաշտպանության 2004-2015թթ. ազգային ծրագիրը: 2006թ.-ին Հայաստանում ստեղծվել է երեխաների պաշտպանության եռաստիճան համակարգ՝ ազգային, մարզային և համայնքային մակարդակներով, որի հիմնական նպատակն է իրականացնել երեխաների իրավունքների և շահերի միասնական և համակարգված պաշտպանություն:

19. Հայաստանում ստեղծված է համապատասխան օրենսդրական դաշտ ՀՀ տարածքում բնակվող փոքրամասնությունների ներկայացուցիչների բոլոր իրավունքներն ու ազատություններն ապահովելու համար: Հայաստանն ազգային փոքրամասնություններին առնչվող հարցերում ակտիվորեն համագործակցում է Եվրոպայի խորհրդի հետ: Ազգային փոքրամասնությունների պաշտպանության ապահովման գործում կարևոր քայլ էր Ազգային փոքրամասնությունների համակարգող խորհրդի ստեղծումը[2] ազգային փոքրամասնությունների պաշտպանությունն ապահովելու, միջհամայնքային հարաբերություններն ակտիվացնելու, ինչպես նաև հատուկ կրթամշակութային, իրավական և այլ խնդիրների նկատմամբ պետական հոգածությունն առավել արդյունավետ դարձնելու նպատակով:

20. Հայաստանի իշխանությունները կարևորում են նաև ռասայական խտրականության ցանկացած դրսևորման դեմ պայքարը թե՛ ազգային, թե՛ միջազգային մակարդակով: Դուրբանի հռչակագրի ու գործողությունների ծրագրի սկզբունքներով են ուղղորդվում Հայաստանում տեղի ունեցող իրավական բարեփոխումները և գործնական քայլերը: Վերջին տարիներին խիստ մտահոգության առիթ է դարձել Ադրբեջանի կողմից հայերի և Հայաստանի հանդեպ ատելության հրահրումը և պատերազմական գործողություններ սկսելու ակնհայտ քարոզչությունը: Հայերի հանդեպ անհանդուրժողականության դրսևորումները և այլատյացության սերմանումը ոչ միայն մարդու իրավունքների կոպիտ խախտում են, այլև մտահոգիչ են տարածաշրջանային խաղաղության ու կայունության և անվտանգության տեսանկյունից: Նման վարքագծի վերաբերյալ իրենց խորը անհանգստությունն են արտահայտել մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հեղինակավոր,

անկախ մշտադիտարկման մարմինները: Հայաստանը բազմիցս կոչ է արել միջազգային հանրությանը, մասնավորապես Մարդու իրավունքների խորհրդին[3] քայլեր ձեռնարկել նման դրսևորումները կանխելու և կանխարգելելու ուղղությամբ:

21. Հայաստանը ձեռնարկել է հնարավոր բոլոր միջոցները ՀՀ-ում ապաստան հայցողների և փախստական ճանաչված անձանց մարդու իրավունքների պաշտպանությունն ապահովելու համար: Չնայած տարիներ շարունակ գործադրվող հսկայական ջանքերին, որոնք ուղղված էին Ադրբեջանից բռնագաղթած ավելի քան 400 000 փախստականների խնդիրների լուծմանը, Հայաստանը դեռևս լիովին չի լուծել փախստականների բնակարանային ապահովման հարցը: Այս առումով անփոխարին է միջազգային համայնքի շարունակական աջակցությունը:

22. Հայաստանը կշարունակի համագործակցել բոլոր միջազգային կառույցների, հատուկ ընթացակարգերի հետ թե՛ տարածաշրջանային, և թե՛ միջազգային մակարդակներում, ընդլայնելով նաև իր համագործակցությունը ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի, Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի և Ցեղասպանության կանխարգելման հարցերով ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի հատուկ խորհրդականի հետ:

## *Բ. Ինտերակտիվ երկխոսություն և վերանայումն անցնող պետության պատասխաններ*

23. Ինտերակտիվ երկխոսության ընթացքում ելույթ ունեցավ 47 պատվիրակություն: Մի շարք պատվիրակություններ իրենց գնահատանքն արտահայտեցին Հայաստանի ազգային զեկույցի և պատվիրակության համալիր ելույթի վերաբերյալ: Մի շարք պատվիրակություններ նաև շնորհակալություն հայտնեցին Հայաստանին իրենց նախնական հարցերին գրավոր պատասխաններ տալու համար: Երկխոսության ընթացքում արված առաջարկությունները կարելի է գտնել սույն զեկույցի 2-րդ մասում:

24. Ադրբեջանը հարց տվեց 2008 թվականի նախագահական ընտրություններին հետևած մարդու իրավունքների խախտումները հետաքննելու, մեղավորներին պատասխանատվության կանչելու, ինչպես նաև իրավապաշտպանների և ընդդիմության անդամների վրա հարձակումները հետաքննելու ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումների մասին: Ադրբեջանը մեջբերեց Մարդու իրավունքների խորհրդի նախագահի նամակը, որում նշվում էր, որ Մարդու իրավունքների խորհուրդը հարելու է Միավորված ազգերի կազմակերպության պաշտոնական դիրքորոշմանը, որն արտացոլված է Գլխավոր ասամբլեայի և Անվտանգության խորհրդի համապատասխան բանաձևերում և այդ իսկ պատճառով հարգում է Ադրբեջանի Հանրապետության ինքնավարությունը և տարածքային ամբողջականությունը: Ադրբեջանը ներկայացրեց իր առաջարկությունները:

25. Լիբանանը նշեց, որ Հայաստանն անդամակցել է մարդու իրավունքներին վերաբերող ավելի քան 50 համաձայնագրերի, սերտորեն համագործակցել է մարդու իրավունքների մարմինների հետ և ընդգրկել է մարդու իրավունքների սկզբունքները երկրի

Սահմանադրության և օրենսդրության մեջ: Պատվիրակությունը ողջունեց Հայաստանի կողմից մտքի, խղճի և կրոնի ազատությունը, ինչպես նաև սեփական կարծիք ունենալու և այն ազատ արտահայտելու իրավունքը պաշտպանելու, կրթության և առողջապահության հասանելիության բարելավելու, կանանց և երեխաների իրավունքների խթանելու ուղղությամբ ձեռնարկվող ջանքերը: Լիբանանը ներկայացրեց առաջարկություն:

26. Եգիպտոսը ողջունեց մարդու իրավունքներին նվիրված կրթությանը հատկացվող մեծ ուշադրությունը, ինչպես նաև՝ Երեխաների պաշտպանության հարցերով ազգային հանձնաժողովի գործունեությունը: Այն ողջունեց նաև 2010-2014 թթ. Գենդերային հավասարության մասին հայեցակարգի ընդունումը և չափազանց կարևորեց թրաֆիքինգի զոհերի համար ուղղորդման ազգային մեխանիզմների մշակումը: Եգիպտոսը ներկայացրեց իր առաջարկությունները:

27. Ալժիրը ողջունեց առողջապահության ոլորտում արձանագրած առաջընթացը և ընդգծեց մանկական մահացության կտրուկ կրճատումը 2009 թվականին: Այն նաև ի թիվս այլոց ողջունեց աղքատության դեմ պայքարին և ազգաբնակչության համար պատշաճ կենսապայմանների ապահովմանն ուղղված ջանքերը: Այն հարցեր տվեց մարդու իրավունքների ազգային ծրագրի, ինչպես նաև մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարին նվիրված ծրագրերի վերաբերյալ: Ալժիրը ներկայացրեց իր առաջարկությունները:

28. Ռուսաստանի Դաշնությունը նշեց, որ իր հետ Հայաստանն ունի մտերիմ կապերի դարավոր պատմություն և ողջունեց այն առաջընթացը, որն արձանագրվել է մարդու իրավունքների գծով միջազգային պարտավորությունների իրականացման գործում, այդ թվում ողջունեց անդամակցումը մարդու իրավունքների միջազգային փաստաթղթերին, ինչպես նաև ազգային օրենսդրության, դատական և իրավապահ համակարգերի բարեփոխումները, կենսապայմանների ու կյանքի որակի բարելավման ուղղությամբ տարված աշխատանքը: Ռուսաստանի Դաշնությունը ներկայացրեց իր առաջարկությունները:

29. Լիբիական Արաբ Ջամահիրիան հարց տվեց, թե արդյոք գոյություն ունի հաշմանդամների համար ընտանեկան նպաստների, թոշակների և խնամքի բարելավման հատուկ ռազմավարություն: Այն նաև հարցրեց, թե ինչպիսի խնամք են ստանում երեխաները մանկատներից և որդեգրող ընտանիքներից զատ: Վերհիշելով, որ ազգային զեկույցում նշվում էր տարրական կրթության պարտադիր բնույթը բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի՝ պատվիրակությունը հարցրեց, թե որոնք են այդ հանգամանքները: Լիբիական Արաբ Ջամահիրիան ներկայացրեց իր առաջարկությունները:

30. Սուրբ Աթոռը հարց տվեց Հայաստանում Մարդու իրավունքների պաշտպանի փորձի մասին: Այն շնորհավորեց Հայաստանին երկրում մանկական մահացության զգալի նվազման առթիվ և նշեց խնամազուրկ երեխաների հարցում արձանագրած բարելավումները: Սուրբ Աթոռը մտահոգություն հայտնեց

մայրերի բարձր մահացության կապակցությամբ և հարց տվեց մարդկանց թրաֆիքինգի հակազդման նախաձեռնությունների մասին: Սուրբ Աթոռը ներկայացրեց իր առաջարկությունները:

31. Կուբան ընդգծեց որակյալ առողջապահության հասանելիության կարևորությունը և արդյունքում պոլիկլինիկաներ այցելող հիվանդների տարեկան թվի աճը: Այն ավելացրեց, որ այլ ցուցանիշները նույնպես բարելավվել են (օրինակ՝ մանկական մահացության գործակիցը) և նշեց տարրական դպրոցում սովորողների թվի և տառաճանաչության գործակցի բարձր ցուցանիշներ: Կուբան ներկայացրեց առաջարկություն:

32. Թուրքիան ողջունեց Հայաստանի կողմից ժողովրդավարական կառավարումն, օրենքի գերակայությունը և մարդու իրավունքներն ամրապնդելու ուղղությամբ գործադրվող ջանքերը: Թուրքիան նշեց, որ Ցեղասպանության հանցագործության կանխման և պատժման մասին կոնվենցիան իրավական եզրույթներով պարզ սահմանում է ցեղասպանության ակտը և զգուշացրեց, որ չի կարելի խարխլել դրա ամբողջականությունը: Այն կոչ արեց միջազգային հանրության համատեղ ջանքեր գործադրել՝ նման հանցագործությունների կրկնությունը կանխելու նպատակով: Թուրքիան աջակցություն հայտնեց ԵԱՀԿ Մինսկի խմբի հովանու ներքո բանակցային ճանապարհով Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի խաղաղ կարգավորման առնչությամբ՝ շեշտելով տարածքների գրավումը դադարեցնելու անհրաժեշտությունը: Թուրքիան ներկայացրեց առաջարկություն:

33. Հնդկաստանն ընդգծեց առողջապահության և կրթության հատվածներում Հայաստանի բարեփոխումները և նշեց գենդերային հավասարությանը հասնելու համար ձեռնարկվող միջոցառումները: Այն գնահատեց ազգային փոքրամասնությունների իրավունքներին տրվող կարևորությունը և պարզաբանումներ պահանջեց, թե արդյոք Մարդու իրավունքների պաշտպանն օժտված է մարդու իրավունքների ինստիտուտին վերապահված դերակատարմամբ և պատասխանատվությամբ: Հնդկաստանն առաջարկություններ չներկայացրեց:

34. Իսպանիան գոհունակություն հայտնեց այն հնարավորության կապակցությամբ, որ Հայաստանը կարող է շուտով վավերացնել ի թիվս այլոց Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին դաշնագրի կամընտիր արձանագրությունը, ինչպես նաև՝ Բոլոր անձանց բռնի անհետացումներից պաշտպանության մասին կոնվենցիան: Իսպանիան շնորհավորեց Հայաստանին բոլոր հատուկ ընթացակարգերին մշտական հրավեր ներկայացնելու կապակցությամբ և ողջունեց մահապատժի վերացումը: Իսպանիան ներկայացրեց իր առաջարկությունները:

35. Ամերիկայի Միացյալ Նահանգները նշեցին մարդու իրավունքների բնագավառում իրավիճակը բարելավելու ուղղությամբ ձեռնարկվող քայլերը: Գոհունակություն արտահայտելով 2009թ. հունիսի համաներման կապակցությամբ, որի արդյունքում ազատ արձակվեց քաղաքական պատճառներով կալանավորված 30 անձ՝ ԱՄՆ իր մտահոգությունը հայտնեց դեռևս

կալանքի տակ պահվող մի շարք այլ անձանց վերաբերյալ: Այն ակնկալում էր ապագայում տեսնել անկախ լրատվամիջոցների գոյությունը և հերյուրանքի ապաքրեականացումը: Միացյալ Նահանգները ներկայացրեցին իրենց առաջարկությունները:

36. Ինդոնեզիան ողջունեց կանանց վիճակի բարելավմանն ուղղված Հայաստանի ազգային ծրագիրը և կանանց և տղամարդկանց համար հավասար իրավունքներ և հնարավորություններ ապահովող օրենքի նախագիծը: Այդուհանդերձ, այն նշեց պահպանվող հայրիշխանական մոտեցումները, խտրականությունը և հասարակությունում կանանց դերի նկատմամբ եղած կարծրատիպերը՝ հարց տալով Հայաստանին, թե ինչ միջոցներ են ձեռնարկվում այս խնդրի լուծման համար: Ինդոնեզիան ներկայացրեց իր առաջարկությունները:

37. Չինաստանը նշեց մարդու իրավունքները պաշտպանության և խթանման նպատակով ընդունված օրենքներն ու քաղաքականություններ: Այն գովաբանեց առողջապահության և սոցիալական ապահովության բնագավառներում Հայաստանի գերազանց նվաճումները: Չինաստանը նշեց կանանց, երեխաների և հաշմանդամություն ունեցող անձանց համար ձեռնարկվող միջոցառումները: Չինաստանը հարց տվեց, թե ինչ միջոցներ են ձեռնարկվում մշտական կացարան չունեցող 3500-ից 4000 փախստական ընտանիքների դրությունը բարելավելու համար: Չինաստանը ներկայացրեց առաջարկություն:

38. Մեքսիկան գոհունակությամբ նշեց մարդու իրավունքների միջազգային փաստաթղթերի գծով Հայաստանի ստանձնած պարտավորությունները, ինչն արտացոլում է միջազգային համաձայնագրերի վավերացումը և Մարդու իրավունքների խորհրդի հատուկ ընթացակարգերի հետ երկրի համագործակցությունը: Մեքսիկան ներկայացրեց իր առաջարկությունները:

39. Իրանի Իսլամական Հանրապետությունը խրախուսեց Հայաստանին առավել մեծ ջանքեր գործադրել Հազարամյակի զարգացման նպատակներին հասնելու համար:Այն նաև նշեց մարդկանց թրաֆիքինգի, աղքատության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ ուղղված մի շարք ազգային պլանների և ծրագրերի ընդունումը: Իրանը ներկայացրեց իր առաջարկությունները:

40. Սլովենիան ողջունեց Հայաստանի կողմից Խոշտանգումների դեմ կոնվենցիայի կամընտիր արձանագրության վավերացումը: Այդուհանդերձ, այն մտահոգություն հայտնեց Ազգային կանխարգելիչ մեխանիզմի նշանակման կապակցությամբ, որն իրականացվել էր տեղի քաղաքացիական հասարակության և միջազգային փորձագետների առաջարկություններին հակառակ: Այն նաև իր մտահոգությունը հայտնեց ազատազրկման վայրերում և ոստիկանության բաժանմունքներում խոշտանգումների և վատ վերաբերմունքի դեպքերի առնչությամբ: Սլովենիան ներկայացրեց իր առաջարկությունները:

41. Իռլանդիան ողջունեց «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» օրենքում որոշ առավել սահմանափակող ուղղումներից հրաժարվելու ջանքերը: Այն մտահոգություն հայտնեց այն փաստի կապակցությամբ, որ ժողովների

ազատության վրա սահմանափակումներ դնող որոշ օրենսդրական դրույթներ դեռևս պահպանվել են: Իռլանդիան նաև նշեց կանանց նկատմամբ խտրականությունն արգելող համալիր իրավական դրույթների բացակայությունը: Այն ողջունեց դատական համակարգի և խոշտանգումներն արգելող ներպետական օրենսդրության ամրապնդումը, սակայն մտահոգություն հայտնեց ձերբակալությունների և հարցաքննությունների ընթացքում ոստիկանության կողմից գործադրվող ֆիզիկական և հոգեբանական ճնշման մասին արված հայտարարությունների առնչությամբ: Իռլանդիան ներկայացրեց իր առաջարկությունները:

42. Նիդեռլանդները ողջունեցին Հայաստանի՝ մարդու իրավունքների հիմնական փաստաթղթերի մեծ մասին անդամակցելու և Միավորված ազգերի կազմակերպության հատուկ ընթացակարգերին մշտական հրավեր տալու փաստը: Այն մտահոգություն հայտնեց հեռահաղորդակցման ոլորտում Հայաստանում գործող օրենքների կապակցությամբ, որոնք ենթադրաբար չեն ապահովում քաղաքական և գաղափարախոսական բազմակարծությունը, ինչպես նաև սահմանափակում են հավաքների ազատությունը: Նիդեռլանդները ներկայացրեցին իրենց առաջարկությունները:

43. Շվեդիան նշեց խոսքի ազատությունը երաշխավորող ներկա օրենսդրությունը և մտահոգություն հայտնեց հեռարձակման արտոնագրերի սահմանափակումների վերաբերյալ, ինչպես նաև լրագրողների նկատմամբ հետապնդումների և նրանց կամայական ձերբակալությունների կապակցությամբ: Այն մտահոգություն բարձրաձայնեց դատական համակարգի կողմնակալության, այդ թվում մարտի իրադարձությունների ընթացքում արդար դատաքննության չափանիշների համատարած խախտումների առնչությամբ և հարց տվեց այդ խնդիրների անդրադառնալու համար քաղաքական նախաձեռնությունների մասին: Շվեդիան ներկայացրեց իր առաջարկությունները:

44. Արգենտինան գոհունակությամբ արտահայտվեց մարդու իրավունքների կրթության գծով արձանագրած նվաճումների առնչությամբ: Այն նաև ողջունեց Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային պլանը (2004-2015 թթ.) և Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը (2004-2015 թթ.): Արգենտինան ներկայացրեց իր առաջարկությունները:

45. Իտալիան նշեց արձանագրած նվաճումները, այդ թվում մահապատժի վերացումը 2003 թվականին, անդամակցումը մարդու իրավունքներին վերաբերող փաստաթղթերի մեծ մասին, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի հիմնումը 2004 թվականին և Միավորված ազգերի կազմակերպության հատուկ ընթացակարգերի նկատմամբ տված մշտական հրավերը 2006 թվականին: Իտալիան ներկայացրեց իր առաջարկությունները:

46. Ավստրիան նշեց, որ կանանց և նրանց սոցիալական դերակատարման վերաբերյալ եղած կարծրատիպերը դեռևս պահպանվում են, իսկ կանայք հավասարապես չեն օգտվում ընդհանուր առողջապահական և վերարտադրողական առողջության ծառայություններից, հատկապես՝ գյուղական շրջաններում: Ավստրիան ողջունեց Երեխայի

իրավունքների պաշտպանության ազգային ծրագիրը, սակայն նշեց, որ խոցելի երեխաների կողմից իրենց վերապահված իրավունքների իրացումը շարունակում է սահմանափակ լինել: Ավստրիան հարց տվեց, թե ինչ միջոցներ են ձեռնարկվում երկրի ներսում տեղահանված անձանց խնդիրը լուծելու համար: Ավստրիան ներկայացրեց իր առաջարկությունները:

47. Ուրուգվայն ընդգծեց Մարդու իրավունքների խորհրդի յոթերորդ նիստին ներկայացրած ցեղասպանության կանխարգելման վերաբերյալ բանաձևում Հայաստանի ունեցած առաջատար դերակատարումը: Ուրուգվայը ողջունեց բանակցությունների մեկնարկն ուղղված Հայաստանի և իր հարևան երկրների միջև ճգնաժամային իրավիճակի բարելավմանը: Ուրուգվայը ներկայացրեց իր առաջարկությունները:

48. Ղրղզստանը նշեց, որ Հայաստանը անդամակցում է մարդու իրավունքներին վերաբերող ավելի քան 50 միջազգային փաստաթղթին և գոհունակություն հայտնեց փաստաբանների և փաստաբանների պալատի մասին ընդունված օրենքների առնչությամբ: Այն նշեց, որ կրթական համակարգը կարևոր դերակատարում ունի և ընդգծեց այն փաստը, որ վերարտադրողական առողջությանը վերաբերող հարցերն ընդգրկվել են դպրոցական ծրագրերում: Ղրղզստանը ներկայացրեց իր առաջարկությունները:

49. Բրազիլիան ընդգծեց Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի ստեղծումը, նորածինների մահացության նվազումը և ՄԱԿ-ի հատուկ ընթացակարգերին ներկայացված մշտական հրավերը: Բրազիլիան մտահոգություն հայտնեց մամուլի սահմանափակումների, խաղաղ ցուցարարների դեմ ավելորդ ուժի գործադրման և կրոնի ազատության հարցում խոչընդոտների մասին պնդումների առնչությամբ: Բրազիլիան հարց տվեց, թե ինչ հատուկ միջոցներ են ձեռնարկվում կանանց նկատմամբ բռնության խնդրին անդրադառնալու համար, ինչպես նաև հարցրեց Հայաստանի քաղաքականության վրա ֆինանսական և տնտեսական ճգնաժամի ունեցած հետևանքների մասին: Բրազիլիան ներկայացրեց իր առաջարկությունները:

50. Չեխիայի Հանրապետությունը շնորհակալություն հայտնեց Հայաստանին իր ազգային զեկույցի և ներկայացված հարցերին տրված պատասխանների համար: Այն ողջունեց երեխայի իրավունքների ոլորտում տարված աշխատանքը: Չեխիայի Հանրապետությունը անդրադարձավ խոշտանգման սահմանման, կալանավայրերի, մարդու իրավունքներին նվիրված կրթության, արդար դատաքննության, ընտանեկան բռնության և անչափահասների հարցերով զբաղվող արդարադատության խնդիրներին: Չեխիայի Հանրապետությունը ներկայացրեց իր առաջարկությունները:

51. Գերմանիան հարց տվեց թրաֆիքինգի և հատկապես կանանց և երեխաների թրաֆիքինգի կանխարգելման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումների, զոհերի համար հատուկ ծրագրերի և այս երևույթի դեմ պայքարելու ուղղությամբ տարածաշրջանային համագործակցությունն ամրապնդելու ջանքերի վերաբերյալ: Գերմանիան ներկայացրեց իր առաջարկությունները:

52. Ֆրանսիան նշեց Հայաստանում առաջիկա ընդհանուր և նախագահական ընտրությունների վերաբերյալ Ժողովրդավարական ինստիտուտների և մարդու իրավունքների ԵԱՀԿ գրասենյակի կողմից ներկայացրած առաջարկությունները: Այն հարցրեց, թե արդյոք Հայաստանը պատրաստվում է վավերացնել Քաղաքացիական և քաղաքական իրավունքների վերաբերյալ միջազգային դաշնագրի երկրորդ արձանագրությունը: Ֆրանսիան ներկայացրեց իր առաջարկությունները:
53. Հունաստանն իր սատարումը հայտնեց խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվություն նվաստացնող վերաբերմունքի դեպքերի վերացման ուղղությամբ գործադրվող ջանքերի առնչությամբ, թեպետև այստեղ դեռևս անելու շատ բան կա: Հունաստանը նշեց, որ Գենդերային հավասարության մասին ընդունված հայեցակարգը կարևոր քայլ է դեպի երկրում կանանց կարգավիճակի բարելավում: Հունաստանը ներկայացրեց իր առաջարկությունները:
54. Ղազախստանը ողջունեց Հայաստանի կողմից մարդու իրավունքներին վերաբերող մի շարք փաստաթղթերի վավերացումը և Մարդու իրավունքների խորհրդի հատուկ ընթացակարգերին ներկայացրած մշտական հրավերը: Այն հարց տվեց, Մարդու իրավունքների պաշտպանի առջև ծառացած մարտահրավերների մասին և լրացուցիչ տեղեկություններ պահանջեց անապաստան երեխաների վերաբերյալ: Ղազախստանը ներկայացրեց իր առաջարկությունները:
55. Կանադան ողջունեց Հայաստանի կողմից մարդու իրավունքների ինստիտուցիոնալ և օրենսդրական դաշտն ամրապնդելու ուղղությամբ գործադրվող ջանքերը և բոլոր հատուկ ընթակարգերին ներկայացված մշտական հրավերը: Կանադան խրախուսեց Հայաստանին հետաքննել այն զեկույցները, ըստ որոնց երկիրը շարունակում է մնալ սեռական շահագործման և հարկադիր աշխատանքի նպատակով թրաֆիքինգի ենթարկվող անձանց ծագման վայր: Կանադան ներկայացրեց իր առաջարկությունները:
56. Կիպրոսը գոհունակությամբ նշեց, որ Հայաստանը վավերացրել է Ցեղասպանության հանցագործության կանխման և պատժման մասին կոնվենցիան և ստորագրել է Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնակարգը: Այն խրախուսեց շարունակել երկրի կրթական և մշակութային կյանքում ազգային փոքրամասնությունների մասնակցության մեծացման ուղղված ջանքերը: Կիպրոսը ներկայացրեց իր առաջարկությունները:
57. Բելառուսը նշեց, որ իրավական դաշտի, հատուկ հաստատությունների և Մարդու իրավունքների ազգային պլանի գոյությունը վկայում են Հայաստանի՝ միջազգային մարդու իրավունքների գծով ստանձնած պարտավորություններին հետևելու քաղաքական կամքի վերաբերյալ: Բելառուսը գոհունակություն հայտնեց երկրում ազգային փոքրամասնությունների իրավունքների խթանման ուղղությամբ գործադրվող ջանքերի առնչությամբ: Բելառուսը ներկայացրեց իր առաջարկությունները:
58. Բոսնիա և Հերցեգովինան ողջունեց Հայաստանի՝ մարդու իրավունքներին վերաբերող տարբեր ոլորտներում գործադրվող ջանքերի համար: Այն

նշեց ազգային զեկույցի պատրաստման գործում քաղաքացիական հասարակության դերակատարումը, ինչպես նաև չպարզաբանված համարեց, թե արդյոք վերջինս ակտիվ մասնակցություն է ունեցել զեկույցի նախագծումից հետո և լրացուցիչ տեղեկություններ պահանջեց քաղաքացիական հասարակության հետ համագործակցության հետագա ծրագրերի մասին: Բոսնիա և Հերցեգովինան ներկայացրեց իր առաջարկությունները:

59. Իրաքը ողջունեց Հայաստանի կողմից մարդու իրավունքներով զբաղվող համապատասխան ազգային հաստատությունների ստեղծման միջոցով մարդու իրավունքները խթանելու և պաշտպանելու ուղղությամբ գործադրվող ջանքերը, երկրի անդամակցումը միջազգային համաձայնագրերին և Մարդու իրավունքների խորհրդի հատուկ ընթացակարգերին ներկայացված մշտական հրավերը: Իրաքն առաջարկություն ներկայացրեց:

60. Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունը ողջունեց Հայաստանի կողմից մարդու իրավունքները, այդ թվում գենդերային հավասարությունը խթանելու ուղղությամբ գործադրվող ջանքերը: Այն պահանջեց 2008 թվականի ընտրություններին հետևած իրադարձությունների հետ կապված մահվան դեպքերի անկախ հետաքննություն անցկացնել: Այն նաև հետաքրքրություն հայտնեց մարդկանց թրաֆիքինգի խնդրի լուծման ուղղությամբ ձեռնարկվող քայլերի վերաբերյալ: Միացյալ Թագավորությունը ներկայացրեց իր առաջարկությունները:

61. Հունգարիան գոհունակությամբ նշեց մահապատժի վերացումը, Մարդու իրավունքների պաշտպանի կայացումը և Միավորված ազգերի հատուկ ընթացակարգերին ներկայացված մշտական հրավերը: Այն նշեց համաձայնագրային մարմիններին ժամկետանց զեկույցների երկար ուշացումները և ի թիվս այլոց մտահոգություն հայտնեց երեխաների նկատմամբ բռնության և աղջիկների թրաֆիքինգի առնչությամբ: Հունգարիան ընդգծեց դատական համակարգի անկախության համար իրական երաշխիքներ ապահովելու կարևորությունը: Հունգարիան առաջարկություններ ներկայացրեց:

62. Ֆինլանդիան նշեց, որ գոյություն ունեցող օրենսդրության կենսագործումն ապահովելու համար դեռ անելու շատ բան կա: Այն նաև նշեց, որ 2008 թվականին նախագահական ընն

62. Ֆինլանդիան նշեց, որ գոյություն ունեցող օրենսդրության կենսագործումն ապահովելու համար դեռ անելու շատ բան կա: Այն նաև նշեց, որ 2008 թվականին նախագահական ընտրություններին հետևած իրադարձություններն ի հայտ բերեցին Հայաստանի կողմից մարդու իրավունքների գծով ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման թերությունները: Ֆինլանդիան ներկայացրեց իր առաջարկությունները:

63. Նորվեգիան ողջունեց Հայաստանի կողմից Միավորված ազգերի մարդու իրավունքների համակարգի հետ աշխատելու պատրաստակամությունը և Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կողմից տարվող աշխատանքը: Այն մտահոգություն հայտնեց ընդդիմության նկատմամբ

ցուցաբերվող ոտնձգությունների առնչությամբ: Այն նաև հարցրեց, թե Կանանց նկատմամբ խտրականության վերացման հարցերով կոմիտեի պահանջին ի պատասխան ինչ միջոցներ են ձեռնարկվում, որպեսզի ապահովվի քաղաքական կյանքում կանանց անվտանգությունը և խրախուսվի նրանց մասնակցությունը հանրային կյանքում: Նորվեգիան ներկայացրեց իր առաջարկությունները:

64. Ջիբութին ճանաչեց երկրում մարդու իրավունքների իրավիճակը բարելավելու ուղղությամբ Մարդու իրավունքների խորհրդի մեխանիզմների հետ Հայաստանի իշխանությունների համագործակցելու պատրաստակամությունը: Ջիբութին շնորհավորեց Հայաստանին իր բոլոր քաղաքացիների համար արժանավայել կյանք երաշխավորելու պատրաստակամության առթիվ: Ջիբութին ներկայացրեց իր առաջարկությունները:

65. Քուվեյթը ճանաչեց մարդու իրավունքների գծով գործողությունների ազգային ծրագրի հետ կապված Հայաստանի ջանքերը: Այն նաև գնահատեց Հայաստանում կանանց դերակատարումը, ինչպես նաև նրանց ներդրումը կանանց և տղամարդկանց համար հավասար հնարավորությունների ստեղծման գործում: Քուվեյթը ներկայացրեց իր առաջարկությունները:

66. Շվեյցարիան ողջունեց մարդու իրավունքներին նվիրված կրթական նյութերի ընդգրկումը դպրոցական ծրագրերում: Այն հավելեց, որ 2008 թվականի ընտրություններից հետո ընդդիմության անդամների ձերբակալումից և նրանց նկատմամբ վատ վերաբերմունքի դրսևորումից հետո ընդդիմության գործողությունները կարծես ճնշվել են, իսկ ոստիկանության կողմից բռնությունը հանդուրժվել է: Գենդերային բռնությունն ընտանիքում ըստ հայտնի դեպքերի տարածված է եղել: Շվեյցարիան ներկայացրեց իր առաջարկությունները:

67. Ռումինիան ողջունեց Հայաստանի կողմից մարդու իրավունքների միջազգային չափանիշներին համապատասխան իր օրենսդրության հարմարեցումը և հատուկ ընթացակարգերի հետ երկրի լավ համագործակցությունը: Այն նաև ողջունեց կանանց կարգավիճակը բարելավելու ուղղությամբ գործադրվող ջանքերը և տեղեկություններ խնդրեց գենդերային հավասարության վերաբերյալ օրենքի նախագծի և կանանց խթանման մեխանիզմ ստեղծելու մտադրության մասին: Ռումինիան ներկայացրեց իր առաջարկությունները:

68. Լեհաստանը ողջունեց Հայաստանի կողմից Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի հիմնումը, ինչպես նաև՝ մի շարք ազգային պլանները և ծրագրերը: Այն նշեց մարդկանց թրաֆիքինգի աճի շուրջ Կանանց նկատմամբ խտրականության վերացման հարցերով կոմիտեի հայտնած մտահոգությունը, ինչպես նաև փախստական երեխաների և որբանոցներում ապրող երեխաների կենսապայմանների վերաբերյալ Երեխայի իրավունքների կոմիտեի հայտնած մտահոգությունը: Լեհաստանը ներկայացրեց իր առաջարկությունները:

69. Լաոսի Ժողովրդական Ժողովրդավարական Հանրապետությունը ողջունեց մարդու իրավունքների խթանման և պաշտպանության ուղղությամբ Հայաստանի համագործակցությունը

Միավորված ազգերի գործակալությունների հետ, այդ թվում՝ բոլոր հատուկ ընթացակարգերին մշտական հրավերի ներկայացումը: Լաոսը ներկայացրեց առաջարկություն:

70. Ուկրաինան ողջունեց Հայաստանի կողմից մարդու իրավունքների պաշտպանության և խթանման ուղղությամբ գործադրվող ջանքերը, ինչպես նաև՝ երկրում իրականացվող բարեփոխումները: Այն հարց տվեց Եվրոպայի Խորհրդի առաջարկությունները կենսագործելու ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումների մասին, որոնք ի թիվս այլոց վերաբերում են արդարադատության համակարգի և իրավապահ մարմինների հետագա բարեփոխումներին: Այն կիսեց կանանց նկատմամբ ընտանեկան բռնության շուրջ քաղաքացիական հասարակության կողմից բարձրաձայնած մտահոգությունները: Ուկրաինան ներկայացրեց իր առաջարկությունները:

71. Պատասխանելով հարցերին՝ պատվիրակությունը նշեց, որ Հայաստանի հատուկ հետաքննչական ծառայությունը քննություն է անցկացրել քաղաքացիների նկատմամբ ավելորդ ուժի գործադրման փաստերի շուրջ, և 2008թ. մարտի իրադարձությունների կապակցությամբ ոստիկանության երկու աշխատակիցների դեմ երկու քրեական գործ է հարուցվել: Անկախ փորձագիտական խմբերից ստացվել են տեսանյութեր: Ավելին, խորհրդարանական հանձնաժողովն ուսումնասիրել է այլ անձանցից ստացված տեսանյութերը: Դատարանը քննել է ոստիկանության աշխատակիցների դեմ հարուցված գործերը, նրանց մեղավոր է ճանաչել և կայացրել է համապատասխան դատավճիռ:

72. Ոստիկանության կողմից ձերբակալված անձանց առանց արտաքին աշխարհի հետ շփվելու հնարավորության կալանքի մասին հայտարարությունների առնչությամբ Հայաստանը պարզաբանել է, որ նման կալանքի դեպքեր չեն եղել:

73. Ոստիկանության կողմից ծեծի, վատ կամ դաժան վերաբերմունքի բոլոր ենթադրյալ գործերով անցկացվել է պատշաճ հետաքննություն և հարուցվել են քրեական գործեր: Բոլոր բողոքները և վկաների ցուցմունքները ետ են վերցվել:

74. 2008թ. մարտի իրադարձությունների կապակցությամբ կալանավորված անձինք կալանավորվել ոչ թե քաղաքական պատճառներով, այլ կոնկրետ հանցանքներ գործելու, այդ թվում ապօրինի զենք ու զինամթերք պահելու համար: Քաղաքական պատճառներով կալանավորված լինելու մասին պնդող մի քանի անձինք դատապարվել են նախքան 2008թ. մարտի իրադարձություններն այնպիսի հանցանքների համար, ինչպիսիք են մարմնավաճառության մեջ ներգրավումը և զենքի ապօրինի ձեռքբերումը:

75. Դատավորների անկախությունը երաշխավորվում է ՀՀ Սահմանադրությամբ և նախատեսված է ՀՀ օրենսդրությամբ: Դատավորների և Սահմանադրական դատարանի անդամների աշխատանքի երաշխիքները, ինչպես նաև նրանց պատասխանատվության կանչելու հիմքերը և ընթացակարգերն ամրագրված են Սահմանադրությունում և օրենսդրությունում:

76. Դատավորները և Սահմանադրական դատարանի անդամները չեն կարող կալանավորվել կամ հանդես գալ

որպես պատասխանողներ, նրանց նկատմամբ չեն կարող ձեռնարկվել վարչական պատասխանատվություն սահմանելու իրավական ընթացակարգեր առանց Արդարադատության խորհրդի կամ Սահմանադրական դատարանի համաձայնության: Դատավորները և Սահմանադրական դատարանի անդամները չեն կարող ձերբակալվել, բացառությամբ այն դեպքերի, երբ ձերբակալությունն իրականացվում է նրանց կողմից քրեական հանցանք գործելու պահին կամ անմիջապես դրանից հետո: Նման դեպքերում ՀՀ Նախագահը, ինչպես նաև ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահը կամ ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահը պետք է շտապ տեղեկացվեն նման ձերբակալության մասին:

77. Դատական համակարգի ինքնակառավարումն իրականացվում է ՀՀ դատական օրենսգրքով սահմանված ինքնակառավարման մարմինների միջոցով, ինչն ուղղված է դատական համակարգի անկախությունը երաշխավորող բոլոր գործոնների, այդ թվում՝ դատավորների նշանակման և հրաժարականների կարգավորմանը: Արդարադատության խորհուրդը օժտված է դատավորների նկատմամբ կարգապահական պատասխանատվությամբ և զբաղվում է այլ կարևոր հարցերով:

78. Դատավորների պատրաստումը շարունակական գործընթաց է, որն իրականացվում է տարբեր միջազգային կազմակերպությունների, այդ թվում՝ Միավորված ազգերի կազմակերպության, Եվրոպայի Խորհրդի, Եվրոպական Միության և ԵԱՀԿ-ի հետ համագործակցությամբ: Դատավորներն իրենց մասնագիտական կարողությունները բարձրացնելու նկատառումով շարունակաբար վերապատրաստում են ստանում անչափահասների հարցերով արդարադատության, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի և այլ կարևոր իրավական թեմաներով:

79. Քրեական օրենսգիրքը պետք է լրամշակվի և այնտեղ պետք է ընդգրկվի խոշտանգման մասին սահմանում՝ միջազգային համաձայնագրերին համապատասխան: Լրամշակման գործընթացն արդեն մեկնարկել է:

80. Վերջերս մեծ աշխատանք է տարվել գենդերային խտրականության ոլորտում: Հայաստանում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների կիրառման առումով որևէ գենդերային տարբերակում չի անցկացվել: Այս առնչությամբ Հայաստանը մեջբերում է սահմանադրական այն դրույթները, որոնցով արգելվում է խտրականությունը սեռի հատկանիշով, ինչպես նաև՝ այլ իրավական ակտեր, ներառյալ ՀՀ քրեական օրենսգիրքը: Պատրաստվել է կանանց և տղամարդկանց համար հավասար հնարավորությունների մասին օրենքի նախագիծ, որով խտրականության բոլոր ձևերը արգելվում են: Ավելին, ՀՀ օրենսդրության մեջ առկա է գենդերային խտրականության և միջազգային կազմակերպությունների կողմից պահանջվող այլ իրավական եզրույթների սահմանումը:

81. Ինչ վերաբերում է քրեակատարողական հիմնարկների մոնիթորինգին, ապա ՀՀ արդարադատության նախարարության վերահսկողության ներքո գործել են քրեակատարողական հիմնարկների և ոստիկանության կալանքի վայրերի մոնիթորինգն իրականացնող հանրային խմբեր: Խմբերի կազմում

ընդգրկված են եղել հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, որոնք լիազորված են եղել անարգել մուտք գործել ոստիկանության կալանքի վայրեր և քրեակատարողական հիմնարկներ:

82. Ոստիկանությունը միջոցներ էր ձեռնարկում 2008թ. մարտի իրադարձություններին նվիրված խորհրդարանական քննության հանձնարարականներն իրականացնելու ուղղությամբ: 2009 թվականին ընդունվել է որոշում ոստիկանության և ոստիկանության զորքերի կողմից հատուկ միջոցների օգտագործման մասին: 2010 թվականին ընդունված ոստիկանության բարեփոխումների ծրագրում ընդգրկվել է մի շարք միջոցներ՝ հասարակական կարգի և անվտանգության ապահովման համար օրենսդրական հիմք ստեղծելու նկատառումով: Այդ ծրագիրն ընդգրկում էր ոստիկանության աշխատակիցների համար վերապատրաստում նվիրված անկարգությունների դեպքերում ֆիզիկական ուժի և հատուկ միջոցների օգտագործման, ինչպես նաև լրագրողների հետ աշխատանքի թեմաներին: 2008 և 2009 թվականներին Եվրոպայի Խորհրդի նախաձեռնությամբ Հայաստանը կազմակերպեց սեմինարներ և դասընթացներ զանգվածային լրատվամիջոցների և ոստիկանության աշխատակիցների մասնակցությամբ: Ի հավելումն, մշակվել են հատուկ հրահանգներ, որոնք կարգավորում են հարաբերությունները ոստիկանության և լրագրողների միջև:

83. Հայաստանը միջոցներ է ձեռնարկել ոստիկանության աշխատակիցների համար հանրահավաքների և ոստիկանական միջոցների օգտագործման թեմային նվիրված վերապատրաստում ապահովելու նպատակով: Անցկացվել են ոստիկանության կողմից ֆիզիկական չարաշահումների և (կամ) հոգեբանական ճնշման վերաբերյալ պնդումների ներքին հետաքննություններ: Համապատասխանաբար 2008 թվականին 16 ոստիկանության աշխատակիցներ ենթարկվել են կարգապահական տույժի կալանավորների նկատմամբ վատ վերաբերմունքի համար, իսկ նրանցից ոմանք հեռացվել են ոստիկանության ուժերից: Անցկացվել են իրազեկման բարձրացման ծրագրեր, այդ թվում ներմուծվել են թեժ գծեր՝ ընդհանուր ազգաբնակչության և ոստիկանության միջև հաղորդակցումը բարելավելու նպատակով:

84. Հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար իրավունքներ ապահովելու նպատակով Հայաստանն իրականացնում է ներառական կրթության և վերապատրաստման ծրագիր: Իրականացվել են նաև փոխհատուցման ծրագրեր այն անձանց համար, ովքեր ի վիճակի չեն աշխատել: Բացի այդ, պետությունն աջակցություն և սուբսիդավորում է ապահովում որպես հաշմանդամ գրանցված այն անձանց համար, ովքեր ցանկանում են սեփական գործ բացել: Շուտով կստեղծվեն նաև վերապատրաստման հատուկ կենտրոններ հաշմանդամություն ունեցող անձանց համար: Կառավարությունն ուսումնասիրում էր օրենքի նախագիծ, ինչպես նաև օրենքն ու աշխատանքային ընթացակարգերը լրամշակելու հնարավորություն՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար աշխատատեղեր և սոցիալական ապահովություն ստեղծելու նպատակով: Կառավարությունը

ուսումնասիրել է նաև աշխատանքի պայմանները բարելավելու և հաշմանդամներին աշխատանքի ընդունողների համար խթաններ ստեղծելու հնարավորությունը:

85. Պետական ծրագրով գյուղական շրջանների հողատերերը ստացան կրթության հատուկ սուբսիդավորում: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը գործարկում է ութ մանկատուն, որոնցից մի քանիսն ինտերնատներ են, բացի այդ գործում է նաև դժվար կացության մեջ հայտնված երեխաների համար երկու կենտրոն: Գործել է պետական բյուջեից ֆինանսավորվող որդեգրման խնամքի համակարգ, ինչպես նաև նման խնամքի ուղղությամբ աշխատել են քաղաքացիական հասարակության կազմակերպություններ՝ պետության աջակցությամբ: Մշակվել են թոշակների բարեփոխումներ, որոնք հնարավորություն կտան թոշակառուներին հոգալ իրենց տարրական կարիքները:

86. Աշխատանքային օրենսդրությունն արգելում է որևէ աշխատանքային պայմանագիր կնքել 14 տարին չլրացած երեխաների հետ: 14-ից 16 տարեկան երեխաների հետ աշխատանքային պայմանագրերը կնքվում են ծնողի կամ խնամակալի համաձայնությամբ: Նման երեխաները կարող են աշխատանքի ընդունվել միայն, եթե դա չի վնասում նրանց առողջությանը, կրթությանը կամ բարոյականությանը: ՀՀ աշխատանքային օրենսգիրքը հատուկ դրույթներ է ընդգրկում, որոնցով արգելվում է երեխաների աշխատանքը վտանգավոր և առողջությանը սպառնացող պայմաններում:

87. Երեխաների համար հատուկ դպրոցների առնչությամբ Հայաստանն իրականացրել է ընդարձակ բարեփոխումներ: Երկրում գործել է 49 ներառական դպրոց, որոնցից 45 ստացել է պետական ֆինանսավորում ներառական կրթական ծրագրերի համար: Հայաստանը կազմակերպել է դասատուների վերապատրաստում և ազգային փոքրամասնությունների համար ստեղծել է ընդհանուր կրթական ծրագիր, որով նախատեսվում է մայրենի լեզվի և գրականության 43 դաս: Կրթության ազգային ինստիտուտում ընդգրկվել են եզդի փորձագետներ, որոնք անդրադարձել են եզդիների և այլ ազգային փոքրամասնությունների կրթական խնդիրներին: Կրթության ազգային ինստիտուտի կողմից կազմակերպվել են եզդի լեզվի դասատուների տարբեր վերապատրաստման ծրագրեր, իսկ եզդի մշակույթի և պատմության նվիրված դասընթացներն ընդգրկվել են ինստիտուտի ծրագրերում:

88. Փախստականների հարցերով ՄԱԿ-ի գերագույն հանձնակատարի գրասենյակի աջակցությամբ Հայաստանը տներ է կառուցել փախստականների համար և միջոցներ է ձեռնարկել նրանց տարրական կարիքները հոգալու համար: Բնակարանային ծրագիրն անդրադարձել է փախստականների առավել խոցելի կարգին և իրականացվել է բնակարաններ ձեռք բերող բոլոր փախստականներին սերտիֆիկատներ տրամադրելու միջոցով: Հայաստանը նաև ուսումնասիրում է ազգականների մոտ բնակվող կամ բնակարաններ վարձակալող փախստականների կարիքները: Գրանցվել է նման պայմաններում բնակվող 1500 ընտանիք:

89. Երկրի ներսում տեղահանված անձանց առումով Հայաստանի առաջնային մտահոգությունը կայանում է նրանում, որ ապահովել նրանց անվտանգ վերադարձը դեպի նախկին բնակության վայրեր, ինչը պահանջում է հակամարտությունների խաղաղ կարգավորում: Ներկայումս նման անձինք կարող են վերադառնալ իրենց բնակության նախկին վայրեր, միայն եթե գոյություն ունենա զինված հակամարտության նվազագույն վտանգ:

90. 2008 և 2009 թվականներին վերարտադրողական առողջության ոլորտում ՀՀ կառավարության բարեփոխումները բերել են նրան, որ ողջ ազգաբնակչության համար վերարտադրողական առողջության ծառայությունների գծով պետական բյուջեից հատկացված միջոցները մեծացել են: Արդյունքում, յուրաքանչյուր կին Հայաստանում ներկայումս իրավունք ունի օգտվել վերարտադրողական առողջության ծառայություններից անվճար: Համաշխարհային բանկի աջակցությամբ ՀՀ կառավարությունն իրականացրել է առաջնային առողջապահության և առողջապահության արդիականացման ծրագրեր, որոնց շնորհիվ Հայաստանը ստեղծել է լավ որակի առաջնային առողջապահական ծառայություններ, այդ թվում ավելի քան 130 գյուղական և հեռավոր համայնքներում վերարտադրողական առողջության ծառայություններ ապահովելու կարողություններ: ՀՀ կառավարությունը շարունակել է գյուղական առողջապահական կենտրոնների արդիականացումը, աշխատակազմի պատրաստումը, շարժական առողջապահական խմբերի ստեղծումը և շտապ օգնության ծառայությունների բարեփոխումները՝ գյուղական և հեռավոր շրջաններում առողջապահական ծառայություններ մատուցելու նպատակով: 2008թ. ՀՀ կառավարությունը որոշում կայացրեց Հայաստանի դպրոցներում անցկացնել հատուկ ուսուցողական ծրագիր »Առողջ վարքագիծ« խորագրով, որտեղ արծարծվել են վերարտադրողական առողջությանը և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին առնչվող հարցեր:

91. Իրավապահ մարմինների աշխատակիցների համար Հայաստանը ստեղծել է մարդկանց թրաֆիքինգին նվիրված ձեռնարկ, ինչի արդյունքում այդ կրթական ծրագրերն ընդգրկվելու են իրավապահ մարմինների, այդ թվում՝ ոստիկանության, դատական համակարգի և դատախազության աշխատակիցների վերապատրաստման բոլոր ծրագրերում: Հայաստանը նաև ստեղծել է դպրոցական դասընթաց բարձր դասարանների աշակերտների համար, որը կմեկնարկի 2010թ. սեպտեմբերից: Հայաստանից դուրս թրաֆիքինգի նպատակով որևէ երեխա չի արտահանվել, իսկ երկրի ներսում երեխաների թրաֆիքինգի և մուրացկանության միայն մի քանի դեպք է գրանցվել: Լայն համագործակցություն է իրականացվել հասարակական կազմակերպությունների, այդ թվում հասարակական կազմակերպությունների կողմից գործարկվող ապաստարանների հետ:

92. Հայաստանը կուսումնասիրի բոլոր առաջարկությունները և կկենսագործի դրանք:

## II. Եզրակացություններ և/կամ առաջարկություններ

93. Ստորև բերված առաջարկությունները, ձևակերպված ինտերակտիվ

երկխոսության ընթացքում և թվարկված ստորև, վայելում են Հայաստանի աջակցությունը և վերջինս համարում է, որ դրանք արդեն իսկ իրագործվել են կամ գտնվում են իրագործման փուլում:

93.1. Ստորագրել և վավերացնել Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի երկրորդ կամընտիր արձանագրությունը, որն ուղղված է մահապատժի վերացմանը (Իսպանիա, Ֆրանսիա, Արգենտինա, Իրաք, Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն):

93.2 Վավերացնել «Բռնի անհետացումից բոլոր անձանց պաշտպանության մասին» միջազգային կոնվենցիան (Ադրբեջան, Արգենտինա, Ուրուգվայ) հնարավորինս կարճ ժամկետում (Հունաստան):

93.3 Քննարկել արագացնելու հնարավորությունը (Բրազիլիա)/ ավարտին հասցնել վավերացումը (Ալժիր)/ վավերացնել Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի վավերացումը (Բրազիլիա, Ալժիր) և նրան կից կամընտիր արձանագրությունը (Արգենտինա, Իրաք, Ղրղզստան) հնարավորինս կարճ ժամկետում (Հունաստան)/ վավերացնել կոնվենցիային կից կամընտիր արձանագրությունը (Ադրբեջան):

93.4 Արդյունավետ աշխատանք տանել բոլոր օրենքները փոփոխված Սահմանադրությանը համապատասխանեցնելու համար (Ֆինլանդիա):

93.5 Վերանայել ազգային օրենսդրության մեջ խոշտանգման սահմանումը, որպեսզի այն լիովին համապատասխանի «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» կոնվենցիայի 1-ին հոդվածում ամրագրված սահմանմանը (Չեխիայի Հանրապետություն), ընդունել «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» կոնվենցիայի 1-ին հոդվածին համապատասխանող խոշտանգման սահմանում (Իռլանդիա), ընդունել խոշտանգման սահմանում՝ «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» կոնվենցիայի 1-ին հոդվածին համապատասխան (Ուրուգվայ):

93.6 Ապահովել օրենսդրական հենք «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» կոնվենցիայի կամընտիր արձանագրությամբ նախատեսված ազգային կանխարգելիչ մեխանիզմի համար և ապահովել քաղաքացիական հասարակության մասնակցությունն կառուցակարգային մակարդակով (Սլովենիա):

93.7 Ամրապնդել հանրային պաշտպանի ինստիտուտի աշխատանքը՝ անվճար իրավաբանական աջակցություն տրամադրելով բնակչությանը (Ղրղզստան):

93.8 Արագացնել Փարիզյան սկզբունքներին համաձայն մարդու իրավունքների ազգային ինստիտուտի

ստեղծմանն ուղղված գործընթացը (Լիբիայի Արաբական Ջամահիրիա):

93.9 Մարդու իրավունքների խորհրդի թիվ 9/12 բանաձևին համապատասխան՝ դիտարկել մարդու իրավունքների ազգային ծրագրի և գործողությունների ծրագրի մշակման հնարավորությունը՝ մարդու իրավունքներն առաջմղելու և պաշտպանելու պետության կարողություններն ամրապնդելու նպատակով (Բրազիլիա), նախատեսված ժամանակահատվածում ավարտին հասցնել մարդու իրավունքների պաշտպանության համապարփակ ազգային ծրագիրը (Եգիպտոս), արդյունավետորեն և նախատեսված ժամկետում իրականացնել մարդու իրավունքների պաշտպանության համապարփակ ազգային ծրագիրը (Բոսնիա և Հերցեգովինա), շարունակել խթանել համագործակցությունը մարդու իրավունքների հարցերում առկա պայմաններով (Չինաստան), շարունակել բարելավել երկրում մարդու իրավունքների իրավիճակը՝ մինչև օրս արձանագրած բարելավումների լույսի ներքո (Իտալիա):

93.10 Շարունակել երկրում իրականացնել բարեփոխումներ՝ բոլոր համապատասխան օրենքներին և օրենսգրքերին համաձայն մարդու իրավունքների պաշտպանությունը և օրենքի գերակայությունը լիովին ապահովելու նպատակով, ինչպես նշված է ազգային զեկույցում (Լաոսի Ժողովրդական Ժողովրդավարական Հանրապետություն):

93.11 Առաջ տանել գործողություններն՝ ուղղված գենդերային հարցերի ընդգրկմանը Կառավարության կողմից տարվող քաղաքականության մեջ (Եգիպտոս), Հայաստանի կողմից իրականացվող քաղաքականության մեջ և ծրագրերում որդեգրել գենդերային ուղղվածությամբ մոտեցում (Հունաստան):

93.12 Շարունակել աշխատանքը կայուն զարգացման ազգային ծրագրի իրականացման ուղղությամբ, ինչը կնպաստի երկրում մարդու իրավունքների իրավիճակի հետագա բարելավմանը (Ռուսաստանի Դաշնություն):

93.13 Ընդլայնել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի տարածման կանխարգելմանն ուղղված ծրագիրը, մասնավորապես՝ հեռավոր շրջաններում (Ղրղզստան), շարունակել խթանել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ հանրության իրազեկվածության բարձրացմանն ուղղված ջանքերը, մասնավորապես՝ երիտասարդների շրջանում (Իրանի Իսլամական Հանրապետություն):

93.14 Շարունակել աշխատանք տանել երեխայի իրավունքների պաշտպանության ուղղությամբ (Ղրղզստան):

93.15 Շարունակել ջանքեր գործադրել՝ ուղղված խոցելի խմբերի, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող երեխաների, փախստական երեխաների և գյուղական շրջաններում բնակվող երեխաների կողմից իրավունքների իրացման հարցում եղած անհամապատասխանությունները հաղթահարելուն (Իրանի Իսլամական Հանրապետություն):

93.16 Շտապ ներկայացնել ժամկետանց զեկույցները պայմանագրային մարմիններին (Հունգարիա), հնարավորինս կարճ ժամկետում

ներկայացման ենթակա զեկույցը տրամադրել Մարդու իրավունքների կոմիտեին (Իսպանիա), ներկայացնել Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի շրջանակներում ներկայացվելիք ժամկետանց զեկույցը (Ավստրիա):

93.17 Ավելացնել ջանքերը կանանց նկատմամբ խտրականությանը վերջ դնելու համար, և ապահովել առողջապահական ծառայությունների պատշաճ հասանելիություն բոլոր կանանց համար (Ավստրիա):

93.18 Ամեն հնարավոր ջանք գործադրել ներպետական և միջազգային մակարդակով ցեղասպանության խնդրի շուրջ իրազեկությունը բարձրացնելու և անպատժելիության դեմ պայքարելու համար՝ ցեղասպանության որևէ դրսևորման կրկնությունը կանխելու նպատակով (Կիպրոս):

93.19 Լրացուցիչ միջոցներ ձեռնարկել դաժան և անմարդկային վերաբերմունքի վերացման ուղղությամբ՝ իրավապահ մարմինների աշխատակիցների վերապատրաստման միջոցով (Բոսնիա և Հերցեգովինա):

93.20 Ապահովել կալանավայրերում և ոստիկանության բաժանմունքներում խոշտանգումների հետ կապված դեպքերի պատշաճ և մանրազնին հետաքննություն (Սլովենիա), ապահովել, որպեսզի խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի մասին բոլոր պնդումները շտապ հետաքննվեն, իսկ դրանք իրականացրած անձանց հանդեպ արդարադատություն իրականացվի (Հունաստան):

93.21 Հետամուտ լինել կանանց առաջխաղացման ազգային մեխանիզմի և կանանց հանդեպ բռնության խնդրի լուծման կենսագործմանը (Իրանի Իսլամական Հանրապետություն), շարունակել ջանքեր գործադրել ընտանեկան բռնության դեմ պայքարի ուղղությամբ (Ղրղզստան), դիտարկել կանանց հանդեպ բռնության բոլոր ձևերի, հատկապես՝ ընտանեկան բռնության վերացման խնդրին առաջնային ուշադրություն դարձնելու հնարավորությունը՝ ձեռնարկելով համալիր միջոցառումներ, այդ թվում՝ հատուկ օրենսդրական ակտերի միջոցով (Բրազիլիա), լրացուցիչ քայլեր ձեռնարկել վերացնելու կանանց հանդեպ ընտանեկան բռնության երևույթը (Ուկրաինա), ապահովել, որ իշխանությունները և ոստիկանության ծառայությունները ձեռնարկեն համապատասխան միջոցառումներ ընտանեկան բռնությունն արմատախիլ անելու ուղղությամբ՝ սկսելով ընտանեկան բռնության մասին այն օրենքի նախագծի ընդունումից և իրագործումից, որին հղում է արել Հայաստանի պատվիրակությունը (Շվեյցարիա):

93.22 Կանանց իրավունքներն առավել առաջ մղելու նպատակով դպրոցներում ձեռնարկել իրազեկության բարձրացման արշավներ (Ռումինիա):

93.23 Անհապաղ քայլեր ձեռնարկել ընտանեկան բռնությունը, այդ թվում՝ հոգեբանական չարաշահումները, ծեծը, բռնաբարությունը, ներառյալ ամուսնական բռնաբարությունը, և սեռական ոտնձգությունները քրեորեն պատժելի դարձնելու

ուղղությամբ (Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն):

93.24 Շարունակել ջանքերը մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) առնչությամբ՝ մշակելով 2010-2012թթ. համար երրորդ գործողությունների ազգային ծրագիրը, և հետագա քայլեր ձեռնարկել մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) զոհերին ցուցաբերվող աջակցությունը բարելավելու ուղղությամբ (Բոսնիա և Հերցեգովինա), ամրապնդել ջանքերն ուղղված մարդկանց շահագործումը (թրաֆիքինգը) պատժելուն ու կանխելուն և զոհերին աջակցելուն (Արգենտինա), կենսագործել 2010-2013թթ. համար մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հակազդմանն ուղղված ազգային ծրագիր մշակելու և ընդունելու մտադրությունը և ակտիվորեն համագործակցել այդ հարցի շուրջ միջազգային ասպարեզում (Բելառուս), ակտիվորեն ջանքեր գործադրել մարդկանց շահագործումը (թրաֆիքինգը) կանխելու ուղղությամբ, այդ թվում[3] ընդհանուր բնակչությանը, ներառյալ երեխաներին ուղղված տեղեկատվական արշավների միջոցով, մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) բոլոր ձևերին առնչվող վտանգների շուրջ իրազեկման բարձրացման և մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) զոհերի պաշտպանության և աջակցության նպատակով[4] ամբողջովին հարգելով վերջիններիս մարդու իրավունքները (Գերմանիա), ուժեղացնել երեխաների թրաֆիքինգի երևույթի ուսումնասիրությունը և տարածաշրջանային համագործակցությունն այն երկրների հետ, ուր մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) նպատակով տեղափոխվում են հայ երեխաները (Լեհաստան), հիմնվելով գոյություն ունեցող իրավական հենքի վրա լրացուցիչ ռեսուրսներ հատկացնել մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) զոհերի աջակցության համար (Կանադա), հաստատել հատուկ ծառայություններ և վերահինտեգրման ծրագրեր մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) զոհերի համար (Լեհաստան):

93.25 Ակտիվացնել երեխաների հանդեպ բռնության, ներառյալ մարմնական պատժի կանխարգելմանն ու պայքարին ուղղված ջանքերը (Բրազիլիա), երեխաների դեմ բռնությունը, ներառյալ մարմնական պատիժը պատժելի դարձնող հատուկ օրենսդրական ակտեր ընդունել, առաջ գնալ[4] անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկելով ծնունդների գրանցման հնարավորինս ամենամեծ ցուցանիշ արձանագրելու համար, սատարել աղջիկներին կրթությունը շարունակելու հնարավորություն տվող և գենդերային դերերի առումով կարծրատիպերը վերացնող կրթական քաղաքականությանը, նախաձեռնել իրազեկման բարձրացմանն ուղղված ծրագրեր, մասնավորապես՝ գյուղական շրջաններում, երեխայի աշխատանքը կրթությունից բարձր դասելու միտումը փոխելու նպատակով, և խրախուսել փոքրամասնություններին պատկանող երեխաների համար մայրենի լեզվով կրթություն ստանալու հասանելիությունը (Ուրուգվայ):

93.26 Ապահովել, որպեսզի անվտանգության/ոստիկանության ուժերի կողմից ձերբակալված անձանց[5] վատ վերաբերմունքի ենթարկվելու մասին հայտարարությունները հետաքննվեն, իսկ մեղավորները՝ պատասխանատվության ենթարկվեն (Կանադա), հետաքննել ոստիկանության կողմից ոտնձգությունների դեպքերը՝ անպատժելիությունը կանխելու և ոստիկանության կողմից վատ վերաբերմունքին վերջ դնելու նպատակով (Ադրբեջան), ապահովել խոշտանգումներից կամ վատ վերաբերմունքից տուժած անձանց, հատկապես՝ կալանավորների կամ զինակոչիկների բողոքների գրանցման համակարգ (Չեխիայի Հանրապետություն):

93.27 Իրականացնել ԵԱԿՀ/ԺՀՄԻԳ-ի դատավարությունների դիտարկման զեկույցում տրված հանձնարարականները և ապահովել 2008թ. մարտի 1-ի իրադարձություններին հետևած տաս մահվան դեպքերի անկախ ու արժանահավատ հետաքննություն (Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն), ակտիվացնել ջանքերը դատարանում գործերը ներկայացնելու ուղղությամբ՝ հստակություն մտցնելու, փոխհատուցումներ ապահովելու և պատասխանատուներին պատժելու նպատակով (Իսպանիա), հետամուտ լինել Հայաստանի դատական համակարգի թերությունների վերաբերյալ ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի 2010թ. մարտի զեկույցում տրված հանձնարարականների կատարմանը (Նիդեռլանդներ):

93.28 Իրագործել Ազգային ժողովի կողմից լիազորված ժամանակավոր հանձնաժողովի հանձնարարականները և իրականացնել անհարկի ուժի կիրառման վերաբերյալ անկախ և թափանցիկ հետաքննություն[6] պատասխանատվության ենթարկելով մեղավորներին (Շվեյցարիա):

93.29 Ավարտել արդարադատության համակարգի բարեփոխումները և ապահովել ներպետական օրենսդրության համապատասխանությունը փոփոխված Սահմանադրությանը և դատահիրավական համակարգին վերաբերող նոր օրենսդրությանը (Լեհաստան):

93.30 Անհրաժեշտ միջոցառումներ իրականացնել մարդու իրավունքների գծով դատական բարելավումների շուրջ դատավորների ընթացիկ վերապատրաստման համար (Թուրքիա), ոստիկանության աշխատակիցների համար կազմակերպել մարդու իրավունքներին վերաբերող վերապատրաստման ծրագրեր (Իտալիա), ուժեղացնել ոստիկանության, քրեակատարողական հիմնարկների անձնակազմի և զինվորականների կրթությունը մարդու իրավունքների գծով (Չեխիայի Հանրապետություն):

93.31 Միջոցներ ձեռնարկել կոռուպցիայի դեմ պայքարելու համար (Ադրբեջան):

93.32 Ուժեղացնել արդար դատաքննության երաշխիքները, այդ թվում՝ ապահովելով խոշտանգման կամ վատ վերաբերմունքի միջոցով ձեռք բերված ցանկացած ապացույցի անընդունելիությունը դատարանում

(Չեխիայի Հանրապետություն):

93.33 Շարունակել քրեակատարողական հիմնարկները և կալանավայրերը մարդու իրավունքների միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու ուղղությամբ գործադրվող ջանքերը (Կանադա), գործնականում մուտք ապահովել դեպի կալանքի բոլոր վայրեր, այդ թվում[7] ոստիկանության բաժանմունքներ (Չեխիայի Հանրապետություն):

93.34 Հետագա քայլեր իրականացնել կալանավորների և դատապարտյալների վերականգնումը և վերանինտեգրումը սատարելու ուղղությամբ՝ կազմակերպելով մասնագիտական վերապատրաստման դասընթացներ նրանց համար (Բոսնիա և Հերցեգովինա):

93.35 Ձեռնարկել օրենսդրական և վարչական անհրաժեշտ միջոցառումներ երկրում կրոնի ազատությունն ամբողջովին երաշխավորելու, մասնավորապես[8] խտրականության ցանկացած ձև կամ կրոնական փոքրամասնությունների միավորումների գրանցման համար ավելորդ խոչընդոտները կանխելու նպատակով, (Մեքսիկա), անխտիր բոլորի համար լիովին ապահովել կրոնի ազատությունը (Ադրբեջան):

93.36 Ապահովել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կայացրած այն վճռի կենսագործումը, ըստ որի «Ա1+» հեռարձակող ընկերությանն արտոնագիր տրամադրելու մերժումը խախտում է մարդու իրավունքների գծով Հայաստանի ստանձնած պարտավորությունները (Նիդեռլանդներ):

93.37 Միջոցներ ձեռնարկել ապագայում ազատ և արդար ընտրություններ ապահովելու համար (Շվեդիա), կենսագործել ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի կողմից տրված հանձնարարականները՝ 2011թ. հաջորդ ընդհանուր ընտրությունների և 2012թ. նախագահական ընտրությունների անցկացումը բարելավելու համար (Ֆրանսիա):

93.38 Իրականացնել հասարակական կյանքում կանանց դիրքն ու մասնակցությունը բարելավելու քաղաքականություն և խթանել երեխաների իրավունքների պաշտպանության ծրագրեր (Ալժիր), դիտարկել հասարակությունում կանանց մասնակցությունը բարելավելու և խրախուսելու ուղղությամբ հետագա միջոցառումների հնարավորությունը և ապահովել, որպեսզի նման միջոցառումները ընդգրկեն ժամանակացույցերով հենանիշեր կամ ավելի բարձր քվոտաներ, իսկ դրանց իրագործումն արժանանա մանրազնին մշտադիտարկման (Նորվեգիա):

93.39 Ապահովել Աշխատանքային օրենսգրքում ամրագրված նվազագույն աշխատանքային տարիքի և երեխաների համար ծանր և վտանգավոր աշխատանքն արգելող դրույթների արդյունավետ իրագործումը (Սուրբ Աթոռ):

93.40 Աղքատությունը վերացնելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկել (Ադրբեջան):

93.41 Շարունակել ջանքերն այս ոլորտներում՝ կրթության և առողջապահության հասանելիությունը բարելավելու և կանանց ու երեխաների

իրավունքները խթանելու նպատակով (Լիբանան):

93.42 Շարունակել իրագործել բոլոր մակարդակներում բնակչությանը մատուցվող կրթության և առողջապահական ծառայությունների որակի երաշխավորմանն ուղղված ծրագրեր (Կուբա):

93.43 Շարունակել մեծացնել և ընդլայնել առողջապահական ծառայությունների հասանելիությունն ու մատչելիությունը՝ գյուղական և հեռավոր շրջանների, ինչպես նաև առավել խոցելի խմբերի վրա հատուկ շեշտադրումով, (Եգիպտոս), երաշխավորել առողջապահության հասանելիությունը խոցելի սոցիալական խմբերի և գյուղական ու հեռավոր շրջանների բնակչության համար (Ալժիր), բարելավել առաջնային բուժօգնության որակը, հատկապես՝ գյուղական շրջաններում (Քուվեյթ), շարունակել բոլորի համար առողջապահության հասանելիության բարելավմանն ուղղված ջանքերը, մասնավորապես առավել խոցելի կարգերին դասվող, հաշմանդամություն ունեցող և գյուղական շրջաններում բնակվող անձանց համար (Լիբիայի Արաբական Ջամահիրիա):

93.44 Շարունակել մայրական և մանկական մահացության նվազեցմանն ուղղված ջանքերը՝ փրկելով մորն ու մանկանը (Սուրբ Աթոռ):

93.45 Շարունակել սատարել մանկատները (Ղրղզստան):

93.46 Ստեղծել փողոցային երեխաների առջև ծառացած խնդիրների լուծման արդյունավետ մեխանիզմներ (Ղազախստան):

93.47 Կրթության հավասար հասանելիություն ապահովել բոլոր փոքրամասնությունների խմբերին պատկանող բոլոր երեխաների համար (Ավստրիա), միջոցներ ձեռնարկել ապահովելու փոքրամասնությունների խմբերի, հատկապես[9] երեխաների համար մայրենի լեզվով կրթության հասանելիությունը (Ադրբեջան):

93.48 Շարունակել խթանել մարդու իրավունքների կրթությունը դպրոցական ծրագրերում[10] բոլոր մակարդակներում (Ջիբութի):

93.49 Ապահովել մարդու իրավունքների ընդգրկումը բոլոր դպրոցական ծրագրերում և մարդու իրավունքների ուղղությամբ վերապատրաստումներ անցկացնել իրավապահ մարմինների աշխատակիցների համար (Լիբիայի Արաբական Ջամահիրիա):

93.50 Շարունակել անցկացնել ազգային փոքրամասնությունների իրավունքների վերաբերյալ իրազեկման արշավներ հայ հասարակությունում՝ հանրային կյանքի բոլոր ոլորտներում հանդուրժողականությունը և անխտրականությունն էլ ավելի ամրապնդելու նպատակով (Կիպրոս):

93.51 Շարունակել հետևողական և հաջողված քաղաքականությունը՝ ուղղված երկրում բնակվող բոլոր ազգային փոքրամասնությունների իրավունքների ապահովմանը, ինչպես նաև նրանց սոցիալական, տեղեկատվական և մշակութային կարիքների աջակցությանը (Բելառուս):

93.52 Ձեռնարկել պատշաճ միջոցներ Հայաստանում բնակվող միգրանտ աշխատողների և փախստականների հիմնարար իրավունքներն ավելի լավ

պաշտպանելու համար (Ջիբութի):

94. Ստորև ներկայացված առաջարկություններն ուսումնասիրվել են Հայաստանի կողմից և արժանացել վերջինիս աջակցությանը.

94.1 Առաջարկել, որպեսզի կառավարությունն առաջ տանի (Կիպրոս) 1999թ. հոկտեմբերի 1-ին ստորագրված Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրության (Ավստրիա, Հունաստան, Ուրուգվայ) վավերացումը/արագացնի վավերացումը (Ռումինիա)/դիտարկի վավերացումն արագացնելու հնարավորությունը (Բրազիլիա)՝ այն ազգային օրենսդրության մեջ իրագործելու նպատակով (Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն):

94.2 Փոփոխություններ մտցնել թմրամիջոցներին վերաբերող օրենքներում՝ հաշվի առնելով երկրում թմրամիջոցների օգտագործման աճը (Ղրղզստան):

94.3 Արագացնել «Տղամարդկանց և կանանց համար հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրենքի նախագծի ընդունումը (Բրազիլիա), ապահովել, որպեսզի «Տղամարդկանց և կանանց համար հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրենքի նախագիծն ավարտուն տեսքի բերվի[11] պաշտպանության միջազգային չափանիշների համաձայն և ընդունվի հնարավորինս կարճ ժամկետում (Հունաստան), շարունակել տղամարդկանց ու կանանց հավասար հնարավորությունների և իրավունքների ոլորտում օրենքները կիրարկելուն ուղղված ջանքերը (Քուվեյթ):

94.4 Առավել հզորացնել Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կարողությունները և խթանել վերջինիս համագործակցությունը քաղաքացիական հասարակության հետ՝ Հայաստանում մարդու իրավունքներն ավելի լավ պաշտպանելու նպատակով (Եգիպտոս), ամրապնդել Մարդու իրավունքների պաշտպանի կառուցակարգի դերակատարումը[12] հնարավորություն տալով պաշտպանին ավելացնելու իր մշտադիտարկումն ու ընդլայնելու իր աշխատանքը դեպի շրջաններ (Ֆինլանդիա), Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կազմում ստեղծել բավարար լիազորություններով և ռեսուրսներով օժտված հատուկ բաժին կամ նշանակել բացառապես երեխաների հարցերով զբաղվող տեղակալ (Հունգարիա), Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին տրամադրել անհրաժեշտ մարդկային և ֆինանսական միջոցներ նրա վրա դրված ազգային կանխարգելման մեխանիզմի առաքելությունն իրականացնելու և կալանավորված անձանց վատ վերաբերմունքից զերծ պահելու երաշխիքներն ամրապնդելու համար, որպեսզի ոստիկանության բոլոր աշխատակիցները հզոր ուղերձ ստանան առ այն, որ վատ վերաբերմունքն ապօրինի է (Շվեյցարիա):

94.5 Ստեղծել միջգերատեսչական մեխանիզմ, որը պատշաճ ուշադրություն կդարձնի միջազգային մեխանիզմներից ստացված առաջարկություններին, այդ թվում՝ համընդհանուր

պարբերական վերանայումից բխող առաջարկություններին՝ քաղաքացիական հասարակության մասնակցությամբ (Մեքսիկա), անկախ հասարակական կազմակերպությունների հետ միասին ստեղծել արդյունավետ և ընդգրկուն գործընթաց՝ հետամուտ լինելու համընդհանուր պարբերական վերանայման առաջարկությունների կատարմանը (Նորվեգիա):

94.6 Ներկայացնել պարբերական զեկույցները համապատասխան պայմանագրային մարմիններին և պատշաճ կարգով պատասխանել պնդումներ պարունակող նամակներին և հրատապ դիմումներին, ինչպես նաև՝ թեմատիկ խնդիրներին նվիրված հարցաշարերին (Ուկրաինա):

94.7 Հրավիրել դատավորների և փաստաբանների անկախության հարցերով հատուկ զեկուցողին (Հունգարիա, Գերմանիա), դիտարկել դատավորների և փաստաբանների անկախության հարցերով հատուկ զեկուցողին հրավիրելու հնարավորությունը (Ուրուգվայ):

94.8 Ապահովել, որպեսզի նույնպես առաջնահերթություն տրվի Կամայական ձերբակալությունների հարցերով աշխատանքային խմբի այցելությանը, որի շուրջ սկզբունքային համաձայնություն է ձեռք բերվել, և որ այն տեղի ունենա մոտ ապագայում (Նորվեգիա):

94.9 Միջոցառումներ ձեռնարկել՝ ապահովելու կանանց և տղամարդկանց միջև իրավունքների և հնարավորությունների հավասարությունը, ինչպես նաև կանանց նկատմամբ խտրականության վերացումը, այդ թվում[5] օրենսդրական բարեփոխումների միջոցով, առաջնային ուշադրություն դարձնել կանանց հանդեպ բռնության բոլոր ձևերի և հատկապես ընտանեկան բռնության արդյունավետ վերացմանը՝ ի թիվս այլ միջոցների ստեղծելով կանանց առաջխաղացման ազգային մեխանիզմ և անդրադառնալով կանանց հանդեպ բռնության խնդրին (Ուրուգվայ), միջոցներ ձեռնարկել կանանց հանդեպ բռնությունը և հատկապես ընտանեկան բռնությունը վերացնելու ուղղությամբ (Ադրբեջան):

94.10 Շարունակել ապահովել կանանց համար հավասար իրավունքներ հասարակության մեջ (Բելառուս):

94.11 Ընդունել օրենսդրական ակտեր և ձեռնարկել միջոցառումներ կանանց և երեխաների հանդեպ բռնությունը կանխելու համար, այդ թվում՝ իր մշտադիտարկման մեխանիզմի հզորացման միջոցով (Ինդոնեզիա):

94.12 Հզորացնել ընտանեկան բռնության դեմ արդյունավետ պայքար մղելու մեխանիզմները, մասնավորապես առաջնային կարգով քրեական օրենսգիրք ներմուծել ընտանեկան բռնությունը որպես հանցատեսակ և ապահովել ընտանեկան բռնության զոհերի արդյունավետ աջակցությունը և պաշտպանությունը (Չեխիայի Հանրապետություն):

94.13 Ակտիվացնել կանանց և աղջիկներին մարմնավաճառության դրդող գործոններին հակազդելու կոչված միջոցառումները (Լեհաստան):

94.14 Շարունակել երեխաների սեռական շահագործման կանխմանն ու դրա դեմ պայքարին ուղղված ջանքերը

(Բրազիլիա):

94.15 Ապահովել լրագրողների դեմ բռնության դեպքերի արագ, թափանցիկ և արդյունավետ դատական հետապնդումը (Ամերիկայի Միացյալ Նահանգներ), արդյունավետ կերպով հետաքննել լրագրողների, ընդդիմության անդամների և մարդու իրավունքների պաշտպանների վրա կատարված հարձակումների դեպքերը (Ադրբեջան), ապահովել, որպեսզի մարդու իրավունքների պաշտպանների, լրագրողների և ընդդիմության անդամների դեմ ուղղված հանցագործությունները և բռնություններն արդյունավետ կերպով հետաքննվեն և հետապնդվեն դատական կարգով, իսկ մեղավորները՝ պատասխանատվության ենթարկվեն (Նորվեգիա):

94.16 Արդյունավետ միջոցներ ձեռնարկել դատական իշխանության անկախությունն ապահովելու համար (Իտալիա), ապահովել դատական իշխանության լիակատար անկախությունը (Ադրբեջան), ուժեղացնել միջոցառումները դատական իշխանության լիակատար անկախությունն ապահովելու ուղղությամբ (Ուրուգվայ):

94.17 Հավելյալ բարեփոխումներ առաջ մղել, որոնք գործնականում կերաշխավորեն իշխանությունների բաժանումը և մասնավորապես՝ դատական իշխանության անկախությունը, այդ թվում[13] դատավորների վերապատրաստման միջոցով (Հունաստան), գործադրել լրացուցիչ ջանքեր ամրապնդելու դատական համակարգը՝ դրանում բարեփոխումների իրականացման և դատավորների վերապատրաստման միջոցով (Բոսնիա և Հերցեգովինա):

94.18 Ջանքեր գործադրել[14] ապահովելու դատական համակարգի անկողմնակալության և թափանցիկության վերաբերյալ օրենսդրական դրույթների կիրառումը, այդ թվում նաև՝ բավարար ֆինանսավորում հատկացնելու միջոցով (Շվեդիա):

94.19 Ամրապնդել միջազգային չափանիշներին համապատասխանող անչափահասների գործերով դատական համակարգի ստեղծմանն ուղղված ջանքերը և հատուկ միջոցառումներ ձեռնարկել երեխաների և կալանավորված կամ ձերբակալված անձանց իրավունքների պաշտպանության ուղղությամբ (Չեխիայի Հանրապետություն):

94.20 Ստեղծել միջոցներ[15] ապահովելու լիակատար հարգանքը կարծիքի և արտահայտվելու ազատության իրավունքի հանդեպ և առավել բարենպաստ միջավայր ստեղծել հետաքննական լրագրության համար (Կանադա), ձեռնարկել բոլոր միջոցները, որոնք անհրաժեշտ են արտահայտվելու ազատությունը, այդ թվում[6] մամուլի ազատությունը լիովին հարգելու համար, ապահովելով, որպեսզի որևէ մեկը չզրկվի ազատությունից պարզապես արտահայտվելու ազատությունը, խաղաղ հավաքներին կամ երկրի կառավարմանը մասնակցելու իրենց իրավունքն իրացնելու համար (Շվեդիա), ապահովել, որպեսզի քաղաքացիական հասարակության ակտիվիստները և լրագրողները կարողանան իրականացնել իրենց աշխատանքն հետապնդումից և բռնությունից զերծ (Ամերիկայի Միացյալ Նահանգներ):

94.21 Ապահովել հեռարձակման լիցենզիաների տրամադրման համար արդար և թափանցիկ գործընթաց և երաշխավորելով հեռարձակումը կարգավորվող մարմինների անկախությունը (Նորվեգիա), միջոցներ ձեռնարկել, որոնք անհրաժեշտ են խթանելու Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի անկախությունը՝ որպես լրատվամիջոցների համար կարգավորող մարմնի (Ֆրանսիա), փոփոխել հեռարձակմանը վերաբերող օրենքները, որպեսզի դրանք ապահովեն հեռուստատեսության և ռադիոյի կարգավորող մարմնի իրական անկախությունը (Նիդեռլանդներ):

94.22 Նախատեսել թվայնացման գործընթացի թափանցիկ գործընթաց, որպեսզի եթերային հաճախականություններում տեղ ապահովվի անկախ և փոքր շրջանային լրատվամիջոցներին (Ամերիկայի Միացյալ Նահանգներ):

94.23 Ապահովել, որպեսզի զրպարտությունն ապաքրեականացնող լրամշակված օրենքն ընդունվելու դեպքում, այն կենսագործվի այնպես, որպեսզի պաշտպանվի արտահայտվելու ազատությունը (Ամերիկայի Միացյալ Նահանգներ):

94.24 Համաձայն իր քաղաքացիների հիմնարար ազատությունները պաշտպանելու կառավարության ստանձնած հանձնառությանը՝ վերանայել օրենսդրությունը և գործելակերպը, որպեսզի երաշխավորվի հավաքների և արտահայտման ազատության իրավունքի ազատ իրացումը, առանց որևէ սահմանափակումների, բացի նրանցից, որ թույլատրված են միջազգային իրավունքով (Մեքսիկա), լիովին հարգել և առաջ մղել արտահայտման ազատությունը (Ադրբեջան), բոլոր քաղաքական կուսակցությունների, լրատվամիջոցների և մարդու իրավունքների պաշտպանների համար երաշխավորել արտահայտվելու և հավաքներին մասնակցելու ազատությունը (Շվեյցարիա):

94.25 Ձեռնարկել կոնկրետ քայլեր արտահայտվելու ազատությունը, ներառյալ[16] քաղաքացիական հասարակության կազմակերպությունների անկախությունը և հավաքների իրավունքը խթանող միջավայր ստեղծելու վերաբերյալ պարտավորությունները կատարելու ուղղությամբ (Նորվեգիա):

94.26 Օրենքներում ու կանոնակարգերում, ինչպես նաև գործնականում ապահովել, որպեսզի հավաքների ազատության իրավունքի իրացման առումով որևէ կամայական խոչընդոտներ չհարուցվեն (Նիդեռլանդներ), ապահովել հարգանքը հավաքների ազատության իրավունքի նկատմամբ՝ միջազգային պարտավորություններին համապատասխան (Ադրբեջան), հարգել, օրենքներում և գործնականում, անհատների՝ խաղաղ հավաքներ կազմակերպելու իրավունքը (Ամերիկայի Միացյալ Նահանգներ), կիրառել «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» օրենքը թափանցիկ և համաչափ եղանակով (Իռլանդիա):

94.27 Ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց աշխատելու իրավունքը, և նրանց տնտեսական,

սոցիալական ու մշակութային իրավունքները պաշտպանելու համար ստեղծել արդյունավետ մեխանիզմներ և ուժեղ օրենսդրական կանոնակարգեր (Ղազախստան):

95. Հետևյալ առաջարկություններն ուսումնասիրվելու են Հայաստանի կողմից, և դրանց վերաբերյալ պատասխաններ են տրվելու պատշաճ կարգով, սակայն 2010թ. սեպտեմբերին կայանալիք Մարդու իրավունքների խորհրդի տասնհինգերորդ նստաշրջանից ոչ ուշ:

95.1 Դիտարկել «Բոլոր միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների անդամների պաշտպանության մասին միջազգային կոնվենցիան» վավերացնելու հնարավորությունը (Ալժիր):

95.2 Հայաստանի օրենսդրության մեջ ընդգրկել կանանց նկատմամբ խտրականության բացահայտ և ընդգրկուն սահմանում, ինչպես նաև բարելավել կանանց նկատմամբ խտրականությունն արգելող իրավական դրույթները (Ավստրիա), Հայաստանի օրենսդրության մեջ մշակել կանանց նկատմամբ խտրականության հստակ սահմանում (Իռլանդիա), Հայաստանի օրենսդրության մեջ բացահայտ և ընդգրկուն եղանակով սահմանել և արգելել կանանց նկատմամբ խտրականությունը և գենդերային հատկանիշով բռնությունը, ինչպես նաև ձեռնարկել հանրային իրազեկման միջոցառումներ (Արգենտինա):

95.3 Վերջ տալ ընդդիմություն համարվող անհատների քաղաքական դրդապատճառներով պայմանավորված հետապնդմանը և քայլեր ձեռնարկել ամրապնդելու օրենքի գերակայությունը՝ այդ թվում հարգելով Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրում տրված նվազագույն երաշխիքները, օրենքի հավասար պաշտպանությունը և դատական իշխանության անկախությունը (Ամերիկայի Միացյալ Նահանգներ):

95.4 Դադարեցնել հեռուստատեսային և ռադիո հեռարձակողներին արտոնագրերի տրամադրման մորատորիումը և 2000թ. «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքում 2008թ. կատարված փոփոխությունները, և իրականացել օրենսդրական միջոցառումներ՝ երաշխավորելու Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի և Հանրային հեռուստատեսության և ռադիոյի խորհրդի անկախությունը (Իսպանիա):

95.5 Երաշխավորել խաղաղ հավաքների ազատությունը և փոփոխել «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» օրենքի 9.4.3-րդ հոդվածը (Իսպանիա):

96. Ստորև ներկայացրած առաջարկությունը չի արժանացել Հայաստանի աջակցությանը.

96.1. Միջոցներ ձեռնարկել եզդիների նկատմամբ խտրականությունը վերացնելու ուղղությամբ (Ադրբեջան):

97. Հայաստանը ներկայացրել է հետևյալ մեկնաբանությունը.

Թիվ 96.1 առաջարկությունը չի կարող ընդունվել, քանզի այն ճշգրիտ չէ և չի համապատասխանում իրական իրավիճակին: Հայաստանում բնակվող որևէ ազգային փոքրամասնության, այդ թվում նաև[17] եզդիների նկատմամբ որևէ խտրականություն չկա:

98. Սույն զեկույցում զետեղված բոլոր եզրակացությունները և/կամ առաջարկություններն արտացոլում են ներկայացնող պետության (պետությունների) և/կամ վերանայումն անցնող պետության դիրքորոշումները: Դրանք չպետք է մեկնաբանվեն որպես ողջ աշխատանքային խմբի հավանությանն արժանացած:

# Դ. ՄԱԿ-ի «Համընդհանուր պարբերական դիտարկում» ընթացակարգի համաձայն նախապատրաստած Հայաստանի Հանրապետության միջանկյալ զեկույց

Միջանկյալ զեկույցը նախապատրաստվել է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի Պարբերական դիտարկման աշխատանքային խմբին ներկայացնելու համար 2010 թվականի մայիսին Համընդհանուր պարբերական դիտարկման աշխատանքային խմբի կողմից տրված հանձնարարականների կատարման ընթացքը

## ՄԱՍ I. Միջազգային պայմանագրերի վավերացում

### *Հանձնարարական*

1.1 Ստորագրել և վավերացնել «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի երկրորդ կամընտիր արձանագրությունը: Արձանագրությունն ուղղված է մահապատժի վերացմանը (Իսպանիա, Ֆրանսիա, Արգենտինա, Իրաք, Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն):

A/HRC/15/9 para(s) 93.1

### *Իրականացման ընթացքը*

- Ընթացքի մեջ է, միջգերատեսչական համաձայնեցման փուլում է:

### *Հանձնարարական*

1.2. Հնարավորինս շուտ վավերացնել բռնի անհետացումներից բոլոր անձանց պաշտպանության մասին միջազգային կոնվենցիան (Ադրբեջան, Արգենտինա, Ուրուգվայ)
A/HRC/15/9 para(s) 93.2

### *Իրականացման ընթացքը*

- Վավերացվել է 2010 թվականի հոկտեմբերի 5-ին, ուժի մեջ է մտել 2011 թվականի փետրվարի 23-ից:

### *Հանձնարարական*

1.3 Քննարկել արագացնելու հնարավորությունը (Բրազիլիա), ավարտին հասցնել վավերացումը (Ալժիր), վավերացնել Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիան (Բրազիլիա, Ալժիր) և դրան կից կամընտիր արձանագրությունը (Արգենտինա, Իրաք, Ղրղզստան) հնարավորինս կարճ ժամկետում (Հունաստան), վավերացնել կոնվենցիային կից կամընտիր արձանագրությունը (Ադրբեջան):

A/HRC/15/9(2010 թ-ի աշխատանքային խմբի զեկույց) para(s) 93.3

### *Իրականացման ընթացքը*

- Կոնվենցիան վավերացվել է 2010թ. հոկտեմբերի 5-ին, ուժի մեջ է մտել 2010 թվականի հոկտեմբերի 22-ին: Նշված կոնվենցիային ներքին օրենսդրությունը համապատասխանեցնելու նպատակով ստեղծվել է աշխատանքային խումբ: Կամընտիր արձանագրության վավերացման հարցին պետությունը կանդրադառնա, երբ կավարտի ներքին օրենդրության համապատասխանեցումը «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի դրույթներին:

### *Հանձնարարական*

1.4 Առաջարկել, որպեսզի կառավարությունն ընթացք տա (Կիպրոս), արագացնի վավերացումը (Ռումինիա), դիտարկի վավերացումն արագացնելու հնարավորությունը (Բրազիլիա ), վավերացնի 1999 թվականի հոկտեմբերի 1-ին ստորագրած Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրությունը (Ավստրիա, Հունաստան, Ուրուգվայ), կիրառի այն ազգային օրենսդրությունում (Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն):

A/HRC/15/9 para(s) 94.1

### Իրականացման ընթացքը

- Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրության վավերացման գործընթացը հնարավոր կլինի միայն այն ժամանակ, երբ վերացվեն ՀՀ Սահմանադրության հետ գոյություն ունեցող հակասությունները:

### *Հանձնարարական*

1.5 Դիտարկել «Բոլոր միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների անդամների պաշտպանության մասին միջազգային կոնվենցիան» վավերացնելու հնարավորությունը (Ալժիր):

A/HRC/15/9 para(s) 95.1

### *Իրականացման ընթացքը*

- Կոնվենցիայի վավերացման հարցը ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում է, մասնավորապես, այս հարցն ընդգրկված է ՀՀ կառավարության 2011թ. նոյեմբերի 10-ի թիվ 1593-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգի իրականացման 2012-2016 թվականների գործողությունների ծրագրի» 5.4.4 կետում:

## *ՄՍՍ II. Սահմանադրական և օրենսդիր աշխատանք*

### *Հանձնարարական*

2.1 Արդյունավետ աշխատանք տանել բոլոր օրենքները փոփոխված Սահմանադրությանը համապատասխանեցնելու համար (Ֆինլանդիա):

A/HRC/15/9 para(s) 93.4

### *Իրականացման ընթացքը*

- 2005 թվականին ՀՀ Սահմանադրության բարեփոխումներից հետո մի քանի տասնյակ գործող օրենքներ համապատասխանվեցին Հիմնական օրենքին:

Ներկայումս ԵՄ հետ համատեղ ստեղծվել է իրավական գիլյոտինի մեխանիզը, որը կնպաստի անհարկի ծանրացնող օրենքների ուժը կորցրած ճանաչելուն՝ համապատասխան կառույցն արդեն իսկ ստեղծվել և գործում է:

### *Հանձնարարական*

2.2 Վերանայել ազգային օրենսդրության մեջ խոշտանգման սահմանումը, որպեսզի այն լիովին համապատասխանի «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» կոնվենցիայի 1-ին հոդվածում ամրագրված սահմանմանը (Չեխիայի Հանրապետություն), ընդունել «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» կոնվենցիայի 1-ին

հոդվածին համապատասխանող խոշտանգման սահմանումը (Իռլանդիա), ընդունել խոշտանգման սահմանումը՝ «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» կոնվենցիայի 1-ին հոդվածին համապատասխան (Ուրուգվայ):

A/HRC/15/9 para(s) 93.5

### *Իրականացման ընթացքը*

- ՀՀ Քրեական օրենսգրքում կատարվել են համապատասխան փոփոխություններ, նպատակ ունենալով խոշտանգման սահմանումը համապատասխանեցնել «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» կոնվենցիայով տրված սահմանմանը: Լրացվել են Քրեական օրենսգրքի «խոշտանգում» հասկացության հետ կապ ունեցող բոլոր հոդվածները: Նշված փոփոխությունները գտնվում են Ազգային ժողովում:

### Հանձնարարական

2.3 Ապահովել օրենսդրական հենք «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» կոնվենցիայի կամընտիր արձանագրությամբ նախատեսված ազգային կանխարգելիչ մեխանիզմի համար և ապահովել քաղաքացիական հասարակության մասնակցությունը կառուցակարգային մակարդակով (Սլովենիա):

A/HRC/15/9 para(s) 93.6

### *Իրականացման ընթացքը*

- Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքի մեջ 2008 թվականի ապրիլի 8-ին կատարվել է 6.1 հոդվածի՝ «Պաշտպանը միջազգային իրավունքի բնագավառում» հոդվածի ավելացում, համաձայն որի Պաշտպանը հանդիսանում է խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիայի կամընտիր արձանագրությամբ սահմանված կանխարգելման անկախ ազգային մեխանիզմ: Մարդու իրավունքների պաշտպանի 2011 թվականի հուլիսի 11-ի կարգադրությամբ խոշտանգումները կանխարգելելու նպատակով ստեղծվել է փորձագետների խորհուրդ որպես կանխարգելման ազգային մեխանիզմ: Խորհուրդը բաղկացած է Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի անձնակազմից և տարբեր ՀԿ-ների ներկայացուցիչներից:

### Հանձնարարական

2.4 Ապահովել Աշխատանքային օրենսգրքում ամրագրված նվազագույն աշխատանքային տարիքի և երեխաների համար ծանր և վտանգավոր աշխատանքն արգելող դրույթների արդյունավետ իրագործումը (Սուրբ Աթոռ):

A/HRC/15/9 para(s)93.39

### *Իրականացման ընթացքը*

- «Աշխատանքի պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի և ՀՀ աշխատանքի պետական տեսչության կանոնադրության համաձայն ՀՀ աշխատանքի պետական տեսչությունը հսկողություն և վերահսկողություն է իրականացնում մինչև 18 տարեկան անձանց՝ ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված երաշխիքների ապահովման

նկատմամաբ: Այսինքն նշված խնդիրը մշտադիտարկվում է:

### *Հանձնարարական*

2.5 Ավարտել արդարադատության համակարգի բարեփոխումները և ապահովել ներքին օրենսդրության համապատասխանությունը փոփոխված Սահմանադրությանը և դատաիրավական համակարգին վերաբերող նոր օրենսդրությանը (Լեհաստան):

A/HRC/15/9 para(s) 93.29

### *Իրականացման ընթացքը*

- Դատաիրավական բարեփոխումները կրում են շարունակական բնույթ: Այսպես, ներկայումս իրանացվում է դատաիրավական վերափոխումների երկրորդ փուլը: 2012 թվականի հուլիսի 2-ին ՀՀ նախագահը ստորագրեց Դատաիրավական բարեփոխումների 2012-2016թթ. ռազմավարական ծրագիրը, որով նախատեսված են բոլոր այն իրավական ակտերի և միջոցառումների իրականացումը, որոնք ուղղված են Հայաստանում դատաիրավական բարեփոխումների հետագա ընթացքն ապահովելուն:

### *Հանձնարարական*

2.6 ՀՀ օրենսդրության մեջ ընդգրկել կանանց նկատմամբ խտրականության բացահայտ և ընդգրկուն սահմանում, ինչպես նաև բարելավել կանանց նկատմամբ խտրականությունն արգելող իրավական դրույթները (Ավստրիա), Հայաստանի օրենսդրության մեջ մտցնել կանանց նկատմամբ խտրականության հստակ սահմանում (Իռլանդիա), ՀՀ օրենսդրության մեջ բացահայտ և ընդգրկուն եղանակով սահմանել և արգելել կանանց նկատմամբ խտրականությունը և գենդերային հատկանիշով բռնությունը, ինչպես նաև ընդունել սոցիալական իրազեկման միջոցառումներ (Արգենտինա):

A/HRC/15/9 para(s) 95.2

### *Իրականացման ընթացքը*

- «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ Ազգային Ժողովում ընդունվել է առաջին ընթերցմամբ: Նշված օրենքում ամրագրված են կանանց նկատմամբ խտրականությունն արգելող դրույթներ:

Նշված օրենքի նախագիծը մինչև ԱԺ ներկայացնելը կազմակերպվել են նախագծի հանրային լսումներ:

ՀՀ Կառավարության 2011թ. հունիսի 17-ի նիստում հավանության է արժանացել «Ընդդեմ գենդերային բռնության ազգային ծրագիրը», «2011-2015թթ. Ռազմավարական ծրագիրը»: Մշակվել է «Ընտանեկան բռնության մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը ներկայացվել է ՀՀ կառավարություն: Գենդերային հինմահարցերի և գենդերային բռնության խնդիրների իրազեկման նպատակով պարբերաբար կազմակերպում են սեմինարներ, քննարկումներ, կլոր սեղաններ:

### *Հանձնարարական*

2.7 Փոփոխություններ մտցնել թմրամիջոցներին վերաբերող օրենքներում՝ հաշվի առնելով երկրում թմրամիջոցների օգտագործման աճը (Ղրղզստան):

A/HRC/15/9 para(s) 94.2

### *Իրականացման ընթացքը*

- Առանձնակիորեն կարևորելով Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի կազմակերպումը, նպատակ ունենալով հանրապետության ազգաբնակչությանը զերծ պահել թմրամիջոցների բացասական ազդեցությունից և դրա վնասակար հետևանքներից՝ ՀՀ Նախագահի 25.09.2009թ. թիվ ՆԿ-162-Ն կարգադրությամբ հաստատվել է «2009-2012 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ազգային ծրագիրը»: Բացի այդ, ՀՀ կառավարության կողմից 15.07.2010թ. թիվ 892-Ն որոշմամբ հաստատվել է նաև «2010-2012 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ազգային ծրագրով նախատեսված միջոցառումների ժամանակացույցը»: Նախատեսվում է նաև 2013-15թթ. ծրագրի մշակում:

### *Հանձնարարական*

2.8 Արագացնել «Տղամարդկանց և կանանց համար հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրենքի նախագծի ընդունումը (Բրազիլիա), ապահովել, որպեսզի «Տղամարդկանց և կանանց համար հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրենքի նախագիծն ավարտուն տեսքի բերվի՝ պաշտպանության միջազգային չափանիշների համաձայն և ընդունվի հնարավորինս կարճ ժամկետում (Հունաստան), շարունակել տղամարդկանց ու կանանց հավասար հնարավորությունների և իրավունքների ոլորտում օրենքները կիրառելուն ուղղված ջանքերը (Քուվեյթ):

A/HRC/15/9 para(s) 94.

### *Իրականացման ընթացքը*

2.9 Ամրապնդել հանրային պաշտպանի ինստիտուտի աշխատանքը՝ անվճար իրավաբանական աջակցություն տրամադրելով բնակչությանը (Ղրղզստան):

Տես A/HRC/15/9 para(s) 95.2 հանձնարարականի պատասխանը

### *Հանձնարարական*

2.10 Համաձայն իր քաղաքացիների հիմնարար ազատությունները պաշտպանելու կառավարության ստանձնած հանձնառությանը՝ վերանայել օրենսդրությունը և գործելակերպը, որպեսզի երաշխավորվի հավաքների և արտահայտման ազատության իրավունքի իրականացումը, առանց որևէ սահմանափակումների, բացի նրանցից, որ թույլատրված են միջազգային իրավունքով (Մեքսիկա), լիովին հարգել և առաջ մղել արտահայտման ազատությունը (Ադրբեջան), բոլոր քաղաքական կուսակցությունների, լրատվամիջոցների և մարդու իրավունքների պաշտպանների համար երաշխավորել արտահայտվելու և հավաքներին մասնակցելու ազատությունը (Շվեյցարիա):

A/HRC/15/9 para(s) 94.24

### *Իրականացման ընթացքը*

Հավաքների ազատության մասին ՀՀ նոր օրենքն ընդունվել է 2011թ.ապրիլի 14-ին:

Օրենքը նախատեսում է բոլոր այն իրավական կառուցակարգերը, որոնք անհրաժեշտ են Սահմանադրությամբ և միջազգային իրավական փաստաթղթերով նախատեսված իրավունքներն ու ազատություններն իրացնելու համար: «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի համաձայն լրագրողները գործում են ազատորեն՝ իրավահավասարության, օրինականության, խոսքի ազատության և բազմակարծության սկզբունքների հիման վրա: Լրագրողն իր մասնագիտական օրինական գործունեության ընթացքում, որպես հասարակական պարտք կատարող անձ, պաշտպանվում է ՀՀ օրենսդրությամբ: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի համաձայն տեղեկատվության ապահովման հիմնական սկզբունքները կարևոր երաշխիք են հանդիսանում տեղեկատվություն ստանալու իրավունքի իրականացման գործում: Այդ սկզբունքներն են՝ տեղեկությունները գրանցելու, դասակարգելու և պահպանելու միասնական կարգի սահմանումը, տեղեկություններ փնտրելու և ստանալու ազատության պաշտպանությունը, տեղեկություններ տրամադրելու մատչելիության ապահովումը և հրապարակայնությունը: 2010թ. մայիսին Հայաստանի Հանրապետությունը ապաքրեականացրել է զրպարտությունը: ՀՀ նոր Ընտրական օրենսգիրքը կանոններ է սահմանում պաշտոնական քարոզարշավի լուսաբանման համար, որոնք վերաբերում են անվճար եթերաժամանակին, նորությունների լուսաբանմանը և վճարովի գովազդին: Հանրային և մասնավոր հեռարձակողները պարտավոր են ապահովել ոչ խտրական պայմաններ և տրամադրել անաչառ տեղեկատվություն իրենց լրատվական հաղորդումներում: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ գրասենյակի կողմից 2012թ. ՀՀ-ում տեղի ունեցած Ազգային ժողովի ընտրությունների դիտարկման ընթացքում վերահսկվել է նաև լրատվամիջոցների աշխատանքը: Դիտորդական առաքելության վերջնական զեկույցում այդ մասին ասվել է, մասնավորապես, հետևյալը. «լրատվամիջոցների դիտարկման արդյունքները ցույց են տվել, որ լրատվամիջոցները իրականացրել են ընտրությունների լայնածավալ լուսաբանում: Ընդհանուր առմամբ հեռարձակողները մատչելի են եղել բոլոր խոշոր կուսակցությունների համար: Սա հնարավորություն է տվել ընտրողներին տեղեկացված լինել տարբեր քաղաքական դիրքորոշումների մասին»:

### *Հանձնարարական*

2.11 Երաշխավորել խաղաղ հավաքների ազատությունը և լրացում կատարել «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» օրենքի 9.4.3 հոդվածում (Իսպանիա)

### *Իրականացման ընթացքը*

Տես A/HRC/15/9 para(s) 94.24 հանձնարարականի պատասխանը

## ՄՍՍ III. Մարդու իրավունքների ոլորտում ընդհանուր քաղաքականություն

### *Հանձնարարական*

3.1 Ամրապնդել հանրային պաշտպանի ինստիտուտի աշխատանքը՝ անվճար իրավաբանական աջակցություն տրամադրելով բնակչությանը (Ղրղզստան):

A/HRC/15/9 para(s) 93.7

### *Իրականացման ընթացքը*

- 2011 թվականի դեկտեմբերի 8-ին «Փաստաբանության մասին» օրենքում

կատարվել են լրացումներ և փոփոխություններ, որի համաձայն սահմանվել է հանրային պաշտպանություն հասկացությունը և ներմուծվել են անվճար իրավաբանական օգնությանը վերաբերող դրույթներ:

Անցած տարիներին զգալի աշխատանքն է տարվել նաև Հանրային պաշտպանի գրասենյակի կարողությունների հզորացման առումով, մասնավորապես 2007 թվականից ի վեր հանրային պաշտպանների թիվը ավելի քան կրկնապատկվել է, ստեղծվել են նաև մարզային կառույցներ: Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016թթ. ռազմավարական ծրագրում նախատեսված է նաև անվճար իրավաբանական օգնության արդյունավետությունն ապահովելու ուղղությամբ այլընտրանքային մեխանիզմների մշակում:

### *Հանձնարարական*

3.2 Մարդու իրավունքների խորհրդի թիվ 9/12 բանաձևին համապատասխան՝ դիտարկել մարդու իրավունքների ազգային ծրագրի և գործողությունների ծրագրի մշակման հնարավորությունը՝ մարդու իրավունքներն առաջմղելու և պաշտպանելու պետության կարողություններն ամրապնդելու նպատակով (Բրազիլիա), նախատեսված ժամանակահատվածում ավարտին հասցնել մարդու իրավունքների պաշտպանության համապարփակ ազգային ծրագիրը (Եգիպտոս), արդյունավետորեն և նախատեսված ժամկետում իրականացնել մարդու իրավունքների պաշտպանության համապարփակ ազգային ծրագիրը (Բոսնիա և Հերցեգովինա), փաստացի իրավիճակը հաշվի առնելով՝ շարունակել խթանել համագործակցությունը մարդու իրավունքների հարցերում (Չինաստան), շարունակել բարելավել երկրում մարդու իրավունքների իրավիճակը՝ մինչ օրս արձանագրած բարելավումների լույսի ներքո (Իտալիա):

A/HRC/15/9 para(s) 93.9

### *Իրականացման ընթացքը*

- 2012թ. հաստատվեց մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը, որն անդրադառնում է մարդու իրավունքների ոլորտին վերաբերող բոլոր ուղղություններին, այդ թվում քաղաքական և քաղաքացիական, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներին:

### *Հանձնարարական*

3.3 Շարունակել երկրում իրականացնել բարեփոխումներ՝ բոլոր համապատասխան օրենքներին համաձայն մարդու իրավունքների պաշտպանությունը և օրենքի գերակայությունը լիովին ապահովելու նպատակով, ինչպես նշված է ազգային զեկույցում (Լաոսի Ժողովրդական Ժողովրդավարական Հանրապետություն):

A/HRC/15/9 para(s) 93.10

### Իրականացման ընթացքը

- Դատաիրավական բարեփոխումների ընթացքը շարունակվում է: Ընդունվել է 2012-16թթ. դատաիրավական բարեփոխումների ռազմավարական ծրագիր, որտեղ նախատեսված են լայնածավալ միջոցառումներ, թե՛ դատական, օրենսդրության, թե՛ քրեակատարողական և քրեական օրեսդրությունների, թե՛ բոլոր այն օրենքների առումով, որոնք կապված են մարդու իրավուքների հետ:

### *Հանձնարարական*

3.4 Առաջ տանել գործողություններն՝ ուղղված գենդերային հարցերի ընդգրկմանը Կառավարության կողմից տարվող քաղաքականության մեջ (Եգիպտոս), Հայաստանի կողմից իրականացվող քաղաքականության մեջ և ծրագրերում որդեգրել գենդերային ուղղվածությամբ մոտեցում (Հունաստան):

A/HRC/15/9 para(s) 93.11

### *Իրականացման ընթացքը*

- ՀՀ Կառավարության 2010 թվականի փետրվարին 11-ի նիստում հավանության է արժանացել «Գենդերային քաղաքականության հայեցակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումը, որը որպես գենդերային քաղաքականության ապահովման միջոց նշում է այնպիսի նորմատիվ իրավական ակտերի մշակումը, որոնք ուղղված են գենդերային հավասարության քաղաքականության իրականացմանը, ինչպես նաև գենդերային փորձաքննության անցկացման անհրաժեշտությունը, հաշվի առնելով դրա ազդեցությունը կանանց և տղամարդկանց վրա:

ՀՀ Կառավարության 2011 թվականի մայիսի 20-ի նիստում հավանության է արժանացել «Գենդերային քազաքականության 2011-2015 թվականների ռազմավարական ծրագիրը և գենդերային քաղաքականության 2011 թվականի միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» որոշումը, որի շրջանակներում ամեն տարի մշակվում են և ՀՀ Կառավարության կողմից հաստատվում են տարեկան ծրագրեր՝ իրենց մոնիտորինգի մեխանիզմներով: Նախատեսված միջոցառումները նպատակաուղղված են հասարակական կյանքի բոլոր ոլորտներում կանանց մասնակցության խթանմանը:

2011 թվականին ընդունվել է նոր ընտրական օրենսգիրքը, ըստ որի ամրագրվել է կանանց ընտրական գործընթացում ներգրավման առավել գենդերային զգայուն մեխանիզմ: 2011 թվականին Հայաստանի Հանրապետության մարզպետարաններում (Երևանի քաղաքապետարանում) ստեղծվել են գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովներ:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով Պեկինի հռչակագրից և գործողությունների ծրագրից, ինչպես նաև Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայից բխող հանձնարարականները, ՀՀ վարչապետի 2012 թվականի մարտի 1-ի որոշմամբ ՀՀ կանանց խորհուրդը դարձավ ՀՀ կանանց վիճակի բարելավման և գենդերային քաղաքականության իրականացման ազգային մեխանիզմ: Ազգային մեխանիզմը հաստատվեց այսպիսի բարձր մակարդակով նպատակ ունենալով համակարգել ՀՀ գենդերային ռազմավարության իրականացումը պետական քաղաքականության բոլոր ոլորտներում և հանրային կառավարման բոլոր մակարդակներում:

### *Հանձնարարական*

3.5 Շարունակել աշխատանքը կայուն զարգացման ազգային ծրագրի իրականացման ուղղությամբ, ինչը կնպաստի երկրում մարդու իրավունքների իրավիճակի հետագա բարելավմանը (Ռուսաստանի Դաշնություն):

A/HRC/15/9(2para(s) 93.12

### *Իրականացման ընթացքը*

- Հայաստանը ակտիվ մասնակցություն ունի կայուն զարգացման համաշխարհային գործընթացին՝ հանձինս վավերացված միջազգային պայմանագրերի և ստանձնած պարտավորությունների: ՀՀ կողմից մշակվել և ընդունվել է Ռիո + 20 գնահատման ազգային զեկույցը, որը ներկայացվել է 2012 թվականի Ռիո դե Ժանեյրոյում կայացած Կայուն Զարգացման համաշխարհային գագաթաժողովին: Ազգային գնահատման զեկույցում արտացոլվել են ազգային հրատապ և կենսական նշանակություն ունեցող հիմնական խնդիրները:

### *Հանձնարարական*

3.6 Ընդլայնել ՄԻԱՎ/ՁԻԱՀ -ի տարածման կանխարգելմանն ուղղված ծրագիրը, մասնավորապես՝ հեռավոր շրջաններում (Ղրղզստան), շարունակել խթանել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ հանրության իրազեկվածության բարձրացմանն ուղղված ջանքերը, մասնավորապես՝ երիտասարդների շրջանում (Իրանի Իսլամական Հանրապետություն):

A/HRC/15/9 para(s) 93.13

### *Իրականացման ընթացքը*

Հայաստանի Հանրապետությունը 2002 թվականից ի վեր իրականացնում է ՄԻԱՎ/ՁԻԱՀ–ի հակազդմանն ուղղված ազգային ծրագրեր, որոնք շարունակական բնույթ ունեն, և որոնց շրջանակներում համալիր միջոցառումներ են իրականացվում ուղղված ՄԻԱՎ/ՁԻԱՀ–ի կանխարգելմանը (այդ թվում դեռահասների և երիտասարդների շրջանում), բուժմանը, խնամքին և աջակցությանը: Իրականացված ծրագրերի արդյունքում.

- 2007թ. ի վեր, ՄԻԱՎ վարակ ունեցող մայրերից ծնված երեխաների շրջանում, ովքեր ստացել են մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելում, ՄԻԱՎ վարակի որևէ դեպք չի արձանագրվել:
- Հակառետրովիրուսային (ՀՌՎ) բուժումն սկսել է տրամադրվել 2005 թվականից: Ներկայումս ՀՌՎ բուժումը հասանելի է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով բոլոր հիվանդներին, որոնք ունեն բուժման ցուցում և տվել են իրենց համաձայնությունը:
- 2001թ. ի վեր դոնորական արյան միջոցով հանրապետությունում ՄԻԱՎ-ով վարակման որևէ դեպք չի արձանագրվել:
- Ընդհանուր առմամբ վերջին տարիներին բարելավվել են ՄԻԱՎ վարակի ախտորոշումն ու հայտնաբերումը, բարձրացել է համաճարակաբանական հսկման համակարգի արդյունավետությունը:
- 2009թ. դեկտեմբերից ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով հիվանդ թմրամիջոցների ներարկային օգտագործողներին (ԹՆՕ) տրամադրվում է փոխարինող մեթադոնային բուժում:
- 2007-2011թթ. ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման ազգային երկրորդ ծրագրի շրջանակներում իրականացվել են բազմաթիվ կանխարգելիչ, վնասի նվազեցման ծրագրեր ՄԻԱՎ-ի նկատմամբ բնակչության խոցելի խմբերի, այդ թվում քրեակատարողական հիմնարկներում գտնվողների և երիտասարդության շրջանում:

Ներկայում քննարկման փուլում է ՄԻԱՎ/ՁԻԱՀ–ի հակազդմանն ուղղված 2012-2016 թթ. ազգային ծրագիրը, որով

նախատեսված միջոցառումների մի մեծ համախումբ ուղղված է լինելու ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հարցերով քարոզարշավների կազմակերպմանը, տպագիր մամուլում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հարցերի լուսաբանմանը, ՁԼՄ-ների ներկայացուցիչների համար ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հիմնահարցերի լուսաբանման առանձնահատկություններին նվիրված սեմինար-վարժանքների անցկացմանը, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հարցերին նվիրված հեռուստա- և ռադիոծրագրերի, սոցիալական գովազդային հոլովակների մշակմանը և հեռարձակմանը և այլն: Ծրագրով նախատեսվում է նաև շարունակել և ընդլայնել նախորդ տարիներին իրականացված աշխատանքների իրականացումը:

Հանրակրթական դպրոցի 8-11-րդ դասարաններում ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից երաշխավորված ծրագրի և ուսումնական նյութերի հիման վրա ներդրվել և դասավանդվում է «Առողջ ապրելակերպ» դասընթացը, որին յուրաքանչյուր դասարանում տարեկան տրամադրվում է 14 դասաժամ: Դասընթացի ծրագրում ընդգրկված են «Սեռական հասունացում», «Վերարտադրողական առողջություն», «ՄԻԱՎ, ՁԻԱՀ-ի կանխարգելում», «Սեռային դերեր» թեմաները, ինչպես նաև երիտասարդության շրջանում թմրադեղերի ապօրինի շրջանառության և թմրամոլության դեմ պայքարին վերաբերող տեղեկատվություն: «Առողջ ապրելակերպ» դասընթացի համար մշակվել է ուսուցչի ձեռնարկը, ինչպես նաև մշակվել է 8-9-րդ դասարանների համար «Առողջ ապրելակերպ» դասընթացի ուսուցիչների վերապատրաստման նյութերի փաթեթ (մոդուլ, բաշխման նյութեր): Համապատասխան վերապատրաստում են անցնում առարկան դասավանդող ուսուցիչները:

12-րդդասարանի«Հասարակագիտություն» առարկայի «փիլիսոփայություն» բաղադրիչի «Համաշխարհայնացումը (Գլոբալացումը) և Հայաստանը. Դրական տեղաշարժեր և բացասական միտումներ» թեմաներում ընդգրկված են թմրադեղերի ապօրինի շրջանառության և թմրամոլության դեմ պայքարին, ՄԻԱՎ/ ՁԻԱՀ-ին վերաբերող տեղեկատվություն:

### *Հանձնարարական*

3.7 Շարունակել աշխատանք տանել երեխայի իրավունքների պաշտպանության ուղղությամբ (Ղրղզստան):

A/HRC/15/9 para(s) 93.14

### *Իրականացման ընթացքը*

2003 թվականի դեկտեմբերի 18-ին ՀՀ կառավարության N1745-Ն որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2004-2015 թթ. ազգային ծրագիրը: Երեխայի իրավունքի մասին ՄԱԿ-ի Կոնվենցիայի պահանջներին համապատասխան Հայաստանի Հանրապետությունը 2010 թվականին ներկայացրել է Հայաստանի Հանրապետությունում երեխայի պաշտպանության 3-րդ և 4-րդ պարբերական զեկույցները: 2010 թվականի հունիսին ՀՀ ԱԳՆ և ՄԱԿ –ի մանկական հիմնադրամի միջև ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության Կառավարության և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի միջև 2010-2015թթ. երկրում իրականացվող ծրագրերի գործողությունների ծրագիրը», որը նախանշում է համագործակցության հիմնական ուղղությունները հաջորդ տարիների համար՝ ուղղված, մասնավորապես, երեխայի իրավունքների պաշտպանության, առողջության, բավարար խնամքի, կրթության, արդարադատության և այլ հարցերին: Ներկայումս աշխատանքներ

են տարվում Ազգային ծրագրի նոր նախագիծ մշակելու ուղղությամբ: ՀՀ երեխայի իրավունքների պաշտպանության 2012-2016թթ. Ազգային ծրագրի նախագիծը կներառի առավել արդիական խնդիրները և միջոցառումները:

### *Հանձնարարական*

3.8 Շարունակել ջանքեր գործադրել՝ ուղղված խոցելի խմբերի, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող երեխաների, փախստական երեխաների և գյուղական շրջաններում բնակվող երեխաների կողմից իրավունքների իրացման հարցում եղած անհամապատասխանությունները հաղթահարելուն (Իրանի Իսլամական Հանրապետություն):

A/HRC/15/9 para(s) 93.15

### *Իրականացման ընթացքը*

- Համաձայն «Կրթության մասին» ՀՀ օրենքի՝ «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը ծնողների ընտրությամբ կարող է իրականացվել ինչպես ընդհանուր հանրակրթական, այնպես էլ հատուկ հաստատություններում՝ հատուկ ծրագրերով»: Օրենքի այս դրույթի համաձայն աշխատանքներ են տարվել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցումը հանրակրթական դպրոցում կազմակերպելու, նրանց հասարակության մեջ լիարժեք ինտեգրելու ուղղությամբ: Ներկայումս ներառական կրթություն իրականացվում է 81 հանրակրթական դպրոցներում, որոնցում սովորում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող շուրջ 2136 երեխա: Նշված դպրոցները, ՀՀ կառավարության կողմից հաստատված կարգի համաձայն, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման նպատակով պետական բյուջեից ստանում են լրացուցիչ չափաբաժին: Դպրոցներում գործում են ծնողական ու ռեսուրս սենյակները, որտեղ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար կազմակերպվում են անհատական պարապունքներ՝ համաձայն անհատական ուսումնական պլանի: Երեխաների կրթական կարիքների գնահատման նպատակով ստեղծվել է Երևանի բժշկահոգեբանամանկավարժական ԲՀՄ գնահատման կենտրոնը: 2011 թվականի ընթացքում մշակվել, տպագրվել և ձեռք են բերվել 11 անուն ուսումնամեթոդական ձեռնարկ և այլ ուսումնական նյութեր՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման համար: Ուսումնաօժանդակ գրականությունը տրամադրվել է հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններին և ներառական կրթություն իրականացնող դպրոցներին:

Հանրապետությունում բոլոր խոցելի խմբերի, այդ թվում փախստական և գյուղաբնակ երեխաների կողմից իրավունքների հավասար իրացման խնդիրները լուծվում են երեխաների իրավունքների պաշտպանության, կրթական, տարածքային զարգացման և այլ ոլորտներում իրականացվող շարունակական ծրագրերի միջոցով:

### *Հանձնարարական*

3.9 Միջոցներ ձեռնարկել կոռուպցիայի դեմ պայքարելու համար (Ադրբեջան):

A/HRC/15/9 para(s) 93.31

### Իրականացման ընթացքը

2009 թվականի հոկտեմբերի 8-ի թիվ 1272-Ն որոշմամբ ՀՀ կառավարությունը հաստատել է ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2009-2012 միջոցառումների ծրագիրը: Նույն որոշմամբ սահմանվել են դրա մոնիտորինգի իրականացման մոտեցումներն ու պահանջները: Այժմ ավարտական փուլում է գտնվում նոր ծրագրի մշակումը:

26.05.2011թ. ՀՀ ԱԺ կողմից ընդունվել է «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը, որով սահմանվում են Հայաստանի Հանրապետությունում հանրային ծառայության սկզբունքները, կազմակերպման կարգը, էթիկայի կանոնները, ինչպես նաև կարգավորվում են բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի, եկամուտների ու փոխկապակցված անձանց մասին հայտարարագրման հետ կապված հարաբերությունները:

Բացի այդ, Քրեական օրենսգիրքը լրամշակվել է, ավելացվել են նոր կոռուպցիոն հանցակազմեր, ընդլայնվել են գործող հանցակազմերի շրջանակները ըստ GRECO առաջարկների: Գլխավոր դատախազության կողմից ստեղծվել է հակակոռուպցիոն ուղեցույց, էթիկայի հանձնաժողով, օրենսդրական բարեփոխումների փաթեթ:

ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով հաստատվել է «Կրթական համակարգում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2011-2012 թվականների համալիր գործողությունների ծրագիրը», համաձայն որի բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից մշակվել են իրենց հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրերը: Հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրերի իրականացման հաշվետվողականությունն ու թափանցիկությունը ապահովելու նպատակով ՀՀ բուհերում կառավարման խորհուրդների կողմից կանոնավորապես քննարկվելու են ծրագրի ընթացքը և կոռուպցիոն խնդիրներին վերաբերող հարցերը: Հանրակրթության ոլորտում հակակոռուպցիոն թեմաները ներառվել են հիմնական դպրոցի «Հասարակագիտություն» առարկայի դասավանդման մեջ: Բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների բակալավրի կրթական ծրագրի մասնագիտությունների՝ «Տնտեսագիտության հիմունքներ», «Իրավագիտության հիմունքներ» և «Քաղաքագիտության հիմունքներ» առարկաների ծրագրերում (որոնցից մեկի ուսուցումը պարտադիր է ուսանողի համար), ներառվել են կոռուպցիային և դրա կանխարգելմանը վերաբերող թեմաներ: Միաժամանակ մշակվել է «Հակակոռուպցիոն դասընթացների և միջոցառումների կազմակերպման ուղեցույց» գրքույկը, նախատեսված նախնական և միջին մասնագիտական, ինչպես նաև բարձրագույն ուսումնական հաստատությունների սովորողների համար:

### *Հանձնարարական*

3.10 Հետագա քայլեր իրականացնել կալանքը կրած դատապարտյալների վերականգնումը և վերաինտեգրումը ապահովելու համար՝ կազմակերպելով մասնագիտական վերապատրաստման դասընթացներ (Բոսնիա և Հերցեգովինա):

A/HRC/15/9 para(s) 93.34

### *Իրականացման ընթացքը*

- 2012-2016թթ. դատաիրավական բարեփոխումների ծրագիրն անդրադառնում է նաև պրոբացիոն ծառայության ստեղծմանը, այն կնպաստի քրեական

արդարադատության համակարգի կողմից հանցագործություն կատարած անձի ուղղմանը և հասարակության մեջ նրանց վերաինտեգրմանն ուղղված գործողությունների արդյունավետության բարձրացմանը: Այս ծառայության և Հայաստանում պրոբացիայի ինստիտուտի զարգամցման ուղղությամբ ՀՀ-ն համագործակցում է ԵԱՀԿ-ի և այլ միջազգային կազմակերպությունների հետ:

### *Հանձնարարական*

3.11 Իրականացնել հասարակական կյանքում կանանց դիրքն ու մասնակցությունը բարելավելու քաղաքականություն և խթանել երեխաների իրավունքների պաշտպանության ծրագրերը (Ալժիր), դիտարկել հասարակությունում կանանց մասնակցությունը բարելավելու և խրախուսելու ուղղությամբ հետագա քայլերի իրականացման հնարավորությունը և ապահովել, որպեսզի նման միջոցառումները ընդգրկեն ժամանակացույցերով հենանիշներ կամ ավելի բարձր քվոտաներ, իսկ դրանց իրագործումն արժանանա մանրազնին մշտադիտարկման (Նորվեգիա):

A/HRC/15/9 para(s) 93.38

### *Իրականացման ընթացքը*

Տես A/HRC/15/9 para(s) 93.11 և 93.14 հանձնարարականների պատասխանը

### *Հանձնարարական*

3.12 Շարունակել սատարել մանկատներին (Ղրղզստան):

A/HRC/15/9 para(s) 93.45

### *Իրականացման ընթացքը*

Ստեղծվել են խնամքի պաշտպանության կենտրոններ, որոնք նպաստում են մանկատների բեռնաթափմանը: 2008 թվականից պետական ֆինանսավորման շրջանակներում երկրում գործում է նաև խնամատար ընտանիքի ինստիտուտը:

Գիշերօթիկ դպրոցները դարձան գիշերօթիկ հաստատություններ և կրթության նախարարության իրավասությունից անցան Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության իրավասությանը:

2010 թվականին շահագործման են հանձնվել երկու մանկատան նոր մասնաշենքերը, որոնց շինարարական աշխատանքները իրականացվել են պետական բյուջեի միջոցներով: Մասնաշենքերը հագեցած են ժամանակակից վերականգնողական սարքավորուներով: Երեխաների խնամքի և պաշտպանության հաստատություններում ամեն տարի ավելանում են երեխայի սննդի և խնամքի համար տրամադրվող գումարները: Միաժամանակ շարունակվում է մանկատների բեռնաթափման ծրագիրը՝ երեխաներին ուղորդելով խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն:

Հանրապետությունում գործող նմանատիպ 8 հաստատությունները աջակցում են կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքներին, ապահովելով բոլոր անհրաժեշտ պայմանները երեխաների սննդի, կրթության, դաստիարակության, ընդհանուր առմամբ, լիարժեք զարգացման համար, միաժամանակ չկտրելով նրանց ընտանեկան միջավայրից:

### *Հանձնարարական*

3.13 Շարունակել խթանել մարդու իրավունքների կրթությունը դպրոցական ծրագրերում՝ բոլոր մակարդակներում (Ջիբութի):

A/HRC/15/9 para(s) 93.48

### *Իրականացման ընթացքը*

2001 թվականից տարրական և միջին դպրոցներում ներմուծվել են կյանքի հմտություններ և մարդու իրավունքներ առարկաները:

Հայաստանի կրթության ոլորտի զարգացման քաղաքականությունը ներկա փուլում սերտորեն կապված է միջազգային կրթական հանրության զարգացման միտումների հետ: Ոլորտում ընթացող բարեփոխումները միտված են կրթության ազատականացմանը և հումանիտարիզացմանը, հասարակության մոտ հանդուրժողականության, ազատության արդարության, ուրիշների նկատմամբ հարգանքի արժեքների կայացմանը: Այդ նպատակով կրթության բոլոր մակարդակներում վերանայվել են կրթական չափորոշիչներն ու ծրագրերը, ներդրվել են նոր առարկաներ ու մասնագիտություններ: Մասնավորապես, հանրակրթության ոլորտում մուտք են գործել «Կյանքի հմտություններ», «Էկոլոգիական կրթություն», «Հասարակագիտություն», «Առողջ ապրելակերպ», «Ես և շրջակա աշխարհը» առարկաները: «Հասարակագիտություն» առարկայի ծրագրում ընդգրկվել են մարդու հիմնարար իրավունքներին, գենդերային հավասարությանը, ազգային փոքրամասնությունների իրավունքներին, հանդուրժողականությանը և քաղաքացիական հասարակությանը վերաբերող թեմատիկ միավորներ: Մշակվել է «Հանդուրժողականություն» ուսուցչի ձեռնարկը:

### *Հանձնարարական*

3.14 Ապահովել մարդու իրավունքների ընդգրկումը բոլոր դպրոցական ծրագրերում և մարդու իրավունքների ուղղությամբ վերապատրաստումներ անցկացնել իրավապահ մարմինների աշխատակիցների համար (Լիբիայի Արաբական Ջամահիրիա):

A/HRC/15/9 para(s) 93.49

### *Իրականացման ընթացքը*

Դասընթացներ են կազմկերպվում նաև ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտում՝ քրեակատարողական ծառայողների և հարկադիր կատարողների համար, ՀՀ դատական դպրոցում դատավորների և դատական ծառայողների համար, ՀՀ ոստիկանության ակադեմիայում ոստիկանության աշխատակիցների համար: Տես նաև A/HRC/15/9 para(s) 93.48 հանձնարարականի պատասխանը

### *Հանձնարարական*

3.15 Ակտիվացնել կանանց և աջիկներին մարմնավաճառության դրդող գործոններին հակազդելու կոչված միջոցառումները (Լեհաստան):

A/HRC/15/9 para(s) 94.13

### *Իրականացման ընթացքը*

Մարմնավաճառությունը ՀՀ օրենքով արգելված արարք է, որի համար նախատեսված է վարչական պատասխանատվություն՝ ՀՀ ՎԻՎ օրենսգրքի 179 հոդվածի հատկանիշներով, այն է «պոռնկությամբ զբաղվելը»: 07.02.2012 թվականին ՀՀ ՎԻՎ օրենսգրքում կատարված փոփոխություններով նշված օր-ի 179-րդ հոդվածով իրականացվող վարույթն անցել է ոստիկանության իրավասության դաշտ: Ավելացվել են նաև նշված հոդվածով նախատեսված արարքի համար պատասխանատվություն սահմանող տուգանքի չափերը: Եթե նախկինում նախատեսված տուգանքի չափը սահմանված էր հոդվածի 1-ին մասով «նվազագույն աշխատավարձի հիսուն տոկոսից մինչև դրա լրիվ չափը», իսկ հոդվածի 2-րդ մասով՝ «նվազագույն աշխատավարձի լրիվ չափից մինչև կրկնապատիկը», ապա ներկայումս նույն հոդվածի 1-ին

մասը նախատեսում է տուգանք «նվազագույն աշխատավարձի քսանապատիկի», իսկ 2-րդ մասը՝ «նվազագույն աշխատավարձի քառասնապատիկի» չափով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մարդկանց թրաֆիքինգի առավել խոցելի խավ են համարվում մարմնավաճառները, ապա վերջիններիս տեսադաշտում պահելու համար ոստիկանությունն իրականացնում է պրոֆիլակտիկ հաշվառում 2006 թվականի դեկտեմբերի 30-ին ՀՀ ոստիկանության պետի կողմից հաստատված «ՀՀ-ում մարմնավաճառության և թրաֆիքինգի նախականխման ուղղությամբ տարվող աշխատանքների» պլանի համաձայն ստեղծվել է միասնական տեղեկատվական շտեմարան մարմնավաճառության և թրաֆիքինգի դեմ տարվող աշխատանքները համակարգելու նպատակով: 2012թ. առաջին եռամսյակի ընթացքում ոստիկանության կողմից համայնքներում հասարակություն-ոստիկանություն կապը բարելավելու նպատակով կազմակերպված շուրջ 850 հանդիպումների ընթացքում բնակչությանը իրազեկվել է նաև մարդկանց շահագործման վտանգի և այդ երևույթի հետևանքների մասին:

## Մաս IV. Մարդու իրավունքների ինֆրաստրուկտուրայի ամրապնդում

### Հանձնարարական

4.1 Արագացնել Փարիզյան սկզբունքների համաձայն մարդու իրավունքների ազգային ինստիտուտի ստեղծմանն ուղղված գործընթացը: (Լիբիայի Արաբական Ջամահիրիա):

A/HRC/15/9 para(s) 93.8

### *Իրականացման ընթացքը*

2003 թվականին ընդունվել է Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքը, որը փաստացի հենց հաստատում է մարդու իրավունքների ազգային ինստիտուտի ստեղծումը:

Օրենքի 2-րդ հոդվածի համաձայն «Մարդու իրավունքների Պաշտպանը ինքնուրույն և անկախ պաշտոնատար անձ է, որը ՀՀ Սահմանադրության և օրենքների, ինչպես նաև միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքների ու նորմերի համաձայն, իրականացնում է պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց կողմից խախտված մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությունը»: ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանին 2006 թվականի հոկտեմբերին շնորհվել է “A” կարգավիճակը, ինչը նշանակում է, որ այն համապատասխանում է Փարիզյան սկզբունքներին:

### Հանձնարարական

4.2 Ներկայացնել պարբերական զեկույցները համապատասխան պայմանագրային մարմիններին և պատշաճ կարգով պատասխանել բողոքներ պարունակող նամակներին և հրատապ դիմումներին, ինչպես նաև թեմատիկ խնդիրներին նվիրված հարցաշարերին (Ուկրաինա):

A/HRC/15/9 94.6

### *Իրականացման ընթացքը*

Հայաստանը ներկայացրել է ՄԱԿ-ի պայմանագրային մարմիններին իր բոլոր պարբերական զեկույցները, ներկայումս ընթացքի մեջ է դրանց կողմից զեկույցների դիտարկման գործընթացը: ՀՀ

ժամանակին և հանգամանալից պատասխաններ է հղում նաև զեկույցների ընթացքը վերահսկող բոլոր զեկուցողներին:

### *Հանձնարարական*

4.3 Ստեղծել փողոցում հայտնված երեխաների առջև ծառացած խնդիրների լուծման արդյունավետ մեխանիզմներ (Ղազախստան):

A/HRC/15/9 93.46

### *Իրականացման ընթացքը*

ՀՀ ոստիկանության անչափահասների գործերով ծառայության աշխատակիցները իրենց ամենօրյա ծառայողական պարտականություններն իրականացնելիս առանձնակի ուշադրություն են դարձնում ինչպես անչափահասների կողմից կատարվող հանցագործությունների նախականխման, այնպես էլ թափառաշրջիկ և մուրացիկ, առանց ծնողական խնամքի մնացած և այլ ռիսկային խմբերի անչափահասների հիմնախնդիրներին այդ թվում, հանրակրթական դպրոցներում և ուսումնական հաստատություններում պարբերաբար անցկացվող հանդիպումների, զրույց-զեկուցումների միջոցով: Հայտնաբերված թափառաշրջիկ և մուրացիկ, առանց ծնողական խնամքի մնացած և այլ ռիսկային խմբերում հայտնված անչափահասները անհրաժեշտության դեպքում տեղավորվում են Հայ օգնության ֆոնդի երեխաների աջակցության կենտրոն, ուր գործող բազմամասնագիտական խորհրդի կողմից (հոգեբան, մանկավարժ, սոցիալական աշխատող), անչափահասներին ցուցաբերվում է ինչպես բժշկական, այնպես էլ բարոյահոգեբանական օգնություն: Վերջիններս ապահովվում են ժամանակավոր կացարաններով, սնունդով և հագուստով, անհրաժեշտության դեպքում նաև անհրաժեշտ փաստաթղթերով: Նրանցից շատերը անչափահասների գործերով աշխատակիցների կողմից, շահագրգիռ մարմինների աջակցությամբ տեղավորվում են համապատասխան ուսումնական հաստատություններ: Հաճախ համապատասխան աջակցություն է ցուցաբերվում նաև անչափահասների ծնողներին, նրանց ընտանիքներին հնարավորինս ապահովելով աշխատանքով և ժամանակավոր կացարաններով: Հայտնաբերված անչափահասների մի մասը հանձնվում են իրենց ծնողներին, սահմանվում է հսկողություն և ցուցաբերվում աջակցություն երեխաների խնամքն ու դաստիարակությունը կազմակերպելու համար:

Ներկայումս հանրապետությունում իրականացվում է համայնքային մակարդակում այլընտրանքային խնամքի համակարգի ներդրման գործընթաց, որն իր մեջ ներառում է նաև 2004-2015թթ. երեխայի իրավունքների պաշտպանության ազգային գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումները՝ համայնքային կենտրոնների ստեղծումը: Հանրապետության տարբեր համայնքներում գործում է պետական և ոչ պետական ենթակայության 18 ցերեկային կենտրոններ, որոնց նպատակներից է նաև կանխարգելիչ աշխատանքներ իրականացնել հանցագործություն և այլ իրավախախտումներ կատարած անչափահասների շրջանում: Վերոհիշյալ կենտրոնները աննախադեպ են այն առումով, որ այստեղ ոստիկանը, սոցիալական աշխատողը, հոգեբանը և կենտրոնի աշխատանքներում ընդգրված կամավորները համատեղ լայնածավալ աշխատանքներ են իրականացնում իրավախախտ անչափահասների հետ: Կենտրոնների հիմնական խնդիրն է իրավախախտ անչափահասներին տեղափոխել այնպիսի

միջավայր, որտեղ շեշտը դրված է բարոյականության, մարդկային գնահատման և ինքնագիտակցության բարձրացման վրա:

### *Հանձնարարական*

4.4 Հրավիրել դատավորների և փաստաբանների անկախության հարցերով հատուկ զեկուցողին (Հունգարիա), (Գերմանիա), դիտարկել դատավորների և փաստաբանների անկախության հարցերով հատուկ զեկուցողին հրավիրելու հնարավորությունը (Ուրուգվայ):

A/HRC/15/9 94.7

### *Իրականացման ընթացքը*

2006 թվականի ապրիլին Հայաստանի Հանրապետությունը բաց հրավեր է ուղղել ՄԱԿ-ի բոլոր հատուկ ընթացակարգերին, այդ թվում նաև դատավորների և փաստաբանների անկախության հարցերով հատուկ զեկուցողին:

### *Հանձնարարական*

4.5 Հավելյալ բարեփոխումներ առաջ մղել, որոնք գործնականում կերաշխավորեն իշխանությունների բաժանումը և մասնավորապես՝ դատական իշխանության անկախությունը, այդ թվում դատավորների վերապատրաստման միջոցով (Հունաստան), գործադրել լրացուցիչ ջանքեր ամրապնդելու դատական համակարգը դրանում բարեփոխումների իրականացման և դատավորների վերապատրաստման միջոցով (Բոսնիա և Հերցեգովինա):

A/HRC/15/9 94.17

### *Իրականացման ընթացքը*

Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թթ. ռազմավարական ծրագրի համաձայն նախատեսված են քրեական արդարադատության և քրեական պատիժների համակարգի արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներ, անկախ և հանրության առջև հաշվետու դատական իշխանության ապահովմանն ուղղված միջոցառումներ, ինչպես նաև փաստաբանական համակարգի բարեփոխումներին ուղղված միջոցառումներ: Նախատեսված են նաև լայնածավալ օրենսդրական փոփոխություններ, հստակ ժամանակացույցով և պատասխանատու մարմինների ցանկով, ընդ որում, այդ փոփոխությունների մի մասն արդեն իսկ մեկնարկել է: Դատավորների վերապատրաստումը մշտապես իրականացվում է դատական դպրոցի կողմից (դատական դպրոցը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող պետական ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ ունեցող իրավաբանական անձ է) մշակված վերապատրաստման ծրագրին համապատասխան: Դատական դպրոցը պարբերաբար կազմակերպում և անցկացնում է վերապատրաստման դասընթացներ, որոնք պարտադիր են դատավորների համար: Վերապատրաստման ծրագրերի ընդհանուր ժամաքանակը յուրաքանչյուր տարի 80 ակադեմիական ժամից ոչ պակաս և 120 ակադեմիական ժամից ոչ ավելի է: Վերապատրաստման ծրագրերը կառուցվում են այնպես, որ դրանց արդյունքում երաշխավորվի և ամրապնդվի դատավորների անկողմնակալությունն ու արհեստավարժությունը: Վերապատրաստումն անց է կացվում դասախոսությունների, սեմինարների, ուսումնական դատախաղերի, բանավեճերի, ընդունված դատական ակտերի քննարկման, ինչպես նաև ինքնակրթությունը խրախուսող դիդակտիկ նյութերի, տեսաժապավենների, ձայնագրված դասախոսությունների օգտագործմամբ և կրթական

արդի այլ եղանակներով: Վերագրյալից բացի, հարկ ենք համարում ընդգծել, որ ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի կողմից 2010 թվականի ապրիլի 23-ին ընդունված թիվ 01-Ն որոշմամբ սահմանվել են «Դատավորի վարքագծի կանոնները», որի 6-րդ կանոնի համաձայն՝ «Դատավորը պարտավոր է միջոցներ ձեռնարկել իր գիտելիքների հարստացման, հմտության և անձնական հատկանիշների շարունակական կատարելագործման ուղղությամբ՝ այդ նպատակներին հասնելու համար օգտագործելով դատավորների վերահսկողության ներքո գտնվող վերապատրաստման բոլոր հնարավորությունները»: Մեջբերված կանոնի հիման վրա՝ դատավորներն իրենց պաշտոնավարման ողջ ընթացքում շարունակական կերպով կատարելագործում են իրենց գիտելիքները, մասնակցում դատավորների ուսուցման նպատակով կազմակերպված միջոցառումներին, այդ թվում՝ դատական դպրոցի վերապատրաստման դասընթացներին:

### *Հանձնարարական*

4.6 Ապահովել, որպեսզի առաջնահերթություն տրվի Կամայական ձերբակալությունների հարցերով աշխատանքային խմբի այցելությանը, որի շուրջ սկզբունքային համաձայնություն է ձեռք բերվել, և որ այն տեղի ունենա մոտ ապագայում (Նորվեգիա):

A/HRC/15/9 94.8

### *Իրականացման ընթացքը*

Կամայական ձերբակալությունների հարցերով աշխատանքային խմբի անդամներն այցելել են Հայաստան 2010 թվականի սեպտեմբերի 6-15-ը ընկած ժամանակահատվածում:

### Հանձնարարական

4.7 Առավել հզորացնել Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կարողությունները և խթանել վերջինիս համագործակցությունը քաղաքացիական հասարակության հետ՝ Հայաստանում մարդու իրավունքներն ավելի լավ պաշտպանելու նպատակով (Եգիպտոս), ամրապնդել Մարդու իրավունքների պաշտպանի կառուցակարգի դերակատարումը՝ հնարավորություն տալով պաշտպանին ավելացնելու իր մշտադիտարկումն ու ընդլայնելու իր աշխատանքը դեպի շրջաններ (Ֆինլանդիա), Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կազմում ստեղծել բավարար լիազորություններով և ռեսուրսներով օժտված հատուկ բաժին կամ նշանակել բացառապես երեխաների հարցերով զբաղվող տեղակալ (Հունգարիա), Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին տրամադրել անհրաժեշտ մարդկային և ֆինանսական միջոցներ նրա վրա դրված ազգային կանխարգելման մեխանիզմի առաքելությունն իրականացնելու և կալանավորված անձանց վատ վերաբերմունքից զերծ պահելու երաշխիքներն ամրապնդելու համար, որպեսզի ոստիկանության բոլոր աշխատակիցները հզոր ուղերձ ստանան առ այն, որ վատ վերաբերմունքն ապօրինի է (Շվեյցարիա):

A/HRC/15/9 para(s) 94.4

### Իրականացման ընթացքը

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքում 2010թ. կատարված փոփոխությունների համաձայն, պաշտպանի աշխատակազմի աշխատավարձի ամսական ֆոնդը որոշվում է դատական

ծառայողների աշխատանքի վարձատրության բազային դրույքաչափի 3.6 -ապատիկի և պաշտպանի աշխատակազմում պետական ծառայողների ու տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց թվաքանակի արտադրյալով: Մարդու իրավունքների ոլորտում համատեղ աշխատանքներ իրականացնելու նպատակով Պաշտպանի գրասենյակի կողմից ՀԿ-ների հետ կնքվել են հուշագրեր: Վերջին տարիների ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանը բացել է 6 տարածքային գրասենյակ Հայաստանի ամենատարբեր մարզերում: Մասնավորապես, Մարդու իրավունքների պաշտպանն իր մարզային գրասենյակներն ունի Շիրակի, Գեղարքունիքի, Տավուշի, Լոռու, Վայոց Ձորի և Սյունիքի մարզերում:

Պաշտպանի աշխատակազմում գործում է Խոցելի խմբերի պաշտպանության և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության վարչություն, որը մասնագիտացած է նաև անչափահասների իրավունքների պաշտպանության խնդիրներում, մասնավորապես, կա երեխաների հարցերով իրավապաշտպան:

## Հանձնարարական

4.8 Շտապ ներկայացնել ժամկետանց զեկույցները պայմանագրային մարմիններին (Հունգարիա): Հնարավորինս կարճ ժամկետում ներկայացման ենթակա զեկույցը տրամադրել Մարդու իրավունքների կոմիտեին (Իսպանիա), ներկայացնել քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի շրջանակներում ներկայացվելիք ժամկետանց զեկույցը (Ավստրիա):

A/HRC/15/9 para(s) 93.16

## *Իրականացման ընթացքը*

Տես A/HRC/15/9 94.6 հանձնարարականի պատասխանը:

ՀՀ երկրորդ պարբերական զեկույցը ներկայացվել է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեին 2010 թվականին և դիտարկվել վերջինիս կողմից 2012 թվականի հուլիսի 16-17-ին Կոմիտեի 105-րդ նստաշրջանի ժամանակ, ինչի արդյունքում ՀՀ վերաբերյալ ընդունվել են համապատասխան հանձնարարականներ:

## Հանձնարարական

4.9 Ստեղծել միջգերատեսչական մեխանիզմ, որը պատշաճ ուշադրության կդարձնի միջազգային կառույցներից ստացված առաջարկություններին, այդ թվում՝ համընդհանուր պարբերական դիտարկումից բխող առաջարկություններին՝ քաղաքացիական հասարակության մասնակցությամբ (Մեքսիկա), անկախ հասարակական կազմակերպությունների հետ միասին ստեղծել արդյունավետ և ընդգրկուն գործընթաց՝ հետամուտ լինելու համընդհանուր պարբերական դիտարկման առաջարկությունների կատարմանը (Նորվեգիա):

A/HRC/15/9 para(s) 94.5

## *Իրականացման ընթացքը*

2011 թվականի հունիսի 28-ին ՀՀ վարչապետի N 598-Ա որոշման համաձայն ստեղծվեց միջգերատեսչական հանձնաժողով, որի նպատակն է՝ Մարդու իրավունքների ոլորտում, այդ թվում Համընդանուր պարբերական դիտարկման մեխանիզմի շրջանակներում, ՀՀ ստանձնած պարտավորությունների իրականացման ապահովումը:

## ՄԱՍ V. Հավասարություն և խտրականության բացառում

### *Հանձնարարական*

5.1 Շարունակել անցկացնել ազգային փոքրամասնությունների իրավունքների վերաբերյալ իրազեկման արշավներ հայ հասարակությունում՝ հանրային կյանքի բոլոր ոլորտներում հանդուրժողականությունը և անխտրականությունն էլ ավելի ամրապնդելու նպատակով (Կիպրոս):

A/HRC/15/9 para(s) 93.50

### *Իրականացման ընթացքը*

Ազգային փոքրամասնությունների իրավունքների իրազեկման խնդիրները մշտապես գտնվում են ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում: Այս հարցին վերաբերող վերջին զարգացումներից է մասնավորապես հանրակրթության ոլորտում իրականացվող «Հանդուժողականություն» ծրագիրը: Ծրագիրը սովորողներին ուսուցանում է հանդուժողականություն, համագործակցություն, հարգանք միմյանց հանդեպ: Միաժամանակ «Համաշխարհային պատմություն», «Հայոց պատմություն» և «Հայոց եկեղեցու պատմություն» դասընթացներում ներառվել են տեղեկություններ այլ ժողովուրդների ու ազգությունների պատմության, մշակույթների և կրոնների վերաբերյալ:

### *Հանձնարարական*

5.2 Ավելացնել ջանքերը կանանց նկատմամբ խտրականությանը վերջ դնելու համար, և ապահովել առողջապահական ծառայությունների պատշաճ հասանելիություն բոլոր կանանց համար (Ավստրիա):

A/HRC/15/9 para(s) 93.17

### *Իրականացման ընթացքը*

Հայաստանի Հանրապետությունում ոչ օրենսդրորեն և ոչ էլ գործնականում կանանց սեռային պատկանելության հիմքով առողջապահական ծառայությունների հասանելիության որևէ սահմանափակում չկա: Կանայք, տղամարդկանց հետ հավասարապես օգտվում են բժշկական ծառայություններից:

Տղամարդկանց և կանանց հավասարության սկզբունքը ամրագրված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 14.1 հոդվածով, համաձայն որի, Հայաստանի Հանրապետությունում արգելվում է խտրականությունը սեռային պատկանելության հիմքով: «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 4-ով երաշխավորվում է անկախ սեռից յուրաքանչյուրի բժշկական օգնության և սպասարկում ստանալու իրավունքը: Հայաստանի Հանրապետությունը միացել է «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիային 1993 թվականին, իսկ 2006 թվականին վավերացրել «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը: Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 20-ի N 19 արձանագրային որոշմամբ հաստատվել է «Գենդերային քաղաքականության 2011-2015 թվականների ռազմավարական ծրագիրը, որի «Առողջապահություն» բաժնով նախատեսված են նաև կանանց տրամադրվող մի շարք ծառայությունների մատչելիության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում 2011-2015 թվականների ընթացքում: Մասնավորապես, ծրագրով նախատեսվում է

իրականացնել կաթնագեղձի և սեռական օրգանների քաղցկեղի վաղ հայտնաբերման և կանխարգելման ծրագրեր, մայրական և նորածնային արագ արձագանքման ծառայությունների թվի ավելացում և մի շարք այլ միջոցառումների իրականացում: Բացի այդ, 2003 թվականից իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի օգոստոսի 8-ի N 1000-Ն որոշմամբ հաստատված «Մոր և մանկան առողջության պահպանման 2003-2015 թվականների ռազմավարությունը», ՀՀ կառավարության կողմից հաստատված մի շարք առողջապահական ծրագրեր (վերարտադրողական առողջության, տուբերկուլյոզի դեմ պայքարի, պալիատիվ բժշկական օգնության, չարորակ նորագոյացությունների դեմ պայքարի և այլն), որոնք ուղղված են նաև կանանց (հավասարապես ինչպես նաև տղամարդկանց) համար առողջապահական ծառայությունների հասանելիության, արդյունավետության և որակի բարձրացմանը: Հայաստանի Հանրապետությունում առկա է առողջապահական կազմակերպությունների լայն ցանց: Հայաստանը այն երկրներից է, որտեղ ամենափոքր գյուղական բնակավայրերում անգամ հիմնականում առկա են բժշկական օգնություն իրականացնող բժշկական կազմակերպություններ: Հայաստանում կանանց բժշկական օգնություն և սպասարկում իրականացնում են 614 բուժակ-մանկաբարձական կետեր, 255 ամբուլատոր պոլիկլինիկական բժշկական կազմակերպություններ, 85 պոլիկլինիկա (որից 32-ը Երևանում, 53-ը մարզերում), 101 կանանց կոնսուլտացիա և կաբինետ, 50 բժշկական կենտրոն, որոնց կազմում նաև մանկաբարձագինեկոլոգիական ստացիոնար բաժանմունքներ, 11 ինքնուրույն ծննդատներ, 4 Երևանում և 7 մարզերում:

Առկա տվյալների համաձայն, կանանց դիմելիությունը թե ամբուլատոր-պոլիկլինիկական, և թե ստացիոնար բժշկական հաստատություններ ավելի բարձր է տղամարդկանց համեմատությամբ:

### *Հանձնարարական*

5.3 Կանանց իրավունքներն առավել առաջ մղելու նպատակով դպրոցներում ձեռնարկել իրազեկության բարձրացման արշավներ (Ռումինիա):

A/HRC/15/9 para(s) 93.22

### *Իրականացման ընթացքը*

- Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության 2011-2015 թվականների ռազմավարական ծրագրի շրջանակներում ձեռնարկվում են քայլեր գենդերային գիտելիքների հիմունքների դասավանդման համար ուսումնամեթոդական հիմք ստեղծելու, ուսումնական գրականության գենդերային փորձաքննության անցկացման չափանիշներ ներդնելու ուղղությամբ:

  Գենդերային հիմնահարցերի վերաբերյալ թեմատիկ նյութերը ներառվել են տարրական դասարաններում դասավանդող ուսուցիչների վերապատրաստման մոդուլում: Նախատեսվում է «Գենդերային գիտելիքների հիմունքներ» թեմաները ներառել նաև հանրակրթական դպրոցների տնօրենների և փոխտնօրենների, ինչպես նաև «Հասարակագիտություն» առարկայի ուսուցիչների վերապատրաստման մոդուլում:

  «Ես և շրջակա աշխարհը» 4-րդ դասարանի դասագրքում ներառվել են գենդերային հիմնահարցերին նվիրված թեմաներ:

  Լրամշակվել է

«Հանդուրժողականության ուսուցում» ուսուցչի ձեռնարկը, որում տեղ են գտել նաև թեմաներ՝ գենդերային հիմնահարցերի վերաբերյալ: «Հասարակագիտություն» առարկայի ծրագրում ընդգրկվել են մարդու հիմնարար իրավունքներին, գենդերային հավասարությանը, հանդուրժողականությանը և քաղաքացիական հասարակությանը վերաբերող թեմատիկ միավորներ:

Առանձնահատուկ կարևորվում է նաև գենդերային հիմնահարցերի ուսուցման տարրերը բարձրագույն կրթության համակարգում: Հանրապետության մի շարք բուհերում կազմակերպվում են հատուկ դասընթացներ՝ գենդերային քաղաքականության, կանանց և տղամարդկանց իրավահավասարության վերաբերյալ:

### *Հանձնարարական*

5.4 Միջոցառումներ ձեռնարկել՝ ապահովելու կանանց և տղամարդկանց միջև իրավունքների և հնարավորությունների հավասարությունը, ինչպես նաև կանանց նկատմամբ խտրականության վերացումը, այդ թվում՝ օրենսդրական բարեփոխումների միջոցով, առաջնային ուշադրություն դարձնել կանանց հանդեպ բռնության բոլոր ձևերի և հատկապես ընտանեկան բռնության արդյունավետ վերացմանը՝ ի թիվս այլ միջոցների ստեղծելով կանանց առաջխաղացման ազգային մեխանիզմ և անդրադառնալով կանանց հանդեպ բռնության խնդրին (Ուրուգվայ), միջոցներ ձեռնարկել կանանց հանդեպ բռնությունը վերացնելու ուղղությամբ (Ադրբեջան):

A/HRC/15/9 para(s) 94.9

### *Իրականացման ընթացքը*

Տես A/HRC/15/9 para(s) 95.2 և A/HRC/15/9 para(s) 93.11 հանձնարարականների պատասխանը:

### *Հանձնարարական*

5.5 Ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց աշխատելու իրավունքը և նրանց տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքները պաշտպանելու համար ստեղծել արդյունավետ մեխանիզմներ և ուժեղ օրենսդրական կանոնակարգեր (Ղազախստան):

A/HRC/15/9 para(s) 94.27

### *Իրականացման ընթացքը*

«Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի տեղավորման աջակցության նպատակով «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալությունն իրականացնում է մի շարք ծրագրեր՝ մասնավորապես՝ «Աշխատանք փնտրող չզբաղված հաշմանդամների մասնագիտական ուսուցումը, աշխատանքային ունակությունների վերականգնումը», «Այլ վայր աշխատանքի գործուղման կապակցությամբ գործազուրկների և աշխատանք փնտրող չզբաղված հաշմանդամների նյութական ծախսերի հատուցումը», «Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու նպատակով պետական գրանցման համար գործազուրկներին և աշխատանք փնտրող չզբաղված հաշմանդամներին տրամադրվող ֆինանսական աջակցությունը», «Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի ընդունելիս աշխատավարձի մասնակի փոխհատուցումը գործատուին»,

«Մասնագիտություն ունեցող, սակայն աշխատանքային փորձ չունեցող գործազուրկների և աշխատանք փնտրող չզբաղված հաշմանդամների աշխատանքային պրակտիկայի կազմակերպումը գործատուի մոտ», «Աշխատանք փնտրող չզբաղված հաշմանդամների համար աշխատատեղերի հարմարեցումը գործատուի մոտ» ծրագրերը: Մշակման փուլում է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որի նպատակն է պաշտպանել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները:

### *Հանձնարարական*

5.6 Շարունակել ապահովել կանանց համար հավասար իրավունքներ հասարակության մեջ (Բելառուս):

A/HRC/15/9 para(s) 94.10

### *Իրականացման ընթացքը*

Տես A/HRC/15/9 para(s) 95.2 և A/HRC/15/9 para(s) 93.11 հանձնարարականների պատասխանը:

## ՄԱՍ VI. Մարդու կյանքի, ազատության և անձեռնմխելիության իրավունք

### *Հանձնարարական*

6.1 Լրացուցիչ միջոցներ ձեռնարկել դաժան և անմարդկային վերաբերմունքի վերացման ուղղությամբ՝ իրավապահ մարմինների աշխատակիցների վերապատրաստման միջոցով (Բոսնիա և Հերցեգովինա):

A/HRC/15/9 para(s) 93.19

### *Իրականացման ընթացքը*

- Իրավապահ մարմինների տարբեր ստորաբաժանումներ անցնում են վերապատրաստում մարդու իրավունքների թեմայով: Մասնավորապես, դատախազության դպրոցում այս առարկայի համար տրամադրված են դասաժամեր, հատուկ դասընթացներ են կազմակերպվում դատավորների համար, տպագրվում են բրոշյուրներ: ՀՀ ոստիկանության կրթահամալիրում դասավանդվող առարկաների ցանկում ներառվել է «Ոստիկանության էթիկա» ուսումնական առարկան: Բացի այդ, արտասահմանյան մի շարք երկրներում ոստիկանության ծառայողները շարունակաբար մասնակցում են նմանատիպ թեմաներով կազմակերպվող դասընթացների: Նշված թեմաները ընդգրկված են նաև ստորաբաժանումներում անցկացվող ծառայողական պարապունքների թեմատիկ պլաններում:

### *Հանձնարարական*

6.2 Ապահովել կալանավայրերում և ոստիկանության բաժանմունքներում խոշտանգումների հետ կապված դեպքերի պատշաճ և մանրազնին հետաքննություն (Սլովենիա), ապահովել, որպեսզի խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի մասին բոլոր պնդումները շտապ հետաքննվեն, իսկ դրանք իրականացրած անձիք պատժվեն:

A/HRC/15/9 para(s) 93.20

### *Իրականացման ընթացքը*

- Նշված քայլերի իրականացման ընթացքի մասին մանրամասն

տեղեկատվությունն ընդգրկված է «Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին» Եվրոպական կոմիտեի (CPT) պատվիրակության կողմից 2010թ. մայիս ամսին Հայաստանի Հանրապետություն կատարած պարբերական այցելության արդյունքում կազմված զեկույցում, որը ՀՀ իշխանությունների համաձայնությամբ գաղտնազերծվել է: Զեկույցին կարող եք ծանոթանալ այցելելով http://www.cpt.coe.int/documents/arm/2011-24-inf-eng.pdf կայքէջը:

### *Հանձնարարական*

6.3 Ապահովել, որպեսզի անվտանգության/ոստիկանության ուժերի կողմից ձերբակալված անձանց՝ վատ վերաբերմունքի ենթարկելու մասին հայտարարությունները հետաքննվեն, իսկ մեղավորները՝ պատասխանատվության ենթարկվեն (Կանադա), հետաքննել ոստիկանության կողմից ոտնձգությունների դեպքերը՝ անպատժելիությունը կանխելու և ոստիկանության կողմից վատ վերաբերմունքին վերջ դնելու նպատակով (Ադրբեջան), ապահովել խոշտանգումներից կամ վատ վերաբերմունքից տուժած անձանց, հատկապես՝ կալանավորների կամ զինակոչիկների բողոքների գրանցման համակարգ (Չեխիայի Հանրապետություն), ապահովել կալանավայրերում և ոստիկանության բաժանմունքներում խոշտանգումների հետ կապված դեպքերի պատշաճ և մանրազնին հետաքննություն (Սլովենիա), ապահովել, որպեսզի խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի մասին բոլոր պնդումները շտապ հետաքննվեն, իսկ դրանք իրականացրած անձանց հանդեպ արդարադատություն իրականացվի (Հունաստան), ուժեղացնել արդար դատաքննության երաշխիքները, այդ թվում՝ ապահովելով խոշտանգման կամ վատ վերաբերմունքի միջոցով ձեռք բերված ցանկացած ապացույցի անընդունելիությունը դատարանում (Չեխիայի Հանրապետություն):

A/HRC/15/9 para(s) 93.26

### *Իրականացման ընթացքը*

ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածի և ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի իմաստով՝ ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները պարտադիր են ՀՀ մյուս դատական ատյանների համար: Ա.Գզոյանի գործով կայացված որոշման մեջ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ եթե դատարաններն իրենց վարույթում գտնվող քրեական գործի քննության ընթացքում հայտնաբերում են հանցագործության ակնհայտ հատկանիշներ, ապա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 184-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա պարտավոր են քրեական գործ հարուցելու միջնորդությամբ դիմել դատախազին : Այլ խոսքով՝ եթե դատավորներն իրենց վարույթում գտնվող քրեական գործի քննության ընթացքում հայտնաբերում են վատ վերաբերմունքի ակնհայտ հատկանիշներ, ապա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 184-րդ հոդվածի 4-ին մասի հիման վրա պարտավոր են համապատասխան հոդվածով քրեական գործ հարուցելու միջնորդությամբ դիմել դատախազին: ՀՀ Սահմանադրության 17-րդ հոդվածը հստակ սահմանում է, որ ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների,

ինչպես նաև անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Ձերբակալված, կալանավորված և ազատազրկված անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի և արժանապատվության հարգման իրավունք: Բռնությունն արգելվում է նաև ՀՀ «Ոստիկանության մասին», ինչպես նաև «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքի համաձայն: Վերջինս սահմանում է նաև ձերբակալված և կալանավորված անձանց կողմից դիմում-բողոքների ներկայացման կարգը: ՀՀ կառավարության 05.06.2008թ. ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգը հաստատելու մասին թիվ 574-Ն որոշման 7-րդ գլխի համաձայն ՁՊՎ-ի վարչակազմի ծառայողները շրջագայության ընթացքում պարտավոր են ձերբակալվածներից ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր առաջարկություններ, դիմումներ և բողոքներ ընդունել: Միաժամանակ, ՀՀ ոստիկանության կողմից սահմանված «Ուղիղ կապի» ընթացքում քաղաքացիների կողմից առաջ քաշված հարցերը սահմանված կարգով քննարկվում և ուսումնասիրվում են, անհրաժեշտության դեպքում կատարվում են ծառայողական քննություններ: Ոստիկանության ծառայողների կողմից կատարված չարաշահումների, քաղաքացիների, ձերբակալված անձանց նկատմամբ թույլ տրված բռնությունների, վատ վերաբերմունքի փաստերով ՀՀ ոստիկանության կողմից 2012 թվականի վեց ամիսների ընթացքում կատարվել են թվով 33 ծառայողական քննություններ:

Վատ վերաբերմունքի միջոցով ձեռք բերված ցանկացած ապացույցի անթույլատրելիությունը ամրագրված է օրենքով:

ՀՀ գլխավոր դատախազությունը ձերբակալված և կալանավորված անձանց խոշտանգումների վերաբերյալ հայտարարությունների քննության, ինչպես նաև այս ոլորտի նկատմամբ դատախազական հսկողության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով նախաձեռնել է «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման գործընթաց: Նախագծով ամրագրվել է, որ ձերբակալված և կալանավորված անձանց պահելու վայր ընդունելիս՝ հիմնարկի վարչակազմը կազմակերպում է վերջիններիս պարտադիր բուժզննություն, որի արդյունքներով կազմվում է արձանագրություն, որտեղ նշվում են վնասվածքի առկայությունը, տեղակայումը և բնույթը, դրանք ստանալու հանգամանքների վերաբերյալ ձերբակալված կամ կալանավորված անձի հայտարարությունը: Արձանագրությունը ստորագրում է բուժզննում անցկացրած բուժաշխատողը, ձերբակալված կամ կալանավորված անձը: Բուժզննության արդյունքները սահմանված կարգով գրանցվում են անձնական գործում: Արձանագրության պատճենը տրվում է ձերբակալված կամ կալանավորված անձին, քրեական վարույթն իրականացնող մարմնին, ինչպես նաև հետաքննության և նախաքննության, պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազներին:

### *Հանձնարարական*

6.4 Ուժեղացնել արդար դատաքննության երաշխիքները, այդ թվում՝ ապահովելով խոշտանգման կամ վատ վերաբերմունքի միջոցով ձեռք բերված ցանկացած ապացույցի

անընդունելիությունը դատարանում (Չեխիայի Հանրապետություն):

A/HRC/15/9 para(s) 93.32

### *Իրականացման ընթացքը*

ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածի և ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի իմաստով՝ ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները պարտադիր են ՀՀ մյուս ատյանների համար:

Ս. Գրիգորյանի գործով որոշման մեջ ՀՀ վճռաբեր դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի կիրառման արդյունքում լուրջ կասկածի տակ է դրվում նման վերաբերմունքի արդյունքում ձեռք բերված ապացույցների թույլատրելիության հարցը: Այս խնդրին ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է Ա.Սարգսյանի գործով որոշման մեջ և իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ. «(...) որպես ապացույց չեն կարող օգտագործվել քննչական կամ այլ դատավարական գործողության կատարման կարգի էական խախտմամբ ձեռք բերված փաստական տվյալները, հատկապես եթե դրանք իրենց հերթին հանգեցրել են դատավարության մասնակիցների իրավունքների էական խախտման, ազդել են կամ կարող էին ազդել ստացված փաստական տվյալների հավաստիության վրա: Այսպիսով, ապացույցների հավաքմանը և ստուգմանն ուղղված դատավարական գործողությունների կատարման ընթացքում պետք է ապահովվի անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Հակառակ դեպքում կատարված դատավարական գործողության արդյունքում ստացված փաստական տվյալը, անկախ գործի համար ունեցած նշանակությունից, կորցնում է իր իրավական ուժը, ապացուցողական նշանակությունը և չի կարող ընդգրկվել կոնկրետ քրեական գործով ապացույցների համակցության մեջ և դրվել մեղադրանքի հիմքում»:

### *Հանձնարարական*

6.5 Ամեն հնարավոր ջանք գործադրել ներպետական և միջազգային մակարդակով ցեղասպանության խնդրի շուրջ իրազեկությունը բարձրացնելու և անպատժելիության դեմ պայքարելու համար՝ ցեղասպանության որևէ դրսևորման կրկնությունը կանխելու նպատակով (Կիպրոս):

A/HRC/15/9 para(s) 93.18

### *Իրականացման ընթացքը*

Հայաստանի Հանրապետությունը ակտիվ քայլեր է ձեռնարկում միջազգային կազմակերպությունների շրջանակում ցեղասպանության շուրջ իրազեկությունը բարձրացնելու և անպատժելիության դեմ պայքարելու համար: Հայաստանի նախաձեռնությամբ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի կողմից 1998 թվականին ընդունվեցին «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և պատժման մասին կոնվենցիայի 50-անյակին նվիրված», իսկ 1999 և 2001թթ. «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և պատժման մասին» բանաձևերը:

2008 թվականի մարտի 28-ին ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի 7-րդ նստաշրջանը կոնսենսուսով ընդունեց Հայաստանի ներկայացված «Ցեղասպանության կանխարգելում» բանաձևը: Նախատեսվում է, որ Հայաստանի Հանրապետությունը կառաջարկի նշված բանաձևը նաև 2013 թվականի Մարդու իրավունքների խորհրդի մարտյան նստաշրջանի ընթացքում:

### *Հանձնարարական*

6.6 Շարունակել երեխաների սեռական շահագործման կանխմանն ու դրա դեմ պայքարին ուղղված ջանքերը (Բրազիլիա):

A/HRC/15/9 para(s) 94.14

### *Իրականացման ընթացքը*

Տես para(s) 93.24 հանձնարարականի պատասխանը:

### *Հանձնարարական*

6.7 Հետամուտ լինել կանանց առաջխաղացման ազգային մեխանիզմի և կանանց հանդեպ բռնության խնդրի լուծման կենսագործմանը (Իրանի Իսլամական Հանրապետություն), շարունակել ջանքեր գործադրել ընտանեկան բռնության դեմ պայքարի ուղղությամբ (Ղրղզստան), դիտարկել կանանց հանդեպ բռնության բոլոր ձևերի, հատկապես՝ ընտանեկան բռնության վերացման խնդրին առաջնային ուշադրություն դարձնելու հնարավորությունը՝ ձեռնարկելով համալիր միջոցառումներ, այդ թվում՝ հատուկ օրենսդրության միջոցով (Բրազիլիա), լրացուցիչ քայլեր ձեռնարկել վերացնելու կանանց հանդեպ ընտանեկան բռնության երևույթը (Ուկրաինա), ապահովել, որ իշխանությունները և ոստիկանության ծառայությունները ձեռնարկեն համապատասխան միջոցառումներ ընտանեկան բռնությունն արմատախիլ անելու ուղղությամբ՝ սկսելով ընտանեկան բռնության մասին այն օրենքի նախագծի ընդունումից և իրագործումից, որին հղում է արել Հայաստանի պատվիրակությունը (Շվեյցարիա), անհապաղ քայլեր ձեռնարկել ընտանեկան բռնությունը, այդ թվում՝ հոգեբանական չարաշահումները, ծեծը, բռնաբարությունը, ներառյալ ամուսնական բռնաբարությունը, և սեռական ոտնձգությունները քրեորեն պատժելի դարձնելու ուղղությամբ (Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն):

A/HRC/15/9 para(s) 93.21

### *Իրականացման ընթացքը*

Տես A/HRC/15/9 para(s) 95.2 և A/HRC/15/9 para(s) 93.11 հանձնարարականների պատասխանը:

### Հանձնարարական

6.8 Անհապաղ քայլեր ձեռնարկել ընտանեկան բռնությունը, այդ թվում հոգեբանական չարաշահումները, ծեծը, բռնաբարությունը, ներառյալ ամուսնական բռնաբարությունը և սեռական ոտնձգությունները քրեորեն պատժելի դարձնելու ուղղությամբ (Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն):

A/HRC/15/9 para(s) 93.23

### *Իրականացման ընթացքը*

- ՀՀ Կառավարության 2011թ. հունիսի 17-ի նիստում հավանության է արժանացել «Ընդդեմ գենդերային բռնության ազգային ծրագիրը, 2011-2015թթ. Ռազմավարական ծրագիրը և 2011թ. միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N23 արձանագրային որոշումը և մշակվել է «Ընտանեկան բռնության մասին» ՀՀ օրենքի նախագիծը ներկայացվել է կառավարություն:

ՀՀ Քրեական օրենսգրքում առկա են նշված հանցակազմերը: Տես նաև A/HRC/15/9 para(s)95.2, A/HRC/15/9 para(s) 93.11 հանձնարարականների պատասխանը:

### *Հանձնարարական*

6.9 Շարունակել ջանքերը մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) առնչությամբ՝ մշակելով 2010-2012թթ. համար երրորդ գործողությունների ազգային ծրագիրը, և հետագա քայլեր ձեռնարկել մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) զոհերին ցուցաբերվող աջակցությունը բարելավելու ուղղությամբ (Բոսնիա և Հերցեգովինա) ամրապնդել ջանքերն ուղղված մարդկանց շահագործումը (թրաֆիքինգը) պատժելուն ու կանխելուն և զոհերին աջակցելուն (Արգենտինա), կենսագործել 2010-2013թթ. համար մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հակազդմանն ուղղված ազգային ծրագիր մշակելու և ընդունելու մտադրությունը և ակտիվորեն համագործակցել այդ հարցի շուրջ միջազգային ասպարեզում (Բելառուս), ակտիվորեն ջանքեր գործադրել մարդկանց շահագործումը (թրաֆիքինգը) կանխելու ուղղությամբ, այդ թվում՝ ընդհանուր բնակչությանը, ներառյալ երեխաներին ուղղված տեղեկատվական արշավների միջոցով, մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) բոլոր ձևերին առնչվող վտանգների շուրջ իրազեկման բարձրացման և մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) զոհերի պաշտպանության և աջակցության նպատակով՝ ամբողջովին հարգելով վերջիններիս մարդու իրավունքները (Գերմանիա), ուժեղացնել երեխաների թրաֆիքինգի երևույթի ուսումնասիրությունը և տարածաշրջանային համագործակցությունն այն երկրների հետ, ուր մարդկանց շահագործման թրաֆիքինգի նպատակով տեղափոխվում են հայ երեխաները (Լեհաստան), հիմնվելով գոյություն ունեցող իրավական հենքի վրա լրացուցիչ ռեսուրսներ հատկացնել մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) զոհերի աջակցության համար (Կանադա), հաստատել հատուկ ծառայություններ և վերաինտեգրման ծրագրեր մարդկանց շահագործման թրաֆիքինգի զոհերի համար (Լեհաստան):

A/HRC/15/9 para(s) 93.24

### *Իրականացման ընթացքը*

Թրաֆիքինգի դեմ պայքարի գործողությունների երրորդ ազգային ծրագիրը 2010-2012թթ.-ի համար ընդունվել է դեռևս 2010թ.-ի սեպտեմբերին: Այս պահին ընթանում է ծրագրի իրագործման անկախ մոնիտորինգ, որի արդյունքների հիման վրա մինչև տարեվերջ կմշակվի մյուս եռամյա ծրագիրը՝2013-2015թթ.-ի համար: 2008թ. նոյեմբերին ՀՀ կառավարությունը հաստատեց «Թրաֆիքինգին ենթարկված անձանց Ազգային ուղղորդման կարգը»: Կարգի հիմնական նպատակն է արդյունավետ ուղի սահմանելը՝ թրաֆիքինգի զոհերին աջակցություն՝ մասնագիտական, բժշկական և հոգեբանական օգնության, խորհրդատվության, կրթության կամ ուսուցման մատչելիության ապահովումը: Աջակցությունը թրաֆիքինգի զոհերին ցուցաբերվում է ինչպես մասնագիտացված ՀԿ-ների, այնպես էլ աջակցության հարցում լիազորված պետական կառավարման մարմնի կողմից: Աջակցությանը ներառում է բնաիրային օգնություն, բուժօգնություն, հոգեբանական և իրավաբանական խորհրդատվություն,սոցիալական տարբեր ծրագրերում ընդգրկում, կացարանի տրամադրում: Սկսած 2009 թվականից թրաֆիքինգի դեմ պայքարի կազմակերպման միջոցառումների իրականացման՝ այդ թվում զոհերի սոցիալ-հոգեբանական

վերականգնման համար կատարվում են հատկացումներ ՀՀ պետական բյուջեից: Զոհի բուժօգնությունը կազմակերպվում է պետական պատվերի շրջանակներում՝ անվճար: 2010թ. դեկտեմբերին կատարվել է փոփոխություն «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքում, համաձայն որի օրենքում սահմանված աշխատաշուկայում անմրցունակ խմբերի ցանկում ավելացել է «թրաֆիքինգի զոհ» խումբը: Սա լրացուցիչ երաշխիքներ է տալիս զոհերին՝ զբաղվածության հատուկ ծրագրերում ընդգրկվելու համար: ՀՀ քրեական օրենսգրքում վերջին փոփոխություններն ու լրացումները կատարվել են 2011թ.-ին, որոնցով խստացվել է պատիժը՝ արարքը դարձնելով ծանր և առանձնապես ծանր հանցագործություն, ինչպես նաև նախատեսվել է գույքի բռնագրավումը և որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը: Քրեականացվել է նաև շահագործման վիճակում գտնվող անձի ծառայություններից օգտվելը: Առանձին հոդվածով նախատեսվել է երեխայի կամ հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձի թրաֆիքինգը կամ շահագործումը: Հայաստանը միացել է թրաֆիքինգի դեմ պայքարին առնչվող բոլոր միջազգային և տարածաշրջանային իրավական փաստաթղթերին: Հայաստանը ակտիվ համագործակցություն է ծավալում միջազգային կազմակերպությունների շրջանակներում:

Ինչ վերաբերում է խոցելի խմբերի՝ հատկապես երեխաների համար նպատակային իրազեկության բարձրացմանը, ապա այս խնդիրը մշտապես գտնվում է ՀՀ իշխանությունների ուշադրության կենտրոնում և ամրագրված է Ազգային ծրագրում,որի շրջանակներում այդ ուղղությամբ իրականացվում են բազմաթիվ ծրագրեր հանրակրթական դպրոցներում, բարձրագույն ուսումնական հաստատություններում, ինչպես նաև երեխաների խնամքի հատուկ հաստատություններում: Գործընթացը կրում է շարունակական բնույթ:

Հայաստանյան երեխաների երկրի տարածքից դուրս շահագործման դեպքեր չեն գրանցվել:

### *Հանձնարարական*

6.10 Ընդունել օրենսդրական ակտեր և ձեռնարկել միջոցառումներ կանանց և երեխաների հանդեպ բռնությունը կանխելու համար, այդ թվում՝ իր մշտադիտարկման մեխանիզմի հզորացման միջոցով (Ինդոնեզիա):

A/HRC/15/9 para(s) 94.11

### *Իրականացման ընթացքը*

Տես A/HRC/15/9 para(s) 93.23 հանձնարարականի պատասխանը:

### *Հանձնարարական*

6.11 Հզորացնել ընտանեկան բռնության դեմ արդյունավետ պայքար մղելու մեխանիզմները, մասնավորապես առաջնային կարգով քրեական օրենսգիրք ներմուծել ընտանեկան բռնությունը որպես հանցատեսակ և ապահովել ընտանեկան բռնության զոհերի արդյունավետ աջակցությունը և պաշտպանությունը (Չեխիայի Հանրապետություն):

A/HRC/15/9 para(s) 94.12

### *Իրականացման ընթացքը*

ՀՀ Քրեական օրենսգրքի համաձայն բռնությունը հանցատեսակ է անկախ նրանից թե ում հանդեպ է կիրառվում:

Ներկայումս մշակման փուլում է «Ընտանեկան բռնության դեմ պայքարի մասին» օրենքի նախագիծը:

Տես նաև A/HRC/15/9 para(s) 93.23 հանձնարարականի պատասխանը:

## Հանձնարարական

6.12 Ակտիվացնել երեխաների հանդեպ բռնության, ներառյալ մարմնական պատժի կանխարգելմանն ու պայքարին ուղղված ջանքերը (Բրազիլիա), ընդունել երեխաների հանդեպ բռնությունը, ներառյալ մարմնական պատիժը պատժելի դարձնող հատուկ օրենսդրական ակտեր, առաջ գնալ՝ անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկելով ծնունդների գրանցման հնարավորինս ամենամեծ ցուցանիշ արձանագրելու համար, սատարել աղջիկներին կրթությունը շարունակելու հնարավորություն տվող և գենդերային դերերի առումով կարծրատիպերը վերացնող կրթական քաղաքականությունը, նախաձեռնել իրազեկման բարձրացման ուղղված ծրագրեր, մասնավորապես՝ գյուղական շրջաններում, երեխայի աշխատանքը կրթությունից բարձր դասելու միտումը փոխելու նպատակով, և խրախուսել փոքրամասնություններին պատկանող երեխաների համար մայրենի լեզվով կրթություն ստանալու հասանելիությունը (Ուրուգվայ), ընդունել օրենսդրական ակտեր և ձեռնարկել միջոցառումներ կանանց և երեխաների հանդեպ բռնությունը կանխելու համար, այդ թվում՝ իր մշտադիտարկման մեխանիզմի հզորացման միջոցով (Ինդոնեզիա):

A/HRC/15/9 para(s) 93.25

### *Իրականացման ընթացքը*

- Քրեական օրենսգրքի համաձայն անչափահասի նկատմամբ բռնությունը ծանրացուցիչ հանգամանք է:

ՀՀ Կառավարության հավանությանն արժանացած Հայաստանի Հանրապետությունում ծնունդների և մահերի գրանցման, ինչպես նաև հաշվառումից դուրս մնացած երեխաների գրանցման նպատակով իրավական ակտերի մշակման ժամանակացույցով նախատեսված միջոցառումների մեծ մասն իրականացվել է, ինչպես նաև մշակվել է «Ընտանեկան բռնության մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Տես նաև A/HRC/15/9 para(s) 93.23 հանձնարարականի պատասխանը:

Շարունակվել է ՀՀ տարածքում գործող մոդելային կենտրոնների միջոցով իրականացվող ծնողական կրթության ծրագիրը՝ նպատակաուղղված մանկապարտեզ հաճախող և չհաճախող երեխաների ծնողների մանկավարժական և առողջապահական գիտելիքների հարստացմանը: Հրատարակվել են 4-6 տարեկանների զարգացմանն ուղղված ձեռնարկներ, որոնք հասցեագրված են նաև ծնողներին: Ծրագիրը օգնում է նաև կանանց ու տղամարդկանց՝ ճիշտ գիտակցելու երեխաների դաստիարակության գործում իրենց մասնակցությունը, ճանաչելու ընդհանուր պատասխանատվությունը, իրավունքներն ու պարտականությունները, գիտակցելու կրթության կարևորությունը, երեխայի զարգացման համար անվտանգ միջավայրի ձևավորմանը:

### *Հանձնարարական*

6.13 Շարունակել քրեակատարողական հիմնարկները և կալանավայրերը մարդու իրավունքների միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու ուղղությամբ գործադրվող ջանքերը (Կանադա), գործնականում մուտք ապահովել դեպի կալանքի բոլոր վայրեր, այդ թվում ոստիկանության բաժանմունքներ (Չեխիայի Հանրապետություն):

A/HRC/15/9 para(s) 93.33

### *Իրականացման ընթացքը*

2002թ. փետրվարի 6-ին «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ էականորեն բարելավվել է ձերբակալված անձանց արգելանքի տակ պահելու ընդհանուր պայմանները: Մասնավորապես, ձերբակալված անձանց վերապահվել են այնպիսի իրավունքներ, որոնք նախկինում չեն եղել, օրինակ՝ իրեն հասկանալի լեզվով տեղեկություններ ստանալ իր իրավունքների և պարտականությունների մասին, իր իրավունքների խախտման դեպքում դիմել զանգվածային լրատվության միջոցներին և միջազգային կազմակերպություններին, տեսակցել պաշտպանի և մերձավոր ազգականների հետ, զննվել իր ընտրած բժշկի կողմից, ստանալ իրավաբանական օգնություն, հաղորդակցվել արտաքին աշխարհի հետ, մասնակցել քաղաքացիաիրավական գործարքներին:

Ընդ որում, ձերբակալված անձանց իրավունքներն ու պարտականությունները փակցվել են յուրաքանչյուր խցում և հերթապահ մասում: Եվրոպայի խորհրդի անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի զեկույցից բխող միջոցառումների համաձայն 2005թ. հուլիսի 8-ին «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքում կատարվել են համապատասխան փոփոխություններ և լրացումներ, ըստ որոնց ավելի լայն իրավունքներ են տրվել Մարդու իրավունքների պաշտպանին, յուրաքանչյուր ձերբակալվածի համար նախատեսված 2.5 քմ բնակելի տարածության չափը ավելացվել է մինչև 4 քմ: «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի համաձայն սահմանվել են նաև ձերբակալվածների պահելու վայրերի գործունեության նկատմամբ դատախազական հսկողության , ինչպես նաև դատական, գերատեսչական և հասարակական վերահսկողության կարգը: Այս ուղղությամբ ՀՀ ոստիկանության պետի 2005 թվականի հունվարի 14-ի թիվ 1-Ն հրամանով հաստատվել է «ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի գործունեության կարգը»: 10.03.2006թ. թիվ 368-Ա հրամանով հաստատվել է հասարակական դիտորդների խմբի կազմը, որը հետագայում պարբերաբար փոխվել է: Խումբը ոստիկանությունում ձերբակալվածներին պահելու վայրերում պահվող անձանց իրավունքների և ազատությունների պահպանման խնդիրներով զբաղվող վերահսկող մարմին է: Խմբի կողմից վերահսկողությունն իրականացվում է ՁՊՎ-ներ այցելություններ կատարելու հիման վրա ՀՀ ոստիկանության պետին կամ նրա տեղակալին և հասարակությանը հաշվետվություններ ներկայացնելու միջոցով: Հաշվետվությունները կամ դրանց հատվածները հրապարակվում և հասարակությանն են ներկայացվում ոստիկանության մեկնաբանությունների հետ միասին: ՀՀ Մարդու

իրավունքների պաշտպանի, Կարմիր խաչի միջազգային կոմիտեի, Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի և այլ կազմակերպությունների դիտորդական առաքելությունները պարբերաբար այցելում են ՁՊՎ-ներ:

Տես նաև ՀՀ պատասխանները «Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին» Եվրոպական կոմիտեի (CPT) պատվիրակության կողմից 2010թ. մայիս ամսին Հայաստանի Հանրապետություն կատարած պարբերական այցելության արդյունքում կազմված զեկույցը http://www.cpt.coe.int/documents/arm/2011-25-inf-eng.pdf

## ՄԱՍ VII. Արդարադատության իրականացում և օրենքի գերակայություն

### *Հանձնարարական*

7.1 Իրականացնել ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի դատավարությունների դիտարկման զեկույցում տրված հանձնարարականները և ապահովել 2008թ-ի մարտի 1-ի իրադարձություններին հետևած տաս մահվան դեպքերի անկախ ու արժանահավատ հետաքննություն (Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն), ակտիվացնել ջանքերը դատարանում գործերը նեկայացնելու ուղղությամբ՝ հստակություն մտցնելու, փոխհատուցումներ ապահովելու և պատասխանատուներին պատժելու նպատակով (Իսպանիա), հետամուտ լինել Հայաստանի դատական համակարգի թերությունների վերաբերյալ ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի 2010թ. մարտի զեկույցում տրված հանձնարականների կատարմանը (Նիդերլանդներ):

A/HRC/15/9 para(s) 93.27

### *Իրականացման ընթացքը*

Մարտի 1-2-ի դեպքերի առնչությամբ հարուցվել էին մի շարք քրեական գործեր, որոնք փոխանցվել էին դատարան: Կայացված դատավճիռներով 27 անձից 10-ը դատապարտվել են 1-ից 5 տարի ժամկետով ազատազրկման, 17-ի նկատմամբ նշանակված պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ պայմանականորեն չի կիրառվել, սահմանվել է փորձաշրջան:

2009 թվականի հունիսի 19-ին ՀՀ Նախագահի նախաձեռնությամբ գումարվել է Ազգային ժողովի արտահերթ նստաշրջան, որի ընթացքում քննարկվեց նրա՝ համաներում հայտարարելու մասին առաջարկը: Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ հայտարարվել է համաներում: Համաներմամբ ազատ է արձակվել 307 մարդ:

ՀՀ Ազգային ժողովի կողմից լիազորված ժամանակավոր հանձնաժողովի զեկույցի առաջարկների կատարումը մշտապես գտնվել է ՀՀ իշխանությունների ուշադրության կենտրոնում, մասնավորապես, ստեղծվել էր զեկույցի առաջարկների իրականացումը վերահսկող մարմին, որը ԱԺ պետահիրավական հանձնաժողովն էր:

Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թթ. ռազմավարական ծրագրում» առանձին բաժին է հատկացված անկախ

և հանրության առջև հաշվետու դատական համակարգի ապահովմանն ուղղված միջոցառումներին, որտեղ նախատեսված է ներդնել դատավորների գործունեության գնահատման և առաջխաղացման օբյեկտիվ չափանիշներ և ընթացակարգեր, բարեփոխել դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ընթացակարգերը և հիմքերը՝ կարգապահական վարույթի օբյեկտիվության, արդարության, արդյունավետության և հրապարակայնության երաշխավորմամբ, բնակչության թվին և դատավորների ծանրաբեռնվածությանը համապատասխան հավասարակշռել դատավորների թվաքանակը, կատարելագործել դատավորների միջև գործերի օբյեկտիվ (պատահական) բաշխման համակարգը, բարելավել դատարաններում տեղեկատվական և հաղորդակցային տեխնոլոգիաների կիրառումը՝ ապահովելով գործերի արագ շրջանառությունը մեկ ատյանի դատարանից մեկ այլ ատյանի դատարան և բազմաթիվ այլ միջոցառումներ:

## Հանձնարարական

7.2 Իրագործել Ազգային ժողովի կողմից լիազորված ժամանակավոր հանձնաժողովի հանձնարարականները և իրականացնել անհարկի ուժի կիրառման վերաբերյալ անկախ և թափանցիկ հետաքննություն՝ պատասխանատվության ենթարկելով մեղավորներին (Լեհաստան):

A/HRC/15/9 para(s) 93.28

## *Իրականացման ընթացքը*

Տես A/HRC/15/9 para(s) 93.27 հանձնարարականի պատասխանը

## Հանձնարարական

7.3 Անհրաժեշտ միջոցառումներ իրականացնել մարդու իրավունքների գծով դատական բարեփոխումների շուրջ դատավորների ընթացիկ վերապատրաստման համար (Թուրքիա), ոստիկանության աշխատակիցների համար կազմակերպել մարդու իրավունքներին վերաբերող վերապատրաստման ծրագրեր (Իտալիա), ուժեղացնել ոստիկանության, քրեակատարողական հիմնարկների անձնակազմի և զինվորականների կրթությունը մարդու իրավունքների գծով (Չեխիայի Հանրապետություն):

A/HRC/15/9 para(s) 93.30

## *Իրականացման ընթացքը*

Նախատեսվում է առաջիկա երկու տարիների ընթացքում դատական իշխանության համար կադրերի պատրաստման և վերապատրաստման համար դատական դպրոցի փոխարեն հիմնադրել Արդարադատության ակադեմիա և դրա գործունեությունը կարգավորել համապատասխան օրենքով, օրենքի նախագծման աշխատանքներն արդեն իսկ մեկնարկել են: Ինչ վերաբերվում է քրեակատարողական ծառայողներին, ապա ՀՀ արդարադատության նախարարության «Իրավաբանական ինստիտուտ» ՊՈԱԿ-ում բոլոր քրեակատարողական ծառայողներն անցնում են պարտադիր վերապատրաստումներ, այդ թվում մարդու իրավունքների գծով: Մարդու իրավունքներին վերաբերող վերապատրաստման ծրագրեր ՀՀ դատական դպրոցի կողմից իրականացվել են ինչպես դպրոցում իրականացվող վերապատրաստման շրջանակներում (յուրաքանչյուր տարին երկու անգամ), այնպես էլ մի շարք միջազգային կազմակերպությունների հետ

համատեղ: Դատական դպրոցում իրականացվող վերապատրաստման շրջանակներում ուսուցանվել են «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի առանձին հոդվածներով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռները, ինչպես նաև ընդդեմ ՀՀ կայացած վճիռները:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավաբանական ֆակուլտետի բակալավրատուրայում և մագիստրատուրայում՝ համապատասխանաբար «Մարդու իրավունքները և ոստիկանությունը», «Մարդու իրավունքների տեսության հիմնախնդիրներ» առարկաների շրջանակում անցկացվել է մարդու իրավունքների ճանաչողությանը և դրանց պաշտպանության իրավական մեխանիզմներին վերաբերող դասընթացներ: Ուսումնական գործընթացի ընթացքում առանձնակի ուշադրության են արժանացել մարդու իրավունքների Եվրոպական դատարանի կողմից կայացրած առանձին դատավճիռներ, որոնք կապված են մարդ-քաղաքացի և ոստիկան հարաբերությունների իրավական լուծումների հետ:

### *Հանձնարարական*

7.4 Ապահովել լրագրողների դեմ բռնության դեպքերի արագ, թափանցիկ և արդյունավետ դատական հետապնդումը (Ամերիկայի Միացյալ Նահանգներ), արդյունավետ կերպով հետաքննել լրագրողների, ընդդիմության անդամների և մարդու իրավունքների պաշտպանների վրա կատարված հարձակումների դեպքերը (Ադրբեջան), ապահովել, որպեսզի մարդու իրավունքների պաշտպանների, լրագրողների և ընդդիմության անդամների դեմ ուղղված հանցագործությունները և բռնություններն արդյունավետ կերպով հետաքննվեն և հետապնդվեն դատական կարգով, իսկ մեղավորները՝ պատասխանատվության ենթարկվեն (Նորվեգիա):

A/HRC/15/9 para(s) 94.15

### *Իրականացման ընթացքը*

Լրագրողների դեմ հարձակումների դեպքերը դատապարտվել են ամենաբարձրաստիճան քաղաքական գործիչների, այդ թվում ՀՀ նախագահի և վարչապետի կողմից և ցանկացած նման դեպքի հետ կապված իրականացվել է քրեական վարույթ: Ընդդիմության անդամների և մարդու իրավունքների պաշտպանների վրա հարձակման դեպքեր չեն գրանցվել:

### *Հանձնարարական*

7.5 Արդյունավետ միջոցներ ձեռնարկել դատական իշխանության անկախությունն ապահովելու համար (Իտալիա), ապահովել դատական իշխանության լիակատար անկախությունը (Ադրբեջան), ուժեղացնել միջոցառումները դատական իշխանության լիակատար անկախությունն ապահովելու ուղղությամբ (Ուրուգվայ), ջանքեր գործադրել կիրառելու համար դատական համակարգի թափանցիկության վերաբերյալ օրենսդրական դրույթները, այդ թվում նաև՝ բավարար ֆինանսավորում հատկացնելու միջոցով (Շվեդիա):

A/HRC/15/9 para(s) 94.16, 94.18

### *Իրականացման ընթացքը*

ՀՀ Սահմանադրության 94-րդ հոդվածի համաձայն՝ դատարանների անկախությունը երաշխավորվում է Սահմանադրությամբ և օրենքներով: Դատարանների լիազորությունները, կազմավորման ու

գործունեության կարգը սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքներով: Արդարադատություն իրականացնելիս դատավորն անկախ է, ենթարկվում է միայն Սահմանադրությանը և օրենքին, դատավորի գործունեության երաշխիքները և պատասխանատվության հիմքերն ու կարգը սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքով: Դատավորը չի կարող կալանավորվել, ներգրավվել որպես մեղադրյալ, ինչպես նաև նրա նկատմամբ չի կարող դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկվելու հարց հարուցվել՝ առանց արդարադատության խորհրդի համաձայնության: Դատավորը չի կարող ձերբակալվել, բացառությամբ այն դեպքերի, երբ ձերբակալումն իրականացվում է հանցագործության կատարման պահին կամ անմիջապես դրանից հետո: Նման դեպքերում ձերբակալման մասին անմիջապես տեղեկացվում են Հանրապետության Նախագահը և վճռաբեկ դատարանի նախագահը (ՀՀ Սահմանադրության 97-րդ հոդված):

ՀՀ դատական օրենսգրքի 11-րդ հոդվածի համաձայն՝ արդարադատություն և օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս դատավորն անկախ է: Արդարասդատություն և օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս դատավորը հաշվետու չէ որևէ մեկին, այդ թվում՝ պարտավոր չէ որևէ բացատրություն տալ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Դատավորի գործունեությանը օրենքով չնախատեսված միջամտությունն արգելվում է: Նման արարքը քրեորեն հետապնդելի է: Պետական ծառայողների համար այն առաջացնում է նաև կարգապահական պատասխանատվություն՝ ընդհուպ մինչև զբաղեցրած պաշտոնից կամ ծառայությունից ազատում՝ պետական ծառայությունը կարգավորող համապատասխան օրենքներով սահմանված կարգով: Արդարադատության և օրենքով նախատեսված այլ լիազարությունների իրականացման կապակցությամբ իր գործունեությանը օրենքով չնախատեսված միջամտության մասին դատավորը պարտավոր է անմիջապես հայտնել ՀՀ դատարանների նախագահների խորհրդի էթիկայի հանձնաժողովին: Եթե էթիկայի հանձնաժողովը համարի, որ տեղի է ունեցել օրենքով չնախատեսված միջամտություն դատավորի գործունեությանը, ապա նա պարտավոր է դիմել համապատասխան մարմիններին մեղավոր անձանց պատասխանատվության ենթարկելու միջնորդությամբ: Պաշտոնավարման ընթացքում և լիազորությունները դադարեցվելուց հետո դատավորը չի կարող հարցաքննվել որպես վկա իր քննած գործի վերաբերյալ:

### *Հանձնարարական*

7.6 Վերջ տալ ընդդիմություն համարվող անհատների քաղաքական դրդապատճառներով պայմանավորված հետապնդմանը և քայլեր ձեռնարկել ամրապնդելու օրենքի գերակայությունը, այդ թվում հարգելով քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրում տրված նվազագույն երաշխիքները, օրենքի հավասար պաշտպանությունը և դատական իշխանության անկախությունը (Իսպանիա):

A/HRC/15/9 para(s) 95.3

### *Իրականացման ընթացքը*

Հայաստանի Հանրապետությունում քաղաքական դրդապատճառներով հետապնդումներ չկան: Օրենքի գերակայության և

դատական իշխանության անկախությունը լիովին ապահովելու նպատակով ՀՀ շարունակական քայլեր է իրականացնում համապատասխան օրենսդրական վերափոխումներ իրականացնելով և լրացուցիչ երաշխիքներ սահմանելով: Տես նաև A/HRC/15/9 para(s) 94.16, 94.18 հանձնարարականի պատասխանը:

### *Հանձնարարական*

7.7 Ամրապնդել միջազգային չափանիշներին համապատասխանող անչափահասների գործերով դատական համակարգի ստեղծմանն ուղղված ջանքերը և հատուկ միջոցառումներ ձեռնարկել երեխաների և կալանավորված կամ ձերբակալված անձանց իրավունքների պաշտպանության ուղղությամբ (Չեխիայի Հանրապետություն):

A/HRC/15/9 para(s) 94.19

### *Իրականացման ընթացքը*

- Յուրաքանչյուր դատարանում կա անչափահասների գործերը քննող մեկ մասնագիտացված դատավոր: Անչափահասաների պատասխանատվության առանձնահատկություններ են սամանված ՀՀ քրեական օրենսգրքում, նրանց մասնակցությամբ գործերի քննության առանձնահատկություններ են սահմանված ՀՀ քրեական դատավարության օրենսգքրում, նրանց կողմից պատժի կրման առանձնահատկություններ են սահմանված ՀՀ քրեակատորղական օրենսդրության մեջ:

## ՄԱՍ VIII. Հավատքի կամ կրոնի, արտահայտման, հասարակական և քաղաքական կյանքին մասնակցության ազատություն

### *Հանձնարարական*

8.1 Ձեռնարկել օրենսդրական և վարչական անհրաժեշտ միջոցառումներ երկրում կրոնի ազատությունն ամբողջովին երաշխավորելու, մասնավորապես՝ խտրականության ցանկացած ձևի կամ կրոնական փոքրամասնությունների միավորումների գրանցման համար ավելորդ խոչընդոտները կանխելու նպատակով (Մեքսիկա), անխտիր բոլորի համար լիովին ապահովել կրոնի ազատությունը (Ադրբեջան):

A/HRC/15/9 para(s) 93.35

### *Իրականացման ընթացքը*

ՀՀ կառավարության կողմից լիազորված կրոնի գործերով պետական մարմինը՝ ՀՀ կառավարության ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչությունը, որը համաձայն օրենքի փորձագիտական եզրակացություն է տալիս գրանցվել ցանկացող կրոնական համայնքներին, երբևէ չի խոչընդոտել պետական գրանցում ստանալու համար դիմող կրոնական խմբերի փաստաթղթերի ներկայացման գործընթացին: Ավելին՝ կրոնական կազմակերպությունների պետական գրանցման գործընթացը բավականին թափանցիկ է, առանց ավելորդ թղթաբանական քաշքշուկների և տեղի է ունենում ողջամիտ ժամկետներում: Ներկայումս ՀՀ պետական ռեգիստրում գրանցված են շուրջ 70 կրոնական կազմակերպություններ, որոնցում ներկայացված են ամենատարբեր կրոնական շարժումներ և ուղղություններ:

Պետական լիազոր մարմինը կրոնական կազմակերպությունների խնդրանքով աջակցում է նաև առանձին հարցերի շուրջ պետական մարմինների հետ համաձայնության գալուն, ինչպես նաև որպես միջնորդ մասնակցում է Հայաստանի կրոնական կազմակերպությունների միջև ծագող հարցերի և վեճերի լուծմանը:

2010 թ վերջին- 2011 թ. սկզբին ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվեց և շրջանառության մեջ դրվեց կրոնի ոլորտի նոր օրենքի, ինչպես նաև մի շարք այլ օրենքներում փոխոխություններ նախատեսող նախագծեր, որոնք ևս ուղարկվել են Վենետիկի հանձնաժողով: Պետք է հատուկ ընդգծել, որ բոլոր այս դեպքերում էլ գործընթացը կազմակերպվել է հանրային բաց և թափանցիկ սկզբունքներով, որում ներգրավված են եղել բոլոր շահագրգիռ կողմերը: Այս պահի դրությամբ շարունակվում են հանրային քննարկումները, և ՀՀ արդարադատության նախարարությունը համակարգում է ոչ միայն այն բոլոր առաջարկները, տեսակետները, որոնք ներկայացվել են հայաստանյան կազմակերպությունների, քաղաքացիների կողմից, այլև միջազգային հեղինակավոր կառույցների դիտողությունները և առաջարկները:

### *Հանձնարարական*

8.2 Ստեղծել միջոցներ՝ ապահովելու լիակատար հարգանքը կարծիքի և արտահայտվելու ազատության իրավունքի հանդեպ և առավել բարենպաստ միջավայր ստեղծել հետաքննական լրագրության համար (Կանադա), ձեռնարկել բոլոր միջոցները, որոնք անհրաժեշտ են արտահայտվելու ազատությունը, այդ թվում՝ մամուլի ազատությունը լիովին հարգելու համար, ապահովելով, որպեսզի որևէ մեկը չզրկվի ազատությունից ազատ արտահայտվելու կամ խաղաղ հավաքներին կամ երկրի կառավարմանը մասնակցելու իրենց իրավունքն իրացնելու համար (Շվեդիա), ապահովել, որպեսզի քաղաքացիական հասարակության ակտիվիստները և լրագրողները կարողանան իրականացնել իրենց աշխատանքն առանց իրենց հանդեպ իրականացվող հետապնդումների և բռնությունների (Ամերիկայի Միացյալ Նահանգներ),

A/HRC/15/9 para(s) 94.20

### *Իրականացման ընթացքը*

Անկախությունից ի վեր Հայաստանի Հանրապետությունը համապատասխան քայլեր է իրականացնում խոսքի ազատությունն ապահովելու ուղղությամբ:

ՀՀ կողմից 1991 թվականի հոկտեմբերի 8-ին ընդունված առաջին օրենքների թվին է դասվել «Մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցների մասին» օրենքը: 2003 թվականին ընդունվել է «Զանգվածային լրատվության մասին» օրենքը: Տեղեկատվության ազատության հետ սերտորեն առնչվում է 2000թ. հոկտեմբերի 9-ին ընդունված «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքը, որի 4-րդ հոդվածն ամրագրում է, որ ՀՀ-ում երաշխավորվում է հեռուստառադիոհաղորդումների ազատ ընտրության, արտադրության ու տարածման իրավունքը, և արգելվում է հեռուստահաղորդումների գրաքննությունը:

Ինչ վերաբերում է Հետաքննող լրագրողների պատրաստման խնդրին, ապա դա զուտ ֆինանսական խնդիր է և համապատասխան միջոցների առկայության դեպքում կիրականացվի:

Տես նաև A/HRC/15/9 para(s) 94.24 հանձնարարականի պատասխանը:

### Հանձնարարական

8.3 Ապահովել մարդու իրավունքների եվրոպական դատարանի կայացրած այն վճռի կենսագործումը, ըստ որի Ա1+ հեռարձակող ընկերությանն արտոնագիր տրամադրելու մերժումը խախտում է մարդու իրավունքների գծով Հայաստանի ստանձնած պարտավորությունները (Նիդերլանդներ):

A/HRC/15/9 para(s) 93.36

### *Իրականացման ընթացքը*

- Հայաստանի Հանրապետությունն ամբողջությամբ բավարարել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռը (հղում՝ 2011թ. Հունիսի 10-ի ԵԽՆԿ CM/ResDH(2011)39 բանաձևին):

### *Հանձնարարական*

8.4 Հեռարձակման լիցենզիաների տրամադրման ազատ և թափանցիկ գործընթացի ապահովում, ինչպես նաև հերառձակումը համակարգող մարմինների անկախության ապահովում (Նորվեգիա), ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ ապահովելու համար Ռադիոյի և Հեռուստատեսության ազգային հանձնաժողովի անկախությունը (Ֆրանսիա), լրացնել հերառձակմանը վերաբերող օրենքները և ապահովել հեռուստատեսությունն ու ռադիոն համակարգող մարմնի իրական անկախությունը (Նիդերլանդներ)

A/HRC/15/9 para(s) 94.21

### *Իրականացման ընթացքը*

- Հեռուստատեսության և ռադիոյի մասին օրենքը փոփոխության է ենթարկվում, մրցույթների անցկացման անկախությունը ապահովելու նպատակով, այս գործընթացքում մեծ է հասարակական կազմակերպությունների դերը: Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը անցկացրել է 25 մրցույթ, որոնց արդյունքում տրամադրվել է 25 լիցենզիա: Մրցույթներն անցկացվել են «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքին համապատասխան, ամբողջովին ապահովելով գործընթացի թափանցիկությունը: ՀՌԱՀ անկախությունը ապահովված է ՀՀ Սահմանադրությամբ և Օրենքով: ՀՌԱՀ անդամների նշանակման գործընթացին իրենց մասնակցությունն ունեն հասարակական կազմակերպությունները, որոնք մրցույթին մասնակցելու համար նրանց երաշխավորագրեր են տրամադրում:

### *Հանձնարարական*

8.5 Նախատեսել թվայնացման թափանցիկ գործընթաց, որպեսզի եթերային հաճախականություններում տեղ ապահովվի անկախ և փոքր շրջանային լրատվամիջոցներին (Ամերիկայի Միացյալ Նահանգներ):

A/HRC/15/9 para(s) 94.22

### Իրականացման ընթացքը

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի համաձայն, բոլոր շրջանային, համայնքային հեռուստաընկերությունների լիցենզիաների գործողության ժամկետը երկարաձգվել է մինչև 2015 թվականի հունվարի 1-ը, այսինքն թվայնացման գործընթացի ժամանակահատվածում այդ ընկերությունները ազատ հեռարձակում են իրականացնում:

### *Հանձնարարական*

8.6 Ապահովել, որպեսզի զրպարտությունն

ապաքրեականացնող լրամշակված օրենքն ընդունվելու դեպքում, այն կենսագործվի այնպես, որպեսզի պաշտպանվի արտահայտվելու ազատությունը (Ամերիկայի Միացյալ Նահանգներ):

A/HRC/15/9 para(s) 94.23

### *Իրականացման ընթացքը*

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանը այս կապակցությամբ 2011թ. նոյեմբերի 15-ին ընդունել է N997 որոշումը, որով հստակորեն նախանշել է վիրավորանքի և զրպարտության դեպքում իրավաբանական պատասխանատվության շրջանակները և բնույթը:

### *Հանձնարարական*

8.7 Դադարեցնել հեռուստատեսային և ռադիո հեռարձակողներին արտոնագրերի տրամադրման մորատորիումը և 2000թ. Հեռուստատեսության և ռադիոյի մասին օրենքում 2008թ. կատարված փոփոխությունները և իրականացնել օրենսդրական միջոցառումներ՝ երաշխավորելու հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի և հանրային հեռուստատեսության և ռադիոյի խորհրդի անկախությունը (Իսպանիա):

A/HRC/15/9 para(s) 95.4

### *Իրականացման ընթացքը*

- 10.06.2010թ. «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի ընդունման արդյունքում (ուժի մեջ է մտել 28.06.2010թ.) 2010թ. հուլիս ամսին հայտարարվել և անց են կացվել թվային հեռարձակման ցանցի միջոցով եթերային հեռարձակում իրականացնելու հեռուստահեռարձակողների լիցենզավորման թվով 25 մրցույթ: 2009 թվականի ապրիլի 29-ին ընդունվել են «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» «ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որը սահմանում է Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի ձևավորման նոր կարգ: Նոր կարգի համաձայն Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի անդամ կարող են լինել լրագրության, տնտեսագիտության, կրոնի, իրավագիտության, հեռուստատեսության, արվեստի բնագավառներում մասնագիտական փորձ ունեցող անձինք: Անդամների նշանակումն իրականացվում է մրցութային կարգով:

### *Հանձնարարական*

8.8 Միջոցներ ձեռնարկել ապագայում ազատ և արդար ընտրություններ ապահովելու համար (Շվեդիա), կենսագործել ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի կողմից տրված հանձնարարականները՝ 2011թ. ընտրությունների անցկացման համար և 2013 թվականի նախագահական ընտրություններն ավելի լավ անցկացնելու համար (Ֆրանսիա):

A/HRC/15/9 para(s) 93.37

### *Իրականացման ընթացքը*

ՀՀ-ում անցկացված վերջին ընտրությունները 2012 թվականի մայիսին կայացած Ազգային ժողովի ընտրություններն էին, որոնք միջազգային դիտորդական առաքելության կողմից գնահատվել են որպես «ընտրություններ, որոնք անցկացվեցին բարեփոխված իրավական դաշտի ներքո և բնորոշվեցին մրցակցային, ակտիվ

և հիմնականում խաղաղ նախընտրական քարոզչությամբ:» ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ առաջարկություններն ու հանձնարարականների իրականացման ընթացքն մշտադիտարկվում է ՀՀ կառավարության կողմից: Ինչ վերաբերում է 2013 թվականի նախագահական ընտրություններին, ապա ի կատարումն ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդական առաքելության կողմից տրված հանձնարարականների ՀՀ նախագահի կարգադրությամբ ստեղծվել է աշխատանքային խումբ, որի կազմում ընդգրկվել են՝ արդարադատության նախարարը, ՀՀ փոխարտգործնախարարը, ԱԺ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահը, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահը, գլխավոր դատախազի տեղակալը, վարչական դատարանի նախագահը, փոխոստիկանապետը և այլ բարձրաստիճան պաշտոնյաներ: Խմբի աշխատանքների ղեկավարումը հանձնարարվել է ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավարին: Նշված խմբի կողմից նախապատրաստվել է համապարփակ գործողությունների ծրագիր, որը նախանշել է հանձնարարականների այն կետերը, որոնց իրականացումն իրատեսելի է մինչև 2013 թվականի նախագահական ընտրությունների անցկացումը: Նշված աշխատանքների մասին տեղեկատվությունը լայնորեն տարածվել է տարբեր միջազգային կազմակերպություններում:

### *Հանձնարարական*

8.9 Ձեռնարկել կոնկրետ քայլեր արտահայտվելու ազատությունը, ներառյալ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների անկախությունը և հավաքների իրավունքը խթանող մրջավայր ստեղծելու վերաբերյալ պարտավորությունները կատարելու ուղղությամբ (Նորվեգիա):

A/HRC/15/9 para(s) 94.25

### *Իրականացման ընթացքը*

Մշակվել և հաստատվել են «Հասարակական կարգը պահպանելիս և հասարակական անվտանգությունն ապահովելիս բանակցություններ վարելու», «Հասարակական կարգի պահպանության մեջ ներգրավված ոստիկանության ստորաբաժանումների ծառայողների գործողությունների, զանգվածային անկարգությունների ժամանակ նրանց կողմից ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի գործադրման», «Հավաքների ժամանակ ոստիկանության գործողությունների» ուղեցույցները, որոնցով նախատեսվել է ոստիկանության լիազորությունների իրականացման սկզբունքները և գործնական կանոնները:

### *Հանձնարարական*

8.10 Օրենքներում ու կանոնակարգերում, ինչպես նաև գործնականում ապահովել, որպեսզի հավաքների ազատության իրավունքի իրացման առումով որևէ կամայական խոչընդոտներ չհարուցվեն (Նիդեռլանդներ), ապահովել հարգանքը հավաքների ազատության իրավունքի նկատմամբ՝ միջազգային պարտավորություններին համապատասխան (Ադրբեջան), հարգել օրենքներում և գործնականում, անհատների՝ խաղաղ հավաքներ կազմակերպելու իրավունքը (Ամերիկայի Միացյալ Նահանգներ), կիրառել «Ժողովներ, հանրահավաքներ,երթեր և ցույցեր անցկացնելու մասին» օրենքը թափանցիկ և համաչափ եղանակով (Իռլանդիա):

A/HRC/15/9 para(s) 94.26

### *Իրականացման ընթացքը*

Տես A/HRC/15/9 para(s) 94.24 հանձնարարականի ընթացքը

## ՄԱՍ IX. Սոցիալական անվտանգության և համապատասխան ապրելակերպի իրավունք

### *Հանձնարարական*

9.1 Շարունակել ջանքերն այս ոլորտներում՝ կրթության և առողջապահության հասանելիությունը բարելավելու և կանանց ու երեխաների իրավունքները խթանելու նպատակով (Լիբանան), շարունակել իրագործել բոլոր մակարդակներում բնակչությանը մատուցվող կրթության և առողջապահության ծառայությունների որակի երաշխավորմանն ուղղված ծրագրեր (Կուբա):

A/HRC/15/9 para(s) 93.41, 93.42,

### *Իրականացման ընթացքը*

Կարևորելով նախադպրոցական կրթության դերը, երեխաների համակողմանի զարգացման և դպրոցական կրթության համար հավասար մեկնարկային պայմաններ ստեղծելու նպատակով, Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2008 թվականին հաստատել է «Նախադպրոցական կրթության բարեփոխումների 2008-2015 թվականների ռազմավարական ծրագիրը», որը ծախսարդյունավետ կրթական ծառայությունների ներդրման միջոցով նպատակադրում է մինչև 2015 թվականը ավագ նախադպրոցական տարիքային խմբի (5 տարեկանների) ընդգրկվածությունը հասցնել մինչև 90%: Ծրագրում առաջնայնությունը տրվում է աղքատ ընտանիքներին և այն համայնքներին, որտեղ ՆԴՀ-ներ չեն գործում: Հիմք ընդունելով ռազմավարական ծրագրի հիմնական դրույթները, Արդյունքում միայն վերջին 3 տարում նախադպրոցական ծրագրերում լրացուցիչ ընդգրկվել է շուրջ 3600 երեխա: Նախադպրոցական ծրագրերի իրականացման շարունակականության ապահովման նպատակով 2011 թվականից ՀՀ պետական բյուջեում նախատեսվել են միջոցներ ավագ նախադպրոցական տարիքի երեխաների մեկամյա կրթության կազմակերպման ընթացիկ ծախսերի մասով՝ ելնելով ըստ աշակերտների թվի ֆինանսավորման բանաձևով մեկ սովորողին ընկնող տարեկան գումարի չափից: Այս նպատակով ՀՀ պետական բյուջեից այսուհետ կհատկացվեն համապատասխան միջոցներ՝ ըստ տարիների:

2008թ. ներդրվել է առանձին գործող ավագ դպրոցի համակարգը: Ավագ դպրոցը հանդիսանում է նախամասնագիտական կրթություն ապահովող հիմնական օղակ, որի գործունեությունից մեծապես կախված է սովորողների մասնագիտական ճիշտ կողմնորոշումը և հետագա ուսումնառության հաջողությունը: Եռամյա ավագ դպրոցի ծրագիրը հնարավորություն կտա ապահովել շրջանավարտների աշխատաշուկա մտնելու պատրաստվածությունը և իրենց հակումներին ու ընդունակություններին համապատասխան մասնագիտական կրթություն ստանալու հնարավորությունը:

Ներդրվել է դպրոցի ավարտական և բուհերի ընդունելության միասնական քննական համակարգը, որը հեշտացրել է սովորողների անցումը դպրոցից բուհ: Հանրակրթության ոլորտում անցում է կատարվել 12-ամյա կրթության, հաստատվել են առարկայական նոր չափորոշիչներն ու ծրագրերը: Իրականացվել է ուսուցիչների լայնածավալ վերապատրաստման ծրագիր՝ նոր ծրագրերի, չափորոշիչների, գնահատման

համակարգի, ուսուցման ժամանակակից մեթոդների և տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ուղղությամբ: Հանրակրթության համակարգում սկսվել է ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների կիրառումը՝ որպես դասավանդման և ուսումնառության նոր միջոց: Ըստ այդմ բարելավվել է դպրոցների ինտերնետ հասանելիությունը և համակարգչային սարքավորումներով համալրվածությունը:

Տես նաև A/HRC/15/9 para(s) 93.4 պատասխանը և 93.43 հանձնարարականների պատասխանը:

### *Հանձնարարական*

9.2 Շարունակել մեծացնել և ընդլայնել առողջապահական ծառայությունների հասանելիությունն ու մատչելիությունը՝ գյուղական և հեռավոր շրջանների, ինչպես նաև առավել խոցելի խմբերի վրա հատուկ շեշտադրումով (Եգիպտոս), երաշխավորել առողջապահության հասանելիությունը խոցելի սոցիալական խմբերի և գյուղական ու հեռավոր շրջանների բնակչության համար (Ալժիր), բարելավել առաջնային բուժօգնության որակը, հատկապես՝ գյուղական շրջաններում (Քուվեյթ), շարունակել բոլորի համար առողջապահության հասանելիության բարելավմանն ուղղված ջանքերը, մասնավորապես առավել խոցելի կարգերին դասվող, հաշմանդամություն ունեցող և գյուղական շրջաններում բնակվող անձանց համար (Լիբիայի Արաբական Ջամահիրիա):

A/HRC/15/9 93.43

### *Իրականացման ընթացքը*

Առողջության առաջնային պահպանման ոլորտի զարգացումը ՀՀ առողջապահական համակարգի առաջնահերթություններից է և այդ կապակցությամբ պետք է նշել, որ առողջության առաջնային պահպանման ծառայությունները ՀՀ բնակչության բոլոր խավերի համար անվճար են: Առողջության առաջնային պահպանման ոլորտի զարգացման նպատակով 2000-2011թթ. ընթացքում վերանորոգվել/կառուցվել են շուրջ 147 գյուղական առողջության առաջնային պահպանման հաստատություններ: Վերանորոգված/կառուցված ամբուլատորիաները հագեցվել են բժշկական սարքավորումների, պարագաների, կահույքի և համակարգչային սարքավորումների ստանդարտ հավաքածուներով: Մինչ օրս մասնագիտացում են անցել 1655 ընտանեկան բժիշկ և 1770 ընտանեկան բուժքույր: 2012-2014թթ. ընթացքում, ՀՀ գյուղական բնակավայրերի առողջապահության համակարգի շարունակական զարգացման նպատակով, նախատեսվում է ևս մի շարք բժշկական ամբուլատորիաների կառուցում/վերանորոգում, սարքավորումներով և կահույքով հագեցում:

Բացի այդ մարզային հիվանդանոցային համակարգի արդիականացման ծրագրի շրջանակներում 2009թ. դեկտեմբերից մինչև օրս ընկած ժամանակահատվածում իրականացվել են 8 մարզային բժշկական կենտրոնների՝ արդիականացման աշխատանքներ՝ ներառյալ շենքերի հիմնանորոգման, կառուցման, ժամանակակից բժշկական սարքավորումներով, պարագաներով և կահույքով հագեցման ինչպես նաև անձնակազմի վերապատրաստման և տարաբնույթ խորհրդատվական աշխատանքներ բժշկական կազմակերպությունների կառավարման ժամանակակից սկզբունքների և համակարգերի ներդրման ուղղությամբ:

Ինչ վերաբերում է հիվանդանոցային և այլ ծառայությունների հասանելիության բարձրացմանը, ապա ՀՀ–ում հաշմանդամ սոցիալապես անապահով և խոցելի այլ խմբերը օգտվում են պետության կողմից երաշխավորված բժշկական օգնություն ստանալու իրավունքից և պետությունը քայլեր է ձեռնարկում այդ իրավունքից օգտվողների կատեգորիաները ընդլայնելու ուղղությամբ:

Առողջապահական ծառայությունների որակի երաշխավորման և բարելավման նպատակով, ՀՀ կառավարության կողմից (ՀՀ կառավարության 2010թ. հոկտեմբերի 14-ի N 40 արձանագրային որոշում) ընդունվել է միջոցառումների համապարփակ ծրագիր, որի շրջանակներում, առողջության առաջնային պահպանման բժշկական կազմակերպությունների որակի բարելավման նպատակով, ստեղծվել են որակի գնահատման խորհուրդներ:

## *Հանձնարարական*

9.3 Շարունակել մայրական և մանկական մահացության նվազեցմանն ուղղված ջանքերը՝ փրկելով մորն ու մանկանը (Սուրբ Աթոռ):

A/HRC/15/9 para(s) 93.44

## *Իրականացման ընթացքը*

- Կառավարության գերակա խնդիրներից է մոր և մանկան առողջության պահպանմանն ուղղված միջոցառումները: Մայրական և մանկական մահացության նվազեցումը ՀՀ առողջապահության համակարգի գերակայություններից են, դրանից ելնելով իրականացվում են բազմաթիվ միջոցառումներ ուղղված մոր և մանկան առողջության պահպանման և ըստ այդմ, մայրական և մանկական մահացության նվազեցման ուղղությամբ:

2008թ. ՀՀ-ում ներդրվել է ծննդօգնության պետական հավաստագրի համակարգը և ստեղծվել արագ արձագանքման ծառայություն, որի գործունեության ընթացքում 2009թ. համեմատությամբ 2010-2011թթ. զգալիորեն կրճատվել է մայրական մահացությունը և շուրջ 20 տոկոսով՝ մոր և մանկան ծննդաբերական տրավմատիզմը: 2010թ. ընթացքում արձանագրվել է մայրական մահացության 3 դեպք, իսկ 2011թ.՝ 4 դեպք: 2006-2008թթ. մայրական մահացության միջին եռամյա ցուցանիշը կազմել է 28,2/100 000 կենդանածնության հաշվով, իսկ 2009-2011թթ. համանուն ցուցանիշը կազմել է 15,7, այսինքն կրճատվել է մոտ 1,7 անգամ: Համաձայն ժողովրդագրության և առողջության հարցերի 2010թ. կատարած հետազոտության նախնական զեկույցի տվյալների նախածննդյան գոնե մեկ այց կատարած հղիների ցուցանիշը աճել է 6%-ով և դարձել է 99%, իսկ ստացիոնար ծննդաբերությունների ցուցանիշը դարձել է 99,4 %:

2011թ. ներդրվել է Երեխայի առողջության պետական հավաստագրի համակարգը, որի արդյունքում հիվանդանոցային բուժօգնության դիմելիությունը բարձրացել է 18%-ով: Երեխաների հիվանդանոցային բուժօգնության ֆինանսավորումը բյուջեից կրկնապատկվել է՝ 2010թ. 3,16 մլրդ. դրամի փոխարեն 2011թ.-ին այն կազմել է 6,38մլրդ. դրամ:

ՀՀ կառավարության կողմից 2012 թվականի հուլիսի 4-ի N 27 որոշմամբ հաստատվել է Երեխաների հիվանդանոցային բժշկական օգնության բարելացվան 2013-2015 թվականի ռազմավարությունը, որի կիրառման արդյունքում ակնկալվում է երեխաների մահացության մի շարք ցուցանիշների նվազում:

### *Հանձնարարական*

9.4 Աղքատությունը վերացնելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկել (Ադրբեջան):

A/HRC/15/9 para(s) 93.40

### *Իրականացման ընթացքը*

ՀՀ Սահմանադրության 34-րդ հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ունի իր և իր ընտանիքի համար բավարար կենսամակարդակի, այդ թվում՝ բնակարանի, ինչպես նաև կենսապայմանների բարելավման իրավունք:

Հանրապետությունում բնակչության կենսամակարդակի և կենսապայմանների բարելավման և սննդի իրավունքի ապահովման նպատակով ՀՀ կառավարության կողմից ձեռնարկվել են մի շարք միջոցառումներ, ընդունվել որոշումներ, մշակվել են համապատասխան ծրագրեր:

Այսպես, 2005 թվականին ընդունվեց «ՀՀ պարենային ապահովության քաղաքականությունը», 2006 թվականին «ՀՀ գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարությունը»:

ՀՀ կառավարության 2000 թվականի մայիսի 15-ի թիվ 267 որոշմամբ «Աղքատության կրճատման ռազմավարական ծրագրի» (ԱՀՌԾ) մշակման աշխատանքների արդյունավետ կազմակերպման նպատակով ստեղծվել է ռազմավարական ծրագրի մշակման աշխատանքների համակարգման խորհուրդ:

2001 և 2003 թվականներին վերոհիշյալ խորհրդի կողմից մշակվել և ՀՀ կառավարության հավանությանն են արժանացել «Աղքատության նվազեցման միջանկյալ ռազմավարական ծրագիրը» և «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը», որը 2008 թ. վերանայվել և վերանվանվել է «Կայուն զարգացման ծրագրի»: «Կայուն զարգացման ծրագրով» ի թիվս այլ գործողությունների, նախատեսված է գնահատման և մոնիթորինգի համակարգի ձևավորումը, հաշվետվողականության, թափանցիկության և հանրային իրազեկման ապահովում:

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ) կողմից իրականացվում են տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտություններ կամ նույնն է՝ աղքատության վերլուծություն:

## ՄԱՍ X. Փոքրամասնություններ, միգրանտներ, փախստականներ և ապաստան հայցողներ

### *Հանձնարարական*

10.1 Կրթության հավասար հասանելիություն ապահովել բոլոր փոքրամասնությունների խմբերին պատկանող երեխաների համար (Ավստրիա), միջոցներ ձեռնարկել ապահովելու փոքրամասնությունների խմբերի, հատկապես՝ երեխաների համար մայրենի լեզվով կրթության հասանելիությունը (Ադրբեջան):

A/HRC/15/9 para(s) 93.47

### *Իրականացման ընթացքը*

- 2005 թվականին ընդունվել է ՀՀ սահմանդրությունը, որում ամրագրվել են մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները: Հոդված 14-ում խտրականության վերաբերյալ ամրագրվել է հետևյալ դրույթը՝ «Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից,

գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, արգելվում է»: Հոդված 39-ում ամրագրվել է կրթության իրավունքը՝ Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: Հիմնական ընդհանուր կրթությունը պարտադիր է: Միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է: Յուրաքանչյուր քաղաքացի ունի մրցութային հիմունքներով անվճար պետական բարձրագույն և այլ մասնագիտական կրթական հաստատություններում կրթություն ստանալու իրավունք՝ օրենքով սահմանված կարգով: Պետությունն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ֆինանսական և այլ աջակցություն է ցուցաբերում բարձրագույն և այլ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին և դրանցում սովորողներին:

1999թ. ՀՀ Ազգային Ժողովն ընդունել է «Կրթության մասին» ՀՀ օրենքը, որը՝ հիմնվելով սահմանադրական դրույթների վրա, որոշակիորեն ուղղորդում է կրթության համակարգի զարգացումը: Այս օրենքում ամրագրվել են կրթական իրավունքի պետական երաշխիքները, համաձայն որի՝ «ՀՀ-ն ապահովում է կրթության իրավունք՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային դրությունից կամ այլ հանգամանքներից»:

Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների համայնքներում հանրակրթական ուսուցումը և դաստիարակությունը կարող են կազմակերպվել իրենց մայրենի լեզվով՝ պետական ծրագրով և հովանավորությամբ, հայերենի պարտադիր ուսուցմամբ:

Հանրակրթական դպրոց սովորողի ընդունելությունը կատարվում է «ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություն սովորողի ընդունելության, տեղափոխման և ազատման կարգի» համաձայն, որը հաստատվում է ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով: Ըստ գործող կարգի, ազգային փոքրամասնությանը պատկանող քաղաքացու երեխաների ընդունելությունը դպրոց կատարվում է երեխայի ազգային (մայրենի) լեզվով ուսուցմամբ կամ այդ լեզվի դասընթաց ունեցող դպրոցում (դասարանում), իսկ դրա բացակայության դեպքում՝ ուսուցման լեզվի ընտրությունը կատարում են երեխաների (սովորողների) ծնողները:

ՀՀ Սահմանադրության համաձայն բոլոր քաղաքացիները, անկախ էթնիկ պատկանելությունից, կարող են մրցութային կարգով անվճար բարձրագույն կրթություն ստանալ: Այսինքն, օրենսդրորեն ազգային փոքրամասնություններ ներկայացնող քաղաքացիների համար բարձրագույն կրթության ոլորտում որևէ սահմանափակում չկա:

Միաժամանակ ՀՀ կառավարության 2002 թվականի համապատասխան որոշմամբ առանձին դեպքերում (լեռնային, բարձր լեռնային, սահմանամերձ գյուղական բնակավայրերի դպրոցներում, փոքրամասնությունների լեզուներով դասարաններ ունեցող քաղաքային և գյուղական դպրոցներում և այլ դեպքերում), կարող է բացվել

ավելի պակաս խտությամբ դասարան՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության թույլտվությամբ: Այս որոշումը հնարավորություն է ընձեռում եզդիական բնակչությամբ համայնքներում միայն եզդի երեխաներից բաղկացած դասարանների բացման համար:

Ազգությամբ ռուս և սլավոնական ծագում ունեցող ազգաբնակչության համար թվով 44 հանրակրթական դպրոցներում գործում են ռուսերենով ուսուցմամբ դասարաններ, որտեղ հանրակրթական առարկաների ուսուցումը իրականացվում է ռուսերեն լեզվով, բացառությամբ հայոց լեզու և գրականություն, ինչպես նաև հայոց պատմություն առարկաների:

Հայաստանում ապրող եզդիներն ու ասորիները պետական կառույցների աջակցությամբ հանրակրթության համակարգում ստեղծել են ուսումնամեթոդական բազա: ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտում գործում են «Իրանագիտության» և «Սեմագիտության» առարկայական հանձնաժողովները, որոնք իրականացնում են եզդիերեն, քրդերեն ու ասորերեն լեզուներով ուսումնական ծրագրերի, դասագրքերի, ձեռնարկների փորձաքննություն:

Մշակվել է ազգային փոքրամասնությունների կրթությունը զարգացնելուն ուղղված ծրագիր և ժամանակացույց, համաձայն որի, ամեն տարի տպագրվում են դասագրքեր՝ ՀՀ ազգային փոքրամասնությունների լեզուն, գրականությունը և մշակույթը ուսումնասիրելու համար:

Հաստատվել է «Ազգային փոքրամասնությունների հանրակրթական դպրոցի (դասարանի) օրինակելի ուսումնական պլանը», ըստ որի, ազգային փոքրամասնությունների մայրենի լեզվի և գրականության ուսուցման համար 1-12-րդ դասարաններում հատկացվել է շաբաթական 41 դասաժամ: Հաստատվել են քրդերենի և ասորերենի 1-12 –րդ դասարանների չափորոշիչն ու ծրագիրը:

Հայաստանում բնակվող ազգային փոքրամասնությունների համայնքների կողմից ներկայացված նախնական հայտերի հիման վրա պետական բյուջեում գումարներ են հատկացվում դասագրքերի հրատարակման համար: Հատկացված գումարների շնորհիվ հրատարակվել է ասորերեն լեզվով 1-ին և 2-րդ դասարանների դասագրքերը, քրդերենի «Այբբենարանը» և 2-4-րդ դասարանների դասագրքերը: Մշակվել և հրատարակվել են եզդիերենի 1-8-րդ դասարանների դասագրքերը, փորձաքննություն է անցել «Եզդիերեն 9» դասագիրքը: Այդ դասագրքերի մշակման աշխատանքներում ակտիվ մասնակցություն են ունեցել նաև եզդիական համայնքը, ներգրավված են եղել նաև Կրթության ազգային ինստիտուտի ազգությամբ եզդի մասնագետները:

Առավել ընդգրկուն է համագործակցությունը ռուսերեն լեզվի ուսուցման խնդիրների շուրջ: ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից «Հայրենագիտություն-5» և ավագ դասարանների մաթեմատիկայի դասագրքերը հայերենից թարգմանվել են ռուսերեն և տրամադրվել են ազգային փոքրամասնությունների դպրոցների աշակերտներին:

ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտի կողմից պարբերաբար իրականացվում են ազգությամբ եզդի ուսուցիչների վերապատրաստումներ, ինչպես

նաև կազմակերպվել են հայոց լեզվի ուսուցման դասընթացներ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար:

Բուհական համակարգում ներդնելու նպատակով ՀՀ կրթության և գիտության նախարարությունը տպագրության է երաշխավորել «Արամեագիտություն և ասորագիտության ներածություն դասագիրքը:

Դասագրքերի մշակման և տպագրման գործընթացը շարունակական է և առաջիկայում նույնպես կտպագրվեն նոր դասագրքեր: Հանրակրթական դպրոցներում ուսուցանվում է «Հայոց եկեղեցու պատմություն» առարկան, որում ներառվել են տեղեկություններ այլ ժողովուրդների ու ազգությունների պատմության, մշակույթների և կրոնների վերաբերյալ: ՄԱԿ-ի զարգացման ծրագրի աջակցությամբ հանրակրթության ոլորտում իրականացվում է «Հանդուժողականություն» ծրագիրը: Այդ նպատակով մշակվել է առարկան դասավանդող ուսուցչի ձեռնարկը: Ծրագիրը սովորողներին ուսուցանում է հանդուժողականություն, համագործակցություն, նպաստում է կոնֆլիկտների լուծմանը և այլն:

### *Հանձնարարական*

10.2 Շարունակել հետևողական և հաջողված քաղաքականությունը՝ ուղղված երկրում բնակվող բոլոր ազգային փոքրամասնությունների իրավունքների ապահովմանը, ինչպես նաև նրանց սոցիալական, տեղեկատվական և մշակութային կարիքների աջակցությանը (Բելառուս):

A/HRC/15/9 para(s) 93.51

### *Իրականացման ընթացքը*

- Ազգային փոքրամասնությունների իրավունքներին վերաբերող խնդիրների վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունն ընդգրկված է Եվրոպայի խորհրդի Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության շրջանակային կոնվենցիայի կատարման վերաբերյալ ՀՀ զեկույցներում: Տես ԵԽ կայքէջը: http://www.coe.int/t/dghl/monitoring/minorities/3_FCNMdocs/PDF_3rd_SR_Armenia_en.pdf

### *Հանձնարարական*

10.3 Ձեռնարկել պատշաճ միջոցներ Հայաստանում բնակվող միգրանտների և փախստականների հիմնարար իրավունքներն ավելի լավ պաշտպանելու համար (Ջիբութի):

A/HRC/15/9 para(s) 93.52

### *Իրականացման ընթացքը*

- «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 4-րդ գլուխն ամբողջությամբ նվիրված է ՀՀ-ում օտարերկրացիների աշխատանքի հարցերին: Օրենքի 22-րդ հոդվածի համաձայն օտարերկրացիները կարող են ՀՀ-ում աշխատանքային գործունեություն ծավալել լիազոր պետական մարմնի կողմից տրված աշխատանքի թույլտվության հիման վրա: Քանի որ այդ մարմինը ՀՀ կառավարության կողմից դեռևս որոշված չէ, օտարերկրացիների և գործատուների միջև կնքված աշխատանքային պայմանագիրն արդեն իսկ բավարար հիմք է հանդիսանում, որպեսզի նրանց Հայաստանում տրվի կացության ժամանակավոր կարգավիճակ և նրանք կարողանան ՀՀ-ում ծավալել աշխատանքային գործունեություն:

- Փախստականների իրավունքների պաշտպանության լրացուցիչ երաշխիք է 2010-2012թթ. ընթացքում ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտի ձևավորումը, ընդունվել են «Փախստականների և ապաստանի մասին» 2008թ. նոյեմբերի 27-ի ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող ՀՀ կառավարության 8 որոշումներ և 3 գերատեսչական ակտեր:

# Բովանդակություն

# Հավելված 1.

## Երեխայի իրավունքների կոմիտե
## 63-րդ նստաշրջան, 27 մայիսի – 14 հունիսի, 2013թ

### Երեխայի իրավունքների Կոմիտեի եզրափակիչ դիտարկումներ

Ամփոփիչ դիտարկումներ Հայաստանի Հանրապետության երրորդ և չորրորդ համատեղ պարբերական զեկույցի վերաբերյալ: Դիտարկումները հաստատվել են Կոմիտեի կողմից վաթսուներեքերորդ նիստում (27-ը մայիսի – 14-ը հունիսի, 2013 թ.)

1. Կոմիտեն ուսումնասիրեց Հայաստանի երրորդ և չորրորդ համատեղ պարբերական զեկույցը (CRC/C/ARM/3-4) Կոմիտեի 1790-րդ և 1791-րդ նիստերում (տես CRC/C/SR.1790 և 1791), որոնք անցկացվեցին 2013 թվականի մայիսի 29-ին, և 2013 թվականի հունիսի 14-ին գումարված՝ 1815-րդ նիստում հաստատեց հետևյալ ամփոփիչ դիտարկումները:

## I. Ներածություն

2. Կոմիտեն ողջունում է Հայաստանի երրորդ և չորրորդ համատեղ պարբերական զեկույցի և Կոմիտեի հարցերի ցանկի գրավոր պատասխանների (CRC/Q/ARM/3– 4/Add.1) ներկայացումը Հայաստանի կողմից, որի շնորհիվ հնարավոր եղավ ավելի լավ հասկանալ երեխաների իրավունքների վիճակը Մասնակից պետությունում: Կոմիտեն դրականորեն է գնահատում Մասնակից պետության բարձրաստիճան և բազմաոլորտային պատվիրակության հետ անցկացված կառուցողական երկխոսությունը:

## II. Իրականացված միջոցառումները և Մասնակից պետության ձեռք բերած առաջընթացը

3. Կոմիտեն ողջունում է հետևյալ օրենսդրական միջոցառումների իրականացումը.
   (ա) «Երեխայի իրավունքների մասին» օրենքում 2009 թվականի նոյեմբերի 18-ին, 2010 թվականի հոկտեմբերի 25-ին և 2011 թվականի մայիսի 23-ին կատարված փոփոխությունները և լրացումները, և
   (բ) Ընտանեկան օրենսգրքի ընդունումը 2004 թվականի նոյեմբերի 9-ին, ներառյալ՝ երեխաների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության վերաբերյալ դրույթները:
4. Կոմիտեն ողջունում է նաև հետևյալ ակտերի վավերացումը և/կամ Հայաստանի միացումը դրանց.
   (ա) Երեխայի իրավունքների մասին կոնվենցիային կից կամընտիր արձանագրությունը «Մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին»՝ 2005 թվականի հունիսին,
   (բ) Երեխայի իրավունքների մասին կոնվենցիային կից կամընտիր արձանագրությունը «Զինված հակամարտություններին երեխաների

մասնակցության վերաբերյալ» 2005 թվականի սեպտեմբերին,

(գ) Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին միջազգային կոնվենցիան՝ 2010 թվականի սեպտեմբերին,

(դ) Աշխատանքի միջազգային կազմակերպության թիվ 182 կոնվենցիան Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերն արգելելու և արմատախիլ անելու անհապաղ միջոցառումների մասին՝ 2006 թվականի հունվարին,

(ե) Աշխատանքի միջազգային կազմակերպության թիվ 138 կոնվենցիան Աշխատանքի ընդունման նվազագույն տարիքի մասին՝ 2006 թվականի հունվարին,

(զ) Հաագայի թիվ 34 կոնվենցիան Ծնողական պարտականությունների և երեխայի պաշտպանությանն ուղղված միջոցների առնչությամբ իրավասության, կիրառելի իրավունքի, ճանաչման, իրականացման և համագործակցության մասին՝ 2007 թվականի մարտին,

(է) Հաագայի թիվ 33 կոնվենցիան Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրման բնագավառում համագործակցության մասին՝ 2007 թվականի մարտին, և

(ը) Եվրոպայի խորհրդի կոնվենցիան մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին՝ 2008 թվականի ապրիլին:

5. Կոմիտեն ողջունում է նաև ինստիտուցիոնալ և հայեցակարգային հետևյալ միջոցառումների իրականացումը.

(ա) Երեխաների իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ազգային ծրագիրը,

(բ) Հայաստանի Հանրապետության մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին պետական աջակցության 2004-2015 թվականների ծրագիրը, և

(գ) Մանկական խնամակալական կազմակերպությունների բեռնաթափման 2004-2015 թվականների ծրագիրը:

## Ա. Մտահոգության տեղիք տվող հիմնական ոլորտները, առաջարկություններ

### *Կոմիտեի նախկին առաջարկությունները*

6. Ողջունելով Մասնակից պետության երկրորդ պարբերական զեկույցի վերաբերյալ Կոմիտեի 2004 թվականի փետրվարի 26-ի ամփոփիչ դիտարկումների (CRC/C/93/Add.6) իրագործման ուղղությամբ Մասնակից պետության գործադրած ջանքերը, Կոմիտեն, այնուհանդերձ, ափսոսանքով հիշատակում է, որ դրանում զետեղված առաջարկություններից մի քանիսը բավարար ուշադրության չեն արժանացել:

7. Կոմիտեն կոչ է անում Մասնակից պետությանը՝ ձեռնարկել ամփոփիչ այդ դիտարկումների (CRC/C/93/Add.6) մեջ զետեղված այն առաջարկությունների կատարման համար անհրաժեշտ բոլոր միջոցառումները, որոնք չեն իրագործվել կամ բավարար չափով չեն իրագործվել: Մասնավորապես, Հաննաժողովը Մասնակից պետությանն առաջարկում է.

(ա) Ձևավորել հավաքված տվյալների վերլուծության ամբողջական համակարգ, որը թույլ կտա գնահատել երեխաների իրավունքների իրացման ուղղությամբ ձեռք բերված առաջընթացը և կօգնի Կոնվենցիայի կատարումն ապահովող պետական քաղաքականության մշակմանը, և

(բ) Լրացուցիչ ջանքեր գործադրել Կոնվենցիայի և դրա կատարման մասին տեղեկությունների տարածման գործընթացում, ինչպես նաև՝ երեխաների հետ կամ նրանց համար աշխատող բոլոր մասնագիտական խմբերի համար մշակել Կոնվենցիայի դրույթների վերաբերյալ պարբերական և ընթացիկ վերապատրաստման ծրագրեր:

## *Օրենսդրությունը*

8. Կոմիտեն ի գիտություն է ընդունում երեխաներին առնչվող մի շարք օրենքների ընդունումը հաշվետու ժամանակաշրջանում, մասնավորապես՝ «Երեխայի իրավունքների մասին» 1996 թվականի օրենքում կատարված փոփոխությունները: Կոմիտեն նաև հարկ է համարում հիշատակել, որ երեխաների իրավունքների վիճակի բարելավմանն ուղղված բազմաթիվ օրենսդրական նախաձեռնություններ Խորհրդարանում սպասում են հաստատմանը: Այնուամենայնիվ, Կոմիտեն ափսոսանք է հայտնում, որ օրենսդրական այդ նախագծերից մի քանիսի ընդունումը ձգձգվում է արդեն մի քանի տարի, որն արգելակում է բազմաթիվ ոլորտներում երեխաների իրավունքների լիակատար և արդյունավետ իրացումը: Կոմիտեին մտահոգում է նաև երեխաների իրավունքների ոլորտում արդեն իսկ գործող օրենքների և իրավակարգավորումների անբավարար իրագործումը և կիրարկումը:

9. Կոմիտեն առաջարկում է Մասնակից պետությանը՝ արագացնել երեխաների իրավունքների բնագավառում օրենսդրական այն առաջարկների ընդունումը, որոնք լիովին համահունչ են Կոնվենցիային, և կոչ է անում Մասնակից պետությանը՝ ապահովելու օրենքների լիակատար և արդյունավետ կիրառությունը, ինչպես նաև՝ կիրարկման մեխանիզմների ներառումն օրենքների մեջ:

## *Համապարփակ քաղաքականությունը և ռազմավարությունը*

10. Կոմիտեն ի գիտություն է ընդունում Երեխաների իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ազգային ծրագրի, ինչպես նաև՝ Կոնվենցիայի տարբեր ուղղություններին վերաբերող բազմաթիվ այլ ռազմավարությունների և ծրագրերի ընդունումը: Այնուամենայնիվ, Կոմիտեն ափսոսում է, որ ծրագրերը և ռազմավարությունները չեն ապահովվում բավարար ֆինանսական միջոցներով, և հիմնականում հենվում են միջազգային կազմակերպությունների ֆինանսավորման վրա: Կոմիտեն նաև ափսոսում է, որ այդ ծրագրերի և ռազմավարությունների կատարողական առաջընթացի պարբերական գնահատում չի իրականացվում:

11. Կոմիտեն կոչ է անում Մասնակից պետությանը՝ տրամադրելու Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային ծրագրի և երեխաների իրավունքների բնագավառում ընդունված այլ ռազմավարությունների և ծրագրերի

արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ բոլոր մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսները: Կոմիտեն նաև առաջարկում է Մասնակից պետությանը՝ ապահովելու Ազգային ծրագրի և դրա կատարման արդյունավետության, ինչպես նաև՝ հնարավոր կրկնողություններից խուսափելու նպատակով՝ այլ ռազմավարությունների և ծրագրերի կատարման արդյունավետության պարբերական գնահատումը:

## *Համակարգումը*

12. Կոմիտեն ողջունում է Երեխայի իրավունքների պաշտպանության ազգային կոմիտեի՝ որպես համակարգող մարմնի ստեղծումը 2005 թվականին: Այնուհանդերձ, Կոմիտեն ափսոսանք է հայտնում, որ Երեխայի իրավունքների պաշտպանության ազգային կոմիտեն այնքան էլ արդյունավետորեն չի իրականացնում համակարգողի իր դերը: Կոմիտեին մտահոգում է նաև այն հանգամանքը, որ բավարար չափով չի իրականացվում միջոլորտային համակարգումը նախարարությունների և մարզային և տեղական մակարդակով գործող մարմինների միջև:

13. Կոմիտեն կոչ է անում Մասնակից պետությանը՝ անհրաժեշտ միջոցառումներ իրականացնելով Երեխայի իրավունքների պաշտպանության ազգային կոմիտեին վերապահել անհրաժեշտ լիազորությունները և տրամադրել համարժեք մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսներ, որպեսզի Երեխայի իրավունքների պաշտպանության ազգային կոմիտեն կարողանա պետական մարմինների միջև արդյունավետորեն համակարգել երեխաների իրավունքների պաշտպանությանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև՝ բարելավել միջոլորտային համակարգումը նախարարությունների միջև, ինչպես նաև՝ ազգային կառույցների և մարզային ու տեղական կառույցների միջև՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով գյուղական տարածաշրջաններին և առավել անբարենպաստ պայմաններում գտնվող տարածաշրջաններին:

## *Ռեսուրսների բաշխումը*

14. Կոմիտեին մտահոգում է բյուջետային հատկացումների էական կրճատումը, մասնավորապես՝ առողջապահության և կրթության բնագավառներում (համապատասխանաբար 2007 թվականին ՀՆԱ-ի 2.1%-ից մինչև 2012 թվականին 1.5%, և 2010 թվականին ՀՆԱ-ի 3.2%-ից մինչև 2012 թվականին 2.5%): Կոմիտեն ափսոսանք է հայտնում բյուջեի պատրաստման գործընթացում երեխայի իրավունքների վրա հիմնված մոտեցման վերաբերյալ անբավարար տեղեկատվության կապակցությամբ:

15. Կոմիտեն վերհիշում է 2007 թվականին Ընդհանուր քննարկումների օրվա ընթացքում իր հրապարակած առաջարկությունները «Ռեսուրսները հանուն երեխայի իրավունքների. պետությունների պատասխանատվությունը» խորագրի ներքո, և Մասնակից պետությանն առաջարկում է.

    (ա) Զգալիորեն ավելացնել և համարժեք մակարդակների հասցնել առողջապահության և կրթության բնագավառներում կատարվող հատկացումները,

    (բ) Ձևավորել բյուջետավորման այնպիսի գործընթաց, որում հաշվի

կառնվի երեխայի իրավունքների վրա հիմնված տեսակետը և երեխաների համար նախատեսված հստակ հատկացումներ կնախանշվեն ըստ համապատասխան ոլորտների և կառույցների, ներառյալ՝ որոշակի ցուցանիշներ և դրանց կատարումը վերահսկելու համակարգ, և

(գ) Ձևավորել մեխանիզմներ Կոնվենցիայի կատարման համար տրամադրվող ռեսուրսների համարժեքությունը և դրանց բաշխման արդյունավետությունը և արդարացիությունը մշտադիտարկելու և գնահատելու համար:

### *Անկախ մշտադիտարկումը*

16. Կոմիտեն ողջունում է Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակում երեխաների իրավունքների մշտադիտարկման, պաշտպանության և խթանման հարցերով պատասխանատու համակարգողի գործառույթի ստեղծումը 2011 թվականին: Այնուհանդերձ, Կոմիտեն մտահոգված է առ այն, որ Գրասենյակը բավարար կարողություններ և ռեսուրսներ չունի իր մանդատն արդյունավետորեն կատարելու համար: Կոմիտեն մտահոգված է նաև առ այն, որ հանրությունը, մասնավորապես՝ երեխաները, կարծես տեղյակ չեն Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին անհատական բողոքներ ներկայացնելու մեխանիզմի վերաբերյալ:

17. Հաշվի առնելով Կոմիտեի թիվ 2 ընդհանուր մեկնաբանությունը Մարդու իրավունքների անկախ հաստատությունների դերի վերաբերյալ (CRC/GC/2002/2), Կոմիտեն Մասնակից պետությանն առաջարկում է միջոցառումներ իրագործել Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակում երեխայի իրավունքներով զբաղվող առանձին ստորաբաժանում ստեղծելու ուղղությամբ՝ վերջինիս տրամադրելով անհրաժեշտ մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսները: Կոմիտեն նաև առաջարկում է Մասնակից պետությանը միջոցներ իրագործել՝ հանրությանը, մասնավորապես՝ երեխաներին զանգվածային լրատվամիջոցներով և դպրոցներում իրականացվող բացատրական զրույցների միջոցով տեղեկացնելու Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին անհատական բողոքներ ներկայացնելու մեխանիզմի վերաբերյալ: Այդ կապակցությամբ Կոմիտեն Մասնակից պետությանն առաջարկում է տեխնիկական համագործակցության համար դիմել, ի թիվս այլ կառույցների, Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների բարձր հանձնակատարի գրասենյակին և Միավորված ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամին («ՅՈՒՆԻՍԵՖ»):

## Բ. Ընդհանուր սկզբունքները (Կոնվենցիայի 2-րդ, 3-րդ, 6-րդ և 12-րդ հոդվածները)

### *Խտրականության բացառումը*

18. Կոմիտեին մտահոգում է գենդերի հիման վրա խտրականության տարածվածությունը: Կոմիտեին առանձնապես մտահոգում է պտղի սեռով պայմանավորված աբորտի երևույթը գյուղական բնակավայրերում: Կոմիտեին շարունակում է նաև մտահոգել փաստացի խտրականությունը խոցելի և առավել անբարենպաստ իրավիճակներում

հայտնված երեխաների տարբեր խմբերի, ներառյալ՝ հաշմանդամություն ունեցող երեխաների, ՄԻԱՎ-ով ապրող երեխաների, կարիքավոր ընտանիքների երեխաների, գյուղական բնակավայրերում ապրող երեխաների, փողոցային իրավիճակներում հայտնված և հաստատություններում ապրող երեխաների նկատմամբ:

19. Կոմիտեն կոչ է անում Մասնակից պետությանը՝ կիրարկելու գենդերի հիմքով խտրականության դեմ պայքարի մասին իր օրենսդրությունը և միջոցներ ձեռնարկելու՝ պտղի սեռով պայմանավորված աբորտը կանխելու և արգելելու ուղղությամբ: Կոմիտեն նաև առաջարկում է, որպեսզի Մասնակից պետությունն ապահովի որոշակի ծրագրերի իրագործումը խոցելի և առավել անբարենպաստ իրավիճակներում հայտնված երեխաների որոշակի խմբերի նկատմամբ խտրականության իրավիճակը հաղթահարելու նպատակով, ներառյալ՝ հաշմանդամություն ունեցող երեխաների, ՄԻԱՎ-ով ապրող երեխաների, կարիքավոր ընտանիքների երեխաների, գյուղական բնակավայրերում ապրող երեխաների, փողոցային իրավիճակներում հայտնված և հաստատություններում ապրող երեխաների համար: Կոմիտեն նաև խորհուրդ է տալիս Մասնակից պետությանը՝ հաջորդ պարբերական զեկույցում տեղեկություններ ներառելու Կոնվենցիային առնչվող և Մասնակից պետության կողմից իրականացված այն միջոցառումների և ծրագրերի մասին, որոնք վերաբերում են Ռասիզմի, ռասայական խտրականության, օտարատյացության և հարակից անհանդուրժողության թեմաներով 2001 թվականին գումարված համաշխարհային խորհրդաժողովում ընդունված Հռչակագրին և Միջոցառումների ծրագրին, ինչպես նաև՝ Դուրբանի 2009 թվականի վերանայման խորհրդաժողովում ընդունված ամփոփիչ փաստաթղթին:

## *Երեխայի լավագույն շահերը*

20. Կոմիտեն ի գիտություն է ընդունում, որ 2004 թվականին ընդունված Ընտանեկան օրենսգրքում ներառվել է «երեխայի օրինական շահերի» սկզբունքը, սակայն համարում է, որ «երեխայի օրինական շահեր» հասկացությունը շրջանակով համարժեք չէ «երեխայի լավագույն շահեր» հասկացությանը: Բացի դրանից, Կոմիտեն ափսոսում է, որ բավարար տեղեկություններ չկան այն ուղենիշների և ընթացակարգերի վերաբերյալ, որոնցով կարելի է ապահովել երեխայի լավագույն շահերը հաշվի առնելու՝ երեխայի իրավունքի առաջնահերթության կարգով և հետևողական ապահովումը Մասնակից պետության քաղաքականության, օրենսդրության և ծրագրերի մեջ:

21. Կոմիտեն Մասնակից պետության ուշադրությունը հրավիրում է Կոմիտեի թիվ 14 ընդհանուր մեկնաբանությանը, որը վերաբերում է երեխայի լավագույն շահերն առաջնահերթություն համարելու՝ երեխայի իրավունքին (CRC/C/GC/14) և առաջարկում է Մասնակից պետությանը փոփոխություններ կատարել իր օրենսդրության մեջ, որպեսզի Կոնվենցիայով ամրագրված այդ իրավունքն առավել լիարժեքորեն արտացոլված լինի օրենսդրության մեջ: Կոմիտեն նաև առաջարկում է Մասնակից պետությանը՝ լրացուցիչ ջանքեր գործադրելու միջոցով ապահովելու

այդ իրավունքի պատշաճ ներառումը և հետևողական կիրառությունը բոլոր օրենսդրական, վարչական և դատական վարույթներում, ինչպես նաև՝ բոլոր քաղաքականություններում, ծրագրերում և նախագծերում, որոնք առնչվում են երեխաների հետ և ազդում են նրանց վրա: Այս կապակցությամբ Մասնակից պետությանը կոչ է արվում՝ մշակելու ընթացակարգեր և չափորոշիչներ, որոնցով կուղղորդվեն բոլոր շահագրգիռ պաշտոնատար անձինք՝ ցանկացած բնագավառում երեխայի լավագույն շահերը որոշելիս, և դրանք տարածել հանրության, այդ թվում՝ ավանդական և կրոնական առաջնորդների, օրենքի դատարանների, վարչական իրավասու մարմինների և օրենսդիր մարմինների շրջանում:

### *Երեխայի տեսակետների հարգումը*

22. Կոմիտեն ի գիտություն է ընդունում այն հանգամանքը, որ երեխայի՝ լսված լինելու իրավունքը ներառված է մի շարք օրենքներում, սակայն մտահոգված է այն մասին, որ երեխաների տեսակետները կանոնավոր կերպով հաշվի չեն առնվում նրանց վրա ազդող տարբեր գործընթացներում, և ափսոսանք հայտնում, որ Երիտասարդական խորհրդարաններն արդյունավետորեն չեն գործում: Կոմիտեին մտահոգում է նաև այն, որ մինչև 18 տարեկան երեխայի նկատմամբ բժշկական միջամտություն կատարելու համար համաձայնությունը տալիս է միայն երեխայի օրինական ներկայացուցիչը:

23. Կոմիտեն Մասնակից պետության ուշադրությունը հրավիրում է երեխայի՝ լսված լինելու իրավունքի մասին Կոմիտեի թիվ 12 ընդհանուր մեկնաբանությանը (CRC/C/GC/12) և առաջարկում միջոցներ ձեռնարկել Կոնվենցիայի 12-րդ հոդվածին համապատասխան այս իրավունքի պաշտպանությունը կատարելագործելու ուղղությամբ: Կոմիտեն առաջարկում է, որպեսզի Մասնակից պետությունն այդ գործընթացում.

(ա) Օրենսդրության և քաղաքականության միջոցառումներ իրականացնի՝ խթանելով և օժանդակելով երեխային առնչվող ցանկացած հարցի կապակցությամբ երեխայի տեսակետների հարգումն ընտանիքում, դպրոցներում, խնամքի հաստատություններում և դատարաններում,

(բ) Վերստին ակտիվացնել և ուժեղացնել Երիտասարդական խորհրդարանները, քաջալերել երեխաների ակտիվ մասնակցությունը դրանց գործունեությանը,

(գ) Ապահովել, որպեսզի բժշկական միջամտությունների դեպքում հաշվի առնվեն երեխաների իրավունքների տեսակետները՝ ինչպես նախանշված է Կոմիտեի թիվ 15 ընդհանուր մեկնաբանության (CRC/C/GC/15) մեջ:

## Գ. Բռնությունը երեխաների նկատմամբ (Կոնվենցիայի 19-րդ հոդված, 37-րդ հոդվածի (ա) ենթակետ և 39-րդ հոդված)

### *Դաժան վերաբերմունքը և ֆիզիկական պատիժը*

24. Կոմիտեին մտահոգում են տեղեկություններն այն մասին, որ փակ և մասնակիորեն փակ հաստատություններում, մասնավորապես՝ Վանաձորի մանկատանը և Վանաձորի

երեխաների խնամքի և պաշտպանության կենտրոնում (թիվ 1 գիշերօթիկ դպրոցում) երեխաները ենթարկվում են դաժան վերաբերմունքի և բռնությանը: Կոմիտեին մտահոգում է նաև այն, որ չնայած այն փաստին, որ և Ընտանեկան օրենսգիրքը, և «Երեխայի իրավունքների մասին» 1996 թվականի օրենքը պարունակում են ֆիզիկական պատիժն արգելող դրույթներ, կիրարկման մեխանիզմներ չկան, և Մասնակից պետության օրենսդրությամբ չեն նախատեսվում պատժամիջոցներ խախտումների դեպքերի համար:

25. Կոմիտեն կոչ է անում Մասնակից պետությանը՝ հրատապ միջոցներ ձեռնարկել փակ և մասնակիորեն փակ հաստատություններում, մասնավորապես՝ Վանաձորի մանկատանը և Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության կենտրոնում (թիվ 1 գիշերօթիկ դպրոցում), հետաքննելու բռնության առանձին դեպքերը, ինչպես նաև՝ քրեական հետապնդման և պատժի ենթարկելու մեղավորներին: Ավելին, Կոմիտեն առաջարկում է Մասնակից պետությանն արգելել ֆիզիկական պատժի կիրառությունը ցանկացած իրավիճակում, ինչպես նաև՝ օրենսդրությամբ նախատեսել կիրարկման մեխանիզմներ, ներառյալ՝ համապատասխան պատիժներ խախտումների դեպքում: Կոմիտեն նաև առաջարկում է Մասնակից պետությանը՝ կատարելագործելու և ընդլայնելու իրազեկության բարձրացման և կրթման ծրագրերը և քարոզարշավները՝ նպատակ հետապնդելով խթանել երեխայի դաստիարակության և կարգապահության ապահովման պոզիտիվ, ոչ բռնի և մասնակցային ձևերը, ինչպես նաև՝ արագացնելու «Ընտանեկան բռնության մասին» օրենքի նախագծի ընդունումը:

### *Բռնության բոլոր ձևերից զերծ լինելու՝ երեխայի ազատությունը*

26. Վերհիշելով երեխաների նկատմամբ բռնության թեմայով Միավորված ազգերի կազմակերպության 2006 թվականի ուսումնասիրության (A/61/299) առաջարկությունները, Կոմիտեն առաջարկում է Մասնակից պետությանը՝ առաջնահերթ համարել երեխաների նկատմամբ բռնության բոլոր ձևերի վերացումը: Կոմիտեն նաև առաջարկում է Մասնակից պետությանը՝ հաշվի առնել թիվ 13 ընդհանուր մեկնաբանությունը (CRC/C/GC/13, 2011), մասնավորապես.

(ա) Մշակել համապարփակ ազգային ռազմավարություն երեխաների նկատմամբ բռնության բոլոր ձևերը կանխելու և վերացնելու նպատակով,

(բ) Ընդունել համակարգման ազգային ծրագիր երեխաների նկատմամբ բռնության բոլոր ձևերի դեմ պայքարելու նպատակով,

(գ) Ընդունել օրենսդրություն, որով ուղղակիորեն կարգելվեն երեխաների նկատմամբ բռնության բոլոր ձևերը ցանկացած իրավիճակներում,

(դ) Առանձնակի ուշադրություն դարձնել բռնության գենդերային բաղադրիչին,

(ե) Համագործակցել երեխաների նկատմամբ բռնության հարցերով ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցչի և Միավորված ազգերի կազմակերպության այլ համապատասխան կառույցների հետ:

### *Վնասակար պրակտիկայի դրսևորումները*

27. Կոմիտեն մտահոգությամբ նկատում է, որ եզդիական համայնքի աղջիկները հաճախ ամուսնանում են ավանդական արարողության շրջանակներում՝ նախքան ամուսնության օրինական տարիքի լրանալը:
28. Կոմիտեն առաջարկում է Մասնակից պետությանը՝ ամուսնության բոլոր ձևերի համար լիարժեքորեն կիրարկելու ամուսնանալու համար օրենքով սահմանված տարիքը, ինչպես նաև՝ մշակելու և իրականացնելու իրազեկության բարձրացման համապարփակ ծրագրեր՝ նվիրված իգական սեռի երեխաների առողջության, կրթության և զարգացման իրավունքների վրա վաղ ամուսնության բացասական հետևանքներին, առանձնահատուկ ուշադրություն դարձնելով ծնողներին և համայնքային առաջնորդներին:

## Դ. Ընտանեկան միջավայրը և այլընտրանքային խնամքը (Կոնվենցիայի 5-րդ, 18-րդ (1-ին և 2-րդ կետեր), 9-11-րդ, 19-21-րդ, 25-րդ, 27-րդ (4-րդ կետ) և 39-րդ հոդվածներ)

### *Ընտանեկան միջավայրը*

29. Կոմիտեն ողջունում է երեխայի պաշտպանության եռաշերտ համակարգը, որը ստեղծվել է ազգային, մարզային և տեղական մակարդակներում, սակայն մտահոգված է առ այն, որ տեղական մակարդակում երեխայի պաշտպանությունը կարծես հիմնականում իրականացվում է անհրաժեշտ որակավորում և մասնագիտական պատրաստվածություն չունեցող կամավորների կողմից: Կոմիտեն մտահոգված է նաև այն առումով, որ տնտեսական դժվարությունների և երեխաների կրթության ծախսերը կամ տարրական կարիքները հոգալու անկարողության պատճառով որոշ ընտանիքներ ստիպված են լինում իրենց երեխաներին տեղավորել գիշերօթիկ դպրոցներ և մանկատներ:
30. Կոմիտեն առաջարկում է, որպեսզի Մասնակից պետությունը միջոցներ ձեռնարկի՝ տեղական մակարդակում երեխաների պաշտպանության գործին ներգրավելու երեխաների հետ աշխատանքի փորձ ունեցող մասնագետների, և վերապատրաստումներ իրականացնի կամավորների համար, որը նույնպես կօժանդակի նրանց աշխատանքին: Կոմիտեն նաև առաջարկում է Մասնակից պետությանը՝ ավելացնելու խոցելի իրավիճակներում հայտնված ընտանիքներին, մասնավորապես՝ ծայրահեղ աղքատության մեջ ապրող ընտանիքներին ցուցաբերվող օժանդակությունը՝ համակարգված, երկարաժամկետ քաղաքականությունների և ծրագրերի միջոցով ապահովելով սոցիալական ծառայությունների և կայուն կերպով եկամուտներ վաստակելու հնարավորությունների հասանելիությունը նրանց համար: Կոմիտեն նաև առաջարկում է Մասնակից պետությանը՝ արգելելու երեխաների տեղավորումը խնամքի հաստատություններում միայն ֆինանսական պատճառներով, ինչպես նաև՝ հաստատություններ տեղավորելը կիրառել միայն բոլոր այլ միջոցների սպառված լինելու դեպքում՝

Երեխաների այլընտրանքային խնամքի մասին ՄԱԿ-ի կողմից 2009 թվականի նոյեմբերի 20-ին ընդունված ուղենիշներին համապատասխան:

## *Ընտանեկան միջավայրից զրկված երեխաները*

31. Կոմիտեն ողջունում է կառավարության այն որոշումը, որով հստակեցվել են խնամքի հաստատություններ ընդունման չափորոշիչները: Այնուհանդերձ, Կոմիտեին շարունակում են մտահոգել հետևյալ հանգամանքները.

(ա) Ընտանեկան միջավայրից զրկված երեխաների համար ընտանիքահեն և համայնքահեն խնամքի այլընտրանքային համակարգերը բավարար չեն: Խնամատար ընտանիքները շատ սակավաթիվ են,

(բ) Գնալով ավելանում է խնամքի հաստատություններ տեղավորվող այն երեխաների թիվը, ովքեր հատկապես խոցելի իրավիճակում հայտնված ընտանիքներից են, սակայն ծնողներից առնվազն մեկը կենդանի է,

(գ) Չնայած սահմանված չափորոշիչներին, չկան որոշակի երաշխիքներ և ընթացակարգեր, որոնք կապահովեն հաստատություններում իրականացվող խնամքի կիրառությունը միայն բոլոր այլ միջոցների իսկապես սպառված լինելու դեպքում,

(դ) Խնամքի հաստատություններից դուրս եկող երեխաներին ցուցաբերվող աջակցությունը նախկինի պես անբավարար է:

32. Վերհիշելով Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի 2009 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 64/142 բանաձևին կցված՝ Երեխաների այլընտրանքային խնամքի վերաբերյալ ուղենիշները, Կոմիտեն Մասնակից պետությանն առաջարկում է.

(ա) Ապահովել ընտանիքահեն և համայնքահեն խնամքի այլընտրանքային բավարար տարբերակներ ընտանեկան միջավայրից զրկված երեխաների համար,

(բ) Ավելացնել համընդհանուր և հասցեական ծառայությունների տեսքով խոցելի իրավիճակներում հայտնված ընտանիքներին ցուցաբերվող օժանդակությունը՝ զարգացնելով նրանց ծնողավարման հմտությունները, և նրանց ներգրավելով սոցիալական աջակցության ծրագրերի մեջ,

(գ) Ապահովել խնամքի հաստատություններում տեղավորելը միայն բոլոր այլ միջոցների սպառված լինելու դեպքում, ինչպես նաև՝ համարժեք երաշխիքների և կարիքների վրա և երեխայի լավագույն շահերի վրա հիմնված հստակ չափորոշիչների կիրառությունը երեխային խնամքի հաստատությունում տեղավորելու նպատակահարմարությունը որոշելու համար, և

(դ) Առավելագույն օժանդակություն ցուցաբերել հաստատություններից դուրս եկող երեխաներին ուսման և/կամ աշխատանքի հնարավորություններ գտնելու հարցում, ինչպես նաև՝ նրանց համար ապահովել համարժեք կացարան:

## *Որդեգրումը*

33. Կոմիտեն ողջունում է որդեգրման կարգի ընդունումը 2010 թվականին,

ինչպես նաև՝ Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրման բնագավառում համագործակցության մասին Հաագայի թիվ 33 կոնվենցիայի վավերացումը: Այնուամենայնիվ, Կոմիտեին մտահոգում են դրանց իրագործման թերությունները: Կոմիտեին, մասնավորապես, մտահոգում են հետևյալ հանգամանքները.

(ա) Որդեգրման գործընթացի մշտադիտարկումը և վերանայումը կենտրոնացված չեն և իրականացվում են մարզային մակարդակով՝ ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանության ստորաբաժանումների կողմից, մինչդեռ որոշումները կայացվում են տեղական դատարանների կողմից,

(բ) Որդեգրող ծնողների ընտրության չափորոշիչները չափազանց ֆորմալ են և հիմնված են պոտենցիալ ծնողների նյութական վիճակի, այլ ոչ՝ ծնողավարման հմտությունների վրա,

(գ) Որդեգրման գործընթացին մասնակցող սուբյեկտների մասնավոր գաղտնիքի պաշտպանությունն օգտագործվում է որպես հիմք՝ որդեգրման գործընթացի մշտադիտարկման սահմանափակումներն արդարացնելու նպատակով:

34. Կոմիտեն առաջարկում է Մասնակից պետությանն արդյունավետ մեխանիզմներ ստեղծել Հաագայի թիվ 33 կոնվենցիան և որդեգրման 2010 թվականի կարգի կատարումն ապահովելու ուղղությամբ, մասնավորապես.

(ա) Ստեղծել որդեգրման գործընթացի վերանայման կենտրոնացված համակարգ,

(բ) Սահմանել որդեգրող ծնողների ընտրության հստակ չափորոշիչներ և ընթացակարգեր, որոնք հիմնված կլինեն ոչ միայն նրանց նյութական վիճակի, այլ նաև՝ այլ պայմանների վրա, որոնք երեխային հնարավորություն կընձեռեն՝ մեծանալու առողջ և ապահով միջավայրում, պատասխանատու ծնողների հետ, և վերապատրաստման և օժանդակության ծառայություններ մատուցել որդեգրող ծնողներին որդեգրումից առաջ և հետո, և

(գ) Ստեղծել որդեգրման գործընթացի բոլոր քայլերի՝ անկախ մարմնի կողմից մշտադիտարկման համակարգ:

## Ե. Հաշմանդամությունը, տարրական առողջությունը և բարեկեցությունը (Կոնվենցիայի 6-րդ, 18-րդ (3-րդ կետ), 23-րդ, 24-րդ, 26-րդ, 27-րդ (1-ինից 3-րդ կետեր) հոդվածները)

### *Հաշմանդամություն ունեցող երեխաները*

35. Կոմիտեն ողջունում է «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» օրենքի ընդունումը 2005 թվականին և «Հանրակրթության մասին» օրենքում փոփոխությունների ընդունումը 2012 թվականին, որոնցով նախատեսվում է ներառական կրթությունն առանձնահատուկ կարիքներ ունեցող երեխաների համար: Այնուամենայնիվ, Կոմիտեին մտահոգում է, որ.

(ա) Մանկատներում գտնվող և հաշմանդամություն ունեցող երեխաների թիվը և տոկոսաբաժինն աճում

են՝ պայմանավորված ընտանեկան օժանդակության պակասով և ընտանիքահեն և համայնքահեն այլընտրանքային խնամքի այլընտրանքային տարբերակների անբավարարությամբ,

(բ) Մարզերում բնակվող և հաշմանդամություն ունեցող երեխաներին հասանելի չեն համարժեք խնամքը և ծառայությունները, հատկապես՝ վաղ հայտնաբերման և վերականգնողական ծառայությունները,

(գ) Հաշմանդամություն ունեցող երեխաները մնում են խնամքի հաստատություններում նույնիսկ ավարտելուց հետո, քանի որ նրանց չեն տրամադրվում այլ լուծումներ, իսկ մտավոր հաշմանդամություն ունեցող երեխաները հաճախ տեղավորվում են հոգեբուժական հիվանդանոցներում,

(դ) Չնայած ներառական կրթության ավելացող միտումներին, հաշմանդամություն ունեցող բազմաթիվ երեխաներ, ովքեր ապրում են խնամքի հաստատություններում և գյուղական շրջաններում, ֆորմալ կրթություն չեն ստանում, և

(ե) Անվճար ծառայությունները ցածրորակ են, որը ստիպում է հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողներին՝ լրացուցիչ վճարումներ կատարել, օրինակ, որակյալ պրոթեզներ կամ օրթոպեդիկ կոշիկներ ստանալու համար:

36. Հաշվի առնելով Հաշմանդամություն ունեցող երեխաների իրավունքների մասին Կոմիտեի թիվ 9 ընդհանուր մեկնաբանությունը (CRC/C/GC/9, 2006), Կոմիտեն Մասնակից պետությանը կոչ է անում ապահովել իր օրենսդրության, քաղաքականության և պրակտիկայի համապատասխանությունը, ի թիվս այլ պահանջների, Կոնվենցիայի 23-րդ և 27-րդ հոդվածներին՝ նպատակ ունենալով արդյունավետորեն և առանց խտրականության հոգալ հաշմանդամություն ունեցող երեխաների կարիքները: Ավելին, Կոմիտեն Մասնակից պետությանն առաջարկում է.

(ա) Միջոցներ ձեռնարկել հաշմանդամություն ունեցող երեխաների ապաինստիտուցիոնալացման ուղղությամբ և նրանց տրամադրել ընտանիքահեն և համայնքահեն խնամքի այլընտրանքային տարբերակներ,

(բ) Բավարար մարդկային, տեխնիկական և ֆինանսական միջոցներ հատկացնել՝ ապահովելու վաղ հայտնաբերման և վերականգնողական ծառայությունների առկայությունը հաշմանդամություն ունեցող երեխաների, հատկապես՝ մարզաբնակ երեխաների համար,

(գ) Ապահովել համարժեք օժանդակության տրամադրումը հաշմանդամություն ունեցող երեխաներին՝ անգամ խնամքի հաստատություններն ավարտելուց հետո, ինչպես նաև՝ ապահովել, որպեսզի մտավոր հաշմանդամություն ունեցող երեխաները ոչ թե տեղավորվեն հոգեբուժական հաստատություններում, այլև՝ ստանան համարժեք օժանդակություն և տեղ համայնքում,

(դ) Շարունակել ջանքեր գործադրել՝ հաշմանդամություն ունեցող երեխաներին ներառելու ընդհանուր կրթական համակարգում, ընդ որում՝ այդ ընթացքում առանձնակի

ուշադրություն դարձնել խնամքի հաստատություններում և գյուղական շրջաններում բնակվող հաշմանդամություն ունեցող երեխաներին,

(ե) Հրատապ քայլեր ձեռնարկել՝ ապահովելու, որպեսզի ծառայություններ մատուցողները վճարներ չգանձեն անվճար ծառայությունների դիմաց, և կանոնավոր հսկողություն իրականացնել մատուցվող ծառայությունների և պրոդուկտների որակի նկատմամբ:

## *Առողջությունը և առողջապահական ծառայությունները*

37. Կոմիտեն ողջունում է Անվճար ծննդօգնության պետական հավաստագրի 2008 թվականի ծրագիրը և Երեխաների հավաստագրի 2011 թվականի ծրագիրը, որոնք նպատակաուղղված են մոր և մանկան առողջության բարելավմանը: Կոմիտեն նաև ողջունում է Միկրոտարրերով և վիտամիններով ցորենի ալյուրի հարստացման 2011 թվականի հայեցակարգի և Պարենային անվտանգության հայեցակարգի և 2010-2015 թթ. գործողությունների ծրագրի հաստատումը: Այնուամենայնիվ, Կոմիտեին շարունակում են մտահոգել հետևյալ հանգամանքները.

(ա) Քաղաքային և գյուղական բնակավայրերի միջև առկա են առողջապահական ծառայությունների հասանելիության էական տարբերություններ, քանի որ որոշ ծառայություններ, օրինակ՝ ինտենսիվ նեոնատալ խնամքի ծառայությունները, առկա են միայն մայրաքաղաքում,

(բ) Չնայած նորածնային մահացության կրճատման առումով ունեցած ձեռքբերումներին, նեոնատալ և պերինատալ մահացության ցուցանիշները մնում են բարձր՝ պայմանավորված նեոնատալ բաժանմունքներում սարքավորումների անբավարարությամբ և աշխատողների ոչ բավարար մասնագիտական պատրաստվածությամբ,

(գ) Ոչ պաշտոնական (չձևակերպվող) վճարումները լայն տարածում ունեն, հատկապես՝ հիվանդանոցային պայմաններում, որը խոչընդոտներ է առաջացնում անվճար բուժօգնության հասանելիության ճանապարհին,

(դ) Չկան բավարար թվով որակավորված բուժաշխատողներ, ովքեր կունենային մոր և մանկան առողջության ծառայությունների մատուցման բավարար փորձ թե պրոֆիլակտիկայի, թե արտաքին բուժման ծառայությունների կամ՝ հիվանդանոցներում բուժում իրականացնելու առումներով, և

(ե) Չնայած սնուցման ոլորտում ունեցած էական ձեռքբերումներին, կանանց և երեխաների շրջանում թերսնուցման խնդիրները շարունակում են լայն տարածում ունենալ, հատկապես՝ գյուղական շրջաններում, և գիրության բարձր ցուցանիշ է նկատվում մինչև 5 տարեկան երեխաների շրջանում:

38. Կոմիտեն կոչ է անում Մասնակից պետությանը.

(ա) Ապահովել առողջապահական բոլոր ծառայությունների հավասար հասանելիությունը,

մասնավորապես՝ արդար կերպով ապահովել առողջապահական ծառայությունների հասանելիությունը հղիության, ծննդաբերության ընթացքում, ներառյալ՝ շտապ ծննդօգնության և նեոնատալ շրջանում նորածնի խնամքի տեսքով, ինչպես նաև՝ բավարար ռեսուրսներ ապահովել գյուղական բնակավայրերում շտապ բուժօգնության և վերակենդանացման ծառայություններ մատուցելու համար,

(բ) Առողջապահական հաստատություններին տրամադրել բավարար նյութատեխնիկական միջոցներ, պարագաներ և սարքավորումներ, մասնավորապես՝ նեոնատալ բաժանմունքներում, ինչպես նաև՝ կազմակերպել աշխատողների մասնագիտական վերապատրաստումը,

(գ) Վերացնել անվճար առողջապահական ծառայությունների դիմաց կատարվող բոլոր ոչ պաշտոնական վճարումները, և ստեղծել այս պահանջը չկատարելու դեպքերի մասին հաղորդումներ ներկայացնելու և միջոցներ ձեռնարկելու գաղտնի համակարգ,

(դ) Միջոցներ ձեռնարկել՝ ապահովելու երեխաների առողջապահության համար պատասխանատու առողջապահական բոլոր մասնագետների պատշաճ որակավորումը և մասնագիտական պատրաստվածությունը, և

(ե) Շարունակել հղի կանանց, նորածինների, նախադպրոցական տարիքի երեխաների և դեռահասների սնուցման վիճակի բարելավմանն ուղղված գործողությունների ծրագրերի և հայեցակարգերի իրականացումը, հատկապես՝ գյուղական բնակավայրերում: Դա ներառում է առողջ սննդի սովորությունների տարածումը, շաքարով հարուստ ըմպելիքների և վերամշակված արագ սննդի ավելորդ սպառման նվազեցումը, քանի որ դա նպաստում է երեխաների շրջանում գիրության խնդիրների սրացմանը:

Այս կապակցությամբ անհրաժեշտ է վերոհիշյալ առաջարկությունները կյանքի կոչելու համար ֆինանսական և տեխնիկական աջակցություն հայցել ՄԱԿ-ի մանկական հիմնադրամից և Առողջապահության համաշխարհային կազմակերպությունից:

## ՄԻԱՎ/ՁԻԱՀ

39. Կոմիտեն դրական է գնահատում մորից մանկանը ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելման ծառայությունների ներդրումը: Այնուամենայնիվ, Կոմիտեին շարունակում է մտահոգել այն փաստը, որ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին իրազեկվածությունը ծայրահեղ ցածր է, հատկապես՝ գյուղական բնակավայրերում ապրող երեխաների շրջանում:

40. Հաշվի առնելով Կոմիտեի թիվ 3 ընդհանուր մեկնաբանությունը ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և երեխայի իրավունքների մասին (CRC/GC/2003/4, 2003), Կոմիտեն խորհուրդ է տալիս Մասնակից պետությանը՝ շարունակել Մորից մանկանը ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելման ծառայությունների աշխատանքը և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ իրազեկության բարձրացման լրացուցիչ արշավներ իրականացնել դեռահասների շրջանում, հատկապես՝ գյուղական բնակավայրերում: Կոմիտեն Մասնակից

պետությանը խորհուրդ է տալիս վերոհիշյալ աշխատանքները կատարելիս տեխնիկական աջակցություն հայցել, ի թիվս այլ կառույցների, Միավորված ազգերի կազմակերպության ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի համատեղ ծրագրից («UNAIDS») և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամից:

## Կրծքով կերակրումը

41. Կոմիտեին մտահոգում է այն հանգամանքը, որ «մանկան բարեկամ» հիվանդանոցային նախաձեռնությունների ներդրումը և վերագնահատման գործընթացը 2008 թվականից ի վեր կասեցվել են: Կոմիտեին մտահոգում է նաև այն հանգամանքը, որ նորածնային սնունդ արտադրող և տարածող ընկերություններն ագրեսիվ շուկայահանում են իրականացնում, և բավարար չափով չեն կիրարկվում նորածնային սննդի շուկայահանումը կանոնակարգող օրենքները:

42. Կոմիտեն Մասնակից պետությանն առաջարկում է.

(ա) Միջոցներ ձեռնարկել՝ վերսկսելու «մանկան բարեկամ» հիվանդանոցային նախաձեռնությունների իրականացումը, ապահովել ծննդատների համապատասխանությունը կիրառելի չափանիշներին և ծննդատների՝ որպես «մանկան բարեկամ» հիվանդանոցների հավաստագրումը «Մանկան բարեկամ» հիվանդանոցների նախաձեռնության շրջանակներում,

(բ) Ապահովել կրծքի կաթին փոխարինող կերերի շուկայահանմանն առնչվող միջազգային գործող իրավակարգավորումների կանոնավոր մշտադիտարկումը և անհրաժեշտ քայլեր ձեռնարկել այդ իրավակարգավորումների պահանջները խախտողների նկատմամբ, միաժամանակ արագացնելով «Կրծքով կերակրման մասին» օրենքի նախագծի ընդունումը, և

(գ) Հաստատություններում և համայնքներում գործող առողջապահական համակարգի միջոցով խթանել նորածինների և մանուկների պատշաճ կերակրման պրակտիկայի տարածումը:

## Կենսամակարդակը

43. Կոմիտեն ափսոսանք է հայտնում այն փաստի առթիվ, որ տնտեսական ճգնաժամի պատճառով աճել է աղքատության ցուցանիշը երեխաների շրջանում, ընդ որում՝ ամենաշատը տուժել են հաշմանդամություն ունեցող երեխաները: Կոմիտեն ողջունում է երեխաներ ունեցող ընտանիքների համար նախատեսված նպաստների գործող համակարգը, սակայն մտահոգված է, որ ծայրահեղ աղքատ ընտանիքների միայն 54.3%-ը և աղքատ ընտանիքների միայն 4.1%-ն են պարբերաբար օգտվում դրանցից, որն ընտանեկան նպաստների բանաձևի թերությունների և պետական օժանդակության առկա մեխանիզմների մասին ոչ բավարար իրազեկվածության հետևանք է:

44. Կոմիտեն Մասնակից պետությանը կոչ է անում՝ նոր թափ հաղորդելով շարունակել պայքարն աղքատության դեմ՝ ապահովելով նպաստների համակարգերի մեջ բոլոր խոցելի ընտանիքների ընդգրկումը, ապահովելով պետական օժանդակության հասանելիությունը նրանց համար, և բարձրացնելով առկա նպաստների

մասին իրազեկվածությունը, ինչպես նաև՝ երաշխավորել բոլոր երեխաների համարժեք կենսամակարդակի իրավունքը:

## Զ. Կրթությունը, ժամանցը և մշակութային միջոցառումները (Կոնվենցիայի 28-րդ, 29-րդ և 31-րդ հոդվածները)

### *Կրթությունը, ներառյալ՝ մասնագիտական վերապատրաստումը և ուղղորդումը*

45 Կոմիտեն ողջունում է այն հանգամանքը, որ մայրենի լեզվով կրթությունը և դասագրքերը հասանելի են փոքրամասնությունների խմբերի երեխաներին: Այնուամենայնիվ, Կոմիտեին շարունակում են մտահոգել հետևյալ հանգամանքները.

(ա) Անբավարար վիճակում է դպրոցների, հատկապես՝ նախակրթարանների ենթակառուցվածքը, այդ թվում՝ խնդրահարույց են մնում ջեռուցման անբավարարությունը, ջրի և սանիտարահիգիենիկ պայմանների անհամարժեքությունը,

(բ) Կրթության որակը մնում է ցածր, և ցածր է պահանջարկն արհեստավարժ ուսուցիչների նկատմամբ,

(գ) Հիմնական կրթությունից հետո դպրոցներից դուրս մնացողների տոկոսային ցուցանիշը բարձր է, և

(դ) Երկրում առավել տարածված կրոնի ուսուցումը պարտադիր առարկա է դպրոցների ուսումնական ծրագրերում:

46. Հաշվի առնելով Կոմիտեի թիվ 1 ընդհանուր մեկնաբանությունը կրթության նպատակների վերաբերյալ (CRC/GC/2001/1), Կոմիտեն Մասնակից պետությանն առաջարկում է.

(ա) Ներդրումներ անել դպրոցների ենթակառուցվածքի բարելավման համար, այդ թվում՝ բարելավելով ջեռուցման, ապահով խմելու ջրի և սանիտարահիգիենիկ պայմանների հասանելիությունը, մասնավորապես՝ նախակրթարանների շենքերում,

(բ) Համարժեք մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսներ տրամադրել ուսուցիչների կրթությունը բարելավելու համար, ինչպես նաև՝ որակավորման խիստ պահանջներ սահմանել որպես ուսուցիչ աշխատող անձանց համար,

(գ) Իրականացնել ուսումնասիրություն՝ պարզելով դպրոցներից դուրս մնալու խորքային պատճառները, և շահագրգռել երեխաներին, որպեսզի շարունակեն կրթությունը միջնակարգ դպրոցում, և

(դ) Վերանայել դպրոցների ուսումնական ծրագիրը՝ դրանում արտացոլելով բոլոր երեխաների կրոնի ազատությունը և վերացնելով Հայաստանյայց եկեղեցու պատմության առարկայի պարտադիր դասավանդումը:

## Է. Հատուկ պաշտպանության այլ միջոցները (Կոնվենցիայի 22-րդ, 30-րդ, 38-րդ, 39-րդ, 40-րդ, 37-րդ (բ)-(դ), 3236 հոդվածներ)

### *Չուղեկցվող, ապաստան հայցող և փախստական երեխաները*

Կոմիտեն ողջունում է «Փախստականների և ապաստանի մասին» 2008 թվականի օրենքի ընդունումը, որով նախատեսվում են չուղեկցվող փախստական երեխաների և ապաստան հայցող երեխաների պաշտպանության հիմնարար երաշխիքները: Այնուամենայնիվ, Կոմիտեն ափսոսում է, որ օրենքը չի համապատասխանում Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի կոնվենցիայով ամրագրված նվազագույն սոցիալ-տնտեսական չափանիշներին, ինչպիսիք են, օրինակ, բարվոք բնակարանային պայմանների հասանելիությունը, պետական օգնությունը և նատուրալիզացիան: Կոմիտեին մտահոգում է նաև այն հանգամանքը, որ փախստական որոշ ծնողներ դժվարությունների են հանդիպում իրենց երեխաներին դպրոցներում տեղավորելու գործում՝ պայմանավորված նախկին դպրոցների փաստաթղթերի բացակայությամբ և փաստաթղթերի հայերեն թարգմանության խնդիրներով: Կոմիտեին մտահոգում է նաև այն հանգամանքը, որ Մասնակից պետության քաղաքացիության մասին օրենքն ունի բացեր, որոնք կարող են քաղաքացիություն չունենալու վտանգ առաջացնել օտարերկրացի ծնողների երեխաների կամ Հայաստանի քաղաքացիությունից զրկված ծնողների երեխաների համար:Հաշվի առնելով Կոմիտեի թիվ 6 ընդհանուր մեկնաբանությունը ծագման երկրից դուրս գտնվող չուղեկցվող և առանձնացված երեխաների նկատմամբ վերաբերմունքի մասին (CRC/GC/2005/6), Կոմիտեն Մասնակից պետությանն առաջարկում է փոփոխություններ կատարել «Փախստականների և ապաստան հայցողների մասին» օրենքում՝ ապահովելու հիմնարար երաշխիքները և դրանց արդյունավետ իրագործումը: Կոմիտեն նաև առաջարկում է Մասնակից պետությանը՝ ապահովել կրթության հասանելիությունը բոլոր երեխաներին, անկախ նրանց կարգավիճակից, ինչպես նաև՝ վերացնել փախստական և ապաստան հայցող երեխաների՝ կրթական համակարգի մեջ ընդգրկման ճանապարհին առկա վարչական խոչընդոտները: Ավելին, Կոմիտեն Մասնակից պետությանն առաջարկում է փոփոխություններ կատարել օրենսդրության մեջ՝ ապահովելու, որպեսզի իր իրավազորության ներքո գտնվող ոչ մի երեխա իրավակարգավորումների կամ պրակտիկայի հետևանքով չդառնա քաղաքացիություն չունեցող անձ:

### *Տնտեսական շահագործումը, ներառյալ՝ մանկական աշխատանքը*

47. Կոմիտեին մտահոգում է այն հանգամանքը, որ զգալի թվով երեխաներ, ներառյալ՝ 14 տարեկանը չլրացած երեխաներ, դուրս են մնում դպրոցից, որպեսզի աշխատեն ոչ ֆորմալ ոլորտներում, օրինակ՝ գյուղատնտեսությունում, ավտոսպասարկման և շինարարության ոլորտներում, մետաղի ջարդոնի հավաքման գործում և ընտանեկան բիզնեսում: Կոմիտեին առանձնապես մտահոգում է փողոցներում մուրալով զբաղված և ծանր ֆիզիկական (բանվորի և բեռնողի) աշխատանք կատարող երեխաների թվի աճը: Կոմիտեին մտահոգում է նաև այն հանգամանքը,

որ աշխատանքի տեսչություններն արդյունավետորեն չեն վերահսկում մանկական աշխատանքը:

48. Կոմիտեն կոչ է անում Մասնակից պետությանը՝ ապահովելու աշխատանքային օրենսդրության և պրակտիկայի համապատասխանությունը Կոնվենցիայի 32-րդ հոդվածին, ներառյալ՝ գործող օրենքների արդյունավետ կիրառությունը և աշխատանքի տեսչությունների հզորացումը և ներգրավումը, ինչպես նաև՝ ստեղծելու մանկական աշխատանքի մասին հաղորդումներ ներկայացնելու մեխանիզմներ: Կոմիտեն նաև առաջարկում է Մասնակից պետությանը՝ ապահովելու երեխաների շահագործման մեղավորների նկատմամբ համաչափ պատժամիջոցների կիրառությունը, ընդ որում՝ այդ ընթացքում ապահովել հաղորդումներ ներկայացնելու մեխանիզմների մասին երեխաների տեղեկացվածությունը և նման մեխանիզմների հասանելիությունը երեխաներին: Կոմիտեն նաև առաջարկում է Մասնակից պետությանը՝ այս առնչությամբ տեխնիկական աջակցություն հայցելու Աշխատանքի միջազգային կազմակերպության՝ Մանկական աշխատանքի վերացման միջազգային ծրագրից:

### *Անչափահասների արդարադատության իրականացումը*

51. Ի գիտություն ընդունելով, որ Մասնակից պետության դատարաններից յուրաքանչյուրում կա երեխաների գործերի քննությամբ մասնագիտացող մեկական դատավոր, և որ օրենքի հետ խնդիրներ ունեցող երեխաների հարցերը կանոնակարգվում են քրեական օրենսդրությամբ, Կոմիտեին, այնուամենայնիվ, շարունակում են մտահոգել հետևյալ հանգամանքները.

(ա) Չկա անչափահասների արդարադատության ամբողջական համակարգ, ներառյալ՝ անչափահասների դատարաններ և անչափահասների արդարադատության վերաբերյալ համապարփակ օրենսդրություն, կամ՝ արտադատական ուղղորդման մեխանիզմների վերաբերյալ դրույթներ կամ արդարադատության պաշտոնական համակարգի փոխարեն՝ արդյունավետ այլընտրանքներ,

(բ) Երեխաները տևական ժամանակ պահվում են նախնական կալանքի տակ նախաքննության ընթացքում,

(գ) Երեխաների նկատմամբ կարող են կիրառվել 5-10 օր ժամկետով մեկուսախցում պահման պատժամիջոցներ,

(դ) Աբովյանի քրեակատարողական հիմնարկը, որտեղ պահվում են ազատությունից զրկված երեխաները, չունի հիգիենայի տարրական պարագաներ և անկողիններ: Նման հիմնարկներում պահվող երեխաները չեն ստանում պատշաճ կրթություն, և

(ե) Քրեակատարողական հիմնարկներից դուրս եկող երեխաների համար չկան վերականգնման և վերահինտեգրման արդյունավետ ծրագրեր:

52. Կոմիտեն կոչ է անում Մասնակից պետությանը՝ սահմանելու հստակ ժամկետ Քրեական դատավարության օրենսգրքի նախագծի քննարկման համար, որով նախատեսվում է անչափահասների արդարադատության ամբողջական համակարգի ստեղծումը,

ինչպես նաև՝ ապահովել դրա լիակատար համապատասխանությունը Կոնվենցիային, մասնավորապես՝ 37-րդ, 39-րդ և 40-րդ հոդվածներին, ինչպես նաև՝ կիրառելի այլ չափանիշներին, ներառյալ՝ Միավորված ազգերի կազմակերպության Անչափահասների արդարադատության իրականացման ստանդարտ նվազագույն կանոններին («Պեկինյան կանոններ»), Միավորված ազգերի կազմակերպության Անչափահասների օրինազանցության կանխարգելման ուղենիշներին («Ռիադյան ուղենիշներ»), Ազատությունից զրկված անչափահասների պաշտպանության կանոններին («Հավանային կանոններ»), Քրեական արդարադատության համակարգում հանուն երեխաների ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ ուղենիշներին և Կոմիտեի թիվ 10 ընդհանուր մեկնաբանությանը (CRC/C/GC/10, 2007): Մասնավորապես, Կոմիտեն Մասնակից պետությանն առաջարկում է.

(ա) Ստեղծել անչափահասների արդարադատության ամբողջական համակարգ, ներառյալ՝ անչափահասների դատարաններ, հիմնվելով համապարփակ իրավական դաշտի վրա, ինչպես նաև՝ ներդնել արտադատական ուղղորդման մեխանիզմներ, որոնք թույլ կտան կանխել օրենքի հետ խնդիրներ ունեցող երեխաների՝ արդարադատության ֆորմալ համակարգում հայտնվելը, և մշակել դատական քննության, պատժի նշանակման և պատժի կատարման նորանոր այլընտրանքներ, ինչպիսիք կարող են լինել, օրինակ, համայնքային ծառայությունը և տուժողի և իրավախախտի միջնորդի օգնությամբ հաշտեցումը՝ խարանումից խուսափելու և իրավախախտների արդյունավետ վերաինտեգրումն ապահովելու նպատակով,

(բ) Ապահովել երեխաների նախնական կալանքի կիրառությունը միայն այն դեպքում, երբ բոլոր մյուս միջոցները սպառված են, այն էլ՝ հնարավորինս կարճ ժամկետով,

(գ) Հրատապ միջոցներ ձեռնարկել՝ արգելելու երեխաների պատժիչ մեկուսացումը, որը հավասարազոր է անմարդկային վերաբերմունքի,

(դ) Հրատապ միջոցներ ձեռնարկել, որպեսզի Աբովյանում և այլ բանտերում պահվող երեխաներին տրամադրվեն բոլոր տարրական նյութերը, հիգիենայի պարագաները և մաքուր անկողիններ, և որպեսզի բանտերում պահվող երեխաների համար ապահովվի պատշաճ կրթություն, և

(ե) Ներդնել վերականգնման և վերաինտեգրման արդյունավետ ծրագրեր, որոնք, մասնավորապես, ուղղված կլինեն քրեակատարողական հիմնարկներից դուրս եկող երեխաներին:

Այդ գործընթացում անհրաժեշտ է հնարավորության դեպքում օգտվել Միավորված ազգերի կազմակերպության Անչափահասների արդարադատության միջգերատեսչական հանձնախմբի և վերջինիս անդամների, ներառյալ՝ ՄԱԿ-ի Թմրադեղերի և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի («UNODC»), ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակի

(«OHCHR») և հասարակական կազմակերպությունների մշակած տեխնիկական աջակցության գործիքներից, ինչպես նաև՝ անչափահասների արդարադատության բնագավառում տեխնիկական աջակցություն հայցել Հանձնախմբի անդամներից:

### *Հանցավորության վկա և հանցավորությունից տուժած երեխաները*

53. Ի գիտություն ընդունելով, որ Մասնակից պետությունը որոշ միջոցներ ձեռնարկել է տուժող և վկա երեխաների պաշտպանության ուղղությամբ, որոնցից է, օրինակ, շահերի ներկայացուցիչ իրավաբանի և հոգեբաններիի ներկայությունը հարցաքննության ընթացքում, Կոմիտեն, այնուհանդերձ, ափսոսում է, որ ջանքերը բավարար չեն և հավուր պատշաճի արտացոլված չեն Մասնակից պետության օրենսդրության մեջ:

54. Կոմիտեն առաջարկում է Մասնակից պետությանը՝ համարժեք իրավական դրույթների և կարգավորումների միջոցով ապահովել, որպեսզի հանցավորության վկա և հանցավորությունից տուժած բոլոր երեխաներին տրամադրվի Կոնվենցիայով պահանջվող պաշտպանությունը, ինչպես նաև՝ Մասնակից պետությունը լիարժեքորեն հաշվի առնի Միավորված ազգերի կազմակերպության Հանցավորությունից տուժած և հանցավորության վկա երեխաների մասնակցությամբ անցկացվող գործերի շրջանակում արդարադատության իրականացման ուղենիշները (հավելվածի տեսքով կցված են Տնտեսական և սոցիալական խորհրդի թիվ 2005/20 բանաձևին):

## Ը. Մարդու իրավունքների միջազգային փաստաթղթերի վավերացումը

55. Կոմիտեն Մասնակից պետությանն առաջարկում է երեխաների իրավունքների իրացումն էլ ավելի կատարելագործելու նպատակով վավերացնել Երեխայի իրավունքների կոնվենցիային կից կամընտիր արձանագրությունը հաղորդումների ընթացակարգի մասին, ինչպես նաև՝ Բոլոր միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքի անդամների պաշտպանության մասին միջազգային կոնվենցիան:

## Թ. Համագործակցությունը տարածաշրջանային և միջազգային կառույցների հետ

56. Կոմիտեն Մասնակից պետությանն առաջարկում է Մասնակից պետության տարածքում և Եվրոպայի խորհրդի այլ անդամ պետություններում Կոնվենցիայի և մարդու իրավունքների վերաբերյալ այլ փաստաթղթերի կատարման գործընթացում համագործակցել Եվրոպայի խորհրդի հետ:

## Ժ. Հետագա աշխատանքները և տարածումը

57. Կոմիտեն Մասնակից պետությանն առաջարկում է ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու սույն առաջարկությունների լիարժեք իրագործումը, մասնավորապես, քննության առնելու, քննարկելու և հետագա աշխատանքներ ձեռնարկելու նպատակով դրանք տրամադրելով պետության ղեկավարին, Ազգային ժողովին, գերագույն դատարանին, տարածքային և տեղական իշխանություններին:

58. Կոմիտեն նաև առաջարկում է երրորդ և չորրորդ համատեղ պարբերական զեկույցը, Մասնակից պետության գրավոր պատասխանները և հարակից առաջարկությունները (ամփոփիչ դիտարկումները) հայերենով և պետության այլ լեզուներով լայնորեն հասանելի դարձնել, ներառյալ (բայց ոչ միայն)՝ ինտերնետով, հանրության լայն շրջանակներին, քաղաքացիական հասարակության կազմակերպություններին, զանգվածային լրատվամիջոցներին, երիտասարդական խմբերին, մասնագիտական խմբերին և երեխաներին, Կոնվենցիայի և դրան կից կամընտիր արձանագրությունների, ինչպես նաև՝ դրանց կատարման և մշտադիտարկման վերաբերյալ բանավեճ սերմանելու և իրազեկությունը բարձրացնելու նպատակով:

## Ի. Հաջորդ զեկույցը

59. Կոմիտեն առաջարկում է Մասնակից պետությանը՝ ներկայացնել հինգերորդ և վեցերորդ համատեղ պարբերական զեկույցը նախքան 2019 թվականի հունվարի 22-ը, ընդ որում՝ դրանում ներառել տեղեկություններ սույն ամփոփիչ դիտարկումների իրագործման վերաբերյալ: Կոմիտեն ուշադրություն է հրավիրում առանձին համաձայնագրերի վերաբերյալ զեկույցների պատրաստման միասնական ուղենիշներին, որոնք ընդունվել են 2010 թվականի հոկտեմբերի 1-ին (CRC/C/58/Rev.2 and Corr. 1) և հիշեցնում Մասնակից պետությանը, որ ապագա զեկույցները պետք է համահունչ լինեն ուղենիշներին և չգերազանցեն 60 էջը: Կոմիտեն կոչ է անում Մասնակից պետությանը՝ իր զեկույցը ներկայացնելու ուղենիշներին համապատասխան: Եթե ներկայացվի ծավալի էջային սահմանափակումը գերազանցող զեկույց, ապա Կոմիտեն Մասնակից պետությանը կխնդրի վերանայել և նորից ներկայացնել զեկույցը՝ վերոհիշյալ ուղենիշների պահպանմամբ: Կոմիտեն հիշեցնում է Մասնակից պետությանը, որ զեկույցը վերանայելու և նորից ներկայացնելու՝ Մասնակից պետության անկարողության դեպքում հնարավոր չի լինի երաշխավորել զեկույցի թարգմանությունը համաձայնագրի կատարումը վերահսկող հատուկ մարմնի կողմից ուսումնասիրման համար:

60. Կոմիտեն նաև առաջարկում է Մասնակից պետությանը՝ ներկայացնել բուն փաստաթղթի նորացված տարբերակը, զեկույցների պատրաստման միասնական ուղենիշների՝ ընդհանրական բուն փաստաթղթերին վերաբերող պահանջներին համահունչ, որոնք հաստատվել են Մարդու իրավունքների համաձայնագրերի կատարումը վերահսկող մարմինների հինգերորդ միջհանձնաժողովային նիստում՝ 2006 թվականի հունիսին (HRI/MC/2006/3):

# Հավելված 2.

## Մարդու իրավունքների կոմիտե
## 105-րդ նստաշրջան, 9 հուլիսի - 27 հուլիսի, 2012թ.

***Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին միջազգային դաշնագիր***
***Մարդու իրավունքների կոմիտեի կողմից ընդունված եզրափակիչ դիտարկումներ***

## Հայաստան

1. Մարդու իրավունքների կոմիտեն քննարկել է Հայաստանի երկրորդ պարբերական զեկույցը (CCPR/C/ARM/2) իր 2012թ. հուլիսի 16-ից 17-ը տեղի ունեցած 2903-րդ և 1904-րդ հանդիպումների ընթացքում: 2012թ. հուլիսի 25-ին տեղի ունեցած 2917-րդ հանդիպման ընթացքում այն ընդունել է հետևյալ եզրափակիչ դիտարկումները:

## Ա. Նախաբան

2. Կոմիտեն ողջունում է Հայաստանի երկրորդ պարբերական զեկույցը և այնտեղ զետեղված տեղեկատվությունը, չնայած, որ այն ներկայացվել է որոշակի ուշացումով: Այն արժևորում է անդամ պետության կողմից զեկուցման ժամանակահատվածում Դաշնագրի դրույթների կատարմանն ուղղված միջոցների ընդունման հարցերով պատվիրակության հետ կառուցողական երկխոսության վերահաստատման հնարավորությունը:

## Բ. Դրական կողմեր

3. Կոմիտեն ողջունում է հետևյալ փաստաթղթերի վավերացումը.

(ա) Հաշմանդամ անձանց իրավունքների մասին կոնվենցիա, 2010թ. սեպտեմբեր;

(բ) Խոշտանգումների և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի այլ ձևերի դեմ կոնվենցիային կից կամընտիր արձանագրություն (OP-CAT), 2006թ., սեպտեմբեր;

(գ) Բռնի անհետացումից բոլոր անձանց պաշտպանելու մասին միջազգային կոնվենցիա, 2011թ. հունվար;

(դ) Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիային կից կամընտիր արձանագրություն, 2006թ. սեպտեմբեր;

(ե) Երեխայի իրավունքների մասին կոնվենցիային կից՝ զինված հակամարտություններին երեխաների մասնակցության վերաբերյալ, 2005թ. սեպտեմբեր և Մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին կամընտիր արձանագրություններ, հունիս, 2005թ.:

## Գ. Մտահոգության հիմնական հարցերը/թեմաները և հանձնարարականները

4. Կոմիտեն անհանգստացած է

բնակչության, *իրավապահ պաշտոնյաների* և իրավաբանների շրջանում Դաշնագրի և Կամընտիր արձանագրության մասին սահմանափակ տեղեկացվածությամբ, ինչը հանգեցնում է Դաշնագրի դրույթների վերաբերյալ սահմանափակ թվով գործերի ներկայացման և 1993թ. Կամընտիր արձանագրության (հոդված 2) վավերացումից ի վեր անդամ պետության դեմ անհատական բողոքների բացակայությամբ:

**Անդամ պետությունը պետք է դատավորների, իրավաբանների, *իրավապահ պաշտոնյաների* շրջանում բարձրացնի Դաշնագրում ներկայացված իրավունքների, ներպետական օրենսդրությունում դրանց կիրառելիության և Կամընտիր արձանագրությամբ հասանելի դարձած ընթացակարգի վերաբերյալ տեղեկացվածությունը:**

5. Կոմիտեն իր մտահոգությունն է հայտնել ստացված այն տեղեկատվության վերաբերյալ համաձայն որի մարդու իրավունքների մոնիտորինգ իրականացնելու, մարդու իրավունքները խթանելու և պաշտպանելու հարցում մարդու իրավունքների ազգային հաստատության զգոնությունը կասկածի տակ է դրվում ըստ մարդու ազգային հաստատությունների կարգավիճակին առնչվող Փարիզյան սկզբունքների (հոդված 2):

**Անդամ երկիրը պետք է երաշխավորի, որ Մարդու իրավունքների ազգային հաստատություն հանդիսացող Օմբուդսմենի (մարդու իրավունքների պաշտպանի) գրասենյակը, ամբողջապես և անկախ իրականացնի իր մանդատից բխող պարտավորությունները փարիզյան սկբունքներին համապատասխան:**

6. Կոմիտեն մտահոգ է խտրականության վերաբերյալ համընդգրկուն օրենսդրության բացակայությամբ: Այն անհանգստացած է նաև ռասայական և կրոնական փոքրամասնությունների նկատմամբ, ներառյալ՝ քաղծառայողների և գործադիր իշխանության բարձրաստիճան ներկայացուցիչների կողմից իրականացվող բռնությունների դեպքերով, ինչպես նաև ոստիկանության և իրապահ պաշտոնյաների կողմից ատելության հողի վրա կատարված հանցագործ*ությունների* հետաքննման, հետապնդման և պատժման գործողությունների տապալմամբ:

**Անդամ պետությունը պետք է երաշխավորի, որ իր կողմից խտրականության սահմանումը ներառում է Դաշնագրում նշված խտրականության բոլոր ձևերը (ռասա, մաշկի գույն, սեռ, լեզու, կրոն, քաղաքական հայացքներ կամ այլակարծություն, ազգային կամ սոցիալական ծագում, սեփականություն, ծննդյան կամ այլ կարգավիճակը): Ի լրումն դրան, անդամ պետությունը պետք է պայքարի բռնության կամ ռասայական ու կրոնական հողի վրա ատելության հրահրման դեպքերի դեմ, փոքրամասնություններին տրամադրի պատշաճ պաշտպանություն և երաշխավորի նման դեպքերի ճշգրիտ հետաքննությունն ու դատապարտումը: Ավելին, Կոմիտեն խրախուսում է անդամ պետությանը ամրապնդել իր ջանքերը ռասայական խտրականության դեմ պայքարելու նպատակով ընդունված օրենքների առավել արդյունավետ կիրառումն ապահովելու և դրանց կողմից սահմանված նպատակների իրականացումը երաշխավորելու հարցում:**

7. Կոմիտեն շարունակում է մտահոգված մնալ կանանց նկատմամբ

խտրականության բարձր աստիճանով, քաղաքական և հանրային կյանքում նրանց սահմանափակ մասնակցությամբ և հանրային ու մասնավոր ոլորտների որոշում կայացնող պաշտոններում նրանց ցածր ներկայացվածությամբ: Կոմիտեն ցավում է, որ գենդերային կարծրատիպերը դեռևս գերիշխում են ընտանիքում և հասարակությունում կանանց և տղամարդկանց դերի և պատասխանատվությունների հարցերում: ( 2,3,25 և 26 հոդվածներ)

**Անդամ պետությունը պետք է կանանց և տղամարդկանց հավասարության վերաբերյալ ընդունի հատուկ օրենսդրություն, այսպիսով՝ պաշտոնապես ճանաչելով կանանց նկատմամբ իրականացվող խտրականության հատուկ բնույթը: Պետք է ձեռնարկվի ընտրություններին ներկայացված թեկնածուների նկատմամբ սահմանված քվոտային համակարգի արդյունավետության վերանայում: Անդամ պետությունը պետք է ընդլայնի իր ջանքերը ընտանիքում և հասարակությունում կանանց և տղամարդկանց դերի և պատասխանատվությունների վերաբերյալ գենդերային կարծրատիպերը վերացնելու հարցում:**

8. Կոմիտեն մտահոգ է կանանց նկատմամբ իրականացվող բռնության բարձր ցուցանիշի առկայությամբ, մասնավորապես, ընտանեկան բռնու, և ցավում է, որ ընտանեկան բռնությունը քրեական օրենսգրքով հատուկ դատապարտելի արարք չի համարվում: Կոմիտեն անհանգստացած է նաև ընտանեկան բռնության զոհերի համար կացարանների անբավարար թվով (2,7 և 7-րդ հոդվածներ):

**Անդամ պետությունը պետք է ընդունի ընտանեկան բռնության բոլոր ձևերը քրեականացնող օրենսդրություն: Այն պետք է այս հարցի վերաբերյալ իրականացնի երկրի ողջ բնակչության շրջանում տեղեկացվածության բարձրացման նպատակային ծրագիր: Տեղական, իրավապահ և ոստիկանության պաշտոնյաներին, ինչպես նաև սոցիալական աշխատողներին և բուժանձնակազմին պետք է սովորեցնել, թե նրանք ինչպես բացահայտեն ընտանեկան բռնության զոհերին և նրանց պատշաճ խորհուրդներ տան: Պետությունը պետք է երաշխավորի նաև, որ ընտանեկան բռնության զոհերի համար բավարար քանակի լիարժեք գործող կացարաններ հասանելի լինեն երկրով մեկ:**

9. Կոմիտեն անհանգստացած է նաև սեռի ընտրությամբ պայմանավորված հղիության արհեստական դադարեցման դեպքերի աճով, որն արտացոլում է գենդերային անհավասարության մշակույթը (2,3 և 26-րդ հոդվածներ):

**Անդամ պետությունը համապատասխան օրենսդրություն պետք է ընդունի սեռի ընտրությունը կանխելու և անդրադառնա նախածննդյան շրջանում սեռերի ընտրության հիմնապատճառներին՝ երևույթի վերաբերյալ վստահելի տեղեկատվություն հավաքելու, ընտանիքի պլանավորմամբ զբաղվող պաշտոնյաների համար գենդերային զգայունության վերաբերյալ պարտադիր ուսուցում կազմակերպելու և հասարակության շրջանում տեղեկացվածության բարձրացման ծրագրեր զարգացնելու միջոցով:**

10. Կոմիտեն անհանգստացած է լեսբի, բիսեքսուալ և տրանսգենդեր (LGBT) անձանց նկատմամբ իրականացվող խտրականությամբ և բռնություններով և նրանց սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիման վրա

իրավունքների բոլոր խախտումների մերժմամբ (3. 6, 7 և 26-րդ հոդվածներ):

**Անդամ պետությունը հստակորեն և պաշտոնապես պետք է հայտարարի, որ այն չի հանդուրժում միասեռականների, երկսեռականների (բիսեքսուալների) և տրասնսեռականների (տրանսսեքսուալների) նկատմամբ իրականացվող սոցիալական խարանումը կամ սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիման վրա նրանց նկատմամբ իրականացվող խտրականությունը և բռնությունը: Անդամ պետությունը պետք է առքելի սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության վրա հիմնված խտրականությունը և ապահովի LGBT անձանց արդյունավետ պաշտպանություն:**

11. Կոմիտեն անհանգստացած է, որ 2008թ. մարտ 1-ին արտակարգ իրավիճակի հայտարարման պայմանները պարզ չեն: Կոմիտեն մտահոգ է, որ արտակարգ իրավիճակի վերաբերյալ գոյություն ունեցող կարգավորիչ նորմերը չեն երաշխավորում Դաշնագրի 4-րդ հոդվածով ամրագրված իրավունքների ամբողջական հարգումը:

**Անդամ պետությունը պետք է երաշխավորի, որ արտակարգ իրավիճակի վերաբերյալ իր օրենսդրությունն ու կարգավորիչ նորմերը ամբողջապես համապատասխանում են Դաշնագրի 4-րդ հոդվածին:**

12. Կոմիտեն անհանգստացած է 2008թ. մարտի 1-ին ոստիկանության կողմից ուժի գերազանցման դեպքերի շարունակական անպատժելիությամբ՝ չնայած այն ջանքերի, որ գործադրվում են աղետալի դեպքերի բացահայտման համար (հոդվածներ՝ 6,7 և 14)

**Անդամ պետությունը պետք է սահմանի արդյունավետ հետաքնչական ընթացակարգ, որպեսզի երաշխավորի, որ 2008թ. մարտի 1-ի ընթացքում ուժի գերազանցման մեջ պատասխանատու իրավապահ մարմինները, ներառյալ՝ նրանք, ովքեր հրամանատարական պատասխանատվություն են կրում իրենց արարքի համար պատասխանատու ճանաչվեն և ենթարկվեն համապատասխան պատժամիջոցների: Անդամ պետությունը պետք է երաշխավորի նաև, որ այս գործողությունների զոհերը համապատասխան փոխհատուցում ստանան, և որ նրանց համար հասանելի լինի համապատսխան բժշկական և հոգեբանական վերականգման միջոցները:**

13. Կոմիտեն անհանգստացած է ուժի գերազանցման դեպքերում իրավապահ մարմինների հաշվետվողականության բացակայությամբ, ինչպես նաև ոստիկանական չարաշահումների դեպքերի հետաքննության անկախ մեխանիզմի բացակայությամբ՝ չնայած 2010-2011թթ. ընդունված ոստիկանության բարեփոխման ծրագրի (հոդվածներ 6 և 7):

**Անդամ պետությունը պետք է գործի դնի ոստիկանական ուժերի արդյունավետ ընտրության, ուսուցման, միջազգային մոնիտորինգի և հաշվետվողականության ապահովման անկախ մեխանիզմ՝ երաշխավորելու համար մարդու իրավունքների լիարժեք պաշտպանությունը: Այն պետք է երաշխավորի իր օրենսդրության և կարգավորիչ նորմերի համապատասխանությունը կյանքի իրավունքի պահանջներին, մասնավորապես ինչպես դա արտացոլված է Իրավապահ մարմինների կողմից ուժի և հրազենի օգտագործման Միավորված Ազգերի հիմնարար սկզբունքներում: Ի լրումն դրան, անդամ պետությունը պետք է երաշխավորի**

**իրավապահ գործակալությունների կողմից իրականացված չարաշահումների բոլոր դեպքերի հետաքննությունն ու պատժումը:**

14. Կոմիտեն անհանգստացած է ազատազրկման վայրերում խոշտանգումների և վատ վերաբերմունքի ենթադրյալ դեպքերի վերաբերյալ բողոքների ներկայացման իրապես անկախ մեխանիզմի բացակայությամբ, ինչպես նաև նման դեպքերի դատական հետապնդման ցածր քանակով (հոդվածներ՝ 7 և 14):

**Անդամ պետությունը պետք է ստեղծի ազատազրկման բոլոր վայրերում խոշտանգումների և վատ վերաբերմունքի դեպքերի վերաբերյալ բողոքների ընդունման և դրանց հետագա ընթացքի անկախ համակարգ, և պետք է երաշխավորի, որ խոշտանգումների, դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող ցանկացած արարք կհետապնդվի և կպատժվի տվյալ արարքի ծանրությանը համաչափ:**

15. Կոմիտեն անհանգստացած է հայկական զինված ուժերում ոչ մարտական պայմաններում մահվան կասկածելի դեպքերի և սպայերի ու զինվորների կողմից այլ զորակոչիկների նկատմամբ նվաստացումների ու անհարիր վերաբերմունքի ենթադրյալ միջադեպերի առկայությամբ (հոդվածներ՝ 6 և 7):

**Անդամ պետությունը պետք է երաշխավորի նվաստացումների և զինված ուժերում վատ վերաբերմունքի դեպքերի վերացումը: Անդամ պետությունը պետք է ապահովի զինված ուժերում նվաստացումների և ոչ մարտական պայմաններում մահվան դեպքերի մեղադրանքների պատշաճ հետաքննությունը, հանցագործների նկատմամբ դատական հետապնդման սահմանումը և պատժումը, ինչպես նաև զոհերի համար փոխհատուցման և վերականգման հասանելիությունը՝ ներառյալ համապատասխան բժշկական և հոգեբանական օգնության միջոցով:**

16. Կոմիտեն մտահոգ է, որ մարդկանց թրաֆիքինգի վերաբերյալ ոչ բավարար տեղեկատվությունը և փաստերը թույլ չեն տալիս գնահատել այդ երևույթի ծավալը և ներկայումս իրականացվող ծրագրերի և մարտավարությունների արդյունավետությունը (հոդված՝ 8):

**Անդամ պետությունը պետք է ստեղծի անձանց թրաֆիգինգի դեպքերի թվի, այդ անձանց բնութագրերի, դատական պաշտոնյաների կողմից նրանց նկատմամբ վերաբերմունքի և դատական պաշտպանության միջոցների առկայության ու զոհերին տրամադրվող փոխհատուցումների վերաբերյալ պաշտոնական տվյալների բազա: Անդամ պետությունը պետք է նաև սահմանի մոնիտորինգի ընթացակարգ անձանց թրաֆիքինգի դեպքերի կանխման և պատժման նպատակով ընդունված միջոցները և մարտավարությունները գնահատելու համար:**

17. Կոմիտեն անհանգստացած է ապաստան հայցողների շուրջ ձևավորված դրությամբ, ովքեր դատապարտվում են Քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածի համաձայն, միայն այն պատճառով, որ նրանք անօրինական են մուտք գործել երկիր՝ չնայած այն բանի, որ վերջիններս իրենց ճանաչում են որպես ապաստան հայցող անձ (հոդվածներ՝ 9 և 13):

**Անդամ պետությունը պետք է ապահովի, որ ապաստան հայցող ոչ մի անձ չդատապարտվի միայն այն բանի համար, որ նա**

**անօրինական կերպով է մուտք գործել և մնացել երկրում՝ առանց հաշվի առնելու միջազգային պաշտպանվածության մեջ նրանց կարիքը:**

18. Կոմիտեն անհանգստացած է 1988-1992թթ. միջև Լեռնային Ղարաբաղի հակամարտության հետևանքով Ադրբեջանից Հայաստան բռնագաղթած փախստականների և նրանց ընտանիքների, ինչպես նաև այս ժամանակահատվածում ներքին տեղահանված անձանց չլուծված խնդիրների առկայությամբ, որոնք ապրում են հանրակացարաններում ծայրահեղ բարդ պայմաններում, ինչը բացասաբար է ազդում նրանց ֆիզիկական և մտավոր առողջության վրա (հոդվածներ 12 և 17):

**Անդամ պետությունը պետք է տեղեկատվական արշավ իրականացնի Ադրբեջանից բռնագաղթած հայ փախստականների իրավունքների վերբերյալ, ներառյալ՝ պարզեցված նատուրալիզացման սխեմայի վերաբերյալ, և ընդլայնի իր ջանքերը փախստականների և ներքին տեղահանված անձանց կենցաղային պայմանները բարելավելու հարցում, մասնավորապես բնակարանային և կենցաղային պայմանների մասով:**

19. Կոմիտեն անհանգստացած է նախնական կալանքի հաճախակի կիրառմամբ և այն հանգամանքով, որ ազատազրկված անձիք իրենց ազատազրկման պահից ամբողջապես տեղեկացված չեն իրենց հիմնարար իրավունքների և պարտականությունների վերաբերյալ: Կոմիտեն իր ափսոսանքն է հայտնում այն առթիվ, որ հաճախ ազատազրկված անձիք չեն կարողանում ժամանակին տեսնել փաստաբանին և բժշկին, զրկվում են իրենց ցանկությամբ անձին տեղյակ պահելու իրավունքից, ինչպես նաև նրանց պատշաճ կերպով չեն ներկայացվում դատավորին (հոդված 9):

**Համաձայն 2002թ. Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին ՀՀ օրենքի, անդամ պետությունը պետք է ապահովի, որ ազատությունից զրկված բոլոր անձիք ազատազրկման պահից ի վեր գրավոր, և՝ բանավոր ձևով տեղեկացված լինեն իրենց հիմնարար իրավունքների մասին, որ նրանք անհապաղ կարողանան տեսնել բժշկին և փաստաբանին, և որ նրանք կարողանան իրենց ձերբակալման մասին տեղյակ պահել իրենց ցանկությամբ ընտրված անձի: Անդամ պետությունը պետք է նաև երաշխավորի, որ ազատությունից զրկված բոլոր անձիք Դաշնագրի դրույթների համաձայն պատշաճ կերպով ներկյացվեն դատավորին:**

20. Կոմիտեն անհանգստացած է նաև բանտերի գերբնակեցմամբ և բանտային անձնակազմի սակավությամբ: Կոմիտեն ցավում է նաև, դատարանների կողմից ազատազրկման այլընտրանք հանդիսացող միջոցների սակավ կիրառմամբ (հոդված 10):

**Անդամ պետությունը պետք է ջանքեր գործադրի, որպեսզի ազատազրկման վայրերում բարելավի պայմանները և կրճատի բանտերի գերբնակեցվածությունը, ներառյալ՝ բանտարկությանը այլընտրանք հանդիսացող միջոցների կիրառման ճանապարհով:**

21. Կոմիտեն անհանգստացած է նաև դատական մարմինների շրջանում անկախության բացակայությամբ: Մասնավորապես, Կոմիտեն մտահոգ է դատավորների նշանակման մեխանիզմով, որը նրանց ենթակա է դարձնում քաղաքական ճնշումների, ինչպես նաև

անկախ կարգապահական մեխանիզմի բացակայությամբ (հոդված 14):

**Անդամ պետությունը պետք է փոփոխի իր ներպետական իրավական դրույթներն այնպես, որ ապահովի դատական մարմինների անկախությունը գործադիր և օրենսդիր ճյուղերից, ինչպես նաև նախատեսի դատավորների կոլեգիալ մարմնին հավելյալ, դատավորների նշանակման և նրանց խթանման անկախ մարմնի ստեղծումը, որը պատասխանատու կլինի նաև կարգապահական նորմերի կիրառման համար:**

22. Կոմիտեն մտահոգ է նաև պետական հաստատությունների բոլոր ճյուղերում կոռուպցիայի առկայության մեղադրանքներով, հատկապես ոստիկանության և դատական մարմինների շրջանում, ինչը խոչընդոտում է օրենքի գերկայությանը (հոդված 14): Ի լրումն դրան, Կոմիտեն մտահոգ է բարձր մակարդակի կոռուպցիայի դեմ պայքարի համոզիչ արդյունքների բացակայությամբ և արդարադատության իրականացման ոլորտում դրանից բխող հանրային անվստահությամբ:

**Անդամ պետությունը պետք է մեծացնի իր ջանքերը կառավարության բոլոր ճյուղերում կոռուպցիայի դեմ պայքարելու համար՝ ենթադրյալ կոռուպցիայի բոլոր դեպքերի անհապաղ և մանրակրկիտ հետաքննությամբ և պատասխանատուների պատժմամբ:**

23. Կոմիտեն անհանգստացած է նաև դեռահասների հարցերով արդարադատության համակարգում առկա սահմանափակումներով, մասնավորապես, մասնագիտացված դատավորների սահմանափակ թվով և հատուկ օրենքների, ընթացակարգերի և դատական սենյակների բացակայությամբ: Կոմիտեն մտահոգված է նաև դեռահաս հանցագործների ֆիզիկական և հոգեբնական վերականգնման ու սոցիալական վերաինտեգրման միջոցների բացակայությամբ (հոդվածներ՝ 14 և 24):

**Անդամ պետությունը պետք է իր ջանքերն ուղղի դեռահասների հարցերով արդարադատության համակարգը անհրաժեշտ մարդկային և նյութական ռեսուրսներով ապահովելուն: Այս առումով, անդամ պետությունը պետք է երաշխավորի, որ դեռահասների հարցերով արդարադատության համակարգի մեջ ներգրվված բոլոր մասնագետների ուսուցումն անցկացվի միջազգային չափանիշներին համապատասխան, ներառյալ՝ հանցագործության մանկահասակ զոհերի և վկաների մասնակցությամբ դեպքերում արդարադատության ՄԱԿ-ի ուղեցույցի (Տնտեսական և սոցիալական խորհրդի բանաձև 2005/20): Անդամ պետությունը պետք է նաև մասնագիտացված կառույցներ ստեղծի դեռահաս հանցագործների ֆիզիկական և հոգեկան վերականգնման ու սոցիալական վերաինտեգրման համար:**

24. Կոմիտեն անհանգստացած է խղճի և դավանանքի ազատության նկատմամբ գոյություն ունեցող սահմանափակումներով, ներառյալ՝ հոգեորսության քրեականացմամբ:

**Անդամ պետությունը պետք է փոխի իր օրենսդրությունը Դաշնագրի 18-րդ հոդվածի պահանջների համապատասխան, ներառյալ՝ հոգեորսության ապաքրեականացումը:**

25. Կոմիտեն մտահոգ է, որ 2004 և 2006 թվականների փոփոխություններով կրոնական պատճառներով ծառայությունից հրաժարված անձանց համար

Այլընտրանքային զինվորական ծառայության մասին օրենքը չի երաշխավորում քաղաքացիական բնույթի ծառայություն: Կոմիտեն անհանգստացած է նաև, որ կրոնական պատճառներով ծառայությունից հրաժարված անձիք՝ մեծամասամբ Եհովայի վկաները, շարունակում են բանտարկվել, երբ հրաժարվում են իրականացնել զինվորական և գոյություն ունեցող այլընտրանքային զինվորական ծառայությունը (18-րդ և 26-րդ հոդվածենր):

**Անդամ պետությունը պետք է հիմնի զինվորական ծառայությանը փոխարինող իրական այլընտրանքային ծառայություն, որը կլինի ոչ զինվորական բնույթի, հասանելի կդառնա կրոնական պատճառներով ծառայությունից հրաժարված բոլոր անձանց համար և պատժողական կամ խտրական չի լինի իր բնույթով, արժողությամբ և տևողությամբ: Անդամ պետությունը պետք է ազատ արձակի նաև կրոնական պատճառներով ծառայությունից հրաժարված բոլո բանտարկյալներին զինվորական ծառայությունը կամ գոյություն ունեցող այլընտրանքային ծառայությունը չկատարելու համար:**

26. Կոմիտեն անհանգստացած է լրագրողների և մարդու իրավունքների պաշտպանների հասցեին սպառնալիքների և նրանց վրա կատարված հարձակումների մասին տեղեկատվությամբ (հոդված 19):

**Անդամ պետությունը պետք է ապահովի լրագրողների և մարդու իարվունքների պաշտպանների անվտանգությունը սպառնալիքներից և հարձակումներից, ապահովի նման արարքների վերաբերյալ բոլոր մեղադրանքների անհապաղ և մանրակրկիտ հետաքննությունը, ինչպես նաև ապահովի զոհերի համար փոխհատուցման հասանելիությունը:**

27. Անդամ պետությունը պետք է լայնորեն տարածի Դաշնագիրը, երկրորդ պարբերական զեկույցը, Հանձնաժողովի կողմից ներկայացված խնդիրների վերաբերյալ նրա ներկայացված գրավոր պատասխանները և ներկա եզրափակիչ դիտարկումները դատական, օրենսդիր և վարչական պաշտոնյաների, քաղաքացիական հասարակության և երկրում գործող հասրակական կազմակերպությունների, ինչպես նաև ընդհանուր հանրության շրջանում տեղեկացվածության բարձրացման համար: Կոմիտեն առաջարկում է, որ զեկույցը և եզրափակիչ դիտարկումները թարգմանվեն անդամ պետության պաշտոնաան լեզուներով: Կոմիտեն պահանջում է նաև, որ անդամ պետությունը, իր չորրորդ պարբերական զեկույցի պատրաստման ընթացքում լայնորեն խորհրդակցի քաղաքացիական հասարակության և հասարակական կազմակերպությունների հետ:

28. Կոմիտեի ընթացակարգային կանոնների 71-րդ կանոնի 5-րդ պարագրաֆի համաձայն, անդամ պետությունը մեկ տարվա ընթացքում պետք է տրամադրի ներկա եզրափակիչ դիտարկումների 12, 14 և 21-րդ հոդվածներում պարունակվող հանձնարարականների իրականացման մսասին համապատասխան տեղեկատվություն:

29. Կոմիտեն խնդրում է անդամ պետությանը իր հաջորդ պարբերական զեկույցում, որի ներկայացման ժամկետն է 2016թ. հուլիսի 27-ը, տրամադրել թարմ և ճշգրիտ տեղեկատվություն բոլոր հանձնարարականների և Դաշնագրի կետերին ընդհանուր առմամբ իր համապատասխանության վերաբերյալ:

# Հավելված 3.
## Խոշտանգումների դեմ կոմիտե
## 48-րդ նստաշրջան, մայիսի 7 - հունիսի 1, 2012թ.

### Խոշտանգումների դեմ կոմիտեի եզրափակիչ դիտարկումներ

## Հայաստան

1. Խոշտանգումների դեմ կոմիտեն քննարկել է Հայաստանի երրորդ պարբերական զեկույցը (CAT/C/ARM/3) իր՝ 2012թ. մայիսի 10-ից 11-ը տեղի ունեցած 1064-րդ և 10674-րդ հանդիպումների (CAT/C/SR.1064 և 1067) ընթացքում: 2012թ. մայիսի 28-ից 29-ը տևած իր 1085-րդ և 1086-րդ հանդիպումների (CAT/C/SR.1085 և 1086) ընթացքում այն ընդունել է հետևյալ եզրափակիչ դիտարկումները/ եզրակացությունները:

## Ա. Նախաբան

2. Կոմիտեն ողջունում է անդամ պետության կողմից երրորդ պարբերական զեկույցի ներկայացումը, որը համապատասխանում է պարբերական զեկույցի ձևի և պարունակության վերաբերյալ ընդհանուր ուղեցույցերին:
3. Կոմիտեն ողջունում է անդամ պետության բարձրաստիճան պատվիրակության հետ վերջինիս կողցմից կոնվենցիայի դրույթների քննարկման հնարավորությունը: Այն իր գնահատանքն է հայտնում անդամ պետության կողմից մի շարք հարցերին տրված ընդարձակ գրավոր տեղեկատվության, և Կոմիտեի կողմից բանավոր և գրավոր ձևով տրամադրված լրացուցիչ տեղեկատվության վերաբերյալ:

## Բ. Դրական կողմեր

4. Կոմիտեն ողջունում է անդամ պետության կողմից մի շարք միջազգային և տարածաշրջանային փաստաթղթերի վավերացումը, ներառյալ.
   (ա) Խոշտանգումների և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի այլ ձևերի դեմ կոնվենցիային կից կամընտիր արձանագրությունը, սեպտեմբեր 2006թ.;
   (բ) Բռնի անհետացումից բոլոր անձանց պաշտպանելու մասին միջազգային կոնվենցիան, 2011թ. հունվար;
   (գ) Հաշմանդամ անձանց իրավունքների մասին կոնվենցիան, 2010թ. սեպտեմբեր;
   (դ) Կանաց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիային կից կամընտիր արձանագրությունը, 2006թ. սեպտեմբեր;
   (ե) Երեխայի իրավունքների մասին կոնվենցիային կից՝ զինված հակամարտություններին երեխաների մասնակցության վերաբերյալ, 2005թ. սեպտեմբեր և մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի

մասին կամընտիր արձանագրությունները, հունիս 2005թ.:

(զ) Մահապատժի վերացման վերաբերյալ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների Եվրոպական կոնվենցիային կից 6-րդ արձանագրությունը, սեպտեմբեր 2003թ.

5. Կոմիտեն ողջունում է դիտարկվող ժամանակահատվածում իրականացված օրենսդրական նախաձեռնությունները, ներառյալ.

(ա) Խոշտանգումների և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի այլ ձևերի դեմ կոնվենցիային կից կամընտիր արձանագրությաբ առաջադրված Մարդու իրավունքների պաշտպանին՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմ նշանակելու մասին 2008թ.-ի օրենքը:

(բ) 2002թ.-ին Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին օրենքի գործադրումը,

(գ) Քրեակատարողական հիմնարկների մասին 2004թ. օրենքի ընդունումը:

6. Այնուհետև Կոմիտեն ողջունում է նաև.

(ա) Կառավարական և ոչ կառավարական անդամներից կազմված հանրային մոնիտորինգային խմբի ստեղծումը 2006թ.-ին;

(բ) Միավորված ազգերի կազմակերպության հատուկ ընթացակարգերին ուղղված բաց հրավերը, 2006թ ապրիլ և 2010թ.-ին Կամայական ազատազրկման հարցերով աշխատանքային խմբի այցելությունը:

7. Կոմիտեն ողջունում է պատվիրակության բանավոր հայտարարությունը, որ անդամ պետությունը կքննարկի Կոնվենցիայի 22-րդ հոդվածով նախատեսված հայտարարությունը՝ ճանաչելու համար Կոմիտեի իրավասությունը անհատական դիմումներ ստանալու և քննարկելու հարցում:

## Գ. Անհանգստության հիմնական առարկաները և հանձնարարականները

### *Ոստիկանության ժամանակավոր պահման վայրերում խոշտանգումների կամ վատ վերաբերմունքի մեղադրանքներ*

8. Կոմիտեն լրջորեն անհանգստացած է ոստիկանակնության ժամանակավոր պահման վայրերում, հիմնականում քրեական դատավարության ընթացքում օգտագործվելիք խոստովանություն ստանալաու նպատակով, կասկածյալների նկատմամբ խոշտանգումների և վատ վերաբերմունքի դրսևորման մասին տարբեր աղբյուրներից մշտապես եկող բազմաթիվ տեղեկություններով (հոդված 2,4, 12 և 16):

Որպես առաջնահերթություն անդամ պետությունը պետք է անհապաղ և արդյունավետ գործողություններ ձեռնարկի երկրով մեկ խոշտանգումների և դաժան վերաբերմունքի դեպքերը կանխելու համար: Կոմիտեն հորդորում է անդամ պետությանն իրականցնել խոշտանգումների, դաժան վերաբերմունքի և կալանավորման ընթացքում մահվան դեպքերի շտապ, մանրակրկիտ և անաչառ կերպով հետաքննություն, որ քրեորեն դատապարտվեն պատասխանատու անձիք, և որ այդ

քրեական հետապնդումների արդյունքները հրապարակվեն:

Ի լրումն, անդամ պետությունը ոչ երկիմաստորեն պետք է վերահաստատի խոշտանգումների կիրառման նկատմամբ բացարձակ արգելքը և հանրորեն նախազգուշացնի, որ յուրքանչյուր ոք, ով կգործի նման արարք կամ որևէ այլ կերպ կհանցակցի կամ իր լռելյայն համաձայնությունը կտա նման արարքի իրագործմանը անձամբ օրենքի առջև պատասխանատու կճանաչվի և կենթարկվի քրեական հետապնդման և համապատասխան տույժերի:

### *Արտականոնակարգային հարաբերությունների «դեռովշինայի» և դաժան վերաբերմունքի առկայությունը զինված ուժերում*

9. Կոմիտեն անհանգստացած է հայկական զինված ուժերում ոչ մարտական պայմաններում շարունակվող մահվան կասկածելի դեպքերով և սպաների կամ այլ զինվորների կողմից զորկոչիկների նկատմամբ նվաստացումներով և այլ դաժան վերաբերմունքի դեպքերով, որոնք իրականացվում են սպաների կամ այլ պաշտոնյաների կողմից կամ նրանց համաձայնությամբ, հավանությամբ կամ լռելյայն համաձայնությամբ: Չնայած պավիրակության կողմից ներկայացված տեղեկատվությանը, Կոմիտեն շարունակում է անհանգստացած մնալ այն զեկույցներով, որոնք փաստում են, որ նման բազմաթիվ դեպքերի վերաբերյալ իրականացված հետաքննությունները կամ ոչ լիարժեք են կամ բացակայում են, ներառյալ՝ Վարդան Սևյանի, Արտակ Նազարյանի և Արթուր Հակոբյանի մահվան դեպքերի հետաքննությունները: Կոմիտեն անհանգստացած է նման դեպքերի արդյունավետ հետաքննության բացակայությամբ և մեղադրյալների նկատմամբ անհամաչափ պատժամիջոցների կիրառման մասին տեղեկություններով. նման դեպքերից է օրինակ՝ Վարդան Մարտիրոսյանի գործը (հոդվածներ 2, 4, 12, 13 և 16):

Անդամ պետությունը պետք է ուժեղացնի զինված ուժերում արտականոնակարգային հարաբերությունների արգելման և վերացման համար ձեռնարկվող միջոցները և ապահովի արտականոնակարգային հարաբերությունների և զինված ուժերում ոչ մարտական պայմաններում մահվան բոլոր դեպքերի արագ, անաչառ և մանրամասն հետաքննություն: Երբ արտականոնակարգային հարաբերությունների ապացույց է հայտնաբերվել, անդամ պետությունը պետք է ապահովի նման բոլոր դեպքերի նկատմամբ քրեական հետապնդման սահմանումը և հանցագործների համապատասխան պատժումը, հրապարակի այդ հետաքննությունների արդյունքները և փոխհատուցում ու ռեաբիլիտացիայի միջոցներ տրամադրի զոհերին, ներառյալ՝ համապատասխան բժշկական և հոգեբանական աջակցության միջոցով:

### *Խոշտանգումների սահմանումը, բացարձակ արգելումը և քրեականացումը*

10. Կոմիտեն մտահոգ է, որ «խոշտանգումները» քրեականացնող ներպետական օրենսդրությունը (Քրեական օրենսգրքի 119-րդ հոդված) չի համապատասխանում Կոնվենցիայի 1-ին հոդվածում տրված խոշտանգումների սահմանմանը, և որ խոշտանգումը, ինչպես որ ներկայումս սահմանված է Անդամ պետության կողմից, չի ներառում պետական պաշտոնյաների

կողմից իրագործված հանցանքները, այլ ներառում է միայն անհատների սեփական նախաձեռնությամբ իրականացված գործողությունները, որի հետևանքով ոչ մի պետական պաշտոնյա անդամ պետության կողմից խոշտանգումների մեղադրանքով երբեք չի դատապարտվել: Այն մտահոգ է նաև այն լուրերով, որ պաշտոնյաները փակել են խոշտանգումների մեղադրանքով գործեր՝ հիմնվելով զոհի և մեղադրյալի հաշտեցման վրա: Այնուհետև այն անհանգստացած է, որ ներկա պատժամիջոցները չեն արտացոլում հանցագործության ծանրության աստիճանը (ամենաքիչը՝ երեք տարվա ազատազրկում, իսկ խստացուցիչ հանգամանքների դեպքում մինչև յոթ տարի ազատազրկում): Վերջապես, այն անհանգստացած է, որ մի քանի անհատների, ովքեր խոշտանգումների և դաժան վերաբերմունքի մեղադրանքներով համաձայն Քրեական օրենսգրքի դատապարտվել են , շնորհվել է համաներում (հոդվածներ 1 և 4):

Գնահատելով պատվիրակության բանավոր հայտարարությունը Քրեական օրենսգիրքը փոփոխելու մտադրության վերաբերյալ՝ Կոմիտեն հանձնարարում է, որ անդամ պետությունն ապահովի խոշտանգման սահմանման լիարժեք համապատասխանությունը Կոնվեցիայի 1-ին և 4-րդ հոդվածներին: Անդամ պետությունը պետք է երաշխավորի նաև, որ այն բոլոր պետական պաշտոնյաները, ովքեր կգործեն այնպիսի արարք, որն իրենից խոշտանգում կամ դաժան վերաբերմունք կներկայացնի, պատժվեն համապատասխանաբար, և որ այս հանցագործության համար պատժամիջոցն արտացոլի խոշտանգման արարքի լրջությունը, ինչպես որ պահանջվում է Կոնվենցիայի 4-րդ հոդվածով: Անդամ պետությունն այնուհետև պետք է երաշխավորի, որ Քրեական օրենսգրքով դատապարտելի խոշտանգումներ կամ այդպիսին հանդիսացող այլ արարքները ենթակա չեն վաղեմության ժամկետի, և որ պաշտոնյաները պարտավոր են հետաքննել և պատժել նման արարքներ գործած անձաց՝ անկախ զոհի (երի) և մեղադրյալի (երի) միջև կայացած հաշտեցման:

## *Հիմնարար իրավական երաշխիքները*

11. Չնայած օրենքի կողմից տրամադրվող երաշխիքների, կառավարության 2008թ. հունիսի համար 574-Ն որոշման և ոստիկանապետի 2010թ. ապրիլի 12-Շ կարգադրության և Գ. Մելիքյանի գործով վճռաբեկ դատարանի 2009թ. դեկտեմբերի որոշման, Կոմիտեն իր լուրջ մտահոգությունն է հայտնում ստացված այն տեղեկությունների վերաբերյալ, որ Անդամ պետությունը պրակտիկայում չի կարողանում լիարժեք կերպով ապահովել բոլոր ազատազրկված անձանց հիմնարար իրավունքները, վերջիններիս փաստացի ազատազրկման պահից սկսած, ներառյալ փաստաբանին և բուժծառայողին ժամանակին տեսնելու և իրենց ընտանիքի անդամներին տեղյակ պահելու իրավունքները: Կոմիտեն մտահոգ է այն տեղեկությունների առթիվ, որ ոստիկանության պաշտոնյաները ազատազրկման ողջ ժամանակահատվածի վերաբերյալ պատշաճ արձանագրություններ չեն անում, որ նրանք չեն ապահովում ազատազրկման մեջ գտնվող անհատների հիմնարար իրավունքները, մասնավորապես ազատությունից զրկված այն անձանց համար,

ում համար դեռևս ազատազրկման արձանագրություն չի կազմվել; որ նրանք ազատազրկված անձանց պատշաճ կերպով ազատազրկման պահին չեն ներկայացնում իրենց իրավունքները, որ չեն պահպանում երեք օրվա սահմանափակումը ազատազրկված անձանց ոստիկանական կայանից կալանավորման վայր տեղափոխելու վերաբերյալ; և որ կալանավորված անձանց անհապաղ կերպով չեն ներկայացնում դատավորին: Կոմիտեն նկատում է նաև, որ հանրային պաշտպանների թիվն Անդամ պետությունում անբավարար է (հոդված 2):

Ներկա օրենսդրական փոփոխությունների համատեքստում, ներառյալ՝ Քրեական դատավարության օրենսգրքի փոփոխությունները, Անդամ պետությունը պետք է անհապաղ և արդյունավետ միջոցներ ձեռնարկի, պրակտիկայում և օրենսդրորեն երաշխավորելու համար, որ բոլոր ազատազրկվածներին տրամադրվեն իրավական երաշխիքներ իրենց ազատազրկման հենց սկզբից: Սրանք ներառում են փաստաբանին տեսնելու, անկախ բժշկական փորձաքննության, հարազատներին տեղյակ պահելու, իրենց իրավուքների մասին տեղեկացվելու և դատավորին շտապ ներակայացվելու իրավունքները:

Անդամ պետությունը պետք է միջոցներ ձեռնարկի, որ ապահովի ոստիկանական կայաններում և ազատազրկման վայրերում բոլոր հարցաքննությունների տեսա և ձայնագրումը որպես լրացուցիչ կանխարգելիչ միջոց: Կոմիտեն հորդորում է Անդամ պետությանը, որ հնարավորինս շուտ իրականացնի նախագիծը, որով ոստիկանությունից պահանջվում է ոստիկանատանը անձի ազատության սահմանափակման պահից անհապաղ սեղծել ազատազրկման էլեկտրոնային արձանագրությունը: Անդամ պետությունը պետք է երաշխավորի, որ այս արձանագրությունները հասանելի լինեն ազատազարկված անձանց փաստաբաններին և հարազատներին:

Անդամ պետությունը պետք է մեծացնի Փաստաբանների պալատի Հանրային պաշտպանի գրասենյակին տրվող ֆինանսավորումը՝ ապհովելու համար առավել արդյունավետ իրավական օգնություն:

## *Հետաքննությունները և անպատժելիությունը*

Կոմիտեն խորապես անհանգստացած է, որ իրավապահ մարմինների և զինվորական անձնակազմի կողմից իրականացված խոշտանգումների և/կամ դաժան վերաբերմունքի մեղադրանքների վերաբերյալ չի իրականացվում անհապաղ, անաչառ ու արդյունավետ հետաքննություն և դատապարտում: Կոմիտեն մասնավորապես անհանգստացած է այն լուրերով, որ Դատախազությունը ոստիկանությանն է հանձնարարում ոստիկանության պաշտոնյաների կողմից խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի մեղադրանքների հարցով իրականացնել հետաքննություն, քան թե այդ բողոքներն անկախ հետաքնչական մարմնին տրամադրելը: Այս առումով Կոմիտեն անհանգստացած է, որ Դատախազությունը կանոնավոր կերպով չի հետևում, որ դատախազները վերահսկեն ենթադրյալ հանցագործների կողմից ոստիկանության պաշտոնյաների դեմ իրագործված խոշտանգումների հանցագործության և մեղադրանքների հարցով հարուցված գործերը:

Կոմիտեն նաև մտահոգ է, որ Հետաքննությունների հատուկ ծառայությունը անկարող է եղել հավաքել բավարար վկայություններ այնպիսի գործերի հարցերով,

որոնցում մեղադրվում է, որ խոշտանգումները կամ դաժան վերաբերմունքն իրականացվել է պաշտոնյաների կողմից, ինչը հանգեցրել է վերջինիս արդյունավետության վերաբերյալ կասկածների: Այնուհետև Կոմիտեն անհանգստացած է, որ խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի մեջ մեղադրվող պաշտոնյաներն անհապաղ չեն դադարում իրենց պարտականությունների կատարումը կամ հետաքննության ընթացքում տեղափոխվում, մասնավորապես այն դեպքերում, երբ վտանգ կա, որ նրանք կարող են կրկին իրագործել նման արարք կամ կարող են խոչընդոտել հետաքննության իրականացմանը ( հոդվածներ 2, 11, 12, 13 ը 16):

Անդամ պետությունը պետք է.

(ա) Հստակ քայլեր ձեռնարկի ապահովելու համար իրավապահ մարմինների կամ զինվորական անձնակազմի կողմից խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի վերաբերյալ մեղադրանքների անհապաղ, մանրակրկիտ և անաչառ կերպով հետաքննությունը, որը կհանգեցնի պատասխանատու անձանց դատապարտմանն ու պատժմանը, որ նրանք կենթարկվեն իրենց կողմից իրականացված արարքի լրջությանը համապատասխան տույժերի;

(բ) Ապահովի, որ պետական պաշտոնյաներին ներառող բոլոր հանցագործությունների հետաքննություններն իրականացվեն անկախ և արդյունավետ մարմնի կողմից;

(գ) Ապահովի, որ Կոնվենցիայի խախտման մեջ մեղադրվող բոլոր պաշտոնյաները դադարեցնեն իրենց պարտականությունների կատարումը, այնքան ժամանակ, քանի դեռ հարուցված մեղադրանքների վերաբերյալ ընթանում է հետաքննություն:

Կոմիտեն հորդորում է Անդամ պետությանը տեղեկատվություն տրամադրել Կոնվենցիայի համաձայն խոշտանգումների կամ խոշտանգումներ հանդիսացող գործողությունների վերաբերյալ պետական պաշտոնյաների դեմ բողոքների թվի մասին, ինչպես նաև տրամադրել տեղեակտվություն այդ բողոքների հետաքննության արդյունքների և ձեռնարկված գործողությունների վերաբերյալ և՝ քրեական, և՝ կարգապահական մակարդակներում: Այս տեղեկատվությունը պետք է նկարագրի յուրաքանչյուր մեղադրանքը և նշի այն պաշտոնատար անձին կամ մարմինը, որ իրականացնում է հետաքննությունը:

### *Կալանավորման վայրում/ ընթացքում մահվան դեպքերը*

13. Կոմիտեն մտահոգ է կալանավորման ընթացքում մահվան դեպքերի վերաբերյալ Անդամ պետությունից և հասարակական կազմակերպություններից ստացվող տեղեկություններով, ներառյալ՝ ոստիկանական կալանքի տակ գտնվող Վահան Խալաֆյանի և Լևոն Գուլյանի մահվան դեպքերը (հոդվածներ 2, 11, 12 և 16):

Կոմիտեն հորդորում է Անդամ պետությանը անհապաղ, անկողմնակալ և արդյունավետ կերպով հետաքննել կալանավորված անձանց մահվան դեպքերը՝ գնահատելով պետական պաշտոնյաների պատասխանատվությունը և ապահովել հանցագործների պատժումն ու զոհերի ընտանիքներին տրվող փոխհատուցումը: Կոմիտեն պահանջում է, որ Անդամ պետությունը տրամադրի համընդգրկուն նորացված տեղեկատվություն կալանավորման ընթացքում մահվան բոլոր հայտնի դեպքերի վերաբերյալ, ներառյալ դեպքի վայրը, մահվան պատճառը և նման դեպքի վերաբերյալ

կատարված ցանկացած հետաքննության արդյունքներ, ներառյալ՝ հանցագործների պատժումը և զոհի հարազատներին տրվող փոխհատուցումը:

### *Բողոքներ և զոհերի, ականատեսների մարդու իրավունքների պաշտպանների պաշտպանությունը;*

14. Կոմիտեն մտահոգությամբ նշում է այն լուրերը, որ խոշտանգումների և դաժան վերաբերմունքի զոհերը և ականատեսները բողոք չեն ներկայացնում պաշտոնյաների դեմ, քանի որ վախենում են վրեժից: Այն նաև նշում է, որ մարդու իրավունքների պաշտպանները, ինչպես նաև լրագրողները իրենց աշխատանքի արդյունքում ենթարկվել են սպառնալիքների, և որ Անդամ պետությունը շատ քիչ քայլեր է ձեռնարկել նրանց պաշտպանությունն ապահովելու համար (հոդվածներ 2, 11, 12, 13, 15 և 16):

Կոմիտեն հորդորում է, Անդամ պետությանը ստեղծել արդյունավետ մեխանիզմ պետական պաշտոնյաների կողմից խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի ենթարկված զոհերի կամ այդ արարքների ականատեսների կողմից բողոքների ներկայացումը դյուրացնելու համար, և պրակտիկայում ապահովել, բողոքը ներկայացնող անձի պաշտպանությունը իր կողմից բողոքի ներկայացման արդյունքում վատ վերաբերմունքի, սպառնալիքների կամ ռեպրեսիաների դրսևորումներից: Անդամ պետությունը պետք է ձեռնարկի բոլոր անհրաժեշտ քայլերն ապահովելու համար մարդու իրավունքների պաշտապանների, ինչպես նաև լրագրողների պաշտպանությունը սպառնալիքներից և բռնություններից:

### Բավարարումը, ներառյալ՝ փոխհատուցումը և ռեաբիլիտացիան/վերականգնումը

15. Նկատի առնելով, որ Անդամ պետությունը վճարել է Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի 2011թ. հուլիսի որոշումից հետո զոհերի փոխհատուցումը, Հանձնաժողովն ափսոսանք է հայտնում, որ Անդամ պետությունը բավարար տվյալներ չի տրամադրել դատարանների կողմից Կոնվենցիայի խախտման զոհերին տրվող փոխհատուցման վճիռների վերաբերյալ, ներառյալ՝ այն անձանց մասին, ում նկատմամբ չեն ապահովել իրենց հիմնարար իրավունքները կամ ովքեր ազատազրկման ընթացքում ենթարկվել են խոշտանգուների կամ դաժան վերաբերմունքի: Հանձնաժողովը մտահոգ է, որ օրենքը չի նախատեսում խոշտանգումների զոհերին ֆինանսական փոխհատուցումից բացի այլ փոխհատուցման միջոց: Հանձնաժողովը նշում է նաև տեղեկատվության սակավությունը սոցիալական ռեաբիլիտացիայի և այլ միջոցների մասին, ներառյալ՝ զոհերին տրամադրված բժշկական և հոգեբանական ռեաբիլիտացիայի ծառայությունները (հոդված 14):

Անդամ պետությունը պետք է մեծացնի իր ջանքերը ապահովելու համար խոշտանգումներիի և դաժան վերաբերմունքի զոհերին բավարարումը/փոխհատուցումը, ներառյալ՝ արդար և համաչափ փոխհատուցումը և հնարավորինս ամբողջական ռեաբիլիտացիայի հնարավորությունը: Անդամ պետությունը պետք է փոփոխի իր օրենսդրությունը այնպես, որ այն պարունակի բացահայտ/հստակ դրույթներ խոշտանգումների զոհերին տրամադրվող

փոխհատուցման վերաբերյալ, ներառյալ՝ խոշտանգումների հետևանքով պատճառված վնասի արդար և համաչափ փոխհատուցման և ռեաբիլիտացիայի մասին, համաձայն՝ Դաշնագրի 14-րդ հոդվածի: Այն պետք է Հանձնաժողովին տրամադրի տեղեկատվություն այս առթիվ ձեռնարկված գործողությունների վերաբերյալ, ներառյալ՝ ռեաբիլիտացիոն ծրագրերի արդյունավետ գործողության համար հատկացված գումարների վերաբերյալ:

## *Ճնշումների հետևանքով ստացված խոստովանությունը*

16. Հանձնաժողովն անհանգստացած է Անդամ պետության դատարանների կողմից ուժի ազդցության տակ ստացված խոստովանությունների օգտագործման վերաբերյալ մեղադրանքներով: Այնուհետև Հանձնաժողովը մտահոգ է այն լուրերով, որ դատարանները չեն դադարեցրել այն քրեական դատավարությունները, որոնց ընթացքում մեղադրյալը առաջ է քաշել այնպիսի մեղադրանքներ, որ խոստովանությունը ստացվել է խոշտանգումների ճանապարհով, և չի պահանջել իրականացնել մանրազնին հետաքննություն: Ի լրումն Հանձնաժողովը մտահոգ է, այն գործերի մասին տեղեկատվության պակասով, որում Անդամ պետության դատարանները հայտարարել են խոստովանություններն անընդունելի որպես ապացույց, այն պատճառով, որ դրանք ստացվե; են խոշտանգումների ճանապարհով (հոդվածներ 2, 11, 15 և 16):

Հանձնաժողովը կոչ է անում Անդամ պետությանը ապահովել, որ պրակտիկայում, այն խոստովանությունները/հայտարարությունները, որ ստացվել են խոշտանգումների միջոցով չօգտագործվեն որպես ապացույց դատավարության ընթացքում: Անդամ պետությունը պետք է երաշխավորի, որ այն բոլոր դեպքերում, երբ անձը պնդում է, որ խոստովանությունը ստացվել է խոշտանգումների միջոցով, դատական լսումները/դատավարությունը պետք է դադարեցվեն/ի, մինչև որ հայցը մանրամասն հետաքննվի: Հանձնաժողովը հորդորում է Անդամ պետությանը վերանայել այն բոլոր դատավճիռները, որոնք բացառապես հիմնված են խոստովանությունների վրա:

Հանձնաժողովը հորդորում է Անդամ պետությանը վճռականորեն պայքարել/վճռական պայքար ծավալել խոստովանություն ստանալու նպատակով խոշտանգումների ցանկացած կիրառման դեմ և ապահովել, որ խոշտանգումների միջոցով ստացված ապցույցները պրակտիկայում երբեք չօգտագործվեն դատական լսումների/դատավարության ընթացքում: Անդամ պետությունը պետք է ապահովի, որ դատավարության ընթացքում ներկայացվող ապացույցների վերաբերյալ օրենսդրությունը համապատասխանեցվի Կոնվենցիայի 15-րդ հոդվածին և տրամադրի տեղեկատվություն այն մասին, թե արդյոք որևէ պաշտոնատար անձ դատապարտվել կամ պատժվել է նման ճանապարհով խոստովանություն ստանալու համար:

## *Դատական մարմինների անկախությունը*

17. Անդամ պետությունը մտահոգ է դատական մարմինների անկախության պակասի վերաբերյալ տտեղեկություններով, մասնավորապես, այն հանգամանքով, որ դատավորների նշանակման, առաջխաղացման և պաշտոնից ազատ արձակման պատասխանատվությունը գտնվում է նախագահի և

գործադիր իշխանության ձեռքում: Այնուհետև Հանձնաժողովն անհանգստացած է. որ Անդամ պետության օրենսդրությունը նախատեսում է քրեական պատասխանատվություն այն դատավորների համար, ովքեր կընդունեն անարդար վճիռներ և այլ իրավական ակտեր (հոդվածներ 2, 12 և 13):

Անդամ պետությունը պետք է միջոցներ ձեռնարկի ապահովելու համար դատական մարմինների կողմից իրենց գործառույթների իրականացման անկախությունն ու անաչառությունը, և վերանայի դատավորների նշանակման, առաջխաղացման և ազատ արձակման ռեժիմի համապատասխանությունը միջազգային համապատասխան չափանիշներին, ներառյալ՝ Դատական մարմինների անկախության հիմնարար սկզբունքները, որը նախատեսում է, որ դատավորները կդադարեցնեն կամ հեռացվեն իրենց պաշտոնի կատարումից միայն անկարողության և իրենց պարտավորություններին անհարիր/անհամատեղելի վարքագծի դրսևորման պատճառով:

## *Կանանց նկատմամբ բռնությունը, ներառյալ՝ թրաֆիքինգը*

18. Հանաժողովը մտահոգ է կանանց նկատմամբ իրականացվող ֆիզիկական և սեռական բռնության չափերի մասին տեղեկություններով: Ավելին, այն մտահոգ է, որ կանայք հազվադեպ են ոստիկանությանը հաղորդում իրենց նկատմամբ իրականացված դաժան վերաբերմունքի կամ բռնության մասին: Հանձնաժողովը, մասնավորապես անհանգստացած է ընտանեկան բռնության զոհ դարձած կանանց համար պետական հովանավորության տակ գտնվող կացարանների բացակայությամբ և որ ընտանեկան բռնությունը քրեականացված չէ: Հանձնաժողովն ափսոսանք է հայտնում, որ Անդամ պետությունը տեղեկատվություն չի տրամադրում ռեպարացիաների և փոխհատուցումների մասին, ներառյալ՝ ընտանեկան բռնության զոհ դարձած կանանց համար ռեաբիլիտացիայի վերաբերյալ: Դրականորեն մոտենալով/դրական վերաբերվելով մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարելու համար ընդունված տարբեր ազգային գործողության ծրարգրերին, որոնք ընդունվել են քննարկվող ժամանակահատվածում՝ Հանձնաժողովը անհագստացած է այն լուրերով, որ Հայաստանը շարունակում է մնալ կանանց և աղջիկների թրաֆիքինգի ինչպես աղբյուր, այնպես էլ նպատակակետ պետություն (հոդվածներ 2, 12 և 16):

Անդամ պետությունը պետք է ուժեղացնի իր ջանքերը կանանց և երեխաների դեմ բռնությունը, մասնավորապես ընտանեկան բռնությունը պաատժելու և դրա դեմ պայքարելու համար, ընդ որում, իր քրեական օրենսդրությունը փոփոխելով այնպես, որ ընտանեկան բռնությունը դառնա առանձին հանցագործություն՝ անցկացնելով ընտանեկան բռնության մասին իրավապահ մարմինների և ընդհանուր հասարակության շրջանում տեղեկացվածության բարձրացման կամպանիաներ և դասընթացներ/ուսուցում, և բռնության զոհերին տրամադրելով անմիջական պաշտպանություն և փոխհատուցում, մասնավորապես, ռեաբիլիտացիա:

Այն պետք է նաև համապատասխան պայմաններ ստեղծի բռնության, մասնավորապես, ընտանեկան բռնության և թրաֆիքինգի զոհ դարձած կանանց բողոք ներկայացնելու իրավունքը իրականացնելու համար:

Հանձնաժողովը կոչ է անում, որ Անդամ պետությունը ապահովի 2008թ. Թրաֆիքինգի ենթարկված անձանց ազգային ուղղորդման ծրագրի իրականացումը և ծառայություններ տրամադրի թրաֆիքինգի զոհերին, ներառյալ՝ այն ծառայությունները, որ վերաբերում են կացարանի դրույթներին, մասնագիտացված բժշկական և հոգեբանական օգնության հասանելիությանը, և ուսուցման ծրագրեր:

## *Ազատազրկման պայմանները*

19. Ողջունելով Անդամ պետության կողմից բանտերում ազատազրկման պայմանների բարելավման ներկա ջանքերը, ներառյալ՝ որոշ հաստատությունների վերանորոգումը և նոր բանտերի կառուցման ուղղությամնբ տարվող աշխատանքները՝ Հանձնաժողովը շարունակում է մնալ անհանգստացած խիստ գերբնակեցման, անձնակազմի սակավությամբ և ոչ ադեկտվատ սննդային և առողջության ապահովության մասին շարունակական տեղեկություններով: Հանձնաժողովն անհանգստացած է բանտերում կոռուպցիայի առկայության մեղադրանքներով , ներռյալ՝ բանտարկյալների խմբավորուների ներսում, որոնց գոյությանը ակնհայտորեն իրենց լռելյայն համաձայնությունն են տալիս բանտային պաշտոնյաները: Այն նաև անհանգստացած է այն լուրերով, որ բռնության կամ խտրականության որոշ զոհեր առանձնացվում են բանտարկյալների նման խմբերի կողմից ոտնձգությունների համար իրենց սեռական կամ ազգային պատկանելության պատճառով: Հանձնաժողովը ափսոսում է, որ դատարանի կողմից ազատազրկման փոխարեն այլընտրանքային միջոցների իրականացման նշանակալի աճ չի գրանցվել, ինչպես նաև ցավում է, որ չկա ազատազրկման ենթարկված անձանց կողմից դաժան վերաբերմունքի վերաբերյալ բողոքներ ներկայացնելու գաղտնի մեխանիզմ: Կոմիտեն դրական է նկիատում հանրային մոնիտորինգային խմբի հիմնադրումը, որը կազմված է հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից, որոնք ունեն ոստիկանական կայաններում և հարկադիր կատարման հաստատություններում մոնիտորինգ իրականացնելու մանդատ: Այնուամենայնիվ, Հանձնաժողովը մտահոգ է, որ Ոստիկանությունում մոնիտորինգ իրականացնող խմբին չի տրամադրվում լիարժեք մուտք ոստիկանական կայաններ (հոդվածներ 2, 11 և 16):

Անդամ պետությունը պետք է շարունակի արդյունավետ միջոցներ ձեռնարկել ազատազրկման վայրերում պայմանների բարելավման և նման վայրերում գերբնակեցումը կրճատելու համար: Հանձնաժողովը հանձնարարում է Անդամ պետությանն ավելացնել իր ջանքերը բանտային գերբնակեցվածությունը թեթևացնելու համար, ներառյալ՝ բանտարկությանը այլընտրանք հանդիսացող միջոցների կիրառմամբ, համապատասխան՝ *Բանտարկության հետ չկապված միջոցների վերաբերյալ Միավորված Ազգերի Կազմակերպության մինիմալ չափանշային կանոնների* (Տոկիոյի կանոններ) և տրամադրի Հանձնաժողովին տեղեկատվություն այլընտրանքային պատժի, պայմանական ազատ արձակման և ռեաբիլիտացիայի համար պատասխանատու/ հարցերով զբաղվող պրոբացիայի ծառայության ստեղծման մասին:

Անդամ պետությունը պետք է ձեռնարկի անհրաժեշտ քայլեր ազատազրկված

անձանց նկատմամբ նրանց սեռական կողմնորոշման կամ ազգային պատկանելության հիման վրա խտրականության ցանկացած ձևերի դեմ, ներառյալ՝ այլ բանտարկյալների նկատմամբ իրենց բանտակիցների կողմից իրականացված բոլոր ոտնձգությունների և խտրական արարքների վերացման համար: Այն պետք է սահմանի խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի վերաբրյալ բողոքների ընդունման և քննության անկախ համակարգ և երաշխավորի, որ այդ համակարգը հիմնվի ազատազրկման բոլոր վայրերում: Այնուհետև Անդամ պետությունը պետք է ապահովի, որ բոլոր ստացված բողոքները արագ, անկողմնակալ և արդյունավետ կերպով հետաքննության ենթարկվեն, որ հանցագործություն իրականացնողները ենթարկվեն համապատասխան պատժի:

Անդամ պետությունը պետք է ապահովի, որ Ոստիկանության մոնիտորինգով զբաղվող խումբը մուտք ունենա բոլոր ոստիկանական կայաններին, ներառյալ՝ առանց հայտարարման այցելության հնարավորությունը: Այն պետք է նաև արդյունավետ միջոցներ ձեռնարկի ազատազրկման բոլոր վայրերը կանոնավոր վերահսկողության տակ պահելու համար, ներառյալ՝ այնտեղ գոյություն ունեցող և հասանելի առողջապահական միջոցները, և պետք է միջոցներ ձեռնարկի բանտերում կոռուպցիայի վերացման համար:

## *Հեպընկրական բռնություն*

20. Հանձնաժողովն անհանգստությամբ է նկատում, որ չնայած Անդամ պետության կողմից ձեռնարկված ջանքերին՝ ոստիկանության կողմից 2008թ. փետրվարի ընտրություններին հետևած ոստիկանների և ցուցարարների միջև բախումների ընթացքում ոստիկանության կողմից գերազանց և ոչ խտրական ուժի կիրառման մեղադրանքների ուսումնասիրության հարցում, Հատուկ հետաքնչական ծառայության կողմից բախումների ընթացքում տեղի ունեցած 10 մահվան դեպքերի հետաքննությունը դեռևս շարունակվում է: Հանձնաժողովը նաև անհանգստացած է այդ բռնություններին անմիջապես հետևած բազմաթիվ անհատների կամայական ազատազրկման մեղադրանքներով, որ նրանց մերժվել է իրենց ընտրությամբ փաստաբանին տեսնելը, որ այդ անձիք կալանավորման ընթացքում ենթարկվել են դաժան վերաբերմունքի և որ այս մեղադրանքները պատշաճ կերպով չեն ենթարկվել հետաքննության (հոդվածներ 2, 12, 13 և 16):

Անդամ պետությունը պետք է արագացնի 2008թ. փետրվարյան ընտրություններին հետևած մահվան տասը դեպքերի հետաքննությունը և երաշխավորի, որ ցանկացած իրավապահ մարմին, ով կպարզվի, որ օգտագործել է գերազանց կամ ոչ խտրական ուժ, պետք է հետապնդվի և պատժվի համապատասխան իր գործած հանցանքի ծանրության, և որ զոհերի ընտանիքներին տրամադրվի բավարարում, ներառյալ՝ փոխհատուցում: Անդամ պետությունը պետք է ապահովի նաև, որ այս ընտրություններին հետևած ոստիկանության կողմից գերազանց և ոչ խտրական ուժի կիրառման, ինչպես նաև դաժան վերաբերմունքի և իրավական երաշխիքների մերժման վերաբերյալ ավելի լայն մեղադրանքները նույնպես անկախ և արդյունավետ կերպով հետաքննության ենթաբրկվեն: Անդամ պետությունը պետք է միջոցներ ձեռնարկի ապահովելու համար, որ այն անձիք, որոնք ենթադրաբար ունեն տեղեկությունների 2008թ. մարտին տեղի

ունեցած իրադարձությունների մասին, պետք է արդյունավետ կերպով պաշտպանվեն ճնշումներից և ահաբեկումներից:

### *Անչափահասների հարցերով արդարադատությունը*

21. Հանձնաժողովն անհանգստացած է Մարդու իրավունքների պաշտպանի (օմբուդսմենի), ով նշանակվել է Հայաստանի կանխարգելման ազգային մեխանիզմ, իր մանդատն արդյունավետ իրականացնելու համար առկա ռեսուրսների անբավարարությամբ: Այն նաև անհանգստացած է, որ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից պաշտոնյաներին տրված որոշ հանձնարարականներ չեն իրականացվում (հոդվածներ 2 և 12):

Հանձնաժողովը հանձնարարում է, որ Անդամ պետությունը Մարդու իրավունքների գրասենյակին տրամադրի անհրաժեշտ ռեսուրսները վերջինիս կողմից իր երկակի մանդատը՝ որպես օմբուդսմեն և Հայաստանի կանխարգելման ազգային մեխանիզմ, արդյունավետ կերպով իրականացնելու համար՝ համաձայն կանխարգելման ազգային մեխանիզմների համար Խոշտանգումների կանխման ենթակոմիտեի կողմից մշակված/ստեղծված ղեկավար ցուցումների: Անդամ պետությունը պետք է ապահովի նաև, որ իրավապահ, դատական հետապնդման, ռազմական և բանտային/բանտերի անձնակազմը համագործակցի Մարդու իրավունքների պաշտպանի հետ և քայլեր ձեռնարկի վերջինիս հանձնարարականներն իրականացնելու համար:

### *Այլընտրանքային ծառայություն*

23. Դրականորեն նկատելով այլընտրանքային զինվորական ծառայության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծը՝ Հանձնաժողովը շարունակում է անհանգստացած մնալ Անդամ պետության կողմից այն փաստի ընդունմամբ, որ այն շարունակում է բազմաթիվ անհատների ազատազրկման մեջ պահել զինվորական ծառայությունից խուսափելու համար, որոնցից ոմանք հայտնի է, որ կրոնական պատճառներով զինվորական ծառայությունից հրաժարված անձիք են, ովքեր մերժում են այլընտրանքային ծառայությունն այն պատճառով, որ այն վերահսկվում է բացառապես զինվորական անձնակազմի կողմից (հոդված 16):

Հանձնաժողովը առաջարկում է/ հանձնարարում է, որ Անդամ պետությունն ընդունի այլընտրանքային զինվորական ծառայության մասին օրենքի նախագիծը և որ այն վերանայի այն բոլոր անձանց ազատազրկման հարցը, ովքեր հրաժարվում են իրականացնել այլընտրանքային ծառայությունը կրոնական հիմունքներով:

### Չվերադարձման սկբունք (Non-refoulement)

24. Հանձնաժողովը ափսոսում է/ցավում է, որ չկա բավարար տեղեկտվություն արտահանձնման կամ արտաքսման դեպքում խոշտանգումների դեմ տրամադրվող երաշխիքների վերաբերյալ: Այնուհետև այն անհանգստացած է տեղեակտվության սակավությամբ Անդամ պետության կողմից տրված դիվանագիտական երաշխիքների մասին ապաստան հայցողներին հարևաններ երկրներ վերադարձնելու վերաբերյալ և Հայաստանի Հանրապետության ու Ռուսաստանի Դաշնության ոստիկանությունների միջև գոյություն ունեցող

արտահանձնման (էքստրադիցիայի) մասնի պայմանագրի և այդ պայմանագրի համաձայն արտահանձնման ենթարկված անձանց թվի վերաբերյալ: Հանձնաժողովն անհանգստացած է այն տեղեկություններով, որ Անդամ պետությունը արտահանձնման հրամաններ է տվել, առանց թույլ տալու համապատասխան/առնչվող անձանց օգտագործել/կիրառել բողոքարկման իրենց իրավունքը Քրեական դատավարության օրենսգրքի 479-րդ հոդվածի երկրորդ պարագրաֆի համապատասխան և առանց արտահանձնման նորմալ ընթացակարգին համապատասխանության (հոդված 3):

Անդամ պետությունը պետք է զերծ մնա ձգտելուց և ստանալուց դիվանագիտական երաշխիքներ մի պետությունից, եթե բավարար հիմքեր կան կարծելու, որ անձը խոշտանգումների ենթարկման սպառնալիքի տակ կարող է հայտնվել: Անդամ պետությունը պետք է մանրամասն տեղեկատվություն ներկայացնի այն բոլոր դեպքերի համար, երբ նման երաշխիքներ տրամադրվել են:

Հանձնաժողովը նաև հանձնարարում է, որ Անդամ պետությունը հարգի Կոնվենցիայի 3-րդ հոդվածով ստանձնած չվերադարձման իր պարտավորությունը, ներառյալ՝ Քրեական դատավարության օրենսգրքի 479-րդ հոդվածի 2-րդ պարագրաֆով երաշխավորված արտահանձնման հրամանի բողոքարկման իրավունքը:

## *Ուսուցումը*

25. Հանձնաժողովը ողջունում է քննարկվող ժամանակահատվածում իրավապահ և ռազմական պաշտոնյաների համար կազմակերպված մարդու իրավունքների ուսուցման ծրագրերը: Այնուամենայնիվ, հանձնաժողովն ափսոսում է/ցավում է, որ չկա բավարար տեղեակտվություն ուսուցման այդ ծրագրերի կողմից խոշտանգումների և դաժան վերաբերմունքի դեպքերի կրճատման վրա դրանց ազդեցության մոնիտորինգի և գնահատման արդյունքների վերաբերյալ: Հանձնաժողովը ցավում է նաև, որ չկա նման ուսուցման ծրագրերի ընթացքում Խոշտանգումների և դաժան, անմարդկային և արժանապատվության նվաստացնող վերաբերմունքի և պատժի արդյունավետ հետաքննության և փաստագրման ձեռնարկի (Ստամբուլի արձանագրություն) օգտագործման ուսուցանման վերաբերյալ բավարար տեղեկատվություն:

Անդամ պետությունը պետք է ուժեղացնի իրավապահ մարմինների, ռազմական և բանտային անձնակազմի համար Կոնվենցիայի պահանջների վերաբերյալ ուսուցման ծրագրերը և գնահատի նման ուսուցման ծրագրերի ազդեցությունը: Անդամ պետությունը պետք երաշխավորի, որ համապատասխան պաշտոնյաներն ուսուցանվեն խոշտանգումների և դաժան վերաբերմունքի նշանների հայտնաբերման նպատակով Ստամբուլի արձանագրության օգտագործումը/ թե ինչպես օգատգործել Ստամբուլի արձանագրությունը խոշտանգումների և դաժան վերաբերմունքի նշանները ճանաչելու համար:

26. Հանձնաժողովը հրավիրում է/հորդորում է անդամ պետությանը քննարկել մարդու իրավունքներին վերաբերող Միավորված Ազգերի Կազմակերպության այլ հիմնարար պայմանագրերը, որոնց կողմ այն դեռևս չի հանդիսանում, մասնավորապես Բոլոր միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների անդամների իրավուքների

պաշտպանության մասին միջազգային կոնվենցիան, Հաշմանդամ անձանց իրավունքների կոնվենցիային կից կամընտիր արձանագրությունը և Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրին կից կամընտիր արձանագրությունը:

27. Անդամ պետությանը խնդրում է/պահանջվում է լայնորեն տարածել Հանձնաժողովին ներկայացրած զեկույցը և Հանձնաժողովի եզրահանգումները համապատասխան լեզուներով պաշտոնական կայքէջերի, լրատվամիջոցների և հասարակական կազմակերպությունների միջոցով:

28. Անդամ պետությանը կոչ է արվում նորացնել իր *ընդհանուր հիմնարար փաստաթուղթը* (HRI/CORE/1/Add.57), համաձայն մարդու իրավունքների միջազգային պայմանագրերի վերաբերյալ զեկույցների ներկայացման ներդաշնակեցված ուղեցույցներում պարունակվող հիմնարար փաստաթղթերի վերաբերյալ ընդհանուր պահանջներին:

29. Հանձնաժողովը խնդրում է Անդամ պետությանը տրամադրել մինչև 2013թ. հունիսի 1-ը Հանձնաժողովի հանձնարարականներին ի պատասխան հետագա տեղեկատվություն, որը կվերաբերի. ա) արագ, անաչառ և արդյունավետ հետաքննությունների իրականացմանը; բ) ազատազրկված անձանց իրավական երաշխիքների ապահովմանը կամ ուժեղացմանը; գ) խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի մեջ մեղադրվող կասկածյալներին դատական հետապնդման ենթարկելուն և հանցագործներին պատժելուն , ինչպես որ նախատեսվում է ներկա փաստաթղթի 8, 11 և 12-րդ հոդվածներում:

30. Անդամ պետությունը մինչև հունիսի 1-ը հրավիրվում է ներկայացնելու իր հաջորդ զեկույցը, որը կլինի չորրորդ պարբերական զեկույցը: *Այդ առթիվ, Հանձնաժողովը հորդորում է Անդամ պետությանն մինչև 2013թ. հունիսի 1-ը ընդունել, զեկուցել իր կամընտիր զեկուցման ընթացակարգով, որը ենթադրում է/իրենից ներկայացնում է Անդամ պետությանը կից հանձնաժողովի կողմից նախքան պարբերական զեկույցի ներկայացումը մի շարք խնդիրների փոխանցում:* Կոնվենցիայի 19-րդ հոդվածի համաձայն Անդամ պետության պատասխանները այդ հարցերին հենց կկազմեն հաջորդ պարբերական զեկույցը:

# Հավելված 4.

## Ռասայական խտրականության վերացման կոմիտե 70-րդ նստաշրջան, 14 փետրվար – 11 Մարտ 2011թ.

### Ռասայական խտրականության վերացման կոմիտեի եզրափակիչ դիտարկումներ

## Հայաստան

1. Կոմիտեն քննարկել է Հայաստանի՝ մեկ փաստաթղթով ներկայացված հինգերորդ եւ վեցերորդ պարբերական զեկույցները (CERD/C/ARM/5-6) 2071-րդ և 2072-րդ հանդիպումներում (CERD/C/SR.2071 և CERD/C/SR.2072), որոնք կայացել են 2011թ. փետրվարի 28-ին և 2011թ. մարտի 1-ին: 2011թ. մարտի 10-ին տեղի ունեցած 2086-րդ հանդիպման ժամանակ այն ընդունել է հետևյալ եզրափակիչ դիտարկումները:

## Ա. Ներածություն

2. Կոմիտեն ողջունում է մասնակից պետության զեկույցը, որը համապատասխանում է Կոմիտեի ուղեցույցներին, ինչպես նաև պատվիրակության կողմից ներկայացված լրացուցիչ բանավոր տեղեկատվությանը: Կոմիտեն նաև ողջունում է անդամ պետության հետ երկխոսության վերսկսումը և բարձր է գնահատում այնտեղ բարձրացված հարցերին և մեկնաբանություններին տրված անկեղծ ու կառուցողական պատասխանները:

## Բ. Դրական կողմեր

3. Կոմիտեն ողջունում է մասնակից պետության կողմից ձեռնարկված օրենսդրական, ինստիտուցիոնալ և այլ միջոցառումները՝ 2002թ.-ին երրորդ և չորրորդ պարբերական զեկույցների քննարկումից ի վեր՝ ուղղված ռասայական խտրականության դեմ պայքարին խթանել տարբեր էթնիկ ու ազգային խմբերի բնակչության շրջանում հանդուրժողականության ու փոխըմբռնման խթանմանը: Մասնավորապես հետաքրքրությամբ նշվել են հետևյալները.

(ա) Սահմանադրորեն խտրականության արգելք, ի թիվս այլոց՝ ռասայի, մաշկի գույնի, էթնիկական ծագման, գենետիկական հատկանիշների և անձնական բնույթի այլ հանգամանքների հիման վրա;

(բ) Ռասայական խտրականության արգելքի ընդգրկումը հասարակական կյանքի տարբեր ասպեկտները կարգավորող մի շարք օրենքներում, ինչպես, օրինակ, Հեռուստատեսության և ռադիոյի մասին օրենքը;

(գ) Քրեական օրենսգրքի դրույթը, որը հաստատում է էթնիկ և ռասայական դրդապատճառները որպես պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք:

(դ) Տարբեր գործիքների ստեղծումը ազգային փոքրամասնությունների հետ երկխոսություն և խորհրդակցություն իրականացնելու

նպատակով, ինչպիսիք են՝ Ազգային փոքրամասնությունների ազգային և մշակութային կազմակերպությունների համակարգող խորհուրդը և Հանրային խորհրդի ազգային փոքրամասնությունների կոմիտեն և Ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչության ստեղծումը, որն, ի թիվս այլոց, իրականացնում է կառավարության քաղաքականությունն ազգային փոքրամասնությունների առնչությամբ;

(ե) Անդամ պետության ձեռնարկած ջանքերը՝ նպաստելու ազգային փոքրամասնությունների մշակութային ժառանգության պահպանմանը, տարածմանը և զարգացմանը, և ապահովելու ազգային լեզուների ու գրականության ուսուցումը փոքրամասնությունների համար;

(զ) Մարդու իրավունքների, խտրականությանը և անհանդուրժողականությանն առնչվող հարցերի, ինչպես նաեւ ազգային եւ ռասայական փոքրամասնությունների հարցերի ներառումը ոստիկանության համար իրականացվող շարունակական ու ֆորմալ կրթական ծրագրերում:

4. Կոմիտեն ողջունում է 2004թ. Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի ստեղծումը, որը լիովին համապատասխանում է Փարիզյան սկզբունքներին և ունի մանդատ՝ քննության առնել կոնվենցիայի մեջ պարունակվող մարդու իրավունքների ոտնահարումների վերաբերյալ բողոքները:

5. Կոմիտեն ողջունում է անդամ պետության ակտիվ դերը Դուրբանի համաժողովի և Վերանայման համաժողովի նախապատրաստական աշխատանքների ղեկավարման գործում:

6. Կոմիտեն ողջունում է 2010թ.-ին Հաշմանդամների իրավունքների կոնվենցիայի վավերացումը և 2005թ.-ին Երեխաների իրավունքների կոնվենցիայի կամընտիր արձանագրության, 2006թ.-ին Խոշտանգումների դեմ կոնվենցիայի և Կանանց դեմ խտրականության բոլոր ձևերի վերացման կոնվենցիայի կամընտիր արձանագրությունների վավերացումը:

7. Կոմիտեն նաև ողջունում է անդամ պետության կողմից Եվրոպայի խորհրդի և Անկախ պետությունների համագործակցության շրջանակներում մարդու իրավունքների այն պայմանագրերի վավերացումը, որոնք արգելում են խտրականությունը:

## Գ. Մտահոգություններ և առաջարկություններ

8. Նկատի ունենալով, որ անդամ պետության Սահմանադրությունը սահմանում է միջազգային գործիքների գերակայությունը ներպետական օրենսդրության նկատմամբ, և այն, որ համաձայն անդամ պետության հայտարարության, միջազգային պայմանագրերի դրույթները վկայակոչվել են դատարաններում, կոմիտեն մտահոգված է, որ քանի որ Կոնվենցիայի շատ դրույթներ ինքնաբերաբար չեն կատարվում, անդամ պետության օրենսդրությունը ներկայումս լիարժեքորեն չի ապահովում Կոնվենցիայի բոլոր հոդվածների իրականացումը:

Կոմիտեն մասնավորապես անդամ պետության ուշադրությունն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ

բացակայում է ռասայական խտրականություն հրահրող գործողություններում ներգրավված կազմակերպությունների իրավական հիմքով արգելումը, ինչպես պահանջվում է Կոնվենցիայի 4(բ) հոդվածում: Ավելին, Կոմիտեն ափսոսանք է հայտնում, որ տեղեկատվություն չի տրվել ռասայական սեգրեգացիային առնչվող իրավական դրույթների առնչությամբ (հոդվածներ 2, 3 եւ 4):

Կոմիտեն կոչ է անում անդամ պետությանը շարունակել իր օրենսդրությունը Կոնվենցիային համապատասխանեցման գործընթացը և խնդրում է անդամ պետությանը հաջորդ պարբերական զեկույցում ներառել օրենքների համապատասխան հատվածներ, որոնք կառնչվեն 3-րդ և 4-րդ հոդվածներում սահմանված գործողություններին, ինչպես նաև դրանց առնչվող ցանկացած դատական որոշման վերաբերյալ տեղեկատվություն:

Ավելին, կոմիտեն խրախուսում է անդամ պետությանը մեծացնել ջանքերը՝ ուղղված վերջին տարիներին ընդունված՝ ռասայական խտրականության դեմ պայքարին վերաբերող օրենքների արդյունավետ իրականացմանը և հետևել, որ դրանք ծառայեն այն նպատակին, որի համար ընդունվել են:

9. Կոմիտեն նշում է հաշվետու ժամանակաշրջանում դատարաններում և այլ համապատասխան մարմիններում ներկայացված ռասայական խտրականության գործողությունների առնչությամբ բողոքների բացակայությունը (հոդված 6):

Վկայակոչելով իր՝ № 31 (2005) ընդհանուր հանձնարարականը քրեական արդարադատության գործառնության և իրականացման մասին, Կոմիտեն գտնում է, որ ռասայական խտրականության գործողությունների վերաբերյալ բողոքների բացակայությունը չի կարող դիտվել որպես ռասիզմի կամ ռասայական խտրականության բացակայություն և որ դա կարող է լինել զոհերի կողմից իրենց իրավունքների մասին տեղեկացվածության պակասի արդյունք, վախ հաշվեհարդարից, զոհերի կողմից հատուցման արդյունավետ հասանելիությունը սահմանափակող բարդ դատական ընթացակարգերի արդյուք, դատական իշխանությունների հանդեպ վստահության պակասի կամ իրավասու մարմինների կողմից գործ հարուցելու ցանկության բացակայության արդյունք:

Հետևաբար, Կոմիտեն կոչ է անում անդամ պետությանը՝

(ա) Ընդհանուր բնակչության և, մասնավորապես, փոքրամասնությունների շրջանում բարձրացնել իրազեկությունը այն մասին, թե ինչ է ռասայական խտրականությունը՝ համաձայն Կոնվենցիայի առաջին հոդվածի և անդամ պետության Սահմանադրության,:

(բ) Տեղեկացնել հանրությանը, և հատկապես խոցելի խմբերին,ինչպիսիք են, օրինակ, քաղաքացի չհանդիսացող անձինք, փախստականները և ապաստան հայցողները, ռասայական խտրականությանն առնչվող օրենսդրության և փոխհատուցման առկա ուղիների մասին;

(գ) Դիտարկել անդամ պետության օրենսդրության ապացուցման կանոնները, վերանայելով կամ կիսելով իր բեռը, որտեղ ռասայական խտրականության բողոքները հետապնդվում են քաղաքացիական իրավունքով, կապված ռասայական խտրականության պահանջների դժվարությունների հետ:

Կոմիտեն խնդրում է, որպեսզի անդամ

պետությունը հաջորդ պարբերական զեկույցում տրամադրի թարմացված տեղեկատվություն ռասայական խտրականության գործողությունների վերաբերյալ բողոքների և քրեական, քաղաքացիական կամ վարչական դատական վարույթներում համապատասխան որոշումների մասին:

10. Նկատի ունենալով անդամ պետության բնակչության համեմատաբար միատարր լինելը, Կոմիտեն զղջում է, որ բացակայում է բնակչության փաստացի կազմի վերաբերյալ վստահելի տեղեկատվություն:

Կոմիտեն խնդրում է, որպեսզի մարդահամարի հիման վրա, որը անց է կացվել 2011թ.-ին և ինքնանույնականացման սկզբունքի առնչությամբ անդամ պետությունը իր հաջորդ պարբերական զեկույցում ներառի բնակչության իրական կազմի վերջին տվյալները՝ ներառելով ասորիներին, ադրբեջանցիներին, գնչուներին և այլ փոքր էթնիկ խմբերին: Այս առումով, Կոմիտեն սևեռում է անդամ պետության ուշադրությունն իր զեկույցների ներկայացման ուղեցույցների (CERD/C/2007/1 ) 11-րդ և 12-րդ կետերին և 4-րդ (1973թ.) ու 24-րդ (1999թ.) ընդհանուր առաջարկություններին, որոնք համապատասխանաբար վերաբերում են բնակչության դեմոգրաֆիական կազմին և տարբեր ռասաների, ազգային/էթնիկ խմբերի պատկանող անձանց վերաբերյալ հաշվետվություններին: Բացի այդ, կոմիտեն նաև խնդրում է տվյալներ այդ խմբերին պատկանող կանանց վերաբերյալ:

11. Կոմիտեն ցավում է, որ մինչդեռ Հարավային Կովկասում քաղաքական իրավիճակը հանգեցրել է անդամ պետություն բազմաթիվ փախստականների ներհոսքին և դրա տարածքում ներքին տեղահանված անձանց, անդամ պետությունը իր զեկույցում և երկխոսության ժամանակ այդ խմբերի վերաբերյալ ներկայացրել է շատ քիչ տեղեկատվություն: (Հոդ. 5)

Կոմիտեն կոչ է անում անդամ պետությանը իր հաջորդ զեկույցում ընդգրկել մանրամասն տեղեկատվություն փախստականների և ներքին տեղահանված անձանց վիճակի մասին, մասնավորապես, Կոնվենցիայի 5-րդ հոդվածով սահմանված իրավունքների արդյունավետ ապահովման հետ կապված՝ ներառյալ թարմացված տեղեկատվություն բնակապահովման հարցով:

12. Նշելով անդամ պետության զեկույցում լայնածավալ տեղեկատվության ներառումը Կոնվենցիայի 5-րդ հոդվածով նախատեսված իրավունքների ապահովմանն առնչվող իրավական դրույթների վերաբերյալ, որոնք երաշխավորում են այդ իրավունքներից ոչ խտրական կերպով օգտվելը, այնուամենայնիվ, Կոմիտեն ափսոսանք է հայտնում ազգային փոքրամասնությունների և ոչ քաղաքացիների կողմից Կոնվենցիայով սահմանված իրավունքների դե ֆակտո իրականացման վերաբերյալ մանրամասն վիճակագրական տվյալների պակասի առնչությամբ, քանի որ առանց այդպիսի տվյալների դժվար է գնահատել անդամ պետության ներսում տարբեր խմբերի սոցիալ–տնտեսական վիճակը (1 և 5-րդ Հոդվածներ):

Վկայակոչելով բոլոր էթնիկական և այլ խոցելի խմբերի վիճակը հասկանալու և անուղղակի խտրականությունը բացահայտելու համար բնակչության տարբեր խմբերի սոցիալ-տնտեսական վիճակին վերաբերող ստույգ և թարմ տվյալներ տրամադրելու կարևորությունը՝ Կոմիտեն կոչ է անում անդամ պետությանը տրամադրել տվյալներ բոլոր էթնիկական և այլ խոցելի խմբերի, ներառյալ ոչ քաղաքացիների

վիճակի վերաբերյալ՝ հաշվի առնելով ոչ քաղաքացիների (հիմնականում զգաղվածության, կրթության և բնակապահովման ոլորտներում ոչ քաղաքացիների դրության) մասին Կոմիտեի № 30 (2009) ընդհանուր հանձնարարականը:

Կոմիտեն նաև խնդրում է, որ անդամ պետությունը իր զեկույցի մեջ ներառի տեղեկատվություն, որը վերաբերում է անբարենպաստ վիճակում գտնվող ցանկացած խմբին 5-րդ Հոդվածում նախատեսված իրավունքներից հավասար հիմունքներով օգտվելու հնարավորության ապահովմանն ուղղված հատուկ միջոցառումների վերաբերյալ: Կոմիտեն նաև հրավիրում է անդամ պետության ուշադրությունը Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայում հատուկ միջոցառումների նշանակության և կիրառման սահմանների մասին իր № 32 (2009) ընդհանուր հանձնարարականին:

13. Հետաքրքրությամբ նշելով փոքրամասնությունների հետ երկխոսության հաստատմանն ուղղված բազմաթիվ ստեղծված մեխանիզմները՝ Կոմիտեին մտահոգված է մնում այն հանգամանքով, որ այդ մեխանիզմները խորհրդատվական բնույթ են կրում և չեն կարող փոխարինել հասարակական կյանքում փոքրամասնությունների մասնակցությունը: Բացի այդ, Կոմիտեն ափսոսանք է հայտնում ընտրովի և պետական մարմիններում փոքրամասնությունների մասնակցությանը վերաբերող տեղեկատվության պակասի առնչությամբ ( 2-րդ և 5-րդ Հոդվածներ ):

Վկայակոչելով այդ ոլորտում արդյունքների հասնելուն առնչվող անդամ պետության պարտավորությունը՝ Կոմիտեն կարծում է, որ ընտրվելու հավասար իրավունքի իրավական երաշխիքները բավարար չեն քաղաքական կյանքում փոքրամասնությունների մասնակցությունը ապահովելու համար, և վերահաստատում է իր նախորդ հանձնարարականը, որի համաձայն անդամ պետությունը պարտավոր է երաշխավորել փոքրամասնությունների պատշաճ ներկայացվածությունը Ազգային ժողովում և այլ հանրային մարմիններում (A/57/18, կետ 278)՝ ներառյալ հատուկ միջոցառումների ձեռնարկումը:

14. Կոմիտեն նաև մտահոգություն է հայտնում նրա առնչությամբ, որ անդամ պետությունում գոյություն ունի քաղաքական կազմակերպություն, որը կոչ է անում վտարել անդամ պետության տարածքից որոշ էթնիկական խմբերին: Կոմիտեն նաև ի գիտություն է առնում այդ կազմակերպության ղեկավարի նկատմամբ ձեռնարկած իրավական միջոցների մասին անդամ պետության տրամադրած տեղեկատվությունը (4-րդ Հոդված):

Կոմիտեն կոչ է անում անդամ պետությանը կատարել ռասայական խտրականությունը խրախուսող կամ հրահրող ցանկացած կազմակերպության արգելման հետ կապված իր պարտավորությունը, ինչպես նախատեսված է Կոնվենցիայի 4 (b) հոդվածով:

15. Գնահատելով ազգային փոքրամասնությունների կրթության բնագավառում անդամ պետության գործադրված ջանքերը, ներառյալ իրենց լեզվով կրթություն ստանալու հնարավորության տրամադրումը և ազգային փոքրամասնությունների լեզվի և գրականության ուսումնասիրության դասընթացների կազմակերպումը, Կոմիտեն, այդուհանդերձ, ափսոսանք է հայտնում, որ կրթության իրավունքի արդյունավետ

իրագործումը երաշխավորված չէ ազգային փոքրամասնություններին և այլ խոցելի խմբերին (ինչպիսիք են փախստականները և ապաստան հայցողները) պատկանող բոլոր երեխաների համար և որ նրանցից քչերն են ստանում բարձրագույն կրթություն՝ չնայած այնպիսի միջոցների ձեռնարկմանը, ինչպիսիք են ընդունելության քննությունները հաջողությամբ հանձնելու դեպքում ազգային փոքրամասնություններին պատկանող թեկնածուներին բուհեր նախապատվության կարգով ընդունելը (5-րդ Հոդված):

Կոմիտեն կոչ է անում անդամ պետությանը ակտիվացնել կրթության արդյունավետ մատչելիության ապահովմանն ուղղված ջանքերը, ինչպես նաև.

(ա) ընդլայնել ազգային փոքրամասնությունների հանրակրթական դպրոցներում տիպային ուսումնական ծրագրի օգտագործումը և ազգային փոքրամասնություններին պատկանող ուսուցիչների վերապատրաստումը,

(բ) դիտարկել ազգային փոքրամասնությունների կոմպակտ բնակության վայրերում նախադպրոցական կրթության մակարդակում լեզվի ուսումնասիրությանը աջակցելու հնարավորությունը՝ կրթության հիմնական համակարգին փոքրամասնություններին պատկանող աշակերտների ինտեգրումը դյուրացնելու համար,

(գ) ակտիվացնել ազգային փոքրամասնություններին և այլ խոցելի խմբերին պատկանող երեխաների համար բարձրագույն կրթության մատչելիության ապահովմանն ուղղված ջանքերը:

Կոմիտեն նաև խնդրում է անդամ պետությանը իր հաջորդ պարբերական զեկույցում ներկայացնել մանրամասն տեղեկատվություն, որը պետք է ներառնի սկզբնական, միջնակարգ և բարձրագույն կրթական հաստատություններում ազգային փոքրամասնություններին և այլ խոցելի խմբերին պատկանող անձանց ներգրավվածությանը վերաբերող մանրամասն վիճակագրական տվյալները:

16. Կոմիտեն անհանգստությամբ նշում է, որ չնայած անդամ պետությունը տեղյակ է եզդիական և քրդական համայնքներում կնոջ և տղամարդու, մեծահասակների և երեխաների հարաբերությունները կարգավորող պահպանողական ավանդույթների գոյության մասին, որոնք խոչընդոտում են իրավունքների հավասար իրագործմանը և իրավունքներից հավասար հիմունքներով օգտվելուն, այնուամենայնիվ, ազգային փոքրամասնություններին առնչվող անդամ պետության ծրագրերն ու միջոցառումները չեն նպաստել այդ հարցերի լուծմանը (5-րդ Հոդված):

Հիշեցնելով մարդու իրավունքների իրագործման ոլորտում բոլորին հավասարություն երաշխավորելու անդամ պետության պարտավորությունը՝ Կոմիտեն կոչ է անում անդամ պետությանը ազգային փոքրամասնությունների հետ իր աշխատանքում հաշվի առնել, որ հարկավոր է միջոցներ ձեռնարկել խտրական ավանդույթների վերացման ուղղությամբ: Մասնավորապես, Կոմիտեն կոչ է անում անդամ պետությանը, իր Գենդերային քաղաքականության հայեցակարգն իրագործելիս, հաշվի առնել այն կրկնակի խտրականությունը, որին ենթարկվում են ազգային փոքրամասնություններին պատկանող կանայք: Այդ առնչությամբ Կոմիտեն անդամ պետության

ուշադրությունն է հրավիրում ռասայական խտրականության գենդերային չափումների իր № 25 (2000) ընդհանուր հանձնարարականին:

17. Կոմիտեն ի գիտություն է առնում մարդու իրավունքների պաշտպանի և անդամպետության զանգվածային լրատվամիջոցների հաղորդած՝ ռասայական հողի վրա տեղի ունեցած միջադեպերը: Կոմիտեն նաև նշում է, որ օտարերկրացիների նկատմամբ անդամ պետության բնակչության շրջանում տիրող զգուշավորությունը կարող է վկայել այլատյացության տրամադրությունների և նախապաշարմունքների գոյության մասին (7-րդ Հոդված):

Կոմիտեն կոչ է անում անդամ պետությանը պահպանել զգոնությունը՝ ռասայական հողի վրա միջադեպերը բացառելու համար և հետևել առանձին անձանց և խմբերի նկատմամբ խտրականության բոլոր դրսևորումների դեմ պայքարի քաղաքականությանը: Կոմիտեն նաև կոչ է անում անդամ պետությանը ձեռնարկել կանխարգելիչ միջոցներ, այդ թվում օտարերկրացիների նկատմամբ իր բնակչության վերաբերմունքի ուսումնասիրության միջոցով, ինչպես նաև բնակչության լայն զանգվածներին հանդուրժողականության, փոխըմբռնման և բազմազանության նկատմամբ հարգանքի ոգով դաստիարակելու միջոցով: Այդ առնչությամբ նկատի առնելով, որ մարդու իրավունքների ուսումնասիրությունը արդեն ներառվել է դպրոցական ծրագրերի մեջ՝ Կոմիտեն կոչ է անում անդամ պետությանը մարդու իրավունքների կրթության հարցում հատուկ ուշադրություն դարձնել զանգվածային լրատվամիջոցների դերին:

18. Կոմիտեն հանձնարարում է անդամ պետությանը Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ծրագիրը մշակելիս և իրագործելիս հաշվի առնել 2001 թ. Սեպտեմբերին ընդունված Ռասիզմի, ռասայական խտրականության, այլատյացության և առնչվող անհանդուրժողականության դեմ պայքարի համաշխարհային համաժողովի կողմից ընդունված Դուրբանի հռչակագիրը և Գործողությունների ծրագիրը, ինչպես նաև Ժնևում 2009 թ. ապրիլին կայացած Դուրբանի վերանայման համաժողովի եզրափակիչ փաստաթուղթը: Կոմիտեն մասնակից պետության ուշադրությունն է հրավիրում Դուրբանի վերանայման համաժողովից բխող միջոցառումներին առնչվող իր № 33 (2009) ընդհանուր հանձնարարականին:

19. Կոմիտեն հանձնարարում է անդամ պետությանը ձեռնարկել և լայնորեն լուսաբանել 2011թ.-ը՝ որպես Աֆրիկյան ծագում ունեցող ժողովուրդների միջազգային տարի նշելու միջոցառումների համապատասխան ծրագիրը, ինչպես հռչակվել է Գլխավոր Ասամբլեայի 2009 թ. դեկտեմբերի 18 -ի 64/169 բանաձևում:

20. Հաշվի առնելով մարդու իրավունքների անբաժանելիությունը՝ Կոմիտեն կոչ է անում անդամ պետությանը դիտարկել մարդու իրավունքներին առնչվող այն միջազգային պայմանագրերի վավերացման հնարավորությունը, որոնց անդամ պետությունը դեռ չի միացել, մասնավորապես, այն պայմանագրերի, որոնց դրույթները վերաբերում են ռասայական խտրականության խնդրին, ինչպես օրինակ, Բոլոր աշխատավոր միգրանտների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության մասին 1990 թ. միջազգային կոնվենցիան:

21. Կոմիտեն խրախուսում է անդամ պետությանը դիտարկել Կոմիտեի կողմից անհատական բողոքներ ընդունելու և քննարկելու իրավասության ճանաչման մասին Կոնվենցիայի 14-րդ հոդվածի ներքո հայտարարություն անելու հնարավորությունը:
22. Կոմիտեն հանձնարարում է անդամ պետությանը վավերացնել Կոնվենցիայի 8 –րդ հոդվածի 6-րդ պարբերության՝ 1992 թ. հունվարի 15-ին Կոնվենցիայի անդամ պետությունների 14 –րդ հանդիպման ժամանակ ընդունված լրացումները, որոնք հաստատվել են Գլխավոր Ասամբլեայի կողմից 1992 թ.-ի դեկտեմբերի 16 –ի 47/111 բանաձևով: Այդ առնչությամբ Կոմիտեն վկայակոչում է Գլխավոր Ասամբլեայի 61/148 և 63/243 բանաձևերը, որոնցում Գլխավոր Ասամբլեան անդամ պետություններին վճռական կոչ է արել արագացնել Կոմիտեի ֆինանսավորմանը վերաբերող Կոնվենցիայի այդ ուղղման վավերացման ներքին ընթացակարգերը և սեղմ ժամկետներում գրավոր տեղեկացնել Գլխավոր քարտուղարին ուղղմանը համաձայն լինելու մասին:
23. Կոմիտեն հանձարարում է անդամ պետությանը իր հաջորդ պարբերական զեկույցի մշակման և Կոմիտեի հանձնարարականների կատարման գործում շարունակել խորհրդակցությունը և ընդլայնել երկխոսությունը մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում, մասնավորապես՝ ռասայական խտրականության դեմ պայքարի ոլորտում գործող քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ:
24. Կոմիտեն հանձնարարում է անդամ պետությանը ապահովել վերջինիս զեկույցների հասանելիությունը հասարակության համար դրանց ներկայացման ժամանակ և այդ զեկույցներին առնչվող Կոմիտեի դիտողությունների հրապարակումը պաշտոնական լեզվով և համապատասխան դեպքերում նաև այլ լայնորեն կիրառվող լեզուներով:
25. Նշելով, որ անդամ պետությունն իր հիմնարար փաստաթուղթը ներկայացրել է 1995 թ.-ին՝ Կոմիտեն կոչ է անում անդամ պետությանը ներկայացնել դրա թարմացված տարբերակը՝ մարդու իրավունքների մասին միջազգային պայմանագրերի իրականացման վերաբերյալ զեկույցների ներկայացման համաձայնեցված ուղեցույցների համապատասխան, մասնավորապես՝ հիմնարար փաստաթղթի մշակման ուղեցույցների համապատասխան, որոնք ընդունվել են 2006թ. հունիսին տեղի ունեցած մարդու իրավունքների պայմանագրային մարմինների կոմիտեների 5-րդ հանդիպման ժամանակ (HRI/MC/2006/3):
26. Կոնվենցիայի 9-րդ Հոդվածի 1-ին պարբերության և Կոմիտեի լրամշակված ընթացակարգային կանոնների 65-րդ կանոնի համաձայն, Կոմիտեն խնդրում է անդամ պետությանը սույն եզրափակիչ դիտողությունների ընդունման պահից մեկ տարվա ընթացքում ներկայացնել 13, 14 և 17-րդ կետերում ներկայացված հանձնարարականների կատարմանն առնչվող գործողությունների մասին տեղեկատվությունը:
27. Կոմիտեն նաև ցանկանում է հրավիրել անդամ պետության ուշադրությունը 8, 9, 12 և 15 կետերում շարադրված հանձնարականների առանձնահատուկ կարևորության փաստին և խնդրում է անդամ պետությանը իր հաջորդ

պարբերական զեկույցում ներկայացնել այդ հանձնարարականների կատարմանը վերաբերող մանրամասն տեղեկատվություն:

28. Կոմիտեն հանձնարարում է անդամ պետությանը իր 7-11 պարբերական զեկույցները ներկայացնել միասնական փաստաթղթի տեսքով, որի վերջնաժամկետն է 2014թ. հուլիսի 23-ը՝ հաշվի առնելով ՌԽՎԿ –ի համար զեկույցների մշակման ուղեցույցները, որոնք Կոմիտեն ընդունել է 71-րդ նիստի ժամանակ (CERD/C/2007/1), և այդ զեկույցում անդրադառնալ սույն եզրափակիչ դիտողություններում շոշափված հարցերին: Նշելով, որ միասնական 5-րդ և 6-րդ զեկույցները ներկայացվել են վեց տարի ուշացումով, Կոմիտեն կոչ է անում անդամ պետությանը հետագայում հետևել զեկույցների ներկայացման համար սահմանված ժամկետներին: Կոմիտեն նաև կոչ է անում անդամ պետությանը հաշվի առնել զեկույցների ծավալի սահմափակումները, որը կոնկրետ պայմանագրերի համար սահմանված է 40 էջ, հիմնարար փաստաթղթի համար՝ 60-80 էջ (տես՝ զեկույցների ներկայացման ուղեցույցները, որոնք պարունակվում են HRI/GEN/2/Rev.6, պարբերություն 19 փաստաթղթում):